Երեմյան Ա., Թումասյան Դ.,
Ղամբարյան Ա., Պետրոսյան Տ.

Հայաստանի Հանրապետությունում մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները

Երևան – 2011

Երաշխավորվել է տպագրության ՀՀ “Դատախազության դպրոց” ՊՈԱԿ-ի և ՀՀ Ոստիկանության ակադեմիա կրթահամալիրի որոշումներով:

Հեղինակներ՝

Երեմյան Ա. (իրավագիտության թեկնածու, դոցենտ) ..... գլուխներ 2. 3
Թումասյան Դ. ..... գլուխներ 1, 8
Ղամբարյան Ա. (իրավագիտության թեկնածու, դոցենտ) .. գլուխներ 4. 6
Պետրոսյան Տ. ..... գլուխներ 5, 7

Երեմյան Ա., Թումասյան Դ., Ղամբարյան Ա., Պետրոսյան Տ. Հայաստանի Հանրապետությունում մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները:Երևան.“Ասողիկ” Հրատ , 2011, 271 էջ

ISBN 978-92-9235-887-7

Սույն ձեռնարկը նախատեսված է իրավապահ մարմինների աշխատակիցների, ինչպես նաև աշխատանքային տեսուչների վերապատրաստման համար: Ձեռնարկը կարող է օգտակար լինել նաև ԲՈՒՀ-երում և այլ հաստատություններում ու կառույցներում մարդու թրաֆիքինգի և մարդու շահագործման դեմ պայքարի իրավական հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող անձանց համար:

Ձեռնարկը կազմելուն և հրատարակելուն աջակցել են Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) և Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Երևանի գրասենյակները՝ ԵՄ ֆինանսավորմամբ: Հեղինակների խումբն իր երախտագիտությունն է հայտնում այս ձեռնարկի ստեղծմանն աջակցող կազմակերպություններին:

Ձեռնարկում ներկայացված տեսակետներն արտացոլում են հեղինակների մոտեցումները, որոնք կարող են չհամընկնել սույն ձեռնարկի հրատարակմանն աջակցող կազմակերպությունների տեսակետներին:

Երեմյան Ա., Թումասյան Դ.,

Ղամբարյան Ա., Պետրոսյան Տ.

Հայաստանի Հանրապետությունում մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները

Երևան, 2011

Բովանդակություն

	Ներածություն	
	Գլուխ 1. Թրաֆիքինգի դեմ պայքարի միջազգային իրավական կարգավորումը	
1.1.	Թրաֆիքինգի դեմ պայքարի միջազգային ակտերի ընդհանուր բնութագիրը և տեսակները	
1.2	Թրաֆիքնգի զարգացումը հասարակության զարգացման տարբեր փուլերում	
1.3.	Թրաֆիքինգի հասկացությունը միջազգային իրավական ակտերում	
1.4.	Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիան և Պալերմոյի արձանագրությունները	
1.5.	Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան	
1.6.	Երեխաների շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի միջազգային օրենսդրության առանձնահատկությունները	
	Գլուխ 2. Մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև մարդու շահագործման քրեաիրավական բնութագրերը	
2.1.	Մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև մարդու շահագործման, շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու սահմանումները ՀՀ քր. օր-ում	
2.1.1.	ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասում ձևակերպված «մարդու թրաֆիքինգ» հասկացությունը	
2.1.2.	ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քրեորեն հետապնդելի արարքները	
2.1.3.	Մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև մարդուն շահագործելու կամ շահագործման մեջ դնելու կամ պահելու հանցագործությունների տեսակներն ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աս-	

	տիճանի	
2.1.4.	Թրաֆիքինգի մեխանիզմները	
2.1.5.	Մարդուն շահագործելու կամ շահագործման մեջ դնելու կամ պահելու մեխանիզմները	
2.2.	Մարդու հանցավոր շահագործում	
2.2.1.	Շահագործման հասկացությունը	
2.2.2.	Պոռնկության շահագործում կամ սեքսուալ շահագործման այլ ձևեր	
2.2.3.	Հարկադիր աշխատանք կամ ծառայություններ	
2.2.4.	Ստրկություն կամ ստրկությանը նմանվող վիճակ	
2.2.5.	Մարդու օրգանները կամ հյուսվածքները վերցնելը	
2.3.	Մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև մարդու հանցավոր շահագործման զոհը	
2.3.1.	Չափահաս զոհը	
2.3.2.	Զոհի / տուժողի՝ շահագործման ենթարկվելու համաձայնությունը	
2.3.3.	Զոհին/տուժողին հանցագործություն կատարելու համար քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը	
2.4.	ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների հանցակազմերը	
2.4.1.	ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների օբյեկտները	
2.4.2.	ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների օբյեկտիվ կողմերը	
2.4.3.	Թրաֆիքինգի, ինչպես նաև մարդուն շահագործելու, շահագործման մեջ դնելու կամ պահելու հանցագործությունների հանցակազմերի օբյեկտիվ կողմերը բնութագրող այլընտրանքային միջոցները	
2.4.4.	ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների սուբյեկտիվ կողմերը	
2.5.	ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների հանցակազմերի որակյալ հատկանիշները	
2.6.	Երեխայի թրաֆիքինգը, ինչպես նաև երեխայի շահագործումը, նրան շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը	

	Գլուխ 3. Մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև շահագործման սահմանազատումը հարակից այլ հանցակազմերից	
3.1.	Շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը (ՀՀ քր. օր-ի 132[3]-րդ հոդված)	
3.2.	«Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելու մեջ ներգրավելը», «Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը» և «Պոռնկագրական առարկաներ կամ նյութեր տարածելը»	
3.2.1.	Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելու մեջ ներգրավելը (ՀՀ քր. օր-ի 261-րդ հոդված)	
3.2.2.	Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը (ՀՀ քր. օր-ի 262-րդ հոդված)	
3.3.	ՀՀ քրեական օրենսգրքի «Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները» վերնագրով 20-րդ գլխում ներառված առանձին հանցագործություններ	
3.3.1.	Երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը (ՀՀ քր. օր-ի 166-րդ հոդված)	
3.3.2.	Երեխային ոգելից խմիչքների օգտագործման, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործման, թափառաշրջիկությանը ներգրավելը կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը (ՀՀ քր. օր-ի 166.1-րդ հոդված)	
3.3.3.	Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը և ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով ծնողի կողմից երեխայի վաճառքը (ՀՀ քր. օր-ի 168-րդ հոդված)	
	Գլուխ 4. Թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերի քննության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում	
4. 1.	Թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերի քննության առանձնահատկությունները	

4. 2.	Թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերով առանձին քննչական գործողությունների մարտավարությունը	
4. 3.	Քննչական և օպերատիվ մարմինների համագործակցության կազմակերպումը թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերով	
	Գլուխ 5. Թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ գործերով օպերատիվ հետախուզական միջոցառումները Հայաստանի Հանրապետությունում	
5.1.	Օպերատիվ - հետախուզական գործունեության հասկացությունը, սկզբունքները և նպատակները	
5.2.	Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ գործերով օպերատիվ - հետախուզական գործունեության առանձնահատկությունները և միջոցառումների տեսակները	
5.2.1.	Օպերատիվ - հետախուզական միջոցառումների տեսակները	
5.2.2.	Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ գործերով օպերատիվ - հետախուզական գործունեության առանձնահատկությունները	
5.2.3.	«Զոհեր» և «Հանցավորներ»	
	Գլուխ 6. Թրաֆիքինգի զոհի (տուժողի) պաշտպանությունը	
6.1.	Թրաֆիքինգի զոհի (տուժողի) հասկացությունը, կարգավիճակը և պաշտպանության հնարավոր սխեմաները	
6.2.	Պաշտպանության ենթակա անձինք	
6.3.	Սպառնալիքի և ռիսկերի գնահատում	
6.4.	Զոհերի նկատմամբ վերաբերմունքի սկզբունքները	
6.5.	Պաշտպանության հատուկ միջոցներ	
	Գլուխ 7. Թրաֆիքինգի զոհերի ուղղորդման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում	
7.1.	Համագործակցության ինստիտուցիոնալ համակարգը	
7.2.	Զոհը ուղղորդման կարգի համատեքստում	
7.3.	Տեղեկատվության հնարավոր աղբյուրները	
7.4.	Տեղեկատվական հոսքերը	

7.5.	Զոհի ուղղորդումը	
7.6.	Զոհի նույնացումը	
7.7.	Զոհին տրամադրվող աջակցությունը	
	Գլուխ 8. Թրաֆիքինգի կանխարգելումը ՀՀ-ում	
8.1.	Թրաֆիքինգի կանխարգելման էությունը և բովանդակությունը	
8.2.	Թրաֆիքինգի սոցիալական կանխարգելումը	
8.3.	Թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում միջազգային և հասարակական կազմակերպությունների մասնակցությունը	
8.3.1.	Թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում միջազգային համագործակցությունը	
8.3.2.	Թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով համագործակցող միջազգային կազմակերպությունները	
8.3.3.	Թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում հասարակական կազմակերպությունների մասնակցությունը	
	Օգտագործված գրականության ցանկ	
	Հավելված 1. Հաճախ օգտագործվող հասկացություններ	

Ներածություն

Մարդու թրաֆիքինգի հիմնախնդիրն ունի պատմական խորը արմատներ: Ստրկատիրական հասարակարգում ստրուկի կամ ստրկությանը նմանվող վիճակում գտնվող մարդու շահագործումն օրինաչափ երևույթ էր, իսկ մարդկանց առևտուրը՝ հարստացման օրինական միջոց: Ստրկությունը, սակայն, ծայրաստիճան խտրականություն էր առաջացնում մարդու նկատմամբ, նվաստացնում նրա պատիվն ու արժանապատվությունը, զրկում բոլոր կարևոր կենսական իրավունքներից: Մարդկու-թյունն աստիճանաբար գիտակցեց ստրկության, ճորտական վիճակի և դաժան ու անմարդկային շահագործման այլ ձևերի անընդունելիությունը: Բնականաբար, անընդունելի է նաև այդպիսի շահագործման համար մարդկանց հավաքագրումն ու նրանց այլ անձանց տիրապետմանը, օգտագործմանը և տնօրինմանը հանձնելը: Այդ երևույթների դեմ պայքարը սկսվել է դրա ծագման հետ միաժամանակ: Մարդկանց ստրկացումը, նրանց կաբալային վիճակի մեջ դնելը կամ պահելը, որպես երևույթներ, չեն վերացել: Մարդու հանցավոր շահագործումը և այդ նպատակով իրականացվող մարդկանց թրաֆիքինգը ընդունել են նոր ձևեր: Մարդկանց շահագործման նպատակով իրականացվող թրաֆիքինգը և մարդկանց շահագործումը պետական սահմաններ չեն ճանաչում, տարբերություն չեն դնում զարգացած և զարգացող պետությունների միջև:

Այսպիսով, թրաֆիքինգը հեշտությամբ հարմարվում է ինչպես աղքատությանը, այնպես էլ շքեղությանը, այն արդիական է ինչպես խաղաղ պայմաններում ապրող, այնպես էլ ռազմական հակամարտությունների մեջ ներքաշված ժողովուրդների համար[1]:

---

[1] Տարբեր աղբյուրների համաձայն՝ տարեկան թրաֆիքինգի զոհ է դառնում 2,5 միլիոնից մինչև 4 միլիոն մարդ: Տես՝ Пособие по борьбе с торговлей людьми для правоохранительных органов, ООН /ПРООН/. 2006. С. 24. См. также МОТ, Глобальный альянс против принудительного труда. 2005. С. 46.

Եվրոպոլի՝ կազմակերպված հանցավորության մասին դեռևս 2004 թ. հրապարակված զեկույցի համաձայն՝ աշխարհում մարդկանց առևտրի հետ կապված դրամական շրջանառությունն ամեն տարի կազմել է 8,5-12 մլրդ եվրո: Տես՝ ЕВРОПОЛ, Отчет об организованной преступности. 2004. С. 12:

ԱՄԿ-ի 2008 թ. գնահատմամբ՝ աշխարհում թրաֆիքինգի զոհ դարձած կանանց, տղամարդկանց և երեխաների շահագործման արդյունքում եկամուտները

Բելգիայում, օրինակ, բացահայտվել և կասեցվել է անդրազգային հանցավոր մի խմբի գործունեությունը, որը Եվրոպայում աշխատանքով ապահովելու պատրվակով ճամփորդական ինչ-որ գործակալության և «Էլիտ պրոֆ» մոդելային գործակալության միջոցով հավաքագրում էր աղջիկների: Նրանք վճարում էին այդ անհայտ ճամփորդական գործակալությանը և «Էլիտ պրոֆ» մոդելային գործակալությանը 900 ԱՄՆ դոլար: Հավաքագրման մեթոդները խաբեությունն ու վստահության չարաշահումն էին: Հավաքագրվածներին փոխադրում էին Բելգիա, ժամանակավորապես թաքցընում Բելգիայի տարածքում գտնվող տարածաշրջաններից մեկում՝ Ֆլանդրիայում, այնուհետև՝ կեղծ փաստաթղթերով փոխադրում Ֆրանսիայի, Հունաստանի, Իտալիայի, Իսպանիայի, Հարավային Կորեայի սեքսուալ ծառայությունների որջեր[2]:

Ուկրաինայում հավաքագրված անձանց աշխատանքով ապահովելու պատրվակով փոխադրում էին Իսպանիա և այնտեղ «տեղավորում» ծանր և ցածր վարձատրվող աշխատանքի: Պայմաններին չհամաձայնվող անձանց ենթարկում էին դաժան ծեծի և խոշտանգումների: Ճամփորդական փաստաթղթերի և, այսպես կոչված, «այլ ծառայությունների» համար հավաքագրվածները վճարում էին 300-1000 ԱՄՆ դոլար: Հանցագործները նաև վճարի դիմաց երիտասարդ կանանց՝ որպես սեքս-ստրկուհիների, մատակարարում էին հասարակաց տներին[3]:

Մարդկանց ստրկացումը կամ անօրինական և դաժան շահագործման այլ ձևերը դրսևորվում են ինչպես ավտորիտար, այնպես էլ ժողովրդավարական ռեժիմներում:

Խորհրդային Միության լճացման տարիներին, օրինակ, Ուզբեկստանում բացահայտվեցին Ադիլովի և «մեծ հարգանք վայելող» մի շարք այլ անձանց հանցագործությունները՝ մարդկանց առևանգումը, մարդկանց առևտուրը, պարտապանների ստրկացումն ու ճորտացումը, դաժան աշխատանքային և սեքսուալ շահագործումը ու նմանատիպ այլ հանցավոր արարքներ: *Ռուսաստանի Դաշնութ-*

տարեկան կազմում են շուրջ 32 մլրդ դոլար: Տես՝ МОТ, Глобальный альянс против принудительного труда. 2008. С. 47.

[2] CRY.ru: "В Антверпене разоблачена преступная группа, торговавшая девушками из России" - Брюссель, 9 ноября 2004, 11:59

[3] CRY.ru: "За каждую "секс-рабыню" преступники получают от 1,5 до 5 тыс. долларов" - Киев, 4 февраля 2004, 13:02

յան անդրազգային կազմակերպված հանցավոր համագործակցություններից մեկի (8 անդամներ) հանցավոր գործունեությամբ աղջիկներին ասիական տարածաշրջանի սեքս որջեր էին փոխանցում: Հանցագործները մարզերի փոքր քաղաքներում գտնում էին դյուրահավատ աղջիկների և, խոստանալով լավ վարձատրվող տարբեր աշխատանքներ, նրանց փոխադրում էին արտասահման, որտեղ ստիպում էին զբաղվել պոռնկությամբ: Հանցավոր համագործակցության գործունեությունը բացահայտվել և կասեցվել է: Հաջողվել էր ապացուցել 33 դեպք, որից 11-ը կատարվել էին անչափահասների նկատմամբ: Չնայած դրան՝ Միացյալ Արաբական Էմիրություններում և Թաիլանդում հայտնաբերվել և վերադարձվել էր գերի աղջիկների սոսկ մի մասը[4]:

Թեև թրաֆիքինգին նպաստող հիմնական գործոնների սպառիչ ցանկ լինել չի կարող, այնուամենայնիվ, թրաֆիքինգին նպաստող հիմնական գործոններ կարող են գնահատվել.

- տնտեսական անբարենպաստ պայմանները (աշխատաշուկայի անկայունությունը, գործազրկությունը, տնտեսական ճգնաժամը և այլն),
- սոցիալական անբարենպաստ պայմանները (աղքատությունը, բնակչության ցածր կենսամակարդակը, որակյալ կրթության և առողջապահության ոչ մատչելի լինելը, անգրագիտությունը, վտանգների մասին ցածր իրազեկվածությունը),
- ընտանեկան ծանր հանգամանքները (սոցիալական որբությունը, բռնությունը ընտանիքում, ընտանիքի քայքայումը),
- այլ գործոններ (ինչպես, օրինակ, խտրականությունը, ավանդույթները):

Այս ձեռնարկում ներկայացվելու են ՀՀ-ում մարդու թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները, այդ հանցագործության ընկալման, մեկնաբանման և քննման առանձնահատկությունները, ինչպես նաև այլ հարակից հարցեր:

---

[4] CRY.ru: "Обезврежена крупная международная преступная группировка, продававшая российских девушек за границу"- Воронеж, 30 марта 2004, 07:48

Գլուխ 1. Թրաֆիքինգի դեմ պայքարի միջազգային իրավական կարգավորումը

1.1. Թրաֆիքինգի դեմ պայքարի միջազգային ակտերի ընդհանուր բնութագիրը և տեսակները

Թրաֆիքինգ երևույթն ունի հին պատմություն և լայն աշխարհագրություն: Այն կարելի է բնութագրել որպես ժամանակակից ստրկության մի տեսակ:

Հաշվի առնելով, որ մարդկանց թրաֆիքինգն ունի միջազգային բնույթ, թրաֆիքինգի մասին պետք է խոսել համաշխարհային համատեքստում: Թրաֆիքինգի հետ այս կամ այն չափով բախվում են բոլոր երկրները՝ աղքատ, զարգացող և զարգացած: Ըստ էության, թրաֆիքինգի զոհ կարող են դառնալ թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք և թե՛ երեխաներ: Սեռական շահագործումը, հարկադիր աշխատանքը, երեխաների աշխատանքի շահագործումը, պարտապանի ստրկացումը, մուրացկանության մեջ ներգրավումը և այլն՝ այս ամենը մի հանցագործության՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) տարբեր դրսևորումներն են:

Աշխարհի գրեթե բոլոր պետությունները ներգրավված են մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում՝ քաջ գիտակցելով երևույթի տարածման վտանգները, որոնք սպառնում են պետական իշխանության կայունությանը և նպատում հանցագործ ցանցերի ամրապնդմանը: Բայց, չնայած ձեռնարկվող քայլերին և ընդունվող միջազգային փաստաթղթերին, թրաֆիքինգի բացահայտվող դեպքերը պայքարի նոր ձևերի մշակման անհրաժեշտություն են թելադրում:[5]

Մարդկանց թրաֆիքինգը համաշխարհային բնույթի հիմնախնդիրներից մեկն է, որը հատում է ազգային սահմաններն ու համարվում է անդրազգային հանցագործություն՝ իր բնույթով նմանվելով թմրամիջոցների և զենքի միջազգային ապօրինի շրջանառությանը:

Թրաֆիքինգի դեմ պայքարը կարգավորող միջազգային իրավական հիմնական փաստաթղթերից է ՄԱԿ-ի Անդրազգային

---

[5] Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայողների պարտադիր վերապատրաստման դասընթացների “Մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) և դրա դեմ պայքարը” ուսումնական մոդուլ. Երևան, 2011, էջ 5:

կազմակերպված հանցավորության դեմ պայքարի 2000թ.-ի կոնվենցիան և նրան կից երկու կամընտիր արձանագրությունները՝ Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներմուծման դեմ և Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին, ինչպես նաև Եվրոպայի Խորհրդի "Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին" 2005թ.-ի կոնվենցիան:

Միջազգային հանրությունը ընդունել է թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում այնքան միջազգային ակտեր[6], որ անհրաժեշտություն է առաջացել դրանք համակարգել: Հարկ է նշել, որ այդ ակտերի միջազգային համակարգումը չի իրականացվել և այն կրում է տեսական բնույթ, իսկ անհրաժեշտությունը պայմանավորված է ուսումնասիրության ոլորտի առանձնահատկություններով և ծավալով:

Անհրաժեշտ է նշել, որ թրաֆիքինգի ոլորտը կարգավորող միջազգային իրավունքի նորմերի համակարգը ներառում է՝

1. միջազգային ակտերը, ներառյալ միջազգային իրավական ակտերը,
2. միջազգային իրավունքի սովորույթը,
3. իրավունքի հանրաճանաչ սկզբունքները:

Միջազգային իրավական սովորույթի կիրառումը նախատեսված է Միջազգային դատարանի ստատուտի 38-րդ հոդվածի 1-ին կետում: Իսկ ՀՀ-ում սովորույթի մասին կարելի է խոսել որոշ կոնվենցիաների կիրառելիության առումով, օրինակ, Ստրկության մասին 1926 թ. կոնվենցիայի վերաբերյալ, որը Հայաստանը դեռ չի վավերացրել:

---

[6] Այստեղ անհրաժեշտ է նշել, որ "միջազգային ակտ" և "միջազգային իրավական ակտ" հասկացությունները տարբեր են: "Միջազգային ակտ" հասկացությունն ավելի լայն է և ներառում է ինչպես միջազգային իրավական ակտերը, այնպես էլ այլ ակտեր, օրինակ՝ "կլոր սեղանների", համաժողովների, սիմպոզիումների բանաձևերը, որոնք չունեն պարտադիր բնույթ: Իսկ միջազգային իրավական ակտերը, լինելով միջազգային ակտերի տարատեսակ, առաջացնում են որոշակի իրավաբանական պարտականություններ մասնակից պետությունների համար: Միջազգային իրավական ակտերից են միջազգային պայմանագրերը և միջազգային կազմակերպությունների որոշումները, որոնք ունեն պարտադիր բնույթ: Մանրամասն տես՝ Международное право/ Под ред. А.И. Микульшина. М. 2005. С. 41.

Միջազգային իրավունքի լրացուցիչ աղբյուրներից են նաև միջազգային դատարանի դատական որոշումները: Մասնավորապես մեծ նշանակություն ունեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի[7] որոշումները, որոնք նպաստում են Մարդու իրավունքների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի միատեսակ կիրառմանը և մարդու իրավունքների պաշտպանությանը, ներառյալ՝ թրաֆիքինգի վերաբերյալ գործերի քննության ընթացքում: Ընդ որում, նմանատիպ որոշումների թիվը բավականին մեծ է: Դրանց թվին են պատկանում, օրինակ, Բերիշանն ընդդեմ Նիդեռլանդների, Ռանցևն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի գործերը և այլն:

Հաշվի առնելով միջազգային իրավական ակտերի բազմազանությունը՝ առանձնացնենք թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջազգային իրավական ակտերը: Դրանց թվին են պատկանում՝[8]

1. Սպիտակ ստրուկուհիների առևտրի դեմ պայքարելու մասին 1904թ. մայիսի 18-ի միջազգային համաձայնագիրը,
2. Սպիտակ ստրուկուհիների առևտրի դեմ պայքարելու մասին 1910թ. մայիսի 4-ի միջազգային կոնվենցիան,
3. 1904թ. մայիսի 18-ի համաձայնագրի և 1910թ. մայիսի 4-ի կոնվենցիայի 1910թ. մայիսի 4-ի լրացուցիչ արձանագրությունը,
4. Կանանց և երեխաների առևտրի դեմ պայքարելու մասին 1921թ. սեպտեմբերի 30-ի կոնվենցիան,
5. Ստրկության մասին ՄԱԿ-ի 1926թ. սեպտեմբերի 25-ի կոնվենցիան, 1953թ. դեկտեմբերի 7-ի փոփոխություններով,[9]
6. ԱՄԿ-ի Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին 1930թ. հունիսի 28-ի թիվ 29 կոնվենցիան,
7. Չափահաս կանանց ապօրինի փոխադրումները կանխելու մասին 1933թ. հոկտեմբեր 11-ի կոնվենցիան,
8. Միջազգային ռազմական տրիբունալի 1945 թ. օգոստոսի 8-ի կանոնադրությունը,

---

[7] Այսուհետ՝ ՄԻԵԴ:

[8] Միջազգային փաստաթղթերը ներկայացվում են ժամանակագրական տեսանկյունից:

[9] Այս կոնվենցիան ընդունվել է դեռևս Ազգերի Լիգայի կողմից, բայց քանի որ ՄԱԿ-ը հանդիսանում է նրա իրավահաջորդը, ինչպես նաև այն, որ կոնվենցիան փոփոխվել է 1953 թ.-ին, ներկայում այն առավել հայտնի է որպես ՄԱԿ-ի կոնվենցիա:

9. 1921թ. սեպտեմբերի 30-ի Կանանց և երեխաների առևտրի դեմ պայքարելու մասին կոնվենցիայի և 1933թ. հոկտեմբերի 11-ի Չափահաս կանանց ապօրինի փոխադրումները կանխելու մասին կոնվենցիայի 1947թ. նոյեմբերի 12-ի լրացուցիչ արձանագրությունը,

10. Չափահաս կանանց ապօրինի փոխադրումները կանխելու վերաբերյալ կոնվենցիայի 1947թ. նոյեմբերի 12-ի լրացուցիչ արձանագրությունը,

11. Մարդու իրավունքների 1948թ. դեկտեմբերի 10-ի համընդհանուր հռչակագիրը,

12. Մարդկանց առևտրի և երրորդ անձանց կողմից պոռնկության շահագործման դեմ պայքարելու մասին 1949թ. մարտի 21-ի կոնվենցիան,

13. Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին 1950 թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիան,

14. Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. հուլիսի 28-ի կոնվենցիան,

15. Ստրկության վերացման, ստրկավաճառության և ստրկությանը մոտ սովորույթների ու ինստիտուտների վերացման մասին 1956թ. սեպտեմբերի 7-ի լրացուցիչ կոնվենցիան,

16. ԱՄԿ-ի Հարկադիր աշխատանքը վերացնելու մասին 1957թ. հունիսի 25-ի թիվ 105 կոնվենցիան,

17. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966թ. դեկտեմբերի 16-ի միջազգային պակտը,

18. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. դեկտեմբերի 19-ի միջազգային պակտը,

19. Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիային կից 1967թ. հոկտեմբերի 4-ի արձանագրությունը,

20. Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետի չկիրառելու մասին 1968թ. նոյեմբերի 26-ի կոնվենցիան,

21. Աշխատանքի ընդունելու նվազագույն տարիքի մասին 1973թ. հունիսի 26-ի ԱՄԿ-ի թիվ 138 կոնվենցիան,

22. Ապարտեիդի հանցագործությունն արգելելու և պատժելու մասին 1973թ. նոյեմբերի 30-ի կոնվենցիան,[10]

23. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1979թ. դեկտեմբերի 18-ի ՄԱԿ-ի կոնվենցիան,

24. Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիաիրավական բնագավառի մասին 1980թ. հոկտեմբերի 24-ի Հաագայի կոնվենցիան,

25. Երեխայի իրավունքների մասին 1989թ. նոյեմբերի 20-ի կոնվենցիան,

26. Միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների պաշտպանության մասին 1990թ. դեկտեմբերի 18-ի կոնվենցիան,

27. Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին 1993թ. մայիսի 29-ի կոնվենցիան,

28. 1993թ. հունիսի 25-ի Վիեննայի հռչակագիրը և գործողությունների ծրագիրը,

29. Միջազգային քրեական դատարանի 1998թ. հուլիսի 17-ի Հռոմի ստատուտը,

30. Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի վերացման մասին 1999թ. հունիսի 17-ի ԱՄԿ-ի կոնվենցիան,

31. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին, 2000թ. մայիսի 25-ի կամընտիր արձանագրությունը,

32. Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին 2000թ. նոյեմբերի 15-ի ՄԱԿ-ի կոնվենցիան,

33. Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման ու խափանման և դրա համար պատժի մասին 2000թ. նոյեմբերի 15-ի թիվ 1 արձանագրությունը,

34. Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներմուծման դեմ 2000թ. նոյեմբերի 15-ի թիվ 2 արձանագրությունը,

---

[10] Այս կոնվենցիայիում խոսքը մասնավորապես ռասայական սեգրեգացիային և խտրականությանը համանման պրակտիկայի մասին է, ինչպիսին կիրառվում էր Հարավային Աֆրիկայում՝ ռասայական խմբի կամ խմբի անդամների շահագործման, մասնավորապես նրանց հարկադիր աշխատանքի օգտագործման միջոցով:

35. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին 2005թ. մայիսի 16-ի Եվրոպայի խորհրդի կոնվենցիան:[11]

Միջազգային ակտերը կարելի է դասակարգել նաև ըստ դրանք ընդունած կազմակերպությունների, ըստ կիրառելիության ոլորտի և այլ հատկանիշներով:

Չնայած թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված միջազգային իրավական ակտերի բազմազանությանը, դրանք ուղղված են այս ոլորտում պետությունների համագործակցությունն ուժեղացնելու և թրաֆիքինգի դեմ պայքարը միասնական բնույթի և առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ:

1.2. Թրաֆիքինգի զարգացումը հասարակության զարգացման տարբեր փուլերում

Պատահական չէ, որ այսօր հանրությունը մարդկանց թրաֆիքինքն ընկալում է որպես ժամանակակից ստրկություն: Դա պայմանավորված է նրանով, որ թրաֆիքինգի և ստրկության հիմքում ընկած է մարդու "ապրանքայնացումը", այսինքն վերաբերմունքը որպես առարկայի, որի միջոցով կարելի է եկամուտ ստանալ:

Ստրկությունը հնագույն ինստիտուտներից է, որը մարդու նկատմամբ սեփականության իրավունքի իրականացում է: Այն շահագործման առավել բիրտ ձև է, որը դարձնում է մարդուն, արտադրության միջոցների հետ մեկտեղ, ստրկատիրոջ սեփականությունը, և որի պարագայում անձը չունի որևէ իրավունք, չի ստանում որևէ փոխհատուցում կատարած աշխատանքի դիմաց (կամ ստացված փոխհատուցումը չնչին է), և այդ իսկ պատճառով չունի որևէ տնտեսական շահագրգռվածություն:

Թրաֆիքինգի դեմ պայքարին վերաբերող միջազգային իրավական ակտերի ստեղծման պատմությունը սկիզբ է առնում դեռ ստրկատիրական հասարակարգի ժամանակաշրջանից: Ստրկության արգելքն ինքնին չի հանգեցրել տրկության վերացման, այն ըն-

[11] Առկա են նաև այլ միջազգային փաստաթղթեր, որոնք այս կամ այն չափով, հիմնականում անուղղակիորեն, առնչվում են մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտին, բայց այստեղ դրանք ներկայացնելը նպատակահարմար չէ: Այդուհանդերձ, այս ոլորտի հիմնական փաստաթղթերը ներկայացված են ամբողջությամբ:

դամենը ձևափոխվել է՝ ստանալով նոր կարգավիճակ և նոր դրսևորումներ: Ցավոք, ներկայումս ստրկությունը գոյություն ունի որպես "մարդկային հասարակության խայտառակություն, չնայած գաղութային համակարգի փլուզմանն ու գաղութացման քաղաքական և բարոյական պարսավանքի առկայությանը":[12]

Ժամանակակից ստրկության հարցերով առաջատար մասնագետ Քեյվին Բեյլզը համարում է, որ մարդիկ ստրկանում են բռնության միջոցով և պահվում են գերության մեջ շահագործման նպատակով: Ու թեև շատերի կարծիքով երևույթը մնացել է անցյալում, նորագույն պատմությունը վկայում է, որ ստրկատիրության պրակտիկան մեր օրերում էլ լայնորեն տարածված է, հատկապես այնտեղ, որտեղ հնարավորություն կա օգտվելու ծանր սոցիալական պայմաններից և բնակչության աղքատությունից: Բեյլզի գնահատականներով, ժամանակակից աշխարհում ավելի քան 27 մլն - մարդ գտնվում է ստրկության մեջ:

Պատմական զարգացումներին զուգահեռ, ինչպիսիք են ստրուկների հոսքի նվազումը և չդադարող ապստամբությունները, ի հայտ են գալիս նաև տնտեսական գործոններ, որոնք դրդում են տերերին՝ որոնել շահագործման նոր ձևեր: Ակնհայտ է դառնում, որ ստրուկարտադրողին ինչ-որ չափով պետք է շահագրգռել իր աշխատանքի արդյունքների նկատմամբ, դրանով իսկ բարձրացնելով շահագործման արդյունավետությունը: Հենց այդ ժամանակ է, որ ստրուկները սկսում են զբաղվել հողագործությամբ, ամրացվում են այդ հողին և աստիճանաբար մերվում գաղութների հետ: Տնտեսական գործոններով պայմանավորված, այս փոփոխությունը ջնջում է առկա տարբերությունները ստրուկի և գաղութի բնակչի միջև:

13-րդ դարում երևույթը հետզհետե սկսում է վերանալ, սակայն 17-19 դարերում այն նորից գլուխ է բարձրացնում: Նշված շրջանում ստրուկների ձեռք բերման աղբյուրներն են Ասիայի, Աֆրիկայի և Ամերիկայի երկրները:

Առաջին անգամ ստրկավաճառության, իսկ ավելի ճիշտ Աֆրիկայի սևամորթների վաճառքի արգելման մասին միջազգային մակարդակով խոսվեց 1815թ. Վիեննայի համաժողովի հատուկ հռչակագրում: Հաջորդ քայլը կատարվեց 1818թ. Ախենի համաժողո-

[12] Международное уголовное право/ Под общ. ред. В.Н. Кудрявцева. М. 1999. С. 135.

վում, երբ սևամորթների վաճառքը ոչ միայն արգելվեց, այլ նաև ճանաչվեց հանցավոր: Բայց այդ երկու փաստաթղթերը չունեին պարտադիր բնույթ և չհիմնավորվեցին գործնական միջոցներով, և ստրկությունն ու ստրկավաճառությունը շարունակում են գոյատևել՝ մնալով եկամտաբեր արհեստ:

Ստրկության և ստրկավաճառության դեմ պայքարի գործնական քայլեր իրականացվեցին 1841թ. կնքված Լոնդոնյան պայմանագրով, որի մասնակից պետություններն էին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Ավստրիան և Պրուսիան: Այդ պայմանագրով ստրկավաճառությունը հավասարեցվում էր արդեն իսկ քրեորեն պատժելի ծովահենությանը և վերը նշված պետությունների նավերին իրավունք էր վերապահվում խուզարկել այն նավերը, որոնք կասկածվում են ստրուկների տեղափոխման մեջ: 1862թ. ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի միջև կնքվում է կասկածելի նավերի համատեղ խուզարկության մասին համաձայնագիր:

Այնուհետև, 1885թ. Բեռլինում, 1890թ. Բրյուսելում կնքվեցին փաստաթղթեր, որոնք ավելի ընդլայնեցին ստրկավաճառության դեմ պայքարի ոլորտը: [13]

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը բացահայտում է, որ ստրուկի աշխատանքը անորակ է և անարդյունավետ: Հասարակության լայն շերտերի, ինչպես նաև ստրուկների դիմադրության ճնշման տակ սկսվում է ստրկության վերացման գործընթացը, որը շարունակվում է մինչև XX-րդ դարի կեսը: 1956 թվականին Ժենևում կայանում է ստրկության դեմ պայքարին նվիրված կոնֆերանսը, որի ժամանակ մասնակից պետություններն ընդունում են "Ստրկության, ստրկավաճառության, ստրկությանը հավասարազոր ավանդույթների վերացման մասին" լրացուցիչ կոնվենցիան: Հաշվի առնելով, որ ստրկությունը գոյություն ունի հասարակության, իսկ հետագայում՝ պետության առաջացման պահից, կարելի է ասել, որ պայքարի գործընթացը "մի փոքր" ուշացել է: Միաժամանակ հարկ է նշել, որ չնայած այս չարիքի դեմ ձեռնարկվող միջոցներին, խնդիրը շարունակում է մնալ անհանգստացնող:

Ստրկության ձևերը պատմական տարբեր ժամանակաշրջաններում եղել են տարբեր: Այդ ձևերի առաջացման և հաստատման

[13] Лукашук И.И., Наумов А.В. Международное уголовное право. М. 1999. С. 153-154.

հարցում իրենց դերն ու նշանակությունն են ունեցել երկրների ու ժողովուրդների սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունները:

Ընդհանուր առմամբ, մարդկությունն իր պատմության ողջ ընթացքում անցել է ստրկության մի քանի շրջան՝ նահապետական, անտիկ (դասական), ֆեոդալական, կապիտալիստական, ժամանակակից:

Նահապետական ստրկությունը՝ ստրկության առաջին, նախնական շրջանն էր, որի ժամանակ ստրուկը հանդիսանում էր իրեն տնօրինող ընտանիքի իրավազուրկ անդամ: Նա ապրում էր այդ ընտանիքի հետ մի ծածկի տակ, սակայն կատարում էր ավելի ծանր աշխատանք, քան ընտանիքի մյուս անդամները: Տնտեսության արագ զարգացման արդյունքում այն ձևափոխվել է, դառնալով անտիկ (դասական) ստրկություն, և կապվել է ապրանքատնտեսության հետ: Այդ շրջանում անձը ծայրաստիճան ճնշման տակ վերածվել է "իրի, առարկայի": Բնականաբար, դա երկար տևել չէր կարող, պետք է գար մի ժամանակ, երբ ծառան, գիտակցելով իր կարգավիճակը, ըմբոստանար:

Միջնադարում տարածում ստացավ այսպես կոչված ֆեոդալական ստրկությունը, երբ մարդը, կապվելով հողին, սկսեց այն մշակել, վճարելով հողատիրոջը որոշակի տուրք: Իսկ ստրկության տարածման նոր՝ կապիտալիստական շրջանը, սկսվեց գաղութների առաջացման և զարգացման արդյունքում, երբ թափ առավ Նոր Աշխարհի հսկայական հողատարածքների սեփականացման գործընթացը, որն առաջացրեց աշխատուժի մեծ պահանջարկ: Աշխարհի բոլոր ծայրերից Ամերիկա մայր ցամաք ժամանած և բնակություն հաստատած առավելապես քրեականացված տարրերը ցանկանում էին տիրապետել հողին, բայց չաշխատել այդ հողի վրա: Արդյունքում, 17-19–րդ դարերում, երբ սկսվեց արդյունաբերական հեղաշրջում, գլուխ բարձրացրեց ստրկավաճառությունը, որը շարունակվեց ըստ էության, մինչև 20-րդ դարի կեսերը: Մեր օրերում ստրկությունը բոլոր երկրներում համարվում է հակաօրինական: Վերջին երկիրը, որտեղ ստրկությունը պաշտոնապես վերացվեց, Մավրիտանիան էր: Դա տեղի է ունեցել 1980 թվականին:[14]

---

[14] Մանրամասն տես՝ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայողների պարտադիր վերապատրաստման դասընթացների "Մարդկանց

1.3. Թրաֆիքինգի հասկացությունը միջազգային իրավական ակտերում

Առաջին անգամ թրաֆիքինգի սահմանումը մարդկանց առևտուր եզրույթի տեսքով ներկայացվում է Պալերմոյի արձանագրության 3-րդ հոդվածի «ա» կետում և որպես այդպիսին ճանաչվում է՝ շահագործման նպատակով իրականացվող մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը ուժի սպառնալիքով կամ դրա կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով: Շահագործումը նվազագույնը ներառում է այլ անձանց մարմնավաճառության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը համանման սովորույթները, անազատ վիճակը կամ մարմնի մասերը կորզելը:

Որոշ փոփոխություններով մարդկանց թրաֆիքինգի սահմանումը նախատեսված է ԵԽ-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածի «ա» կետում, որի համաձայն մարդկանց թրաֆիքինգ է՝ շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը՝ ուժի սպառնալիք կամ ուժ գործադրելու կամ հարկադրանքի որևէ այլ ձև կիրառելու, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու, կամ այլ անձնավորության նկատմամբ որոշակի վերահսկողություն իրականացնող որևէ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով դրամական միջոցներ կամ այլ օգուտներ տրամադրելու կամ ստանալու եղանակով: Շահագործումը ներառում է այլ անձանց մարմնավաճառության կամ սեքսուալ այլ շահագործումը, հարկադիր աշխատանքները կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը հավասարազոր վիճակը, տաժանակիր աշխատանքները կամ օրգանների հեռացումը:

շահագործումը (թրաֆիքինգը) և դրա դեմ պայքարը” ուսումնական մոդուլ. Երևան, 2011, էջեր 6-8:

ՀՀ քրեական օրենսդրքի[15] 132-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված սահմանումը իր բովանդակությամբ բխում է ԵԽ կոնվենցիայում տրված սահմանումից: Կան որոշակի տարբերություններ, որոնք պայմանավորված են տերմինաբանական հստակեցման անհրաժեշտությամբ, քանի որ ՀՀ օրենսդրության մեջ միևնույն տերմինը չի կարող օգտագործվել տարբեր իմաստներով:

Շահագործման ձևերի ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունեն ԱՄԿ-ի Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին թիվ 29 և Հարկադիր աշխատանքի վերացման մասին թիվ 105 կոնվենցիաները: Առաջին կոնվենցիան ընդունվել է հարկադիր կամ պարտադիր աշխատանքի վերացման նպատակով և այն սահմանում է "հարկադիր կամ պարտադիր աշխատանք" հասկացությունը՝ մատնանշելով այն աշխատանքները, որոնք չեն ներառվում դրա մեջ: Այդ կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն, հարկադիր կամ պարտադիր աշխատանք նշանակում է որևէ պատժի սպառնալիքի տակ որևէ անձից պահանջվող ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որի համար այդ անձը կամավոր չի հայտնել իր համաձայնությունը: Իսկ երկրորդ կոնվենցիան ընդունվել է հարկադիր կամ պարտադիր աշխատանքն արգելելու նպատակով:

Ընդ որում, հարկադիր կամ պարտադիր աշխատանքը չի ներառում՝

ա) պարտադիր զինվորական ծառայության մասին օրենքներով պահանջվող և զուտ զինվորական բնույթի ցանկացած աշխատանք կամ ծառայություն,

բ) երկրի քաղաքացիների սովորական քաղաքացիական պարտականությունների մաս կազմող ցանկացած աշխատանք կամ ծառայություն,

գ) դատարանի կայացրած դատավճռի հետևանքով անձից պահանջվող ցանկացած աշխատանք կամ ծառայություն՝ այն պայմանով, որ այդ աշխատանքը կամ ծառայությունը կատարվի պետական մարմնի վերահսկողության կամ հսկողության ներքո, և որ նշված անձը չփոխանցվի կամ չհանձնվի մասնավոր անձանց, ընկերությունների կամ ընկերակցությունների տնօրինմանը,

դ) արտակարգ իրավիճակների պայմաններում պահանջվող ցանկացած աշխատանք կամ ծառայություն, այսինքն՝ պատերազ-

[15] Այսուհետ՝ ՀՀ Քր. օր.:

մի, տարերային աղետի կամ դրա սպառնալիքի դեպքերում, ինչպիսիք են հրդեհները, ջրհեղեղները, սովը, երկրաշարժը, սուր համաճարակները կամ անասունների համաճարակները, կենդանիների, միջատների կամ մակաբույծների հարձակումները և ընդհանրապես այն իրավիճակները, որոնց դեպքում վտանգի են ենթարկվում կամ կարող են ենթարկվել ամբողջ բնակչության կամ նրա մի մասի կյանքը կամ նորմալ կենսապայմանները,

ե) համայնքային բնույթի փոքր ծավալի աշխատանքներ, որոնք կատարվում են տվյալ համայնքի անդամների կողմից համայնքի անմիջական օգուտի համար, և որոնք, հետևաբար, կարող են համարվել համայնքի անդամների սովորական քաղաքացիական պարտականություններ՝ պայմանով, որ համայնքի անդամները կամ նրանց անմիջական ներկայացուցիչները իրավունք ունենան այդ աշխատանքների նպատակահարմարության վերաբերյալ արտահայտել իրենց կարծիքը:

Ելնելով երեխաների աշխատանքի որոշակի առանձնահատկություններից,[16] ԱՄԿ-ն ընդունել է նաև Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման մասին թիվ 182 կոնվենցիան, որը պահանջում է անհապաղ և արդյունավետ միջոցներ ձեռնարկել երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը վերացնելու և 18 տարեկանից ցածր անձանց հարկադիր աշխատանքներում չներգրավելու համար: Այդ կոնվենցիայի համաձայն, երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը ներառում են՝

- ստրկության բոլոր ձևերը՝ թրաֆիքինգը, պարտավորական կապալը, ճորտատիրական կախումը, զինված հակամարտություններում օգտագործելը, հարկադիր աշխատանքը,
- երեխաներին պոռնոգրաֆիայի և մարմնավաճառության մեջ ներգրավելը,
- երեխաներին թմրանյութերի առուծախում և թունավոր աշխատանքներում ներգրավելը,
- ցանկացած աշխատանք, որն իր բնույթով և պայմաններով կարող է վնաս հասցնել երեխայի առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը:

---

[16] ԱՄԿ-ի գնահատմամբ այսօր աշխարհում 218 մլն երեխա աշխատում է, որից 127 մլն վտանգավոր, իսկ 8 մլն վատթարագույն աշխատանքներում: Երեխայի աշխատանքը ասոցացվում է աղքատության և խտրականության հետ:

Ստրկություն հասկացությունը սահմանվում է Ազգերի Լիգայի “Ստրկության մասին” 1926 թվականի կոնվենցիայով, որի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն, ստրկությունը անձի այն վիճակն է կամ դրությունը, երբ անձի նկատմամբ իրականացվում են սեփականության իրավունքին բնորոշ բոլոր կամ որոշակի լիազորությունները:

1956 թվականին Ժնևում ընդունվել է ՄԱԿ-ի “Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը հավասարազոր ավանդույթների վերացման մասին” լրացուցիչ կոնվենցիան, որում ներառված են ոչ միայն ստրկության, այլև դրան հավասարազոր և այլ կախյալ վիճակների հասկացությունները: Դրանցից են՝

1. պարտապանի ստրկացումը,

2. ճորտական վիճակը,

3. ցանկացած ինստիտուտ կամ ավանդույթ, որի ուժով.

ա) կնոջ ծնողները, խնամակալը, ընտանիքը կամ յուրաքանչյուր այլ անձ կամ անձանց խումբ դրամով կամ բնեղենով վարձատրելու դիմաց խոստանում են ամուսնացնել կամ ամուսնացնում են այդ կնոջը, առանց նրան մերժելու իրավունք վերապահելու,

բ) կնոջ ամուսինը, վերջինիս ընտանիքը կամ տոհմը իրավունք ունեն վարձատրությամբ կամ այլ պայմանով փոխանցելու տվյալ կնոջն այլ անձի,

գ) ամուսնու մահից հետո կինը ժառանգաբար փոխանցվում է մեկ այլ անձի,

4. ցանկացած ինստիտուտ կամ ավանդույթ, որի ուժով երեխան ծնողների կամ նրանցից մեկի կամ խնամակալի կողմից վարձատրությամբ կամ առանց դրա փոխանցվում է մեկ այլ անձի՝ այդ երեխայի կամ նրա աշխատանքի շահագործման նպատակով:

Մարմնի մասերի կամ հյուսվածքների կորզման վերաբերող միջազգային փաստաթղթերից հարկ է նշել մարդկանց, մարդկային օրգանների և հյուսվածքների կորզման դեմ պայքարում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագիրը, որի 1-ին հոդվածի համաձայն՝ օրգան է համարվում ՝ օրգանիզմի մասը, որն իրենից ներկայացնում է հյուսվածքների էվոլյուցիոն կազմավորված համալիր՝ միավորված ընդհանուր գործառույթով, կառուցվածքային կազմվածքով և զարգացմամբ, իսկ հյուսվածք է՝ ընդհանուր գործառույթով, կազմվածքով և(կամ) ծագ-

մամբ միավորված բջիջների և ոչ բջջային կառուցվածքների համակարգը:

Սեռական շահագործման կամ մարմնավաճառության սահմանումը միջազգային իրավական ակտերում նախատեսված չէ, և հետևաբար կարգավորվում է ազգային օրենսդրությամբ կամ մեկնաբանություններով:

Միջազգային իրավական ակտերում նախատեսված են մանկավաճառության, մանկական պոռնոգրաֆիայի և երեխաների մարմնավաճառության եզրույթները: Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրության 2-րդ հոդվածի համաձայն, այդ արձանագրության նպատակների համար՝

ա) մանկավաճառություն նշանակում է՝ ցանկացած գործողություն կամ գործարք, որի միջոցով երեխան ցանկացած անձի կամ անձանց խմբի կողմից փոխանցվում է այլ անձի կամ անձանց խմբի՝ վարձատրության կամ ցանկացած այլ հատուցման դիմաց,

բ) երեխաների մարմնավաճառություն նշանակում է՝ երեխայի օգտագործումը սեռական բնույթի գործունեության մեջ՝ վարձատրության կամ ցանկացած այլ տեսակի հատուցման դիմաց,

գ) մանկական պոռնոգրաֆիա նշանակում է՝ որևէ միջոցով երեխայի ցանկացած ցուցադրում, որը կատարում է իրական կամ մոդելավորված բացահայտ սեռական գործողություններ, կամ երեխաների սեռական օրգանների ցանկացած ցուցադրում գլխավորապես սեռական նպատակներով:

Վերը նշված միջազգային իրավական ակտերը համարվում են թրաֆիքինգի դեմ պայքարում հիմնականները և ներկայացված եզրույթները հանդիսանում են ելակետային տվյալներ թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական հիմքերն ուսումնասիրելու համար:

1.4. Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիան և Պալերմոյի արձանագրությունները

Թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտի միջազգային իրավական հիմնական փաստաթղթերից մեկն է ՄԱԿ-ի Անդրազգային կազմա-

կերպված հանցավորության դեմ պայքարի մասին 2000թ. Կոնվենցիան և դրա երկու կամընտիր Արձանագրությունները՝ Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին և Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներս բերելու դեմ: Այս փաստաթղթերի ընդունումը միջազգային հանրությանը հնարավորություն ընձեռեց նոր զարգացում տալ թրաֆիքինգի դեմ պայքարի գործընթացին՝ որակական առավել բարձր մակարդակով կարգավորելով անդրազգային հանցավորության դեմ պայքարը:

Կոնվենցիան ունի պարտադիր իրավաբանական ուժ և մասնակից պետություններին պարտավորեցնում է միջոցներ ձեռնարկել անդրազգային կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարելու համար: Այն բաղկացած է 41 հոդվածներից: Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն, կոնվենցիայի հիմնական նպատակն է նպաստել անդրազգային կազմակերպված հանցավորության առավել արդյունավետ կանխարգելմանը և աջակցել դրա դեմ պայքարի գործում համագործակցությանը:

Կոնվենցիան կարևորում է այն հանգամանքները, որորնցով որոշվում է հանցագործության անդրազգային բնույթը, և այն այդպիսին է համարվում, եթե՝

ա) այն կատարվել է մեկից ավելի պետություններում,

բ) այն կատարվել է մի պետությունում, բայց դրա նախապատրաստման, պլանավորման, ղեկավարման կամ վերահսկողության էական մասը տեղի է ունեցել այլ պետությունում,

գ) այն կատարվել է մի պետությունում, բայց այնպիսի կազմակերպված հանցավոր խմբի մասնակցությամբ, որը հանցավոր գործունեություն է իրականացնում մեկից ավելի պետություններում, կամ

դ) այն կատարվել է մի պետությունում, բայց դրա էական հետևանքները եղել են այլ պետությունում:

Կոնվենցիայի բովանդակությունից բխում է, որ թրաֆիքինգն ունի անդրազգային բնույթ: Այս տեսակետը դիտվել է որպես գերակա, մինչև 2005թ., երբ ԵՄ կոնվենցիան թրաֆիքինգը ճանաչեց հանցագործություն անկախ նրա անդրազգային բնույթից:

Այս կոնվենցիայի համաձայն, մասնակից պետությունները պարտավոր են իրենց ազգային օրենսդրությունում քրեականացնել

կոնվենցիայում նախատեսված հանցագործությունների տեսակները և կոնվենցիան կիրառել այնպիսի հանցագործությունների կանխարգելման, քննության և հետապնդման նպատակով, ինչպիսիք են՝

- կազմակերպված հանցագործությունները, դրանցում մասնակցությունը /հոդ.5/,
- հանցագործություններից ստացվող եկամուտների լվացումը /հոդ.6/,
- կաշառակերությունը /հոդ.8/,
- արդարադատության իրականացմանը խոչընդոտելը /հոդ.23/,
- ինչպես նաև հանցագործություններ, որոնք կապված են կազմակերպված հանցավոր խմբի մասնակցությամբ և անդրազգային բնույթ ունեցող հանցավոր այնպիսի արարքների հետ, որոնց կատարման համար, կոնվենցիայի 2-րդ հոդվածին համապատասխան, կողմերի ներպետական օրենսդրությամբ նախատեսված է չորս տարուց ոչ պակաս ժամանակով ազատազրկում կամ ավելի խիստ պատիժ:

Կոնվենցիայի նպատակների իրականացման համար նախատեսված են մասնակից պետությունների միջև համագործակցության հետևյալ հիմնական ուղղությունները.

- դրամական միջոցների լվացման դեմ պայքար,
- հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտների կամ գույքի բռնագրավում,
- կազմակերպված հանցավոր խմբի կամ անձի հանձնում,
- դատապարտված անձանց փոխանցում,
- փոխադարձ իրավական օգնություն,
- համատեղ քննությունների անցկացում,
- քրեական վարույթի փոխանցում,
- դատվածության վերաբերյալ տեղեկատվության փոխանակում,
- իրավապահ մարմինների միջև համագործակցություն,
- կազմակերպված հանցավորության բնույթի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում,
- կադրերի պատրաստում և տեխնիկական օգնություն:

Կոնվենցիայի առանձին հոդվածներում մանրամասնված են վերոհիշյալ ուղղություններով համագործակցության իրականացման կարգն ու սկզբունքները՝ հիմք ընդունելով նաև մասնակից պետությունների օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերը և այդ պետությունների կողմից ստանձնված միջազգային այլ պարտավորությունները: Կոնվենցիային համապատասխան, միջպետական համագործակցությունը նախատեսված է իրականացնել նաև մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանման սկզբունքով, մասնավորապես՝ առաջադրված մեղադրանքից պաշտպանվելու և անհրաժեշտ իրավաբանական օգնություն ստանալու, անձի նկատմամբ ռասայական, սեռային կամ այլ խտրականություն չդրսևորելու, անձի ազատության և անձեռնմխելիության ապահովման, ազատ տեղաշարժի, հաղորդումների գաղտնիության և այլ բնագավառներում, որոնք բխում են ՀՀ ստանձնած միջազգային այլ պարտավորություններից:[17]

Այս կոնվենցիան, ունենալով քրեաիրավական ուղղվածություն, կանոնակարգում է քրեական դատավարության ընթացակարգի հանգուցային հիմնահարցերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով նաև վկաների և տուժողների պաշտպանության և տուժողներին օգնելու վրա: Այսպես, կոնվենցիայի 24-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր Մասնակից պետություն իր հնարավորությունների սահմաններում պատշաճ միջոցներ է ձեռնարկում՝ ուղղված քրեական վարույթին մասնակցող այն վկաների վերաբերյալ հավանական վրեժից կամ վախեցնելուց արդյունավետ պաշտպանության ապահովմանը, որոնք ցուցմունք են տալիս սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործությունների կապակցությամբ և, պատշաճ դեպքերում, նրանց հարազատների և նրանց մերձավոր այլ անձանց վերաբերյալ:

2. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված միջոցները առանց մեղադրյալի իրավունքները վնասելու, այդ թվում՝ պատշաճ քննության իրավունքին, կարող են, մասնավորապես, ներառել.

ա) այդպիսի անձանց ֆիզիկական պաշտպանության համար ընթացակարգերի սահմանում, օրինակ՝ այն չափով, որքանով դա անհրաժեշտ է և գործնականորեն իրականանալի, նրանց այլ տեղ վերաբնակեցնելու համար, և այնպիսի դրույթների ընդունումը, ինչ-

[17] Տես նաև ՀՀ Սահմանադրության 1, 4, 8, 15, 16, 18, 38, 39, 40 և այլ հոդվածներ:

պիսիք, պատշաճ դեպքերում, թույլ են տալիս չհրապարակել այդպիսի անձանց՝ անձին և գտնվելու վայրին վերաբերող տեղեկությունը կամ սահմանափակումներ են դնում այդպիսի տեղեկության հրապարակման համար.

բ) ապացուցման այնպիսի կանոնների ընդունումը, որոնք թույլ են տալիս վկաներին ցուցմունքներ տալ այնպես, որ ապահովվի վկայի անվտանգությունը, օրինակ՝ կապի միջոցների օգնությամբ վկայի՝ ցուցմունքներ տալու թույլտվությունը, ինչպիսիք են՝ տեսակապը կամ այլ պատշաճ միջոցները:

Իսկ կոնվենցիայի 25-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր Մասնակից պետություն իր հնարավորությունների սահմաններում պատշաճ միջոցներ է ձեռնարկում սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործություններից տուժողներին օգնություն և պաշտպանություն տրամադրելու համար. հատկապես վրեժի սպառնալիքի կամ վախեցնելու դեպքերում, ինչպես նաև անհրաժեշտ ընթացակարգեր է սահմանում սույն Կոնվենցիայով ընդգրկվող հանցագործություններից տուժածների համար վնասի փոխհատուցման և հատուցման մատչելիություն ապահովելու համար:

Քանի որ քննարկվող կոնվենցիան վերաբերում էր անդրազգային բնույթ ունեցող տարբեր հանցագործություններին, իսկ մարդկանց թրաֆիքինգը բնութագրվում էր տարբեր առանձնահատկություններով, անհրաժեշտություն առաջացավ մանրամասնել դրանք կոնվենցիային կից Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և դրա համար պատժի մասին արձանագրությամբ:[18]

Այն առաջին համընդհանուր փաստաթուղթն էր, որտեղ շոշափվեցին մարդկանց թրաֆիքինգի բոլոր կողմերը: Համոզված լինելով, որ Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի Կոնվենցիան մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման ու խափանման և դրա համար պատժի մասին միջազգային փաստաթղթով լրացնելը կնպաստի այդպիսի հանցագործությունների կանխարգելմանը և դրանց դեմ պայքարին, պետությունները ստորագրեցին այս արձանագրությունը, որը, կազմված լինելով 20 հոդվածներից, բովանդակային առումով էական նորամուծություն կատարեց ինչպես ոլորտը կարգավորող

[18] Այսուհետ՝ Պալերմոյի արձանագրություն:

տերմինների միատեսակ ընկալման, այնպես էլ թրաֆիքինգի դեմ պայքարի մեխանիզմների սահմանման առումով:

Համաձայն 2-րդ հոդվածի, արձանագրությունն ունի երեք հիմնական նպատակներ: Դրանք են.

- մարդկանց առևտրի կանխարգելումը և դրա դեմ պայքարը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց և երեխաներին,
- թրաֆիքինգից տուժողների պաշտպանությունը և օգնությունը՝ ամբողջովին հարգելով նրանց մարդու իրավունքները, և,
- այդ նպատակներին հասնելու գործում Մասնակից պետությունների համագործակցության խրախուսումը:

Արձանագրության հիմնական առանձնահատկություն-ներն են՝

- այն թրաֆիքինգը համարում է մարդկության դեմ ուղղված հանցագործություն,[19]
- տալիս է «մարդկանց առևտուր» հասկացության սահմանումը,
- ընդլայնում է թրաֆիքինգի գործընթացի բաղադրիչները՝ մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը՝ ուժի սպառնալիքով կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառմամբ, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով, ինչպես նաև այդպիսի հանցագործությունների կատարման փորձը, հանցակցությունը և այդպիսի արարքների կատարման նպատակով անձանց կազմակերպելը կամ ղեկավարելը,
- թրաֆիքինգը չի սահմանափակվում սեռական շահագործմամբ. այն ներառում է հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը համանման երևույթները, անազատ վիճակը կամ մարմնի մասերը կորզելը,
- երեխաները նույնպես ճանաչվում են հանցագործության զոհ:[20]

---

[19] Մանրամասն տե՛ս Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը, գլուխ 7՝ հանցագործություններ մարդկության դեմ:

[20] Երեմյան Ա., Թումասյան Դ., Գրիգորյան Գ. Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական հիմունքները. երևան, 2009, էջ 23:

Արձանագրությունը նախատեսում է մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետ միջոցներ և համընդգրկուն միջազգային մոտեցում ելքի, տարանցման և մուտքի երկրներում, ներառյալ այն միջոցները, որոնք ուղղված են այդպիսի առևտրի կանխարգելմանը, դրանով զբաղվող անձանց պատժելուն և այդպիսի առևտրի զոհերի պաշտպանությանը, այդ թվում նրանց՝ միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքների պաշտպանության միջոցով: Այն իր մեջ ներառում է.

- *գործողություններ.* մարդկանց տեղափոխումը, փոխադրումը, ապաստանումը, ընդունումը,
- *միջոցներ.* խաբելը, ստիպելը, խոցելիությունից օգտվելը /երեխաների շահագործման համար այս միջոցներից ոչ մեկի կիրառումը պարտադիր չէ, երեխաները իրավասու չեն ինքնուրույն համաձայնություն տալու,
- *նպատակներ.* շահագործում, այդ թվում՝ սեռական, աշխատանքային, ներքին օրգանների կորզում և այլն:[21]

Արձանագրության շրջանակներում միջպետական համագործակցությունը նախատեսված է իրականացնել ինչպես միջազգային իրավական, այնպես էլ կողմերի ներպետական օրենսդրության սկզբունքներով՝ հանրավտանգ արարքների քրեականացման, դրանց նկատմամբ պատժական համաձայնեցված քաղաքականության իրականացման բնագավառներում՝ մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության սկզբունքով, մասնավորապես. կյանքի, ազատության և անձեռնմխելիության, արժանապատվության, անձնական կյանքի, մշտական բնակության վայր վերադարձի, պատճառված վնասի փոխհատուցման, տեղեկատվություն ստանալու, աշխատանքի, կրթության, առողջության պահպանման, բժշկական օգնության և սպասարկման, խախտված իրավունքների վերականգնման, իրավաբանական օգնություն ստանալու բնագավառներում[22]:

---

[21] Մարդկանց շահագործման դեմ պայքարի Վիեննայի ֆորում, 2008թ. փետրվարի 13-15, Ավստրիա կենտրոն, Վիեննա:

[22] Դա բխում է ՀՀ ստանձնած միջազգային այլ պարտավորություններից: Տես նաև ՀՀ Սահմանադրության 4, 8, 9, 15, 16, 17, 18, 19, 20, 22 և այլ հոդվածներ:

Արձանագրությամբ միջպետական համագործակցու-թյունը նախատեսված է իրականացնել նաև հետևյալ բնագավառներում.

- մարդկանց առևտրի զոհերի օգնություն և նրանց պաշտպանություն,
- մարդկանց առևտրի կանխարգելում,
- տեղեկատվության փոխանակում և կադրերի պատրաստում,
- սահմանային հսկողության միջոցների սահմանում,
- կառավարական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ համագործակցություն,
- փաստաթղթերի հավաստիության և օրինականության նկատմամբ վերահսկողություն:

Արձանագրության կողմերը պարտավորվել են մարդկանց առևտուրը կանխարգելելու միջոցներ ձեռնարկել կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության բնագավառներում ներպետական օրենսդրության կատարելագործման, երկկողմ և բազմակողմ համագործակցության զարգացման ուղղությամբ:

1.5. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարն իր վրա է սևեռել նաև եվրոպական երկրների ուշադրությունը, որոնք մտահոգություն էին հայտնում այս երևույթի զարգացման վերաբերյալ և այդ է պատճառը, որ Եվրոպայի Խորհուրդը 2005թ. մայիսի 16-ին ընդունեց Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին կոնվենցիան, որը բաղկացած է 47 հոդվածներից: Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն, նրա նպատակներն են՝

ա) կանխարգելել այս հանցագործությունը ու պայքարել մարդկանց թրաֆիքինգի դեմ՝ երաշխավորելով գենդերային հավասարությունը,

բ) պաշտպանել թրաֆիքինգի զոհերի մարդու իրավունքները, մշակել զոհերի ու վկաների պաշտպանության և օգնության համապարփակ մեխանիզմ՝ երաշխավորելով գենդերային հավասարությունը, ինչպես նաև ապահովել արդյունավետ քննություն և քրեական հետապնդում,

գ) նպաստել մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի բնագավառում միջազգային համագործակցության զարգացմանը:

Ինչպես երևում է նպատակների բովանդակությունից, այս կոնվենցիան ունի ոչ միայն քրեաիրավական, այլ նաև սոցիալ-իրավական ուղղվածություն և արդեն իսկ նպատակների մակարդակով շեշտադրում է զոհերի ու վկաների պաշտպանությունն ու օգնությունը:

ԵԽ-ի կոնվենցիան կիրառվում է, բացառելով խտրականությունը, քանի որ այդ կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն, կոնվենցիայի դրույթները, մասնավորապես այն դրույթները, որոնք վերաբերում են զոհերի իրավունքների պաշտպանությանն ու ապահովմանը, պետք է իրականացվեն առանց որևէ խտրականության՝ կապված սեռի, ռասայի, մաշկի գույնի, լեզվի, դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնությանը պատկանելության, ծննդի, գույքային կամ այլ դրության հետ:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարին վերաբերող այլ միջազգային իրավական ակտերի հետ համեմատած, այս կոնվենցիայի արժեքը կայանում է նրանում, որ այն կենտրոնացված է մարդու իրավունքների և զոհի պաշտպանության հարցերի վրա, ինչը բխում է ոչ միայն կոնվենցիայի նպատակներից, այլ նաև կոնվենցիայի նախաբանից, որտեղ մարդկանց թրաֆիքինգը համարվում է մարդու իրավունքների խախտում և ոտնձգություն անձի արժանապատվության ու անձեռնմխելիության դեմ՝ կարևորվելով զոհերի իրավունքների հարգումն ու պաշտպանությունը:

Կոնվենցիայի առանձնահատկություններն են.

- մարդկանց թրաֆիքինգի ճանաչումը որպես մարդու իրավունքների խախտում,
- զոհերին օգնություն ցույց տալը և նրանց իրավունքների պաշտպանությանը հատուկ ուշադրություն դարձնելը,
- կիրառման ընդգրկուն ոլորտը, որը ներառում է մարդկանց թրաֆիքինգի բոլոր ձևերը՝ ազգային կամ անդրազգային կազմակերպված հանցագործությունների հետ կապված լինելը կամ չլինելը,
- կիրառվելիությունը յուրաքանչյուր զոհի նկատմամբ՝ տղամարդ, կին, երեխա,

- զոհերի և վկաների պաշտպանության ապահովման համար համալիր իրավաբանական շրջանակների սահմանումը, որը նախատեսում է պարտավորեցնող միջոցների կիրառում,
- վերահսկողության արդյունավետ և անկախ մեխանիզմի հիմնադրումը:[23]

Բացի այդ, այս կոնվենցիան տարածաշրջանային կարևորագույն փաստաթուղթ է, որը վերաբերելով միայն մարդկանց թրաֆիքինգին, օգտագործում է ավելի հստակ ձևակերպումներ և կոնկրետ չափորոշիչներ:

Շարունակելով թրաֆիքինգի զոհերի պաշտպանության հիմնահարցերը, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ԵԽ-ի կոնվենցիայի 12-րդ հոդվածին, որի համաձայն, յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են զոհերի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականգնման համար: Այդպիսի օժանդակությունը պետք է առնվազն ներառի՝

ա) գոյատևման համար անհրաժեշտ կենսապայմաններ՝ մասնավորապես, պատշաճ և ապահով կացարան, հոգեբանական ու նյութական օգնություն,

բ) շտապ բուժօգնություն ստանալու հնարավորություն,

գ) անհրաժեշտության դեպքում բանավոր և գրավոր թարգմանության ծառայություններ,

դ) իրենց հասկանալի լեզվով խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում, մասնավորապես իրենց իրավունքների ու այն ծառայությունների վերաբերյալ, որոնցից կարող են օգտվել,

ե) քրեական դատավարության համապատասխան փուլերի ընթացքում ընդդեմ իրավազանցի իրենց իրավունքների ու շահերի ներկայացման հարցում օժանդակություն,

զ) երեխաների համար կրթություն ստանալու հնարավորություն:

Իսկ 13-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր կողմ իր ներքին օրենսդրության մեջ տուժած համարվող անձանց համար պետք է սահմանի առնվազն 30 օր տևողությամբ վերականգնման և խորհրդածության, կշռադատման ժամկետ, եթե ողջամիտ հիմքեր կան ենթադրելու, որ տվյալ անձը տուժված է: Այդ ժամկետը պետք է բա-

[23] Երեմյան Ա., Թումասյան Դ., Գրիգորյան Գ. Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական հիմունքները. երևան, 2009, էջեր 26-27:

վարար լինի տվյալ անձի վերականգնման և թրաֆիքինգով զբաղվողների ազդեցությունից ազատվելու և/կամ իրավասու մարմինների հետ համագործակցության վերաբերյալ իրազեկ որոշում ընդունելու համար: Այս ժամանակահատվածի ընթացքում նրա նկատմամբ չի կարող կիրառվել վտարման մասին որևէ որոշում: Այս դրույթը չպետք է խոչընդոտի իրավասու մարմինների գործունեությանը ազգային օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի որևէ փուլում և, մասնավորապես, հանցագործությունների քննության և հետապնդման ընթացքում: Այս ժամանակահատվածի ընթացքում կողմերը պետք է այդ անձանց թույլատրեն գտնվել իրենց տարածքում:

Բացի այդ, յուրաքանչյուր կողմ պետք է զոհերին երկարաձգվող կացության կարգավիճակ տրամադրի հետևյալ դեպքերից մեկի կամ մյուսի դեպքում, կամ երկու դեպքերում էլ՝

ա) երբ իրավասու մարմինը գտնում է, որ զոհերի գտնվելն իր պետության տարածքում անհրաժեշտ է՝ կապված նրանց անձնական բնույթի հանգամանքների հետ,

բ) երբ իրավասու մարմինը գտնում է, որ զոհերի գտնվելն իր պետության տարածքում անհրաժեշտ է հանցագործությունների քննության ընթացքում իրավասու մարմինների հետ նրանց համագործակցության նպատակով:

ԵԽ-ի կոնվենցիան, լրացնելով ՀՀ կողմից վավերացված միջազգային իրավական այլ ակտերը, ստեղծում է միջազգային իրավական հիմքը թրաֆիքինգին վերավբերող ազգային օրենսդրության ստեղծման, փոփոխման կամ լրացման համար: Ելնելով ՀՀ կողմից վավերացված միջազգային իրավական ակտերի բովանդակությունից, հարկ է նշել, որ Հայաստանը ստանձնել է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

ա) համակարգել և(կամ) ամրապնդել ներպետական մարմինների փոխհամագործակցությունը մարդկանց թրաֆիքինգը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու գործում, արդյունավետ միջոցների կիրառմամբ մշակել այնպիսի քաղաքականություն և ծրագրեր, որոնցում առաջնային դիրքերում կլինեն մարդու իրավունքները, ներառյալ երեխաների շահերի պաշտպանությունը և գենդերային հավասարությունը,

բ) ձեռնարկել կամ ամրապնդել օրենսդրական, վարչական, կրթական, սոցիալական, մշակութային և այլ միջոցներ, որոնք

կնպաստեն մարդկանց, հատկապես կանանց և երեխաների շահագործման բոլոր ձևերի պահանջարկի վերացմանը,

գ) բոլոր, այդ թվում օրենսդրական միջոցներով ուժեղացնել սահմանների վերահսկողությունը, չխախտելով անձանց ազատ տեղաշարժի առնչությամբ ստանձնած պարտավորությունները,

դ) թրաֆիքինգը կանխարգելող և դրա դեմ պայքարող իրավասու մարմինները համալրել համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով՝ գործադրելով բոլոր հնարավոր միջոցները թրաֆիքինգի զոհերին հայտնաբերելու համար, անհրաժեշտության դեպքում համագործակցելով նաև կոնվենցիայի մասնակից այլ պետությունների և համապատասխան օժանդակող կազմակերպությունների հետ, իսկ զոհին հայտնաբերելու դեպքում՝ ըստ անհրաժեշտության վերջինիս տրամադրել կացության թույլտվություն,

ե) պաշտպանել զոհերի անձնական կյանքն ու ինքնությունը, վերջիններիս վերաբերող անձնական տվյալները պահպանել և օգտագործել Անձնական բնույթի տվյալների ավտոմատացված մշակումից անձանց պաշտպանության մասին կոնվենցիայի դրույթներին համապատասխան:[24]

ԵԽ-ի կոնվենցիան, հատուկ ուշադրություն դարձնելով մարդկանց թրաֆիքինգի և հարակից հանցագործությունների քրեականացմանը, նպատեսել է, որ յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են մարդկանց թրաֆիքինգը, տուժածի ծառայություններից օգտվելը և ճամփորդական կամ անձը հաստատող փաստաթղթերի հետ կապված արարքները քրեորեն պատժելի դարձնելու համար:

Ընդ որում, ԵԽ կոնվենցիան հատուկ մատնանշել է նաև իրավաբանական անձանց պատասխանատվության հարցը: Համաձայն ԵԽ-ի կոնվենցիայի 22-րդ հոդվածի, յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական և այլ անհրաժեշտ միջոցներ, որոնք կապահովեն այդ Կոնվենցիայով նախատեսված այնպիսի հանցավոր արարքների համար իրավաբանական անձի պատասխանատվությունը, որոնք կատարվել են վերջինիս օգտին ցանկացած ֆիզիկական անձի կողմից՝ գործելով կամ անհատականորեն, կամ որպես իրավաբանական անձի որևէ պաշտոնավարող անհատ, և՝

[24] Նույն տեղը, էջ 27:

ա) լիազորված է ներկայացնել այդ իրավաբանական անձը,

բ) իրավասու է իրավաբանական անձի անունից ընդունել որոշումներ,

գ) իրավասու է իրավաբանական անձի ներսում իրականացնել վերահսկողություն:

Տուժողների պաշտպանության տեսանկյունից՝ ԵԽ-ի կոնվենցիայի 26-րդ հոդվածով նախատեսվում է, որ յուրաքանչյուր կողմ, ելնելով իր իրավական համակարգի հիմնական սկզբունքներից, պետք է նախատեսի զոհերի նկատմամբ նրանց ապօրինի գործողությունների համար պատիժ չկիրառելու հնարավորություն այն դեպքում, երբ նրանց նկատմամբ հարկադրանք է գործադրվել այդպիսի վարքագիծ դրսևորելու համար: Իսկ 28-րդ հոդվածը մանրամասնում է տուժածների, վկաների և քննությանը աջակցող անձանց պաշտպանությունը դատական մարմինների կողմից:

Ելնելով վերագրյալից, հարկ է նշել, որ ԵԽ-ի կոնվենցիան հավասարապես մատնանշում է և թրաֆիքինգի և որոշ հարակից հանցագործությունների քրեականացման, և տուժողի ու վկաների սոցիալական աջակցության ու պաշտպանության հիմնահարցերը, ինչով և տարբերվում է այս ոլորտի այլ միջազգային իրավական ակտերից:

1.6. Երեխաների շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի միջազգային օրենսդրության առանձնահատկությունները

Երեխա ասելով ընդունված է հասկանալ 18 տարեկան չդարձած յուրաքանչյուր ոք: Այս սկզբունքը առկա է և ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային ակտերում, ստորագրված պայմանագրերում և ՀՀ գործող օրենսդրության մեջ:

Երեխաների թրաֆիքինգ կամ մանկավաճառություն ասելով հասկացվում է մինչև 18 տարեկան աղջիկների և տղաների վաճառքը: Դրան է նվիրված Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-Ի կոնվենցիայի՝ Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրությունը:

Երեխաների իրավունքների ընդհանուր պաշտպանիչ նորմերը, ինչպես նաև երեխաների շահագործման (թրաֆիքինգի) արգելքն ու պատժելիությունը նախատեսված են ինչպես միջազգային, այնպես

էլ ազգային իրավական ակտերում: ՀՀ կողմից վավերացված[25] այս ոլորտի միջազգային իրավական ակտերից կարևորվում են՝

1. ԱՄԿ-ի Հարկադիր աշխատանքը վերացնելու մասին 1957թ. հունիսի 25-ի թիվ 105 կոնվենցիան,
2. Աշխատանքի ընդունելու նվազագույն տարիքի մասին 1973թ. հունիսի 26-ի ԱՄԿ-ի թիվ 138 կոնվենցիան,
3. Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիաիրավական բնագավառի մասին 1980թ. հոկտեմբերի 24-ի Հաագայի կոնվենցիան,
4. Երեխայի իրավունքների մասին 1989թ. նոյեմբերի 20-ի կոնվենցիան,
5. Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին 1993թ.-ի մայիսի 29-ի կոնվենցիա,
6. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին, 2000թ. մայիսի 25-ի կամընտիր արձանագրությունը,
7. Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ Զինված հակամարտություններին վերաբերող 2000թ. մայիսի 25-ի կամընտիր արձանագրությունը,
8. Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման ու խափանման և դրա համար պատժի մասին 2000թ. նոյեմբերի 15-ի թիվ 1 արձանագրությունը,
9. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին 2005թ. մայիսի 16-ի Եվրոպայի խորհրդի կոնվենցիան,
10. Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին ԵՄ-ի 2007թ. հուլիսի 12-ի կոնվենցիան:[26]

---

[25] Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին ԵՄ-ի 2007թ.-ի հուլիսի 12-ի կոնվենցիան ՀՀ-ը դեռ չի վավերացրել, բայց ստորագրել է 2010թ.-ի սեպտեմբերի 29-ին:

[26] Այս ոլորտին վերաբերող ազգային օրենսդրության ակտերից են՝ ՀՀ ընտանեկան օրենսգիրքը , Երեխաների իրավունքների մասին, Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենքները և այլ ակտեր:

Երեխաները վաճառվում են սեռական շահագործման նպատակով, ներգրավվում են մուրացկանության, գյուղատնտեսական ու շինարարական աշխատանքների կատարման, մանկական պոռնկագրության և մարմնավաճառության մեջ: Երեխաները մասնակցում են զինված հակամարտություններում որպես զինվորներ, նրանց օգտագործում են թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությամբ զբաղվող հանցավոր խմբերում որպես առաքողներ կամ վաճառողներ, տանը կամ տնամերձ տարածքներում աշխատելու և այլ նպատակներով:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով գերագույն հանձնակատարի "Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի առաջարկվող սկզբունքները և ուղենիշերը" փաստաթղթի 8-րդ ուղենիշը վերաբերում է թրաֆիքինգից տուժած երեխաների պաշտպանության և օժանդակության հատուկ միջոցառումներին: Նրանում ասվում է, որ թրաֆիքինգի ենթարկված երեխաների կրած ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վնասի առանձնահատկությունների, ինչպես նաև շահագործման նկատմամբ նրանց՝ մեծահասակներից ավելի խոցելի լինելու պատճառով անհրաժեշտ է օրենքների, քաղաքականության, ծրագրերի և միջոցառումների շրջանակում նրանց տարբերակել թրաֆիքինգի ենթարկված մեծահասակ-ներից: Առաջին հերթին պետք է հաշվի առնել երեխաների շահերը: Նրանք պետք է համապատասխան աջակցություն և պաշտպանություն ստանան՝ ելնելով նրանց իրավունքների և կարիքների առանձնահատկություններից:

Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան անդրադառնում է երեխաների սեռական շահագործմանը: Կոնվենցիայի համաձայն, մասնակից պետությունները պարտավորվում են երեխային պաշտպանել սեռական շահագործման բոլոր ձևերից և սեռական այլասերումից: Այդ նպատակով պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները, մասնավորապես, ազգային, երկկողմ և բազմակողմ մակարդակներով, որպեսզի կանխարգելեն՝

- երեխային ցանկացած ապօրինի սեռական գործունեության դրդելը կամ հարկադրելը,
- շահագործման նպատակով երեխաներին պոռնկության մեջ կամ այլ ապօրինի սեռական պրակտիկայում օգտագործելը,
- շահագործման նպատակով երեխաներին պոռնոգրա-ֆիայի և պոռնոգրաֆիկ նյութերի մեջ օգտագործելը:

Բացի այդ, Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին ԵԽ-ի կոնվենցիայի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, այն դեպքում, երբ հաստատվում է առանց ուղեկցողի երեխայի թրաֆիքինգից տուժած լինելու հանգամանքը, յուրաքանչյուր կողմ պետք է.

ա) ապահովի երեխայի շահերի ներկայացուցչությունը օրինական խնամակալի, այլ կազմակերպության կամ լիազորության կողմից, որը լավագույնս կգործի՝ ելնելով այդ երեխայի լավագույն շահերից,

բ) անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի նրա անձը և ազգությունը հաստատելու ուղղությամբ,

գ) ջանքեր գործադրի նրա ընտանիքը հայտնաբերելու ուղղությամբ, եթե դա բխում է երեխայի լավագույն շահերից:

Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրությունը առանձնակի ուշադրություն է դարձնում երեխաների դատավարական պաշտպանությանը: Այդ հոդվածի համաձայն, մասնակից պետությունները պարտավորվում են զոհ դարձած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության համար քրեական դատավարության բոլոր փուլերում պատշաճ միջոցներ ձեռնարկել, մասնավորապես, հետևյալ ճանապարհով՝

ա) *ընթացակարգերի հարմարեցում.* զոհ երեխաների խոցելիության ճանաչման և նրանց բացառիկ կարիքների ճանաչման համար, այդ թվում՝ որպես վկա նրանց առանձնահատուկ պահանջները հաշվի առնելով,

բ) *տեղեկատվության տրամադրում.* զոհ երեխաներին իրենց իրավունքների, իրենց դերի մասին, դատավարության ժամկետների և ընթացքի մասին և իրենց գործերով որոշում կայացնելու մասին տեղեկացում,

գ) *ազգային օրենսդրության դատավարական նորմերի ապահովում.* այն դեպքերում, երբ դատավարության ընթացքում շոշափվում են զոհ երեխաների անձնական շահերը, պետք է ներկայացվեն և քննարկվեն նրանց կարծիքները, պահանջները և հիմնահարցերը,

դ) *ծառայությունների տրամադրում.* դատավարության բոլոր փուլերում պատշաճ օժանդակություն զոհ երեխաներին,

ե) անհրաժեշտության դեպքում միջոցների ձեռնարկում՝ զոհ երեխաների անձնական կյանքի մասին տեղեկությունների տարածման կանխման նպատակով,

զ) անհրաժեշտ դեպքերում զոհ երեխաների, նրանց ընտանիքների անդամների և նրանց անունից հանդես եկող վկաների պաշտպանության ապահովում ահաբեկչությունից, ներգործության միջոցների կիրառումից,

է) զոհ երեխաներին փոխհատուցում տրամադրելու մասին գործերով որոշումներ կայացնելն և կարգադրությունների ու վճիռների կատարումը չուշացնելը:

Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին ԵԽ-ի 2007թ. կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն, կոնվենցիայի նպատակներն են՝

ա) երեխաների սեռական շահագործման և սեռական բնույթի բռնությունների կանխարգելումը և դրանց դեմ պայքարը,

բ) սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից տուժած երեխաների իրավունքների պաշտպանությունը,

գ) երեխաների սեռական շահագործման և սեռական բնույթի բռնությունների դեմ ներպետական և միջազգային համագործակցության խթանումը:

Այս կոնվենցիան նախատեսում է հատուկ դրույթներ, որոնք վերաբերում են սեռական շահագործման կամ սեռական բնույթի բռնությունների վերաբերյալ կասկածների մասին հայտնելուն, հեռախոսային կամ ինտերնետային թեժ գծեր ստեղծելուն, միջամտության ծրագրեր կամ միջոցառումներ մշակելուն և այլն:

Թեև միջազգային և ազգային օրենսդրությունը համահունչ են, բայց երբեմն անհրաժեշտություն է առաջանում այդ ակտերը կիրառել համատեղ: Հարկ է նշել, որ դատական պրակտիկայում արդեն կիրառվել է միջազգային օրենսդրությունը, այն մասով, որով նա լրացնում է ազգային օրենսդրության բացը: Այսպես, ՀՀ Քր. օր.-ի 132.1 հոդվածով[27] հարուցված գործով ընդհանուր իրավասության դատարանում կայացվեց մեղադրական դատավճիռ, որի պատճառաբանական մասում, որպես հիմնավորում բերված է նաև

[27] Ներկայում, համաձայն 2011թ.-ի մարտի 1-ի օրենքի, այս հոդվածը ճանաչվել է ուժը կորցրած:

“Երեխաների աշխատանքի վատթարագույն ձևերի վերացման մասին” ԱՄԿ-ի թիվ 182 կոնվենցիան:

Գլուխ 2. Մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև մարդու շահագործման քրեաիրավական բնութագրերը

2 .1. Մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև մարդու շահագործման, շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու սահմանումները ՀՀ քր. օր-ում

2.1.1. ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասում ձևակերպված «մարդու թրաֆիքինգ» հասկացությունը

Նյութ թիվ 1

ՀՈԴՎԱԾ 132. ՄԱՐԴՈՒ ԹՐԱՖԻՔԻՆԳԸ ԿԱՄ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

1. Մարդու թրաֆիքինգը՝ շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով:

<u>**Ծանուցում**</u>. Ոչ մգացված տառերով տեքստում տրված է թրաֆիքինգի բնորոշումը: Մգացված տառերով տեքստը վերաբերում է մարդու շահագործմանը, նրան շահագործման մեջ դնելուն կամ պահելուն, որոնք տարբերվում են մարդու թրաֆիքինգ հանցագործությունից:

2.1.2. ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քրեորեն հետապնդելի արարքները

Թրաֆիքինգն այլ հանցագործություններից սահմանազատելու խնդրին կանդրադառնանք հետագայում: Մինչ այդ, սակայն, պետք է տարբերակել «մարդու թրաֆիքինգը» «մարդուն շահագործելը, նրան շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը» հանցագործությունից:

Նյութ թիվ 2



ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քրեորեն հետապնդելի են հետևյալ արարքները՝

ա) առանձին վերցված մեկ երևույթ՝ թրաֆիքինգ - [շահագործման նպատակով] [մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը], [որը (որոնք) կատարվել է (կատարվել են) նույն հոդվածում նկարագրված այլընտրանքային միջոցների գործադրմամբ],

բ) առանձին վերցված մեկ այլ երևույթ՝ [մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը], [որը (որոնք) կատարվել է (կատարվել են) նույն հոդվածում նկարագրված այլընտրանքային միջոցներով]:

Ինչպես թրաֆիքինգի, այնպես էլ մարդուն շահագործելու, շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու միջոցներն են՝

- կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելը կամ
- կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքը կամ
- հարկադրանքի այլ ձևերը կամ
- առևանգումը կամ
- խաբեությունը կամ վստահության չարաշահումը կամ
- իշխանությունը կամ վիճակի խոցելիությունն օգտագործելը կամ
- զոհին/տուժողին վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալը կամ ստանալը կամ
- զոհին/տուժողին վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու խոստումը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թ. նոյեմբերի 4-ին ընդունված Եվրոպական կոնվենցիայի «Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելումը» վերնագրով 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված է, որ՝

«1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ կամ անազատ վիճակում:

2. Ոչ ոք չպետք է պարտադրվի կատարելու պարտադիր կամ հարկադիր աշխատանք»:

Մարդուն ստրկության մեջ կամ անազատ վիճակում պահելու դեմ հետևողական ակտիվ պայքարը կնպաստի նման հանցավոր վարքագծի պահանջարկի նվազմանը: Դա կնպաստի նաև մարդուն պարտադիր կամ հարկադիր աշխատանք կատարելուն պարտադրելու պահանջարկի նվազմանը: Իր հերթին, մարդուն շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու պահանջարկի և մարդու թրաֆիքինգի առաջարկի միջև անհամապատասխանելիությունը կարող է նպաստել մարդու թրաֆիքինգի դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը: Ահա թե ինչու է ԵԽ 2005 թ. Կոնվենցիայի «Պահանջարկի վերացմանն ուղղված միջոցներ» վերնագրով 6-րդ հոդվածով որոշվել է, որ Կոնվենցիայի յուրաքանչյուր Կողմ պետք է ձգտի վերացնելու մարդկանց, մասնավորապես՝ կանանց և երեխաների շահագործման (թրաֆիքինգ) բոլոր ձևերին նպաստող պահանջարկը, որը հանգեցնում է մարդկանց շահագործման (թրաֆիքինգ): Այդ նպատակով Կոնվենցիայի յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի կամ ամրապնդի օրենսդրական, վարչական, կրթական, սոցիալական, մշակութային և այլ միջոցները:

2.1.3. Մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև մարդուն շահագործելու կամ շահագործման մեջ դնելու կամ պահելու հանցագործությունների տեսակներն ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի

Քրեական քաղաքականության ընդհանուր կանոնն այն է, որ ՀՀ քր. օր-ով նախատեսված հանցագործությունների համար պետք է սահմանված լինեն այնպիսի պատիժներ, որոնք արդյունավետ են, համաչափ և զսպող, ու այդպես են հարաբերվում հանցագործության լրջության հետ:

Թրաֆիքինգի, ինչպես նաև մարդուն շահագործելու կամ շահագործման մեջ դնելու կամ պահելու տեսակներն ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի որոշվում են «Հանցագործության տեսակները» վերնագրով ՀՀ քր. օր-ի 19-րդ - հոդվածում սահմանված կանոններով, որոնց համաձայն՝ ՀՀ իրավական համակարգին բնորոշ է հանցագործությունների տեսակավորումն ըստ քրեական պատժի վերին սահմանի: Այդ հոդվածի կանոնների համաձայն, ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի, ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասի

դիսպոզիցիայում ձևակերպված արարքները՝ և' մարդու թրաֆիքինգը, և' մարդուն շահագործելը կամ շահագործման մեջ դնելը կամ պահելը, ծանր հանցագործություններ են, իսկ 2-րդ և 3-րդ մասերի դիսպոզիցիաների հանցակազմերում ձևակերպված արարքները՝ առանձնապես ծանր հանցագործություններ են:

Իրավակիրառ պրակտիկայում, հատկապես՝ անդրազգային հանցավորության դեմ պայքարում հանցագործներին հանձնելու և պետությունների փոխադարձ իրավական օգնության ոլորտում պետք է հաշվի առնել, որ ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ 2000 թ. կոնվենցիայի 2-րդ հոդվածի «բ» կետի համաձայն՝ «լուրջ հանցագործություն» է այն հանցագործությունը, որի կատարման համար նախատեսված է չորս տարուց ոչ պակաս ազատազրկում կամ ավելի խիստ պատժաչափով պատիժ: Այդ դրույթի համատեքստում ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածում նախատեսված հանցագործությունները կոնվենցիոն նշված չափանիշների տեսանկյունից դիտվում են որպես «լուրջ» հանցագործություններ:

Պետք է նաև հաշվի առնել, որ «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ հանձնման համար բավարար է, որ հայցող և հայցվող Կողմերի օրենսդրությամբ հանցագործության համար նախատեսվող ազատազրկման (որպես պատժի տեսակի) ժամկետը գերազանցի մեկ տարին: Նշենք, որ ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի բոլոր մասերում նախատեսված հանցագործությունների կատարման համար որպես պատժի տեսակ նախատեսված է ազատազրկումը. առաջին մասով՝ հինգից ութ տարի ժամկետով, երկրորդ մասով՝ յոթից տասներկու տարի ժամկետով, և երրորդ մասով՝ տասից տասնչորս տարի ժամկետով: Այսինքն՝ «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի կիրառման տեսանկյունից ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի սանկցիաները բավարար են ՀՀ Սահմանադրության 30[1]-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված դեպքերում[28] և սահմանադրաիրավական այդ նորմին համապատասխան՝ ՀՀ քր. օր-ով նախատեսված դեպքերում, պայմաններում և կարգով հանձնումն իրականացնելու համար:

---

[28] «Հայաստանի Հանրապետության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի»:

2.1.4. Թրաֆիքինգի մեխանիզմները

Թրաֆիքինգի մեխանիզմներին անդրադառնալիս նախ պետք է հիշել, որ «միջոց» բառը ստորև օգտագործվում է որպես պայմանական հասկացություն: Միջոցները նույնպես գործողություններ են, սակայն դրանք ուղեկցում են հիմնական գործողությունները:

Այնուհետև, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ստորև նկարագրված՝ գործողություններից յուրաքանչյուրն առանձին վերցրած, կամ դրանց ցանկացած համակցությունը կատարվում է (են) մարդու շահագործման նպատակով, սակայն չեն ենթադրում բուն շահագործումը որպես այդպիսին:

Նյութ թիվ 3

ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ
(ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մաս)

Գործողություն + ***Միջոց*** + ***Շահագործման նպատակ***

- Մարդուն հավաքագրելը
- Մարդուն տեղափոխելը
- Մարդուն փոխանցելը
- Մարդուն թաքցնելը
- Մարդուն ստանալը

- Կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր *բռնության գործադրում*
- Կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր *բռնություն գործադրելու սպառնալիք*
- Հարկադրանքի այլ ձևեր
- Առևանգում
- Խաբեություն
- Վստահության չարաշահում

- Իշխանության կամ վիճակի խոցելիության օգտագործում
- Մարդուն վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով *նյութական կամ այլ օգուտ տալը կամ ստանալը*
- Մարդուն վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ *այլ օգուտ տալու կամ ստանալու*

  խոստում

- Այլ անձի՝ պոռնկության շահագործում կամ սեքսուալ այլ շահագործում
- Հարկադիր աշխատանք կամ հարկադիր ծառայություն
- Ստրկություն կամ ստրկությանը նմանվող վիճակ
- Մարդու առքը կամ վաճառքը
- Մարդու մարմնի մասերը կամ հյուսվածքները վերցնելը

Իրավակիրառ պրակտիկայում պետք է հաշվի առնել նաև, որ, որպես կանոն, թրաֆիքինգը նախորդում է մարդուն շահագործելուն, շահագործման վիճակի մեջ դնելուն կամ պահելուն: Դա, սակայն, պարտադիր պայման չէ: Մարդը կարող է հանգամանքների բերումով այդ վիճակում հայտնվել և առանց թրաֆիքինգի իրականացման, օրինակ, աշխատանքային կամ այլ պայմանների այնպիսի փոփոխությունների արդյունքում, երբ նա հայտնվում է ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով շահագործման վիճակում:

Թրաֆիքինգը համարվում է ավարտված հանցագործություն մինչև անձին փաստացի շահագործելը կամ շահագործման մեջ դնելը կամ պահելը, այսինքն՝ հանցակազմը ձևական է:

Դրա համար բավարար է, որ անձի նկատմամբ՝

ա) շահագործման նպատակով (թիվ 3 նյութում նշված է մանուշակագույնով),

բ) կատարվի ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասում նշված գործողություններից մեկը (թիվ 3 նյութում նշված է կանաչով),

գ) նույն մասում նշված միջոցներից որևէ մեկի կիրառմամբ (թիվ 3 նյութում նշված է դեղինով): Այսպես, մարդու «հավաքագրումը» (գործողություն) «վստահությունը չարաշահելու միջոցով» (միջոց) «աշխատանքային շահագործման նպատակով» (նպատակ) հանցավոր գործունեություն է, որը պետք է որակվի որպես ավարտված թրաֆիքինգ: Կամ, օրինակ, «շահագործման նպատակով» (նպատակ) «առողջության համար ոչ վտանգավոր բռնության գործադրմամբ» (միջոց) «մարդուն թաքցնելը» (գործողություն) նույնպես պետք է որակվի որպես ավարտված թրաֆիքինգ:

Գործնականում հանցագործները, հետապնդելով շահագործման նպատակ, այդ նպատակին հասնելու համար կատարում են ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասում նշված մեկից ավելի գործողություններ և դրանց կատարման ընթացքում կիրառում են նույն մասում թվարկված տարբեր (մեկից ավելի) միջոցներ:

ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի դիսպոզիցիայի կառուցվածքի համաձայն՝ արարքը համարվում է ավարտված հանցագործություն, եթե նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ

ծանր հետևանքներ: Այսպես, եթե թրաֆիքինգը անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ, ապա նշված ծանրացնող հանգամանքը հանցավորին մեղսագրելու համար անհրաժեշտ է ապացուցել տուժողի մահի նկատմամբ հանցավորի կողմից անզգույշ մեղքի դրսևորումը և թրաֆիքինգի ու զոհի մահվան միջև պատճառական կապի առկայությունը: Եթե, օրինակ, թրաֆիքինգի զոհի մահն առաջացել է վերջինիս կյանքի համար վտանգավոր եղանակով կամ պայմաններում տեղափոխելու հետևանքով, ապա այլ հանգամանքների բացակայության դեպքում արարքը պետք է որակվի որպես թրաֆիքինգ, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ (ՀՀ քր. օրի 132-րդ հոդվածի 3-րդ մաս):

2.1.5. Մարդուն շահագործելու կամ շահագործման մեջ դնելու կամ պահելու մեխանիզմները

Շահագործում են համարվում այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը:

Այսպես, մարդուն «աշխատանքային շահագործման մեջ դնելը» (գործողություն) «խաբեության միջոցով» (միջոց) հանցավոր արարք է, որը պետք է որակվի որպես ավարտված շահագործում: Կամ, օրինակ, «առողջության համար ոչ վտանգավոր բռնության գործադրմամբ» (միջոց) «մարդուն շահագործման մեջ պահելը» (գործողություն) նույնպես պետք է որակվի որպես ավարտված շահագործում:

Նյութ թիվ 4

ՄԱՐԴՈՒՆ ՇԱՀԱԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՄ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ԿԱՄ ՊԱՀԵԼՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

(ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մաս)

Գործողություն

- Մարդուն շահագործելը
- Մարդուն շահագործման մեջ դնելը
- Մարդուն շահագործման մեջ պահելը

+

- Կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր *բռնության գործադրում*
- Կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր *բռնություն գործադրելու սպառնալիք*
- Հարկադրանքի այլ ձևեր
- Առևանգում
- Խաբեություն
- Վստահության չարաշահում

Միջոց

- Իշխանության կամ վիճակի խոցելիության օգտագործում
- Մարդուն վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով *նյութական կամ այլ օգուտ տալը կամ ստանալը*
- Մարդուն վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով *նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու խոստում*

Ամփոփում

1. Թրաֆիքինգը համարվում է ավարտված հանցագործություն մինչև անձին փաստացի շահագործման մեջ դնելը կամ պահելը, այսինքն՝ հանցակազմը ձևական է:

Դրա համար բավարար է, որ անձի նկատմամբ՝

ա) շահագործման նպատակով

բ) կատարվի ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասում նշված գործողություններից մեկը

գ) նույն մասում նշված միջոցներից որևէ մեկի կիրառմամբ:

2. Մարդու շահագործումը համարվում է ավարտված հանցագործություն անձին շահագործելու, շահագործման մեջ դնելու կամ պահելու պահից (փաստացի շահագործում): Կախված շահագործման ձևից՝ հանցակազմը կարող է լինել և՛ ձևական, և՛ նյութական:

2.2. Մարդու հանցավոր շահագործում

2.2.1. Շահագործման հասկացությունը *ՀՀ քր. օր-ում նախատեսված ինչպես թրաֆիքինգի, այնպես էլ շահագործման, շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու իմաստով տրված է 132-րդ հոդվածի 4-րդ մասում.*

«4. Սույն հոդվածում, ինչպես նաև սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածում շահագործում են համարվում այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը»:

Շահագործման հասկացությունում նշված շահագործման ձևերը ըստ շահագործման ֆունկցիոնալ հատկանիշի պայմանականորեն կարելի դասակարգել 4 հիմնական խմբի՝

- սեքսուալ շահագործում,
- աշխատանքային շահագործում և ստրկությունը,
- մարմնի օրգանների կամ հյուսվածքների կորզում,
- անձի առքը կամ վաճառքը:

«Շահագործում» հասկացությունում օգտագործվել են մի շարք ինքնուրույն եզրույթներ, որոնք պետք է կիրառվեն արարքը որպես մարդու թրաֆիքինգ կամ որպես շահագործում կամ շահագործման վիճակի մեջ դնել կամ պահել որակելու դեպքում: Այդ եզրույթներն են՝ պոռնկությունը, սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր

աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը, ստրկությանը նմանվող վիճակը: Թվարկված եզրույթների հասկացությունները, սակայն, ՀՀ քր. օր-ում կամ այլ օրենքներում չեն սահմանվում կամ բացատրվում: Դրանց մի մասը սահմանվել կամ բացատրվել է առանձին միջազգային փաստաթղթերում:

2.2.2. Պոռնկության շահագործում կամ սեքսուալ շահագործման այլ ձևեր

Պոռնկությունը սեքսուալ ծառայությունների մատուցումն է վճար կամ այլ նյութական բարիք ստանալու նպատակով, որի շրջանակում անձը մարմինը վերածում է առքուվաճառքի, առևտրի առարկայի (կանանց պոռնկություն, անչափահաս կանանց և աղջիկների պոռնկություն, տղա երեխաների պոռնկություն, հասուն տղամարդկանց պոռնկություն և պոռնկության բազմաթիվ այլ ձևեր):

Մարդկանց առևտրի և այլ անձանց պոռնկության շահագործման դեմ ՄԱԿ-ի 1949 թ. դեկտեմբերի 2-ի կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ «պոռնկություն է մեկ անձի կողմից այլ անձի սեռական կրքերը վճարման դիմաց բավարարելը»:

Պոռնկություն հասկացությունը չի կարելի ենթարկել առավել տարածական մեկնաբանման: Այսպես, պոռնկություն չեն համարվում մշտական կամ ժամանակավոր համատեղ բնակվելը, ամուսնությունը նյութական ապահովվածության պատճառներով և բազմաթիվ այլ իրավիճակներ: *Պոռնկությանը* բնորոշ է սեքսուալ բնույթի տարբեր ծառայությունների հանրային առաջարկը: Նույնը վերաբերում է և այն դեպքերին, երբ անձը զբաղվում է պոռնկությամբ, օրինակ, որոշակի անձանց նեղ շրջանում:

Իրավակիրառ պրակտիկայում ծագող վիճելի հարցերից մեկն այն է, թե անհրաժեշտ են, արդյոք, պոռնկության համար սեքսուալ բնույթի ուղղակի շփումները, թե բավարար է սեքսուալ ծառայությունների միջնորդավորված մատուցումը (սեքս հեռախոսով, մերկապար, մասնակցությունը ֆիլմերի ստեղծմանը որպես դերակատար, մերկ մարմնի ցուցադրումը կամ մարմինների ուղղակի շփումը բացառող այլ սեքսուալ ծառայություններ): Նման սեքսուալ ծառայությունների միջնորդավորված մատուցումը չի կարող գնահատվել որպես պոռնկություն, քանի որ բացակայում է պոռնկութ-

յանը բնորոշ անհրաժեշտ հատկանիշը՝ մարմնի առևտուրը (վաճառքը): Պոռնկության համար անհրաժեշտ է, որ կատարվեն ուղղակի շփումներ պոռնկությամբ զբաղվող անձի մարմնի և սեքսուալ ծառայությունները գնող անձի մարմնի միջև: Երևույթի՝ որպես պոռնկություն գնահատելու հարցում էական չէ պոռնիկի և սեքսուալ ծառայությունները գնողի տարասեռության կամ համասեռության հատկանիշը կամ նրանց միջև իրականացվող անմիջական ակտի եղանակը (սեռական հարաբերություն տղամարդու և կնոջ միջև, օրալ, մանուալ և այլն) կամ դերակատարումը (ակտիվ կամ պասիվ) կամ մասնակիցների քանակը (առնվազն երկու անձ, որոնցից մեկը պոռնիկն է): Այսպիսով, պոռնկությունն իրականացվում է վճարի դիմաց անձի (անձանց) կողմից այլ անձի (անձանց) հետ անմիջական և ուղղակի շփման միջոցով:

Թրաֆիքինգի իմաստով այլ անձի պոռնկության կամ այլ սեքսուալ շահագործում է, երբ՝

ա) *[միջոց]* - բռնությամբ, բռնության սպառնալիքով, առևանգմամբ, խաբեությամբ, վստահության չարաշահմամբ, այլ անձի նկատմամբ ունեցած իշխանության կամ նրա վիճակի խոցելիության օգտագործմամբ կամ զոհին վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալով կամ ստանալով կամ այդպիսիք խոստանալով,

բ) *[գործողություն]* - կատարվել է (են) թրաֆիքինգին բնորոշ գործողություն (գործողություններ), այն է՝ մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը,

գ) *[նպատակ]* - որպեսզի զոհի/տուժողի (տուժողների) կամքին հակառակ կամ անտեսմամբ նա (նրանք) ներգրավվի (ներգրավվեն) այլ անձի (անձանց) սեքսուալ ծառայություններ մատուցելու գործընթացում, այսինքն՝ զբաղվի (զբաղվեն) պոռնկությամբ կամ ենթարկվի (ենթարկվեն) այլ սեքսուալ շահագործման ի շահ երրորդ անձանց:

Սեքսուալ շահագործման այլ ձևեր ասելով՝ պետք է հասկանալ, որ շահ ստանալու նպատակով հանցագործը (հանցագործները) զոհին/տուժողին ստիպում է (են) այլ անձանց համար սեքսուալ (նաև՝ սեռական) բնույթ կրող, բայց պոռնկություն չհանդիսացող այլ գործողություններ կատարել: Այդպիսի շահագործման թվին կարող են դասվել, օրինակ, մարդկանց օգտագործումը մերկապարում, պոռնկագրական ֆիլմերի կամ նյութերի ստեղծմանը (օրի-

նակ՝ որպես դերակատար), մերկ մարմնի ցուցադրմանը կամ ցանկացած այլ սեքսուալ ծառայությունների մատուցմանը:

Այսպես, եթե գեղեցկության մրցույթին մասնակցելու պատրվակով կանայք խաբեությամբ կամ վստահության չարաշահմամբ հավաքագրվել և տեղափոխվել ու հանձնվել են այլ անձանց, որոնց նպատակն է օգտագործել ստացված անձանց պոռնկագրական ֆիլմի ստեղծման համար, ապա անհրաժեշտ է քննարկել արարքը որպես թրաֆիքինգ որակելու հարցը: Տվյալ դեպքում նպատակը եղել է ոչ թե անձին ներգրավել պոռնկության մեջ, այլ անձին ենթարկել սեքսուալ այլ շահագործման:

Նախկինում թրաֆիքինգի համար դատապարտված հանցագործները սեռական շահագործման նպատակով տուժողին խաբեությամբ հավաքագրել և սեռական շահագործման նպատակով նրան տեղափոխել են Միացյալ Արաբական Էմիրություններ:

Ա. Հաստատվել է, որ հանցանքը կատարվել է ուղղակի դիտավորությամբ և նյութական շահ ստանալու նպատակով: Օգտվելով տուժողի նյութական խոցելի վիճակից՝ հանցագործներից մեկը տուժողին առաջարկել էր տեղավորել նրան Միացյալ Արաբական Էմիրություններում որպես մոդել՝ բարձր վարձատրությամբ: Պայմանավորվել էին, որ ճանապարհածախսը կհոգա օտարերկրյա գործատուն: Զոհը/տուժողը տեղափոխվել էր Ռուսաստանի Դաշնություն, որտեղ նրան դիմավորել էր մի կին, տվել կեղծ անձնագիր, որ վերջինս կարողանա շարունակել ճանապարհորդությունը:

Բ. Միացյալ Արաբական Էմիրություններում նրան դիմավորել է հետախուզման մեջ գտնվող մի այլ կին, որը և սպառնալիքների գործադրմամբ ներգրավել է այդ կնոջը հարկադիր պոռնկության մեջ և շուրջ մեկ տարի վերջինիս կամքին հակառակ նրան ենթարկել է սեռական շահագործման:

Վերլուծություն. *«Ա» հատվածում նկարագրված արարքը պետք է որակել որպես թրաֆիքինգ, քանի որ տուժողի խոցելի վիճակն օգտագործվել է, նա խաբեությամբ հավաքագրվել և տեղափոխվել է սկզբից ՌԴ, այնուհետև՝ ԱՄԷ: Նրան հանձնել և ստացել են սեռական շահագործման նպատակով:*

Այդ շահագործումը դրսևորվել է այն բանում, որ տուժողի կամքին հակառակ նա հարկադրված է եղել զբաղվել պոռնկությամբ, իսկ վաստակած գումարները հանձնել իրեն վերահսկող անձին, իսկ չհանձնելու փորձերը ուժի գործադրմամբ կասեցվել են, և գու-

մարն «առգրավվել է»: Փաստորեն այդ կինը վճարման դիմաց բավարարել է այլ անձանց սեռական կրքերը՝ երրորդ անձանց օգտին:

Հայաստանում և ՌԴ-ում գործող հանցագործները գիտակցել են, որ իրենց գործողություններով տուժողին դնելու են սեռական շահագործման վիճակի մեջ, նախատեսել են, որ անձը կհայտնվի այդ վիճակում, և ցանկացել են հասնել այդ նպատակին:

Պոռնկության կամ այլ սեքսուալ շահագործումը՝ շահագործման վիճակի մեջ դնելու կամ այդ վիճակում պահելու հանցակազմի համատեքստում նշանակում է, որ պոռնիկին սեռական հարաբերություններ ունենալուն կամ այլ սեքսուալ ծառայություններ մատուցելուն հարկադրելով կամ պարտադրելով՝ երրորդ անձինք որոշակի շահ են ստանում: Ընդ որում, շահը կարող է լինել նաև ոչ նյութական: Երբ, օրինակ, պոռնիկին մատուցում են որպես նվեր, կամ նա տրամադրվում է անհատույց ժամանակավոր օգտագործման, շահը ոչ նյութական է: Շահագործումը առկա է և այն դեպքում, երբ կնոջ մատուցած սեռական հարաբերության կամ այլ սեքսուալ ծառայությունների համար գումարը չեն վճարում կամ վճարում են գումարի մի մասը, եթե նախապես պայմանավորվել էին վճարման վերաբերյալ:

Այսպիսով, պոռնկության շահագործումը կամ սեքսուալ այլ շահագործումն իրականացվում է, երբ անձն արդեն դրվել է շահագործման վիճակի մեջ կամ պահվում է այդ վիճակում: Այս դեպքում հանցագործությունը համարվում է ավարտված, երբ տուժողն ի շահ երրորդ անձի՝ հարկադրանքի կամ պարտադրանքի ուժով, առնվազն մեկ անգամ ունենա սեռական հարաբերություն կամ մատուցի այլ սեքսուալ ծառայություն:

Հաճախ սեքսուալ շահագործումը զուգորդվում է բռնաբարությամբ, սեքսուալ բնույթի բռնի գործողություններով, սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելով, 16 տարին չլրացած անձի հետ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելով, անառակաբարո գործողություններով, առողջությանը վնաս պատճառելով, գույքը դիտավորությամբ ոչնչացնելով կամ վնասելով, պոռնկությամբ զբաղվելուն նպաստելով, պոռնկագրական նյութեր կամ առարկաներ ապօրինի ստեղծելով կամ տարածելով և այլ հանցագործություններով: Այս հանցագործությունները միշտ պահանջում են արարքի լրացուցիչ որակում:

Ամփոփում

1. Թրաֆիքինգի իմաստով՝ այլ անձի պոռնկության կամ սեքսուալ այլ շահագործման նպատակը դրսևորվում է նրանում, որ թրաֆիքինգին բնորոշ միջոցի (միջոցների) կիրառմամբ անձն իր կամքին հակառակ կամ իր կամքի անտեսմամբ հավաքագրվում, փոխանցվում կամ ստացվում է ի շահ երրորդ անձանց՝ պոռնկությամբ զբաղվելու կամ սեքսուալ այլ ծառայություններ մատուցելու համար:

Այդ դեպքում արարքը պետք է որակել որպես ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նկարագրված թրաֆիքինգ, եթե բացակայում են որակման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

2. Պոռնկությունը կամ սեքսուալ այլ շահագործումը, ինչպես նաև պոռնկության կամ սեքսուալ այլ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը դրսևորվում է նրանում, որ թրաֆիքինգին բնորոշ միջոցի (միջոցների) կիրառմամբ անձն իր կամքին հակառակ կամ իր կամքի անտեսմամբ փաստացի շահագործվում է կամ դրվում է պոռնկությամբ զբաղվելու կամ սեքսուալ այլ ծառայություններ մատուցելու վիճակի մեջ կամ պահվում է այդ վիճակում:

Այդ դեպքում արարքը պետք է որակել որպես ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նկարագրված շահագործում կամ շահագործման վիճակի մեջ դնել կամ պահել, եթե բացակայում են որակման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

2.2.3. Հարկադիր աշխատանք կամ ծառայություններ

Համաձայն ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի 1-ին պարբերության՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն, իսկ 5-րդ պարբերությունում նշվում է, որ հարկադիր աշխատանքն արգելվում է:

ՀՀ աշխատանքային օրենսգրքում ամրագրված աշխատանքային օրենսդրության սկզբունքներից են՝ աշխատանքի ազատությու-

նը[29] և ցանկացած ձևի հարկադիր աշխատանքի և աշխատողների նկատմամբ բռնությունների արգելումը: Դա նշանակում է, որ աշխատանքը պետք է լինի միայն կամովի, և աշխատողներն ազատ են աշխատանքի ընտրության մեջ: Բացառություն են կազմում դատարանի կողմից նշանակված հանրային աշխատանքները (ինչպես նաև այլ դեպքեր), որոնք հարկադիր և պարտադիր են, բայց կոնկրետ աշխատանքի տեսակը ընտրելիս հաշվի են առնվում անձի հնարավորությունները, սեռը, տարիքը, մասնագիտական ունակությունները և այլ պայմաններ:

Հարկադիր կամ պարտադիր աշխատանք՝ որևէ պատժի սպառնալիքի տակ անձից պահանջվող որևէ աշխատանք կամ ծառայություն, որի համար այդ անձը կամավոր չի առաջարկել իր ծառայությունները, բացառությամբ հարկադիր կամ պարտադիր աշխատանքներին վերաբերող այն դրույթների, որոնք ամրագրված են առանձին միջազգային իրավական փաստաթղթերում:[30]

Միջազգային իրավական գործիքների համատեքստում հարկադիր կամ պարտադիր աշխատանքը չի ներառում՝

ա) պարտադիր զինվորական ծառայության մասին օրենքով պահանջվող և զուտ զինվորական բնույթի ցանկացած աշխատանք կամ ծառայություն,

բ) ինքնակառավարվող երկրի քաղաքացիների սովորական քաղաքացիական պարտականությունների մաս կազմող ցանկացած աշխատանք կամ ծառայություն,

գ) դատարանի կայացրած դատավճռով անձից պահանջվող ցանկացած աշխատանք կամ ծառայություն՝ այն պայմանով, որ այդ աշխատանքը կամ ծառայությունը կատարվի պետական մարմնի վերահսկողության կամ հսկողության ներքո, և որ նշված

---

[29] Այստեղ առկա է որոշակի տերմինաբանական անհամապատասխանություն ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի միջև:

[30] Դրանք են՝

- ԱՄԿ-ի «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» թիվ 29 կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասը,
- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ մասը,
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 8-րդ հոդվածի 3-րդ մասը:

անձը չփոխանցվի կամ չհանձնվի մասնավոր անձանց, ընկերությունների կամ ընկերակցությունների տնօրինմանը,

դ) արտակարգ իրավիճակների պայմաններում պահանջվող ցանկացած աշխատանք կամ ծառայություն, այսինքն՝ պատերազմի, տարերային աղետի կամ դրա սպառնալիքի դեպքում, ինչպիսիք են հրդեհները, ջրհեղեղները, սովը, երկրաշարժը, սուր համաճարակները կամ տնային կենդանիների համաճարակները, կենդանիների, միջատների կամ մակաբույծների հարձակումները և ընդհանրապես այն իրավիճակները, որոնց դեպքում վտանգի են ենթարկվում կամ կարող են ենթարկվել ամբողջ բնակչության կամ նրա մի մասի կյանքը կամ նորմալ կենսապայմանները,

ե) համայնքային բնույթի փոքր ծավալի աշխատանքները, որոնք կատարվում են տվյալ համայնքի անդամների անմիջական օգուտի համար, և որոնք, հետևաբար, կարող են համարվել համայնքի անդամների սովորական քաղաքացիական պարտականություններ՝ պայմանով, որ համայնքի անդամները կամ նրանց անմիջական ներկայացուցիչներն իրավունք ունենան այդ աշխատանքների նպատակահարմարության վերաբերյալ արտահայտել իրենց կարծիքը:

Պետք է նաև նկատի ունենալ, որ ԱՄԿ-ի թիվ 29 կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մեջ ներգրավելու իրավունք ունեցող իշխանության մարմինները (բացառությամբ այն դեպքերի, որոնց վերաբերյալ գործում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածը) պարտավոր են նախքան այդպիսի աշխատանքի իրականացումը հավաստիանալ, որ այդ աշխատանքը կամ ծառայությունը՝

ա) ուղղակի և էական հետաքրքրություն է ներկայացնում այն կատարող համայնքի համար,

բ) կատարելու համար անհնարին էր ստանալ կամավոր աշխատուժ, թեև առաջարկվել էին տվյալ տարածքում համանման աշխատանքի կամ ծառայության համար ոչ պակաս նպաստավոր աշխատավարձ և աշխատանքի պայմաններ,

գ) ներկա կամ մոտակա անհրաժեշտություն է,

դ) շատ ծանր բեռ չի լինի բնակչության համար՝ հաշվի առնելով առկա աշխատուժը և տվյալ աշխատանքը կատարելու բնակչության ունակությունները:

Կարևորվում է նաև ԱՄԿ թիվ 29 կոնվենցիայի 4-րդ հոդվածով սահմանված այն արգելքը, որի համաձայն իշխանության իրավասու մարմինները պետք է արգելեն մասնավոր անձանց, ընկերություններին կամ միություններին շահույթ ստանալ իրենց օգտին կատարվող հարկադիր կամ պարտադիր աշխատանքից:

Ինչ վերաբերում է «հարկադիր ծառայություններ» եզրույթին, ապա «Վան դեռ Մյուսսելն ընդդեմ Բելգիայի» գործով (1983 թ. նոյեմբերի 23-ի Որոշում, Սերիա Ա, թիվ 70, կետ 33) Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը նշել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 4-րդ հոդվածի 3-րդ մասում օգտագործված «հարկադիր աշխատանք» եզրույթը պետք է ներառի նաև «հարկադիր ծառայությունները»:

Թրաֆիքինգի հետ կապված աշխատանքային շահագործման նպատակը դրսևորվում է նրանում, որ թրաֆիքինգն իրականացվում է անձին հարկադիր աշխատանքների կամ ծառայությունների մեջ օգտագործելու համար:

Հարկադիր աշխատանքներն ու ծառայությունները կարող են իրականացվել թրաֆիքինգի հետ կապված և չկապված, այսինքն՝ հարկադրված աշխատելը կամ ծառայություն մատուցելը դեռ թրաֆիքինգ չէ, եթե բացակայում են թրաֆիքինգի այլ հատկանիշներ: Թրաֆիքինգից տուժողների մեծ մասն ի վերջո հայտնվում է հարկադիր աշխատանքի իրավիճակում, սակայն հարկադիր աշխատանքից տուժած ոչ բոլոր անձինք են այդ իրավիճակում հայտնվում թրաֆիքինգի հետևանքով: Տնտեսության որոշ ոլորտներում թրաֆիքինգի ռիսկն ավելի մեծ է, օրինակ, այն ոլորտներում, որոնք հենվում են էժան կամ սեզոնային աշխատանքի վրա կամ ներառում են դժվար կամ վտանգավոր աշխատանքներ:

«Որևէ պատժի սպառնալիքի տակ» և «կամավոր առաջարկ» արտահայտությունների հարաբերակցությունը

Այն աշխատանքը, որը ստանձնվել է որևէ պատժի սպառնալիքի տակ, չի հանդիսանում կամավոր ստանձնած աշխատանք: Այլ կերպ ասած, աշխատանքը չի կարող գնահատվել որպես կամավոր առաջարկ, եթե անձն այդ առաջարկն ընդունելիս գտնվել է սպառնալիքի տակ: Սպառնալիքը կարող է արտահայտվել ֆիզիկական կամ հոգեբանական այնպիսի ճնշմամբ, երբ անձը չունի այլընտրանք, քան «համաձայնել» կատարել աշխատանքը կամ մատուցել ծառայությունները: Այսպես, ֆիզիկական ուժի գործադրումը տու-

ժողի նկատմամբ կամ տուժողի ներկայությամբ «համաձայնություն» չտված այլ անձի նկատմամբ չեզոքացնում է «համաձայնության» կամովի բնույթը: «Համաձայնությունը» կամովի չէ նաև, երբ սպառնում են բացահայտել տուժողի կյանքի այնպիսի դրվագներ, որոնց բացահայտման դեպքում անձը կարող է հայտնվել կյանքի դժվարին իրավիճակում: Բացի այդ, երբ աշխատանքի սկզբնական առաջարկը կապված է խաբեության կամ վստահության չարաշահման կամ, օրինակ, կեղծիքի հետ, աշխատողի կողմից աշխատանք ստանձնելը չի կարող համարվել որպես իմացաբար և կամավոր: Ամեն դեպքում, աշխատողի աշխատանքի ընտրության իրավունքն անօտարելի է: Աշխատողը միշտ պետք է ազատ լինի աշխատանք ընտրելու և այն թողնելու հարցում: Հարցն ունի երկու կողմ՝

ա) արդյոք ազատորեն է տրվել աշխատելու համաձայնությունը և

բ) արդյոք աշխատողը պահպանում է իր համաձայնությունը ետ վերցնելու իրավունքը:

Ամփոփում

1. <u>Թրաֆիքինգի իմաստով աշխատանքային շահագործման նպատակը դրսևորվում է նրանում, որ</u> թրաֆիքինգին բնորոշ միջոցի (միջոցների) կիրառմամբ անձն իր կամքին հակառակ կամ իր կամքի անտեսմամբ հավաքագրվում, փոխանցվում կամ ստացվում է ի շահ երրորդ անձանց՝ հարկադիր աշխատանքներ կատարելու և (կամ) ծառայություններ մատուցելու համար:

Այդ դեպքում արարքը պետք է որակել որպես ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նկարագրված թրաֆիքինգ, եթե բացակայում են որակման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

2. <u>Աշխատանքային շահագործման, շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու իմաստով շահագործումը դրսևորվում է նրանում, որ</u> թրաֆիքինգին բնորոշ միջոցի (միջոցների) կիրառմամբ անձն իր կամքին հակառակ կամ իր կամքի անտեսմամբ փաստացի շահագործվում է կամ դրվում հարկադիր աշխատանքներ կատարելու և (կամ) ծառայություններ մատուցելու վիճակի մեջ կամ պահվում է այդ վիճակում:

Այդ դեպքում արարքը պետք է որակել որպես ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նկարագրված շահագործ-

ման վիճակի մեջ դնելը կամ պահելը, եթե բացակայում են որակման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

2.2.4. Ստրկություն կամ ստրկությանը նմանվող վիճակ

Միջազգային փաստաթղթերում տրվել են ստրկության և այդ երևույթի հետ առնչվող հասկացությունները, որոնք կարող են օգտագործվել մարդկանց թրաֆիքինգի արդյունքում ստրկությունը կամ ստրկությանը նմանվող վիճակը բացահայտելու համար: Այդ եզրույթների հասկացությունները ՀՀ օրենսդրությունում բացակայում են:

Ստրկության վերաբերյալ 1926 թ. սեպտեմբերի 25-ի Կոնվենցիայի (1953 թ. դեկտեմբերի 7-ի արձանագրությամբ կատարված փոփոխություններով) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «ստրկությունը» մարդու վիճակն է կամ դրությունը, երբ նրա նկատմամբ իրականացվում են սեփականության իրավունքին բնորոշ բոլոր կամ որոշակի լիազորություններ:

«Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը հավասարազոր ավանդույթների վերացման մասին» ՄԱԿ-ի 1956 թ. լրացուցիչ կոնվենցիայի 7-րդ հոդվածի «ա» կետի համաձայն, «ստրուկն» այն անձն է, ով գտնվում է ստրկության վիճակում: Իսկ ստրկությանը նմանվող վիճակի իրավաբանական բնութագիրը տրված է նույն լրացուցիչ կոնվենցիայի 7-րդ հոդվածի «բ» կետում: Այդ վիճակները պայմանականորեն բաժանվել են 4 խմբի՝

1. Պարտապանի ստրկացում՝ այնպիսի վիճակ կամ դրություն, երբ պարտապանը, որպես պարտքի ապահովման միջոց գրավ է դնում կամ իր աշխատանքը, կամ իրենից կախյալ վիճակում գտնվող անձի աշխատանքը, եթե կատարվող աշխատանքի արժեքը չի հաշվակցվում տվյալ պարտքի մարմանը, կամ եթե այդ աշխատանքի տևողությունը չի սահմանափակվում և դրա բնույթը չի սահմանվում:

2. Ճորտային կախվածություն՝ հողի այնպիսի օգտագործումը, որի դեպքում օրենքով, ավանդույթի ուժով կամ փոխադարձ համաձայնության հիման վրա օգտագործողը պարտավոր է ապրել և աշխատել ուրիշին պատկանող հողատարածքի վրա և վարձատրությամբ կամ առանց դրա որոշակի աշխատանք կատարել այդ սեփականատիրոջ օգտին ու չի կարող փոփոխել իր նման վիճակը:

3. Կնոջ ազատ ամուսնանալու իրավունքը ոտնահարող, կնոջն այլ անձի վարձակալությամբ կամ այլ պայմանով կամ ժառանգությամբ փոխանցելու ցանկացած ինստիտուտ կամ ավանդույթ, երբ՝

ա) կնոջ ծնողները, խնամակալը, ընտանիքը կամ յուրաքանչյուր այլ անձ կամ անձանց խումբ դրամով կամ բնեղենով վարձատրելու դիմաց խոստանում են ամուսնացնել կամ ամուսնացնում են այդ կնոջը առանց նրան մերժելու իրավունք վերապահելու,

բ) կնոջ ամուսինը, վերջինիս ընտանիքը կամ տոհմը իրավունք ունեն վարձատրությամբ կամ այլ պայմանով փոխանցելու տվյալ կնոջն այլ անձի,

գ) ամուսնու մահից հետո կինը ժառանգաբար փոխանցվում է մեկ այլ անձի:

4. Երեխային շահագործման նպատակով այլ անձի փոխանցելու ցանկացած ինստիտուտ կամ ավանդույթ, այսինքն՝ երբ երեխան (մինչև 18 տարեկան անձը) ծնողների կամ նրանցից մեկի կամ խնամակալի կողմից վարձատրությամբ կամ առանց դրա փոխանցվում է մեկ այլ անձի՝ այդ երեխայի կամ նրա աշխատանքի շահագործման նպատակով:

Ստրկության հատուկ դրսևորում է տնային ստրկությունը:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ստրկությանը նմանվող վիճակի տարբերությունը ստրկությունից կայանում է նրանում, որ ստրկությանը նմանվող վիճակը թեև ենթադրում է «ազատությունը մերժելու առանձնապես ծանր ձև», երբ մարդը հնարավորություն չունի փոփոխելու իր վիճակը, այն, այնուամենայնիվ, չունի սեփականության իրավունքին բնորոշ հատկանիշներ, որոնց առկայությունը բնութագրում է ստրկությունը: Այդ եզրահանգմանն են եկել Մարդու իրավունքների Եվրոպական հանձնաժողովի կոնվենցիոն մարմինները Վան Դրուգենբրոկի գործում (1982 թ. հունիսի 24-ի Որոշում, Սերիա Ա, թիվ 50, էջ 32, կետ 58):

Ամփոփում

1. <u>Թրաֆիքինգի իմաստով ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի նպատակը դրսևորվում է նրանում, որ</u> թրաֆիքինգին բնորոշ միջոցի (միջոցների) կիրառմամբ անձն իր կամքին հակառակ կամ իր կամքի անտեսմամբ հավաքագրվում, փոխանցվում կամ ստացվում է ի շահ երրորդ անձանց՝ ստրկացվելու կամ ստրկությանը նմանվող վիճակում շահագործվելու համար:

Այդ դեպքում արարքը պետք է որակել որպես ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նկարագրված թրաֆիքինգ, եթե բացակայում են որակման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

2. Շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու իմաստով ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակում շահագործումը դրսևորվում է նրանում, որ թրաֆիքինգին բնորոշ միջոցի (միջոցների) կիրառմամբ անձն իր կամքին հակառակ կամ իր կամքի անտեսմամբ փաստացի ստրկացվում է կամ դրվում է ստրկությանը հավասարազոր վիճակի մեջ կամ պահվում է այդ վիճակում:

Այդ դեպքում արարքը պետք է որակել որպես ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նկարագրված շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը, եթե բացակայում են որակման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

2.2.5. Մարդու օրգանները կամ հյուսվածքները վերցնելը

Մարդու օրգանները կամ հյուսվածքները փոխպատվաստելու զարգացման և տարածման պայմաններում շահագործման այդ հանցավոր ձևը նույնպես տարածում է ստանում:

«Մարդու օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստման մասին» ՀՀ օրենքով սահմանված են այն դեպքերը և պայմանները, երբ կարող է կատարվել փոխպատվաստումը, սահմանված է նաև փոխպատվաստում իրականացնելու կարգը: Որոշված են փոխպատվաստման թույլատրելի սահմանները և սահմանափակումների շրջանակը: Փոխպատվաստումը կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ մյուս բժշկական միջոցառումները չեն կարող երաշխավորել հիվանդի կյանքի փրկությունը և առողջության վերականգնումը: Կենդանի դոնորից փոխպատվաստման նպատակով կարող են վերցվել միայն զույգ օրգաններից մեկը, կենտ օրգանի մի մասը կամ հյուսվածքը, որոնց բացակայությունը չի կարող առաջացնել դոնորի կյանքի համար վտանգ ներկայացնող փոփոխություններ: Սահմանափակումները վերաբերում են և այն անձանց շրջանակին, ովքեր կարող են լինել դոնոր: Փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելը անձից (կենդանի դոնորից) չի թույլատրվում, եթե՝

ա) չի լրացել նրա 18 տարին (բացառությամբ ոսկրածուծի փոխպատվաստման դեպքի),

բ) նա սահմանված կարգով ճանաչված է հաշմանդամ,

գ) հղի է,

դ) քաղաքացին պատիժ է կրում ազատազրկման վայրում,

ե) պատանդ է,

զ) լրացել է անձի 65 տարին:

Օրգաններ վերցնելը չի թույլատրվում, եթե պարզվել է, որ դրանք պատկանում են անձի, որը տառապում է ռեցիպիենտի կյանքին և առողջությանը վտանգ ներկայացնող հիվանդությամբ:

Հարկ է նշել, որ օրգանների և հյուսվածքների կորզմամբ շահագործումը չի սահմանափակվում միայն փոխպատվաստմամբ, դրանք կարող են օգտագործվել նաև բժշկական փորձերի, արդյունաբերությունում, հանիբալիզմի, կրոնական ծիսակատարությունների համար և այլ նպատակներով:

Թրաֆիքինգի նպատակով մարդու օրգանները կամ հյուսվածքները վերցնելը շահագործման եղանակներից է: Բավարար է պարզել նպատակը, անգամ եթե հանցագործներին չի հաջողվել իրականացնել իրենց հանցավոր մտադրությունը՝ կորզել թրաֆիքինգի զոհի մարմնի մասերը կամ հյուսվածքները:

Ամփոփում

1. <u>Թրաֆիքինգի իմաստով մարդու օրգանները կամ հյուսվածքները վերցնելու ձևով շահագործման նպատակը դրսևորվում է նրանում, որ</u> թրաֆիքինգին բնորոշ միջոցի (միջոցների) կիրառմամբ անձն իր կամքին հակառակ կամ իր կամքի անտեսմամբ հավաքագրվում, փոխանցվում կամ ստացվում է ի շահ երրորդ անձանց՝ մարմնի օրգանի (օրգանների) կամ հյուսվածքների հարկադիր դոնոր լինելու կամ շահադիտական այլ նպատակով մարմնի օրգանը (օրգանները) կամ հյուսվածքները նրանից վերցնելու համար:

Այդ դեպքում արարքը պետք է որակել որպես ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նկարագրված թրաֆիքինգ, եթե բացակայում են որակման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

2. <u>Շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու իմաստով շահագործումը դրսևորվում է նրանում, որ</u> թրաֆիքինգին բնորոշ միջոցի (միջոցների) կիրառմամբ անձն իր կամքին հակառակ կամ իր կամքի անտեսմամբ փաստացի շահագործվում է (կորզվում են օր-

գանները կամ հյուսվածքները) կամ դրվում մարմնի օրգանի (օրգանների) կամ հյուսվածքների հարկադիր դոնոր լինելու կամ շահադիտական այլ նպատակով մարմնի օրգանը (օրգանները) կամ հյուսվածքները նրանից վերցնելու վիճակի մեջ կամ պահվում է այդ վիճակում:

Այդ դեպքում արարքը պետք է որակել որպես ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նկարագրված շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը, եթե բացակայում են որակման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

2.3. Մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև մարդու հանցավոր շահագործման զոհը

2.3.1. Չափահաս զոհը

Որպես ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածում նշված հանցագործություններից տուժող կարող է հանդես գալ ցանկացած չափահաս (տասնութ տարին լրացած) ֆիզիկական անձ:

Տուժողի սեռը, սոցիալական վիճակը, ծագումը, ազգությունը, առողջական վիճակը և անձը բնութագրող այլ հատկանիշները հանցակազմի համար նշանակություն չունեն, բացառությամբ ՀՀ քր. օր-ի 132[2]-րդ հոդվածում նշված տուժողների երկու կատեգորիայի՝

ա) տասնութ տարին չլրացած,

բ) հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձինք:

Երբ տուժողները հասնում են նպատակակետ երկիր և հանձնվում են շահագործողներին, նրանք հանցագործ-շահագործողների համար վերածվում են եկամուտ բերող աշխատող ակտիվների:

Հանցագործների համար խիստ կարևոր է կարողանալ շարունակական ազդեցություն ունենալ տուժողների վրա մինչև այն պահը, երբ վերջիններս կարող են եկամուտ բերել:

Սովորաբար տուժողից պահանջում են հատուցել դեպի նպատակակետ նրանց փոխադրելու համար կրած ենթադրյալ ծախսերը: Պարտքին նաև գումարվում են սննդի, կացարանի և հագուստի համար կրած ծախսերով պայմանավորված, բայց ուռճացված գումարներ և դրանց տոկոսները:

Թրաֆիքինգի ենթարկված անձինք հաճախ չեն գիտակցում, որ հանցագործների նման վարքագիծն ինքնին ապօրինի է, և որ պարտքով պայմանավորված կախվածության հիման վրա կնքված պայմանագիրը, որով որպես պարտքի երաշխիք հանդես է գալիս մարդը, նույնպես ապօրինի է և աշխատողի իրավունքների հարցում խաբեության արդյունք է[31]:

2.3. 2. Զոհի /տուժողի՝ շահագործման ենթարկվելու համաձայնությունը

ԵԽ 2005 թ. Կոնվենցիայի 4-րդ հոդվածի «բ» կետով սահմանված է, որ նույն 4-րդ հոդվածի «ա» կետում նշված շահագործման այս կամ այն ձևի կիրառման վերաբերյալ թրաֆիքինգից տուժած անձի համաձայնությունը որևէ նշանակություն չունի այն դեպքում, երբ կիրառվել է այդ կետում նախատեսված եղանակներից որևէ մեկը: Այսինքն՝ տուժողի կողմից շահագործման ենթարկվելու համաձայնությունը հանցագործներին չի ազատում քրեական պատասխանատվությունից, եթե անգամ տուժողն իմացել է, որ ենթարկվելու է շահագործման ու տվել է իր համաձայնությունը հավաքագրվելու, տեղափոխվելու, փոխանցվելու, ստացվելու և թաքցվելու վերաբերյալ, սակայն գործողությունների այդ շղթայում իր նկատմամբ գոնե մեկ անգամ կիրառվել է գործողություններին ուղեկցող միջոցներից որևէ մեկը:

Գործնականում, թրաֆիքինգի բազում դեպքերում, զոհերի և թրաֆիքինգ իրականացնողների միջև լինում է սկզբնական համաձայնություն կամ համագործակցություն, որին հետագայում հետևում են հարկադրանքը, չարաշահումը կամ շահագործումը: Այս պարագայում պետք է հաշվի առնել, որ վերը նշված Կոնվենցիայի և Արձանագրության համապատասխան հոդվածների «բ» կետերում պարզաբանվում է, որ համաձայնությունը դառնում է առոչինչ ցանկացած այն դեպքում, երբ օգտագործվել է թրաֆիքինգի միջոցներից որևէ մեկը: Այսինքն՝ զոհի համաձայնությունը կարող է, թերևս, վկայակոչվել պաշտպանության կողմից, սակայն երբ ապացուցվում է այնպիսի միջոցների կիրառումը, ինչպիսիք են սպառնալիքները, ուժի գործադրումը կամ իշխանության չարաշա-

[31] Anti-Trafficking Training for Frontline Law Enforcement officers, Vienna, 2006, p. 22.

հումը կամ հարկադրանքի այլ ձևերը, շահագործման ենթարկվելու մասին համաձայությունը դառնում է առոչինչ, ուստի դա չի կարող ընդունվել որպես պաշտպանության կողմի վկայակոչվող իրավաչափ կամ օրինական փաստարկ:

ԵԽ 2005 թ. Կոնվենցիայի և ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող՝ 2000 թ. թիվ 2 արձանագրության դրույթների համատեքստում միայն տեսականորեն է հնարավոր շահագործման մասին համաձայնությունը գնահատել որպես իրավաչափ: Սակայն թրաֆիքինգի սահմանումը և դրանով զբաղվողների գործելաոճն այս «սցենարը» դարձնում են գրեթե անհավանական: Թրաֆիքինգ տեղի չի ունենում միայն այն դեպքում, երբ անձը լիովին տեղյակ է և համաձայն է իր նկատմամբ այնպիսի վարվելակերպին, որն այլ պարագաներում Արձանագրության և ԵԽ Կոնվենցիայի դրույթներով կարող է գնահատվել որպես շահագործում և թրաֆիքինգ: Սակայն թրաֆիքինգը համարվում է կատարված, եթե գործընթացի ցանկացած փուլում թրաֆիքինգով զբաղվողների կողմից ոչ պատշաճ միջոցների կիրառման արդյունքում զոհը հրաժարվում է նախկին համաձայնություններից: Այսպիսով, զոհի համաձայնությունը թրաֆիքինգի գործընթացի որևէ մեկ փուլում չի կարելի դիտարկել որպես համաձայնություն գործընթացի բոլոր փուլերի համար, իսկ առանց յուրաքանչյուր փուլի համար համաձայնության համարվում է, որ կատարվել է թրաֆիքինգ, այսինքն՝ հանցագործություն:

<u>Մի կնոջ պատմություն</u>. Ս-ն 16 տարեկանից զբաղվում էր պոռնկությամբ: Երբ նա 18 տարեկան էր, իր ծանոթներից մեկը նրան հրավիրել է այլ երկիր՝ հավատացնելով, որ նա մի ամբողջ կարողություն կվաստակի, եթե այնտեղ որպես պոռնիկ աշխատի, և որ նա իր արտաքինով գուցե կկարողանա որպես մանեկենուհի աշխատել, իսկ ինքը կհոգա բոլոր կազմակերպչական հարցերը: Ս-ն առաջարկն ընդունել է: Նշանակետ երկրում մեկ այլ մարդ Ս-ից վերցրել է փաստաթղթերը և ստիպել է ամեն օր երեկոյան ժամը 18-ից մինչև առավոտյան ժամը 6-ը զբաղվել պոռնկությամբ: Նրան ասել էին, որ չեն վերադարձնելու անձնագիրը, մինչև չհատուցի հասարակաց տան տնօրենի կրած ճանապարհածախսը և այլ ծախսերը:

Ս-ն ակնկալում էր, որ զբաղվելու է պոռնկությամբ, սակայն երբեք չէր պատկերացնում, որ սպառնալիքների ներքո օր ու գիշեր գերի է լինելու:

Այս օրինակում փաստն այն է, որ զոհը կանխավ գիտեր, որ պատրաստվում է պոռնկությամբ զբաղվել և տվել էր իր համաձայնությունը, սակայն դա հանցագործին չի ազատում քրեական պատասխանատվությունից, քանի որ օգտագործվել են թրաֆիքինգին բնորոշ միջոցներ: Արարքի լրջությունը չի նվազում այն բանից, որ զոհը տեղյակ է եղել աշխատանքի բնույթի մասին, քանի որ նա տեղյակ չի եղել աշխատանքային պայմանների մասին և չի տվել իր համաձայնությունը այդ պայմաններում աշխատելու համար:



Ամփոփում՝ *զոհի շահագործման ենթարկվելու համաձայնությունն առոչինչ է, եթե նրա նկատմամբ ցանկացած փուլում կիրառվել է թրաֆիքինգի կամ շահագործման ցանկացած միջոց:*

2.3.3. Զոհին/տուժողին հանցագործություն կատարելու համար քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը

ԵԽ 2005 թ. Կոնվենցիայի «Պատիժ չկիրառելու հնարավորություն» վերնագրով 26-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր կողմ, ելնելով իր իրավական համակարգի հիմնական սկզբունքներից, պետք է նախատեսի զոհերի նկատմամբ նրանց ապօրինի գործողությունների համար պատիժ չկիրառելու հնարավորություն այն դեպքում, երբ նրանց նկատմամբ հարկադրանք է գործադրվել այդպիսի վարքագիծ դրսևորելու համար:

Այլ կերպ ասած, ԵԽ 2005 թ. Կոնվենցիայի 26-րդ հոդվածը վերաբերում է թրաֆիքինգի զոհերի նկատմամբ մարդասիրական մոտեցման խնդիրներից մեկին՝ նրանց նկատմամբ քրեական պատիժ չկիրառելու պայմաններին, երբ տուժողի հանցավոր վարքագիծը պայմանավորված է եղել իր նկատմամբ հարկադրանքի գործադրմամբ:

Այսպես, թրաֆիքինգի, ինչպես նաև շահագործման մեջ գտնվող կամ այդ վիճակում պահվող զոհերը շատ դեպքերում կատարում են տարբեր բնույթի իրավախախտումներ, ներառյալ՝ հանցագործություններ, չկարողանալով դիմադրել իրենց նկատմամբ կիրառվող հարկադրանքին, կամ էլ այդ արարքները կատարվում են դիմադրության կամ փախուստի ընթացքում: Հարկադրանքի ներքո գտնվող զոհերի կողմից կատարվող հանցագործությունները և դրանց կատարման մեխանիզմները կարող են լինել բազմազան՝ սկսած ոչ մեծ ծանրության հանցագործություններից և վերջացրած առանձնապես ծանր հանցագործություններով (օրինակ՝ մարդկային զոհեր, հրկիզումներ, սպանություններ, ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը կամ այլ):

Հաշվի առնելով նման իրողությունների հնարավորությունը՝ ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ *ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածով, ինչպես նաև 132[2]-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններից տուժած անձն ազատվում է իր կողմից կատարված ոչ մեծ կամ միջին ծանրության այն հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից, որոնցում ներգրավված է եղել իր նկատմամբ իրականացված թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում և այդ արարքները կատարել է հարկադրանքի ներքո:*

Այսպիսով, եթե զոհը կատարել է հանցագործություններ, ապա նա <u>իմպերատիվ կարգով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից հետևյալ պայմանների միաժամանակյա առակայության դեպքում՝</u>

ա) նա ՀՀ քր. դատ. օր-ով սահմանված կարգով ճանաչվել է որպես թրաֆիքինգի կամ շահագործման մեջ դրված կամ այդ վիճակում պահված հանցագործությունից տուժող,

բ) նա կատարել է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ,

գ) վերը նշված «բ» կետում որոշված հանցագործությունների կատարման մեջ նա ներգրավված է եղել՝ իր նկատմամբ իրականացված թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում,

դ) վերը նշված «բ» կետում որոշված հանցագործությունները նա կատարել է հարկադրանքի ներքո:

2.4. ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների հանցակազմերը

2.4.1. ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների օբյեկտները

<u>Անմիջական օբյեկտներ.</u> ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների անմիջական հիմնական օբյեկտն է այն հասարակական հարաբերությունները, որոնք ապահովում են տուժողի անձնական ազատությունը:

Ինչպես թրաֆիքինգի, այնպես էլ մարդուն շահագործելու, շահագործման մեջ դնելու կամ պահելու դեպքում հանցագործները շահագործման նպատակով անձին զրկում են անձնական ազատությունից:

Անձի ազատության սահմանադրաիրավական հիմքերով է պայմանավորված թրաֆիքինգի, ինչպես նաև մարդու շահագործման, նրան շահագործման մեջ դնելու կամ պահելու հանցակազմերի անմիջական օբյեկտը: ՀՀ Սահմանադրությունը պարունակում է այնպիսի դրույթներ, որոնք երաշխավորում են պետության պատասխանատվությունը մարդկանց հիմնարար իրավունքները և ազատությունը անօրինական սահմանափակելու, հանցավոր ոտնձգությունները, ներառյալ՝ թրաֆիքինգը, ինչպես նաև մարդուն շահագործման մեջ դնելը կամ պահելը կանխելու, խափանելու, բացա-

հայտելու և տուժողների իրավական պաշտպանությունը ապահովելու հարցերում:

ՀՀ Սահմանադրությունը հռչակում է, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են[32]:

ՀՀ Սահմանադրությունը հռչակում է նաև, որ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան[33]: Այդ դրույթը կոչված է ապահովելու անձի ազատությունը, պետության ու հասարակության ժողովրդավարությունը և կենսունակությունը:

Մարդու արժանապատվության պաշտպանությունը անձի անձեռնմխելիության պետական ապահովման դրսևորումներից մեկն է: Այդ սահմանադրական երաշխիքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածում, որի համաձայն մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:

ՀՀ Սահմանադրությունը պաշտպանում է անձնական ազատությունը և անձեռնմխելիությունը, այսինքն՝ մարդու կարևորագույն այն իրավունքները, որոնք նա ստանում է ծնվելու պահից: Այդ հոդվածն ամրագրում է մարդու անձնական ազատությունը սահմանափակելու օրինական հիմքերը: ՀՀ Սահմանադրությամբ պաշտպանվում է մարդու անձնական ազատությունը այն դեպքերում, երբ վերջինս ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները[34]:

Սահմանադրության համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք»[35]:

---

[32] ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մաս:
[33] ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մաս:
[34] ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 5-րդ մաս, որով սահմանված է՝ «Մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները»:
[35] ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի 1-ին մաս:

<u>Օրինակ հայաստանյան դատական պրակտիկայից:</u>

Ոմն Գ., նախնական համաձայնության գալով այլ երկրում բնակվող իր քրոջ՝ Ա-ի հետ, որոշել էր բարձր աշխատավարձ խոստանալով և ծեր կամ երեխա խնամելու պատրվակով խաբեությամբ հավաքագրել և այդ երկիր ուղարկել նյութական ծանր վիճակում գտնվող իր հարևանուհուն, որտեղ վերջինս պետք է ենթարկվեր սեռական շահագործման: Հավաքագրվածը տեղափոխվել էր նշանակետ երկրի փոքր քաղաքներից մեկը, որտեղ Ա-ն նրան առաջարկել էր զբաղվել պոռնկությամբ: Երբ վերջինս հրաժարվել և պահանջել էր վերադարձնել իր երկիր, նրան հնազանդեցնելու համար Ա-ն ծեծի էր ենթարկել, մի քանի օր չկերակրելով պահել էր տան նկուղում, որից հետո թույլ էր տվել, որ նրա հետ ունենան բռնի սեռական հարաբերություն: Այնուհետև, 6.000 ԱՄՆ դոլարով վաճառել էր ոմն Մ-ին: Հետագայում, օգտվելով ընձեռված հնարավորությունից, զոհը/տուժողը վերադարձել և կատարվածի մասին հայտնել էր ոստիկանությանը:

Վերլուծություն. այս հանցագործության անմիջական օբյեկտը կազմում են այն հասարակական հարաբերությունները, որոնք ապահովում են տուժողի անձնական ազատությունը. մասնավորապես՝ տուժողը հայտնվել էր անազատության մեջ:

<u>Լրացուցիչ օբյեկտ.</u> Քննարկվող հանցագործությունները բնութագրվում են լրացուցիչ օբյեկտով այն դեպքերում, երբ բացի անձնական անազատությունը սահմանափակելուց՝ կիրառվում է նաև, օրինակ, աշխատանքի ընտրության ազատության սահմանափակում, տուժողի նկատմամբ գործադրվում է բռնություն կամ բռնություն գործադրելու սպառնալիք կամ հարկադրանքի այլ ձև և այլն: Այդ դեպքում հանցավոր ոտնձգության լրացուցիչ օբյեկտ կարող են լինել, օրինակ, այն հասարակական հարաբերությունները, որոնք ուղղված են անձի աշխատանքի ազատ ընտրության, մարդու կյանքի կամ առողջության անվտանգության ապահովմանը և այլն:

ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում և' որպես թրաֆիքինգի, և' որպես մարդուն շահագործելու, շահագործման մեջ դնելու կամ պահելու իրականացման այլընտրանքային միջոց նախատեսված է այն մոդելը, երբ գործողությունը կատարվում է <u>կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր</u> բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ կամ հարկադրանքի այլ ձևերով (գործողություն-միջոց, որի կատարման

արդյունքում ծագում է հանցակազմի լրացուցիչ օբյեկտ): Այդ արարքը պետք է որակվի որպես ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն, եթե բացակայում են որակման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դիսպոզիցիայում և' որպես թրաֆիքինգի, և' որպես մարդուն շահագործելու, շահագործման մեջ դնելու կամ պահելու իրականացման միջոց նախատեսված է հանցավոր վարքագծի այն մոդելը, երբ գործողությունը կատարվում է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ: Այդ դեպքերում հանցագործությունը պետք է որակվի որպես ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցագործություն (ըստ գործողություն-միջոցի, որի կատարումը հանգեցնում է հանցակազմի լրացուցիչ օբյեկտի առկայության), եթե բացակայում են որակման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ (օրինակ՝ հանցագործությունների համակցության կանոնները):

ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության լրացուցիչ օբյեկտը զոհի կյանքն է, երբ անզգուշությամբ առաջացել է տուժողի մահ: Պետք է նկատի ունենալ, որ այն դեպքերում, երբ անզգուշությամբ առաջացել են այլ ծանր հետևանքներ, հանցագործության լրացուցիչ օբյեկտը կազմում են այն հասարակական հարաբերությունները, որոնք ապահովում են զոհի կամ այլ անձի կյանքի կամ առողջության անվտանգությունը: Այսպես, եթե թրաֆիքինգի, ինչպես նաև մարդուն շահագործելու, շահագործման մեջ դնելու կամ պահելու արդյունքում զոհը կամ, օրինակ, նրա մտերիմը ձեռք է բերել հոգեկան հիվանդություն, կամ զոհի մտերիմը կատարել է, օրինակ, ինքնասպանություն, ապա նմանատիպ դեպքերում խոսքը այլ ծանր հետևանքների մասին է:

ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում նախատեսված հանցակազմում արարքը որակելու համար օրենսդիրը հաշվի է առել հանցագործության ծանր հետևանքները և մեղքի խառը ձևը, որոնք անմիջապես կապված են տուժողի կյանքի կամ առողջության անվտանգության հետ: Մասնավորապես, եթե ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված թրաֆիքինգը, ինչպես նաև մարդուն շահագործման մեջ դնելը կամ պահելը անզ-

գուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ, ապա արարքը պետք է որակվի որպես ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործություն:

2.4.2. ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների օբյեկտիվ կողմերը

Թրաֆիքինգը, ինչպես նաև մարդուն շահագործելը, շահագործման մեջ դնելը կամ պահելը բնութագրվում են որպես գործողություններով կատարվող հանցագործություններ:

Այդ հանցագործություններից յուրաքանչյուրի օբյեկտիվ կողմը կազմավորվում է այլընտրանքային գործողությունից (գործողություններից) և այդ գործողությանը (գործողություններին) ուղեկցող այլընտրանքային միջոցից (միջոցներից): Արդեն նշվել է, որ «միջոց» բառը տվյալ դեպքում օգտագործվում է որպես պայմանական հասկացություն, և այն, որ «միջոցը» («միջոցները») նույնպես գործողություն է («գործողություններ են»), սակայն այն (դրանք) ուղեկցում է (ուղեկցում են) հիմնական գործողությունը (գործողությունները):

Թրաֆիքինգի դեպքում այլընտրանքային գործողություններն են՝ մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը:

Նշված գործողությունների համակցությունը կազմում է մարդու շահագործմանը հանգեցնող գործողությունների ամբողջական շղթան: Պետք է, սակայն, նկատի ունենալ, որ արարքը որպես թրաֆիքինգ որակելու համար պարտադիր չէ նշված գործողությունների համակցության (ամբողջական շղթայի) առկայությունը: Բավարար է ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված գործողություններից մեկի առկայությունը, եթե այն կատարվել է նույն հոդվածի նույն մասում թվարկված միջոցներից մեկի կիրառմամբ և հետապնդել է նույն հոդվածի 4-րդ մասի իմաստով շահագործման նպատակ:

Նյութ թիվ 4

Հավաքագրելը[36] *թրաֆիքինգի օբյեկտիվ կողմը բնութագրող այլընտրանքային գործողություն է:*

Հավաքագրելը տուժողի կողմից աշխատանք կատարելու կամ ծառայություն մատուցելու կամավոր համաձայնությունը ստանալուն ուղղված գործողություն կամ գործունեություն է, որի նպատակն է տուժողի շահագործումը՝ ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 4-րդ մասում նշված շահագործման իմաստով: Այդ դրույթի համաձայն՝ ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածում, ինչպես նաև նույն օրենսգրքի 132[2]-րդ - հոդվածում շահագործում են համարվում այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձևերը, հարկա-

[36] Արդի հայերենի բացատրական բառարանում *«հավաքագրել»* բառը բացատրվում է որպես «1. շատերին վարձել՝ վարձով հավաքել մի բանի համար: 2. փխբ. կողմնակիցներ գտնել, գրավել, ներգրավել: 3. փխբ. համալրել, կազմը ուժեղացնել»: Տե՛ս Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան»,1977, հատոր 1, էջ 837: Տե՛ս Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, հատոր 2: Երևան, «Հայաստան», 1977, էջ 1063:

դիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը:

Ապագա զոհին կարող է առաջարկվել աշխատանք արտերկրում կամ երկրի սահմաններում: Հավաքագրումը կարող է կատարվել օրինական կամ անօրինական եղանակներով: Հայտնի են մարդկանց օրինական և անօրինական հավաքագրման բազում մեթոդներ: Աշխատանքային տեղերը գովազդվում են զանգվածային լրատվության միջոցներով, աշխատանքի տեղավորման գործակալություններում, տուրիստական գործակալություններում, ինտերնետի գլոբալ ցանցում, ընտանիքի անդամների, ընկերների, մտերիմների կամ ծանոթների միջոցով:

Մարդկանց հավաքագրման եղանակները կախված են հանցագործության կատարման եղանակից և թրաֆիքինգ իրականացնող անձանց կազմակերպվածության աստիճանից, ինչպես նաև այն խոցելի խմբից, որին ուղղված են գործողությունները (կանայք, աղջիկներ, երեխաներ, ծնողազուրկ երեխաներ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ կամ այլ խմբեր):

Օգտագործվող մեթոդները կարող են տարբեր լինել: Դրանք են, օրինակ, հարկադրանքը (մարդկանց, հատկապես՝ երեխաների առևանգում և վաճառք) կամ օրինական աշխատանքի տեղավորելու կամ ամուսնանալու խոստումները՝ խաբեությամբ, վստահության չարաշահմամբ կամ, օրինակ, բռնության գործադրմամբ: Հավաքագրումը կարող է իրականացվել զոհի ընտրությամբ կամ զոհին փնտրելով, անձանց գրանցմամբ և նրանց հետ հարցազրույցների անցկացմամբ և այլն: Մարդկանց կարող է դիտավորությամբ ներկայացվել աշխատանքի իրական պայմանների մի մասը (օրինակ՝ անօրինական պայմաններում աշխատելու հնարավորության մասին), միաժամանակ լռելով այն մասին, որ մարդը հարկադրված կլինի աշխատելու շահագործման պայմաններում, կամ որ նրա մարմնի օրգանները, հյուսվածքները հարկադրաբար կկորզվեն՝ անգամ չտեղեկացնելով նրան առողջությանը վտանգող հնարավոր հետևանքների մասին: Հնարավոր զոհին կարող են հավաքագրել միգրացիոն գործընթացի ցանկացած փուլում և վայրում:

Հավաքագրման սխեմաները զանազան են: Թրաֆիքինգ իրականացնողները մարդկանց, որպես կանոն, հավաքագրում են այն պետությունում, որոնց քաղաքացիներն են նրանք կամ որտեղ

մշտապես բնակվում են, իսկ հետագայում վաճառում են մեկ կամ մի քանի երկրներում, որտեղ տուժողները ենթարկվում են շահագործման: Կամ մարդկանց հավաքագրում են վերջիններիս քաղաքացիության երկրի տարածքում և տեղափոխում կամ փոխադրում նույն երկրում այլ վայր՝ շահագործման նպատակով:

Հավաքագրման առավել տարածված մեթոդներն են՝

- որակավորում չպահանջող և աշխատողի կարծիքով պատշաճ վարձատրվող աշխատանքի առաջարկը (մատուցող, պարուհի, շինարար, դայակ կամ այլն),
- «ամուսնական գործակալությունների» միջոցով ապագան կերտելու հնարավորության խոստումները,
- այլ եղանակով անձին խաբելը, վստահությունը չարաշահելը, մոլորության մեջ գցելը և այլն:

Միգրանտները մեկնում են իրենց երկրից և մուտք են գործում այլ երկիր՝ ինչպես օրինական, այնպես էլ անօրինական ճանապարհով (եթե նրանք մուտք են գործում երկիր անօրինական, ապա հնարավոր է, որ վճարեն մուտք գործելուն օժանդակող անձին): Դրանից հետո թրաֆիքինգով զբաղվող անձինք նրանց փոխանցում են նշանակետ երկիր կամ այլ երկիր:

Տեղափոխելը թրաֆիքինգի օբյեկտիվ կողմը բնութագրող այլընտրանքային գործողություն է: Տեղափոխելը ենթադրում է տուժողին մեկ վայրից այլ վայր տեղափոխելը երկրի ներսում կամ երկրից դուրս և/կամ աջակցությունը սահմանը անօրինական հատելու հարցում, ինչպես նաև տարանցիկ կամ նշանակետ երկրում անօրինական կացության կազմակերպումը:

Զոհի տեղափոխման հեռավորությունը կամ սահմանները նշանակություն չունեն երևույթը որպես թրաֆիքինգ դիտելու համար: Փոխադրամիջոցի ընտրությունը կախված է տեղափոխման ուղուց: Հասարակական տրանսպորտն ընտրվում է անանուն լինելու և իրավապահ մարմինների ուշադրությունից դուրս մնալու մտադրությամբ: Այն դեպքերում, երբ տեղափոխումն իրականացվում է պետությունից պետություն, բարձրանում են կոռուպցիոն ռիսկերը ոստիկանության, սահմանապահ և միգրացիոն ծառայությունների շրջանում: Այն դեպքերում, երբ սահմանի օրինական հատումն անհնարին է, հանցագործներն օգտագործում են կեղծ անձնագրեր կամ այլ փաստաթղթեր կամ զոհին տեղափոխում են գաղտնի ճանապարհներով (կածաններով): Այս պարագայում սահմանային

կետերը ընդհանրապես շրջանցվում են, և փաստաթղթեր չեն օգտագործվում: Այն բանից հետո, երբ անձինք համաձայնել են ընդունել աշխատանքի առաջարկությունը, թրաֆիքինգ իրականացնողները, որպես կանոն, աջակցում են սահմանանցմանը կամ երկրի ներսում այլ վայրեր հասնելուն: Սովորաբար, փոխադրման կազմակերպման, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու համար (ինչպիսիք են հրավերը, վիզան, աշխատանքի թույլտվությունը և այլն) գանձվում է բարձր վճար: Եթե թրաֆիքինգի զոհ դարձած անձը չունի կացության օրինական կարգավիճակ, ապա այդ հանգամանքն օգտագործվում է կախվածությունը ուժեղացնելու համար և տեղական իշխանություններից օգնություն ստանալու փորձի փոխարեն զոհի մոտ կալանավորվելու կամ արտաքսվելու վախ սերմանելու համար: Այն դեպքերում, երբ զոհերը իրենց երկիրը լքում են օրինական հիմքերով, թրաֆիքինգ իրականացնողները կազմակերպում են փոխադրումը, բնակվելու համար պիտանի տարածքների հատկացումը կամ այլ եղանակներով՝ ստեղծելով պայմաններ պարտապանի կախյալ վիճակն ապահովելու կամ այդ վիճակն ամրապնդելու համար:

Փոխանցելը թրաֆիքինգի օբյեկտիվ կողմը բնութագրող այլընտրանքային գործողություն է: Փոխանցել նշանակում է զոհին թողնել այլ անձանց (ընդունողների) տրամադրության տակ՝ նրան վաճառելուց կամ այլ եղանակով օտարելուց հետո (նվիրատվություն, պարտքի մարում, վնասի փոխհատուցում, վարձակալություն, փոխանակություն և այլն): Փոխանցելը կարող է լինել հատուցելի կամ անհատույց, որոշակի ժամկետով կամ անժամկետ, որոշակի պայմաններով կամ առանց դրանց: Զոհի փոխանցումը համարվում է կայացած այն պահից, երբ նա հայտնվում է ընդունող անձի տրամադրության տակ:

Ստանալը թրաֆիքինգի օբյեկտիվ կողմը բնութագրող այլընտրանքային գործողություն է: Ստանալը ենթադրում է առուվաճառքի, նվիրատվության, փոխանակության, փոխառության կամ այլ գործարքի արդյունքում թրաֆիքինգի զոհի ձեռք բերում: Ստանալը կարող է լինել հատուցելի կամ անհատույց, որոշակի ժամկետով կամ անժամկետ, որոշակի պայմաններով կամ առանց դրանց: Ստանալը զոհին այլ անձանցից (փոխանցողներից) ընդունելն ու սեփական տրամադրության տակ թողնելն է, ինչին կարող է հաջորդել անձի շահագործումը, եթե ընդունողն իր հերթին չի փոխանցում զոհին այլ

անձի: Զոհի ստանալը համարվում է կայացած այն պահից, երբ նա հայտնվում է ընդունող անձի տրամադրության տակ:

Թաքցնելը թրաֆիքինգի օբյեկտիվ կողմը բնութագրող այլընտրանքային գործողություն է, որն ուղղված է թրաֆիքինգի զոհին հանրությունից առանձնացված պահելուն: Այն կարող է արտահայտվել բնակելի տարածք, կացարան կամ այլ վայր հատկացնելով (օրինակ՝ զոհին նկուղում կամ պահեստային տարածքում կամ թաքցնելու համար հարմարեցված որևէ այլ տարածքում պահելը):

Մարդու բուն շահագործման դեպքում այլընտրանքային գործողություններն են՝ մարդուն շահագործելը, շահագործման մեջ դնելը կամ մարդուն շահագործման մեջ պահելը:

Մարդուն շահագործման մեջ դնելը օբյեկտիվ կողմը բնութագրող այլընտրանքային գործողություն է: Այն արտահայտվում է նրանում, որ անձն իր կամքին հակառակ կամ դրա անտեսմամբ դրվում է այնպիսի վիճակի (դրության) մեջ, որ չշահագործվելուն այլընտրանք չունի: Նա անկախ իր կամքից հայտնվում է այն վիճակում, որ հանցագործը կարող է նրան շահագործել, կամ տուժողը չունի այլընտրանք չշահագործվելու, քանի որ նրա համաձայնությունն անտեսվում է:

Մարդուն շահագործելը օբյեկտիվ կողմը բնութագրող այլընտրանքային գործողություն է: Մարդու շահագործելը նշանակում է, որ տուժողը փաստացի սկսում է կատարել շահագործողների կամ երրորդ անձանց օգտին աշխատանք, մատուցել ծառայություններ, վերածվել սեռական կամ սեքսուալ այլ կրքերի բավարարման առարկայի, կատարել ստրկական կամ դրան նմանվող վիճակի մեջ գտնվող անձի կարգավիճակից բխող գործողություններ, գնվել կամ վաճառվել, նրանից վերցվում են օրգանները կամ հյուսվածքները:

Մարդուն շահագործման մեջ պահելը օբյեկտիվ կողմը բնութագրող այլընտրանքային գործողություն է: Այն արտահայտվում է նրանում, որ շահագործման մեջ դրված անձն իր կամքին հակառակ կամ դրա անտեսմամբ պահվում է շահագործման վիճակի (դրության) մեջ, և այդ վիճակում չմնալուն այլընտրանք չունի: Նա հարկադրված շարունակում է շահագործողների կամ երրորդ անձանց օգտին կատարել աշխատանք, մատուցել ծառայություններ, վերածվել սեռական կամ սեքսուալ այլ կրքերի բավարարման առարկայի, մնալ ստրկական կամ դրան նմանվող վիճակում, նրանից

հարկադրաբար շարունակվում է մարմնի օրգանները կամ հյուս-վածքները վերցնելը:

2.4.3. Թրաֆիքինգի, ինչպես նաև մարդուն շահագործելու, շահագործման մեջ դնելու կամ պահելու հանցագործությունների հանցակազմերի օբյեկտիվ կողմերը բնութագրող այլընտրանքային միջոցները շարադրված են ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում՝

- կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը կամ հարկադրանքի այլ ձևերը,
- առևանգումը,
- խաբեությունը կամ վստահությունը չարաշահելը,
- իշխանությունը կամ վիճակի խոցելիությունն օգտագործելը,
- անձին վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալը կամ ստանալը կամ այդպիսիք խոստանալը:



Օգտագործվող միջոցները դրսևորվում են տարբեր ձևերով՝ կանանց առևանգումը սեռական կամ սեքսուալ բնույթի այլ շահագործման նպատակով, երեխաների գայթակղումը՝ նրանց արվամոլության կամ պոռնկության նպատակով օգտագործելու համար, բռնություն կիրառելը՝ պոռնիկների նկատմամբ իշխանությունը պահպանելու նպատակով, անձի վիճակի խոցելիությունը օգտագործելը (օրինակ՝ չքավորությունը կամ ընտանիքի անդամի առողջական ծանր վիճակը)՝ նրան աշխատանքային շահագործման ենթարկելու նպատակով կամ բազմաթիվ այլ միջոցներ:

Կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքը կամ դրա գործադրումը կամ հարկադրանքի այլ ձևերը կատարվում են ՀՀ քր. օր-ում նախատեսված հանցավոր այլ արարքների համար նույնատիպ բռնություն գործադրելու սպառնալիքի կամ դրա գործադրման կամ հարկադրանքի այլ ձևերին բնորոշ հատկանիշներով:

Բռնություն հասկացությունը ներառում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական բռնությունը:

Քննարկվող հանցագործությունների իմաստով կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնության գործադրումը՝ ֆիզիկական բռնությունն է մարդու դիմադրությունը հաղթահարելու նպատակով, որն իրականացվում է ներգործությամբ մարդու մարմնի կամ օրգանների վրա: Այն կարող է արտահայտվել ծեծի ենթարկելու, այլ ցավ պատճառելու, ձեռնաշղթաներ կամ ոտնաշղթաներ հագցնելու, կապկպելու, ձայնային արտահայտման հնարավորությունից (տուժողի բերանը կապելու) կամ տեսնելու հնարավորությունից (աչքերը կապելու) ժամանակավորապես զրկելու, քնելու կամ սնվելու հնարավորությունից, ջրի հասանելիությունից ժամանակավորապես զրկելու և այլ այնպիսի եղանակներով, որոնք գնահատվում են որպես կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն: Ֆիզիկական բռնությունը կարող է արտահայտվել ոչ միայն մարդու մարմնի վրա իրականացվող արտաքին ներգործությամբ, այլև վերջինիս օրգանների նկատմամբ ներգործությամբ: Այսպես, տուժողին բռնությամբ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր տալը կամ ներարկելը պետք է գնահատվի որպես ֆիզիկական բռնություն տուժողի նկատմամբ, իսկ այդ միջոցը որպես կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր կամ վտանգավոր

բռնության գործադրում որակելու համար յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատվի՝ ելնելով գործի հանգամանքներից:

Կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքը հոգեբանական բռնություն է, որն իրականացվում է տուժողի հոգեվիճակի վրա ներգործությամբ: Այդպիսի բռնության միջոցներ են ծեծի ենթարկելու, այլ ցավ պատճառելու, կապկպելու, ձեռնաշղթաներ կամ ոտնաշղթաներ հագցնելու, ձայնային արտահայտման հնարավորությունից (տուժողի բերանը կապելու), այլ անձանց նկատմամբ նմանատիպ և այլ՝ այնպիսի ֆիզիկական բռնություն գործադրելու սպառնալիքը, որը գնահատվում է որպես կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն: Այսպիսով, կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքը կամ այդպիսի բռնության գործադրումը կարող է ուղղված լինել ոչ միայն ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված հանցագործությունից տուժողի նկատմամբ, այլև այլ անձանց նկատմամբ: Ցանկացած պարագայում, կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքը պետք է լինի այնպիսին, որ այն տուժողի կողմից գնահատվի որպես իրական, քանի որ միայն այդպիսի սպառնալիքը կարող է չեզոքացնել տուժողի դիմադրությունը կամ հնարավոր դիմադրությունը: Այսպիսով, ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված հանցագործությունը կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով կամ այդպիսի բռնություն գործադրելով կատարվելու դեպքում արարքը չի պահանջում լրացուցիչ որակում մարդու առողջության դեմ ուղված համապատասխան հանցագործությունները նախատեսող հոդվածներով: Այդպիսի սպառնալիքը կամ բռնության գործադրումը ներառված են թրաֆիքինգի, ինչպես նաև շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու հանցակազմերի օբյեկտիվ կողմում:

Հարկադրանքի այլ ձևերը, ինչպես և կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքը կամ դրա գործադրումը հետապնդում է մարդու դիմադրությունը հաղթահարելու նպատակ: Այն, սակայն, իրականացվում է այլ եղանակներով, օրինակ՝ տուժողի կամ տուժողի մերձավորի պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունների բացա-

հայտման սպառնալիք կամ նմանատիպ այլ ձևեր, որոնց ուժի ներքո չեզոքացվում կամ հաղթահարվում է տուժողի դիմադրությունը:

Առևանգումը կատարվում է ՀՀ քր. օր-ում նախատեսված առևանգմանը բնորոշ հատկանիշներով: Թրաֆիքինգի դեպքում այն զուգորդվում է ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված գործողություններով կամ դրանցից մեկով՝ շահագործման նպատակով:

Խաբեությունը կամ վստահությունը չարաշահելը ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նախատեսված՝ հանցագործության կատարման այլընտրանքային միջոցներ են: ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն խաբեության կամ վստահությունը չարաշահելու հասկացությունները: Պրակտիկայում, ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի իմաստով, խաբեություն ասելով հասկանում են ճշմարտությունը քողարկելը կամ թաքցնելը, ճշմարտության մասին լռելը կամ ակնհայտ սուտ տեղեկություններ հայտնելը՝ նպատակ հետապնդելով անձին ապակողմնորոշելու եղանակով հասնել վերջինիս շահագործմանը:

Վստահությունը չարաշահելու դեպքում հանցագործն օգտվում է իր և զոհի միջև ձևավորված առանձնահատուկ վստահելիության հարաբերություններից (բարեկամական կամ հարազատական կապեր, անձնական մտերմություն և այլն):

<u>Օրինակ հայաստանյան դատական պրակտիկայից:</u>

Հայաստանում բնակվող երկու քաղաքացիներ (կին և տղամարդ), նախնական համաձայնության գալով այլ երկրում բնակվող մի կնոջ հետ (ազգությամբ՝ հայ), որոշել էին բարձր աշխատավարձով հացթուխ աշխատելու կամ երեխա խնամելու պատրվակով խաբեությամբ հավաքագրել և այդ երկիր ուղարկել նյութապես ծանր վիճակում գտնվող անձանց ու այնտեղ նրանց ենթարկել սեռական շահագործման: Այդ արարքի համար հավաքագրողները պետք է վարձատրվեին:

Հանցավոր մտադրությունն իրականացվել էր. օգտվելով վստահության վրա հիմնված հարաբերություններից՝ նրանցից մեկը հավաքագրել և հանցակցի հետ կազմակերպել ու պայմանավորված երկիր է տեղափոխել երկու կանանց: Այնտեղ նրանք տեղավորվել են վարձակալված բնակարանում, նրանց անձը հաստատող փաստաթղթերը վերցվել են, և նրանց դիմավորող կինը ստիպել է զբաղվել պոռնկությամբ: Հակառակ դեպքում պահանջել են անմիջապես

վերադարձնել յուրաքանչյուրի փոխադրման համար ծախսված 20.000 ԱՄՆ դոլարը: Նրանք հասկացել են, որ վստահելու արդյունքում խաբվել են ու, այլընտրանք չունենալով, շուրջ մեկ տարի ենթարկվել են սեռական շահագործման:

Վերլուծություն. Տվյալ դեպքում դրսևորվել է ինչպես խաբեություն, այնպես էլ վստահության չարաշահում: Այդ միջոցների կիրառմամբ հանցագործները հասել են թրաֆիքինգի զոհերի շահագործման նպատակին:

Խաբեությունն արտահայտվել է նրանում, որ թրաֆիքինգի զոհերին հավաքագրողը հայտնել է ակնհայտ սուտ տեղեկություններ նախատեսվող աշխատանքի իրական բնույթի մասին՝ նպատակ հետապնդելով ապակողմնորոշել, իսկ նշանակետ երկրում նրանք չենթարկվելուն այլընտրանք չեն ունեցել:

Վստահության չարաշահումն արտահայտվել է նրանում, որ հավաքագրողն ունեցել է մտերմիկ հարաբերություններ զոհերի հետ և, օգտագործելով այդ իրողությունը, առանց որևէ դժվարության կարողացել է վերջիններիս ապակողմնորոշել և համոզել:

Խաբեությունը կամ վստահությունը չարաշահելը այն միջոցներից են, որոնք թրաֆիքինգ իրականացնողները հաճախ են օգտագործում, երբ համոզում են զոհերին, թե նրանք կստանան շահավետ պայմանագիր, այն դեպքում, երբ արդեն նախատեսել են նրանց շահագործումը ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված շահագործման իմաստով: Այդ միջոցների առանձնահատկությունն այն է, որ անձը «կամավոր» համաձայնում է կատարել աշխատանք կամ մատուցել ծառայություններ և շատ դեպքերում իր՝ ոչ շրջահայաց կամ անօրինական գործողություններով (չեն բացառվում նաև օրինական գործողությունները) նպաստում է հանցագործներին, որի արդյունքում և հայտնվում է թրաֆիքինգի զոհի կամ շահագործվողի կարգավիճակում: Քանի որ զոհը խաբվել կամ նրա վստահությունը չարաշահվել է, ուստի նա չի տվել իր համաձայնությունը կատարելու այն աշխատանքը կամ մատուցելու այն ծառայությունները, որոնցում իրականում նախատեսվել էր նրան ներգրավել, կամ նա ներգրավվել է:

Իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը օգտագործել նշանակում է որևէ իրավիճակի չարաշահում, երբ անձը, բացի ենթարկվելուց, չունի իրական կամ ընդունելի այլընտրանք: Խոսքը խոցելիության ցանկացած տիպի մասին է՝ ֆիզիկական, հոգեկան, հոգե-

բանական, հուզական, ընտանեկան, սոցիալական կամ տնտեսական: Սա վերաբերում է ճգնաժամային իրավիճակների բոլոր տիպերին, որոնք կարող են ստիպել մարդուն հաշտվել շահագործման հետ: Թրաֆիքինգի կամ շահագործման, շահագործման մեջ դնելու կամ այդ վիճակում պահելու դեպքերում հանցագործները, օգտագործելով այլ անձի նկատմամբ ձևավորված իշխանությունը կամ նրա վիճակի խոցելիությունը, կատարում են ոտնձգություն մարդու ազատության և արժանապատվության դեմ:

Մասնավորապես, խոցելի կարող է համարվել տուժողի ծանր սոցիալ-տնտեսական վիճակը, հանցագործից նրա նյութական կամ այլ կախվածությունը, անձի՝ հասարակությունից մեկուսացված կամ սահմանափակված լինելու փաստը և այլն: Օրինակ, համաձայն գործող քրեակատարողական օրենս-դրության, դատապարտված անձինք կարող են ներգրավվել և՛ վարձատրվող, և՛ չ-վարձատրվող աշխատանքներում: Ընդ որում, չվարձատրվող աշխատանքները պետք է իրականացվեն միայն պատիժ իրականացնող հիմնարկի և նրա մերձակա տարածքի բարելավման նպատակով: Ժամկետային զինվորական ծառայողները իրենց ծառայության ընթացքում պետք է կատարեն զինվորական ծառայության հետ կապված և իրենց իրավասության մեջ գտնվող աշխատանքներ կամ ծառայություններ: Իրականում դատապարտյալներն ու զինծառայողները կարող են անօրինական ներգրավվել այլ աշխատանքներում կամ ծառայություններում, որ նրանց պարտականությունը չեն (օրինակ՝ կարող է իրականացվել հարկադիր աշխատանք, որը կապված է հրամանատարի տան վերանորոգման կամ կառուցման, նրան պատկանող դաշտերի և այգիների մշակման, բերքահավաքի հետ): Այս պարագայում մարդկանց նշված խմբերը դառնում են շահագործման համար առավել խոցելի վարչակազմի աշխատակիցների, պետերի կամ վերադաս հրամանատարների ու նրանց ընտանիքի անդամների համար:

Օրինակ հայաստանյան դատական պրակտիկայից: Ոմն Ա-ն, վերադառնալով Հայաստան՝ իր գյուղ, և օգտվելով այն հանգամանքից, որ գյուղի բնակիչներն աշխատանքով ապահովված չեն ու գտնվում են նյութական ծանր վիճակում, իր զարմիկին, նրա անչափահաս որդուն և ևս մեկ անձի (անապահով և գործազուրկ համագյուղացու) առաջարկել է մեկնել այլ երկիր՝ շինարարական աշխատանքների: Առաջինին խոստացել է վճարել յուրաքանչյուր ամիս

400, իսկ մյուս երկուսին՝ 300-ական ԱՄՆ դոլար: Նրանք համաձայնել և ճանապարհածախսի համար հայթայթել են որոշ գումար (պարտք, գրավ): Այդ գումարներով Ա-ն նրանց տեղափոխել է նշանակետ երկրի փոքր քաղաքներից մեկը: Այնտեղ, ժամանակավորապես հաշվառելու պատրվակով, վերցրել է բոլորի անձնագրերը, թույլ չի տվել հեռախոսակապ հաստատել հարազատների հետ, ներգրավել է հարկադիր շինարարական աշխատանքների մեջ, չի վճարել՝ հավաստիացնելով, իբր նրանց աշխատավարձն ուղարկել է իրենց ընտանիքներին:

<u>Վերլուծություն.</u> Տվյալ դեպքում հանցագործը, շահագործման նպատակով (նպատակ), վիճակի խոցելիությունը օգտագործելու միջոցով (միջոց), խաբեությամբ և վստահության չարաշահմամբ (այլ միջոցներ) հավաքագրել է 3 անձի, որոնց փոխադրել է այլ վայր (գործողություններ): Վիճակի խոցելիությունը (հոգեբանական, ընտանեկան, սոցիալական, տնտեսական) օգտագործվել է, քանի որ հավաքագրվողներն աշխատանքով ապահովված չեն եղել, որի հետևանքով հայտնվել են չքավորության վիճակում և չեն կարողացել կերակրել իրենց ընտանիքները, թեև ցանկացել են աշխատել: Այնուհետև կիրառվել է և' վստահության չարաշահումը (զոհերը հավաքագրողի զարմիկը և վերջինիս որդին էին, ինչպես նաև նրանց մտերիմը), և' խաբեությունը (աշխատանքի բնույթը ներկայացվել է, սակայն իրական տաժանակիր և ստրկությանը նմանվող վիճակի մասին հավաքագրողը լռել է): Հետագայում կիրառվել էին և այլ հանցավոր գործողություններ ու միջոցներ:

2.4.4. ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների սուբյեկտիվ կողմերը

Սուբյեկտիվ կողմից թրաֆիքինգի բոլոր գործողությունները բնութագրվում են՝

- ուղղակի դիտավորությամբ և
- հատուկ նպատակով:

Թրաֆիքինգի դեպքում հանցանք կատարող անձը, մասնավորապես, գիտակցում է իր կողմից կատարվող այլընտրանքային գործողության (գործողությունների)՝ հանրության համար վտանգավոր բնույթը և ցանկանում է կատարել այդ գործողությունը (գոր-

ծողությունները): Դրանք են՝ մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը:

Թվարկված գործողություններն ուղեկցվում են հետևյալ այլընտրանքային միջոցներով՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ զոհին վերահսկող անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով: *Հանցանք կատարող անձը գիտակցում է նաև իր կողմից կատարվող այլընտրանքային միջոցի (միջոցների)՝ հանրության համար վտանգավոր բնույթը և ցանկանում է կատարել այն (դրանք):*

Պետք է հիշել, որ թրաֆիքինգի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն է զոհի/տուժողի շահագործման նպատակը: Պատասխանատվությունը վրա հասնելու համար նշանակություն չունի՝ իրականացվել է շահագործման նպատակը, թե՝ ոչ: Շարժառիթները որակման վրա չեն ազդում:

Սուբյեկտիվ կողմից շահագործման, շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու բոլոր գործողությունները բնութագրվում են ուղղակի դիտավորությամբ:

Շահագործման կամ շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու դեպքում հանցանք կատարող անձը, մասնավորապես, գիտակցում է իր կողմից կատարվող այլընտրանքային գործողության (գործողությունների)՝ հանրության համար վտանգավոր բնույթը և ցանկանում է կատարել այդ գործողությունը (գործողությունները): Դրանք են՝ շահագործումը, շահագործման վիճակի մեջ դնելը կամ շահագործման վիճակի մեջ պահելը: Թվարկված գործողություններն ուղեկցվում են նույն միջոցներով, որոնք նախատեսված են թրաֆիքինգի դեպքում: Դրանք են՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը կամ հարկադրանքի այլ ձևերը, առևանգումը, խաբեությունը կամ վստահության չարաշահումը, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունն օգտագործելը կամ զոհին վերահսկող անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալը կամ ստանալը կամ այդպիսիք խոստանալը: *Պետք է, սակայն, հաշվի առնել, որ ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 3-*

րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմի սուբյեկտիվ կողմը կառուցված է մեղքի երկու ձևերի կանոններով. դիտավորություն՝ գործողությունների նկատմամբ, և անզգուշություն՝ հետևանքների նկատմամբ: Այդ հանցակազմը ձևակերպված է հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝

2) անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ»:

Սուբյեկտը

Ընդհանուր սուբյեկտը. ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի սուբյեկտ է հանդիսանում մեղսունակ ֆիզիկական անձը, ում 16 տարին լրացել է մինչև հանցանք կատարելը:[37]

Հատուկ սուբյեկտը. ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը նախատեսում է քրեական պատասխանատվություն հանցանքը հատուկ սուբյեկտի կողմից կատարելու համար, երբ հանցանքը կատարել է անձը՝ օգտագործելով պաշտոնեական դիրքը: Տվյալ դեպքում պաշտոնեական դիրքը չի սահմանափակվում միայն պաշտոնատար անձի դիրքով, այլ նշանակում է ցանկացած ծառայողական կարգավիճակ պետական կամ ոչ պետական կազմակերպությունում կամ հիմնարկում, եթե տվյալ անձի՝ այդ կարգավիճակից բխող իրավունքները և հնարավորությունները օգտագործվել են թրաֆիքինգ իրականացնելու համար: Այդ հատուկ սուբյեկտն այն պաշտոնատար անձն է, ով, օգտագործելով ծառայողական կարգավիճակը, կատարում է ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածում նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը կամ օժանդակում է դրա կատարմանը կամ չի խոչընդոտում և չի հակազդում դրա կատարմանը, թեև պարտավոր է դա անել իր պաշտոնեական պարտականությունների բերումով:

[37] ՀՀ քր. օր-ի 23-րդ և 24-րդ հոդվածները:

2.5. ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների հանցակազմերի որակյալ հատկանիշները

ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված են հետևյալ որակյալ հատկանիշները. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ.

Այս հատկանիշով որակելու համար կարևորվում է, թե երբ է ծագել դիտավորությունը տուժողներից յուրաքանչյուրի նկատմամբ՝ միաժամանա՞կ, թե՞ տարբեր ժամանակներում: Եթե դիտավորությունը երկու կամ ավելի անձանց նկատմամբ ծագել է միաժամանակ, ապա արարքը ճիշտ է որակել ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով: Իսկ եթե դիտավորությունը երկու կամ ավելի անձանց նկատմամբ ծագել է տարբեր ժամանակներում, այսինքն՝ երբ բացակայում է միասնական հանցավոր մտադրությունը, ապա յուրաքանչյուր արարքը ճիշտ է որակել ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ.

Հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես՝ մինչև հանցագործությունն սկսելը, պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին:

3) պաշտոնեական դիրքն օգտագործելով.

Այս կետը նախատեսում է հատուկ սուբյեկտի պատասխանատվություն: Այդպիսի անձ է համարվում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական և ոչ պետական կազմակերպություններում, հասարակական կամ կրոնական միավորումներում, առևտրային կազմակերպություններում ծառայողական լիազորությունները չարաշահող կամ վերազանցող անձը:

4) կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ.

5) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ.

Այս դեպքում հաշվի է առնվել տուժողի ֆիզիոլոգիական վիճակը, երբ նա հատկապես խոցելի է հանցագործների համար: Այդ դեպքում, օրինակ, վերջինիս դիմադրության հնարավորությունները սահմանափակվում են ապագա երեխայի կյանքը և առողջությունը

պահպանելու ցանկությամբ և գիտակցությամբ: Մեղավոր անձի գործողությունները ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով որակելու պարտադիր պայմանն այն է, որ վերջինս տեղեկացված էր տուժողի հղիության մասին, քանի որ դա ակնհայտ էր և հնարավոր չէր չնկատել, կամ դա եղել է ակնհայտ այլ հիմքերով: Պրակտիկայում, սակայն, կարող են լինել դեպքեր, երբ, օրինակ, հանցավոր խմբի անդամներն իրենց հանցավոր մտադրություններն իրականացնելիս անմիջականորեն չեն շփվում տուժողի հետ, բայց գիտեն տուժողի հղիության մասին (օրինակ՝ իրենց հանցավոր խմբի անդամներից կամ, օրինակ, տուժողից՝ հեռախոսազրույցի ժամանակ կամ տուժողին հետազոտած բժշկից կամ այլ աղբյուրներից): Տեղեկացվածության աղբյուրի բնույթը, ինչպես նաև հղիության ժամանակահատվածն արարքի քրեաիրավական գնահատականի վրա չեն ազդում, եթե հանցավոր մտադրությունների իրականացման ժամանակ հանցագործության սուբյեկտը հաստատապես տեղեկացված է եղել տուժողի հղիության մասին:

Այն դեպքում, երբ մեղավոր անձն ունեցել է սխալ պատկերացում տուժողի հղիության վերաբերյալ, ապա արարքը որակելու հարցում, մեր կարծիքով, պետք է ղեկավարվել որակյալ հանգամանքներում փաստացի սխալի դեպքում հանցագործությունների որակման ընդհանուր կանոնով: Այդ դեպքում անձի սխալը պետք է որակվի որպես ակնհայտ հղի կնոջ նկատմամբ իրականացված թրաֆիքինգի կամ շահագործման փորձ:

6) ՀՀ պետական սահմանը հատելով անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով.

ՀՀ պետական սահմանը հատելով անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով իրականացվող հանցավոր արարքի՝ հանրության համար վտանգավորության բարձր աստիճանը պայմանավորված է նախ նրանով, որ անձը (տուժողը) սահմանանցմամբ հայտնվում է առավել խոցելի վիճակում՝ իր համար օտար միջավայրում (օտար լեզու, օտար բարքեր, այլ օրենքներ, անծանոթ մարդիկ, կացարանի և փաստաթղթերի բացակայություն, դրամական միջոցների սղություն կամ բացակայություն, բռնություն կամ բռնության սպառնալիք, անսպասելի այլ վտանգներ և այլն), ավելի շատ է հակված կորցնելու ինքնակառավարումը և հնազանդվելու հանցավոր պահանջներին: Միաժամանակ բարձր է հանցավոր

գործունեության և տուժողի հետքերը կորցնելու հավանականությունը:

Նման տեղափոխման կազմակերպումը կարող է կատարվել օրինական կամ անօրինական եղանակներով, բացահայտ կամ գաղտնի, օրինական կամ կեղծ փաստաթղթերով, տրանսպորտային տարբեր միջոցներով: Այս հատկանիշն առկա է, երբ կազմակերպվում է տեղափոխումը ՀՀ սահմաններից դուրս կամ հակառակ ուղղությամբ:

ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված են հետևյալ որակյալ հատկանիշները. սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) կազմակերպված խմբի կողմից (հանցանքը համարվում է կազմակերպված խմբի կողմից կատարված, եթե դա կատարվել է այնպիսի անձանց կայուն խմբի կողմից, ովքեր նախապես միավորվել են մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար),

2) անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ[38]*:*

2.6. Երեխայի թրաֆիքինգը, ինչպես նաև երեխայի շահագործումը, նրան շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը

Նյութ թիվ 5

ՀՈԴՎԱԾ 132.2. ԵՐԵԽԱՅԻ ԿԱՄ ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԻՐ ԱՐԱՐՔԻ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԿՑԵԼՈՒ ԿԱՄ ԴԱ ՂԵԿԱՎԱՐԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԻ ԹՐԱՖԻՔԻՆԳԸ ԿԱՄ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

1. Շահագործման նպատակով երեխային, հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ

[38] Տե՛ս սույն հոդվածի մեկնաբանությունների 8.3. կետը՝ սուբյեկտիվ կողմը:

զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

3) պաշտոնեական դիրքը օգտագործելով,

4)բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

5) առևանգման միջոցով,

6) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

7) ՀՀ պետական սահմանը հատելով անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է կազմակերպված խմբի կողմից,

2) անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից տասնհինգ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

<u>Ծանուցում</u>. Ոչ մգացված տառերով տեքստում տրված է թրաֆիքինգի բնորոշումը: Մգացված տառերով տեքստը վերաբերում է մարդուն շահագործելուն, շահագործման մեջ դնելուն կամ պահելուն, որը առանձին հանցագործություն է:

ՀՀ քր. օր-ի 132^2-րդ հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվություն ինչպես մարդու թրաֆիքինգի, այնպես էլ՝ շահագործման համար: Այն ներկայացվում է որպես հատուկ իրա-

վանորմ այն իմաստով, որ տվյալ հոդվածի համաձայն՝ տուժողները երկու հատուկ կատեգորիաների անձինք են՝

ա) տասնութ տարին չլրացած անձը,

բ) հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձը:

ՀՀ քր. օր-ի 132²-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քրեորեն հետապնդելի են հետևյալ արարքները՝

ա) թրաֆիքինգը՝ շահագործման նպատակով վերը նշված երկու կատեգորիաներին պատկանող մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը,

բ) վերը նշված երկու կատեգորիաներին պատկանող մարդուն շահագործելը, շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը:

ՀՀ քր. օր-ի 132²-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում ձևակերպված արարքները՝ և' թրաֆիքինգը, և' մարդուն շահագործելը, շահագործման մեջ դնելը կամ պահելը ծանր հանցագործություններ են, իսկ 2-րդ և 3-րդ մասերի դիսպոզիցիաների հանցակազմերում ձևակերպված արարքները՝ առանձնապես ծանր հանցագործություններ են:

Թրաֆիքինգի դեպքում.

ՀՀ քր. օր-ի 132²-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմում է տասնութ տարին չլրացած անձին շահագործման նպատակով հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, որը պետք է որակվի որպես ավարտված հանցագործություն՝ «թրա ֆիքինգ», անգամ եթե չեն կիրառվել 132-րդ հոդվածի 1-ին մասում նշված միջոցները:

Այդ հանցակազմը կառուցվել է ԵԽ 2005 թ. Կոնվենցիայի 4-րդ - հոդվածի «գ» և «դ» կետերին համապատասխան, որոնցով սահմանված է, որ.

«Կոնվենցիայի նպատակների համար.

գ) շահագործման նպատակով երեխային հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը համարվում է «թրաֆիքինգ» նույնիսկ այն դեպքում, երբ դա կապված չէ սույն հոդվածի «ա» կետում նախատեսված եղանակներից որևէ մեկի կիրառման հետ.

դ) «երեխա» է համարվում տասնութ տարին չլրացած ցանկացած անձը»:

ԱՄԿ Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման և վերացնելու անհապաղ միջոցառումների մասին թիվ 182 կոնվենցիան պահանջում է անհապաղ և արդյունավետ միջոցներ ձեռնարկել երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը վերացնելու և 18 տարեկանից ցածր տղաներին և աղջիկներին հարկադիր աշխատանքներում չներգրավելու համար:

Ըստ թիվ 182 կոնվենցիայի՝ երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը ներառում են՝

ա) ստրկության բոլոր ձևերը կամ ստրկությանը համանման աշխատանքը, ինչպիսիք են երեխաների վաճառքը և առևտուրը, պարտքային ստրկացումը կամ ճորտային կախվածությունը, ինչպես նաև հարկադիր կամ պարտադիր աշխատանքը, այդ թվում՝ երեխաների պարտադիր կամ հարկադիր հավաքագրումը զինված ընդհարումներում օգտագործելու համար,

բ) երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը մարմնավաճառությամբ զբաղվելու, պոռնոգրաֆիկ արտադրանքի արտադրության կամ պոռնոգրաֆիկ ներկայացումների համար,

գ) երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը հակահիրավական գործունեությամբ զբաղվելու, մասնավորապես թմրանյութերի արտադրման և վաճառքի համար, ինչպես դրանք սահմանված են համապատասխան միջազգային պայմանագրերում,

դ) աշխատանքը, որն իր բնույթով կամ իր կատարման պայմաններով կարող է վնասել երեխաների առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը:

ՀՀ քր. օր-ի 132^2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին շահագործման նպատակով հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը պետք է որակվի որպես ավարտված հանցագործություն՝ «թրաֆիքինգ», անգամ եթե չեն կիրառվել 132-րդ հոդվածի 1-ին մասում նշված միջոցները:

ՀՀ քր. օր-ի 132^2-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված թրաֆիքինգ հանցագործության հանցակազմը ձևական է, ինչպես և 132-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված հանցագործության հանցակազմերը: ՀՀ քր. օր-ի 132^2-րդ հոդվածի 1-ին մասում նկա-

ռագրված թրաֆիքինգը համարվում է ավարտված (հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը) գործողությունը կատարելու պահից, եթե այն կատարվել է շահագործման նպատակով:

Նյութ թիվ 6

ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՄԵԽԱՆԻԶՄԸ
(ՀՀ քր. օր-ի 132[2]-րդ հոդվածի 1-ին մաս)

(տուժողներն են՝ ա) տասնութ տարին չլրացած անձը,
բ) հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձը)



Տասնութ տարին չլրացած անձի, ինչպես նաև հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը համարվում է ավարտված հանցագործություն մինչև անձի փաստացի շահագործումը (ձևական հանցակազմ): Դրա համար բավարար է, որ այդ կատեգորիայի անձի նկատմամբ շահագործման նպատակով կատարվի 132^2-րդ հոդվածի 1-ին մասում նշված գործողություններից մեկը:

Այսպես, անչափահասի «հավաքագրումը» (գործողություն) «աշխատանքային շահագործման նպատակով» (նպատակ) հանցավոր արարք է, որը մեկնաբանվող հոդվածով պետք է որակվի որպես ավարտված թրաֆիքինգ: Կամ, օրինակ, «շահագործման նպատակով» (նպատակ) «անչափահասին թաքցնելը» (գործողություն) նույնպես պետք է որակվի որպես ավարտված թրաֆիքինգ:

132^2-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ արարքը համարվում է ավարտված հանցագործություն, եթե նույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ:

Շահագործման դեպքում ՀՀ քր. օր-ի 132^2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տասնութ տարին չլրացած անձի շահագործումը, շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը պետք է որակվի որպես ավարտված հանցագործություն՝ առանց որևէ լրացուցիչ պայմանների առկայության:

ՀՀ քր. օր-ի 132^2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին շահագործումը, շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը պետք է որակվի որպես ավարտված հանցագործություն՝ առանց որևէ լրացուցիչ պայմանի առկայության:

ՀՀ քր. օր-ի 132^2-րդ հոդվածի 1-ին մասում նկարագրված շահագործումը, շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու հանցագործության հանցակազմը կարող է լինել և ձևական, և նյութական՝ այլընտրանքային գործողություններով:

Նյութ թիվ 7

Շահագործման, շահագործման մեջ դնելու կամ պահելու առանձնահատկությունները

(ՀՀ քր. օր-ի 132[2]-րդ հոդվածի 1-ին մաս)

(տուժողներն են՝ ա) տասնութ տարին չլրացած անձը, բ) հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձը)



Ամփոփում. Նշված երկու կատեգորիայի անձանց համար օրենսդիրը սահմանել է թրաֆիքինգից և շահագործումից պաշտպանվածության ավելի բարձր աստիճան: Ընդ որում, եթե տասնութ տարին չլրացած անձի պարագայում նման մոտեցումը կոնվենցիոն պարտավորություն է, ապա հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված

անձի պարագայում նման մոտեցումը Հայաստանի Հանրապետության կողմից նախաձեռնված լրացուցիչ քայլ է: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ երկու կատեգորիաների անձանց վիճակն ինքնին առավել խոցելի է: Առանձնապես խոցելի է այն անչափահասների վիճակը, ովքեր միաժամանակ հաշմանդամ են: Նրանց հաճախ օգտագործում են մուրացկանության նպատակներով: Թրաֆիքինգով զբաղվող անձանց իշխանության ներքո գտնվող երեխաները և հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձինք շատ դեպքերում անգամ չեն հասկանում, թե ինչպիսի պայմանների մեջ են հայտնվել, և չունեն աջակցության կենտրոնների հետ հեշտությամբ կապվելու հնարավորություն:

5. Եզրահանգումներ

1. Թրաֆիքինգը և մարդուն շահագործելը, շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը տարբեր հանցագործություններ են:

2. Ե'վ թրաֆիքինգը, և' մարդուն շահագործելը, շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը աշխարհում տարածված հանցագործություններ են: Դրանց դեմ պայքարն արդիական է նաև Հայաստանի Հանրապետությունում:

3. Թրաֆիքինգի դեմ պայքարը կարգավորվում է և' միջազգային, և' ազգային իրավական գործիքներով:

4. Թրաֆիքինգի, ինչպես նաև մարդուն շահագործելու, շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու տեսակներն ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի բնութագրվում են որպես ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ:

5. Ե'վ թրաֆիքինգի, և' մարդուն շահագործելու, շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու իմաստով հանցավոր շահագործում են համարվում այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը, մարդու առքը կամ վաճառքը:

6. Ե'վ թրաֆիքինգի, և' մարդուն շահագործելու, շահագործման վիճակի մեջ դնելու կամ պահելու իմաստով զոհի շահագործման

ենթարկվելու համաձայնությունն առոչինչ է, եթե նրա նկատմամբ ցանկացած փուլում կիրառվել է թրաֆիքինգի կամ շահագործման միջոց:

7. ՀՀ քր. օր-ի 132-րդ և 132^2-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների անմիջական օբյեկտ են այն հասարակական հարաբերությունները, որոնք ապահովում են տուժողի անձնական ազատությունը:

8. Թրաֆիքինգը հետապնդում է շահագործման նպատակ, իսկ մարդուն շահագործելը, շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը ոչ թե նպատակ է, այլ իրական վիճակ, երբ մարդն իր կամքին հակառակ կամ անտեսմամբ հարկադրաբար շահագործվում է կամ հարկադրաբար չի կարող այդ վիճակից հրաժարվել:

9. Շահագործման նպատակով երեխայի, հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը կազմում են առանձին հանցակազմեր՝ ելնելով զոհի առանձնահատկություններից:

Գլուխ 3. Մարդու թրաֆիքինգի, ինչպես նաև շահագործման սահմանազատումը հարակից այլ հանցակազմերից

3.1. Շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը (ՀՀ քր. օր-ի 132^3-րդ հոդված)

ՀՈԴՎԱԾ 132.3. ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼԸ

1. Շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը, եթե այդ անձի շահագործման վիճակի մեջ լինելն ակնհայտ է ծառայությունից օգտվողի համար, և եթե հանցագործություն կատարած անձի արարքում բացակայում են սույն օրենսգրքի 132-րդ կամ 132^2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) ակնհայտ անչափահասի նկատմամբ,

2) հոգեկան խանգարման հետեւանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի նկատմամբ,

3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

4) երկու կամ ավելի անձանց նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին տուժողի մասին կամովին տեղեկություններ հայտնած անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թ. նոյեմբերի 4-ին ընդունված եվրոպական կոնվենցիայի «Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելումը» վերնագրով 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված է՝

«1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ կամ անազատ վիճակում:

2. Ոչ ոք չպետք է պարտադրվի կատարել պարտադիր կամ հարկադիր աշխատանք»:

ԵԽ 2005 թ. Կոնվենցիայի «Պահանջարկի վերացմանն ուղղված միջոցները» վերնագրով 6-րդ հոդվածի համաձայն Կոնվենցիայի յուրաքանչյուր Կողմ պետք է ձգտի վերացնելու մարդկանց, մասնավորապես՝ կանանց և երեխաների շահագործման (թրաֆիքինգ) բոլոր ձևերին նպաստող պահանջարկը, որը հանգեցնում է շահագործման (թրաֆիքինգ): Այդ նպատակով Կոնվենցիայի յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի կամ ամրապնդի օրենսդրա-

կան, վարչական, կրթական, սոցիալական, մշակութային և այլ միջոցները:

Պահանջարկի և առաջարկի կանոնը գործում է, քանի դեռ կա ձրի աշխատուժի, ստրուկների կամ ծանր կաբալային վիճակում գտնվող անձանց պահանջարկ, ում հնարավոր է ենթարկել դաժան և անմարդկային աշխատանքային, սեքսուալ կամ այլ շահագործման:

Եթե զգալիորեն կրճատվի շահագործվողի ծառայություններից օգտվելու հնարավորությունը, ապա կկրճատվի նաև շահագործման մեջ գտնվող անձանց պահանջարկը, ուստի նաև մարդկանց թրաֆիքինգը:

Շահագործվողի ծառայություններից օգտվելու հնարավորությունը կրճատելու իրավական միջոցներից մեկն այն է, որ քրեական պատասխանատվություն նախատեսվի այդպիսի արարքի համար:

ՀՀ քր. օր-ի 132[3]-րդ հոդվածով (1-ին մաս) քրեականացվել է շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը՝ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) այդ անձի շահագործման վիճակի մեջ լինելը ակնհայտ է ծառայությունից օգտվողի համար, և

բ) եթե շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվողի արարքում բացակայում են ՀՀ քր. օր-ի 132-րդ կամ 132[2]-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները (մանրամասն տես թիվ 2 մոդուլը):

Հանցագործության հիմնական օբյեկտներն են այն հասարակական հարաբերությունները, որոնք երաշխավորում են անձի ազատությունը և աշխատանքի ընտրության ազատությունը: Լրացուցիչ օբյեկտների դերում որոշ դեպքերում կարող են հանդես գալ այն հասարակական հարաբերությունները, որոնք երաշխավորում են մարդու կյանքի կամ առողջության անվտանգությունը կամ ուղղված են պատվի և արժանապատվության, սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության ապահովմանը:

Տուժող կարող է լինել ցանկացած ֆիզիկական անձ, ով մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհ է և հարկադրված կամ պարտադրված է երրորդ անձանց մատուցել ՀՀ քր. օր-ի 132-րդ - հոդվածի 4-րդ մասով նախատեսված ծառայություններ (սեքսուալ, աշխատանքային կամ այլ): Չի բացառվում և տուժողի՝ ծառայություններ մատուցելու կամովին տրված համաձայնությունը: Դա կա-

րող է պայմանավորված լինել, օրինակ, տուժողի հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված լինելու հանգամանքով կամ, օրինակ, տուժողի մանկահասակ տարիքով կամ կյանքի առավել դժվարին վիճակում գտնվելու կամ հայտնվելու հանգամանքով: Քննարկվող հանցավոր արարքի որակման համար նշանակություն չունի տուժողի՝ ծառայություններ մատուցելու համաձայնությունը:

Այդ ծառայությունները կարող են մատուցվել ինչպես վճարովի, այնպես էլ՝ անվճար, միանվագ կամ երկու և ավելի անգամ, կարճաժամկետ կամ երկարաժամկետ:

Օբյեկտիվ կողմը բնութագրվում է այնպիսի գործողություններով, որոնք ուղղված են շահագործման վիճակում գտնվող անձի ծառայություններից օգտվելուն: Մատուցվող ծառայությունները ներառում են մարդու շահագործման այն ձևերը, որոնք նախատեսված են ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 4-րդ մասով:

Հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունները կարող են լինել զանազան, տարբերվել բնույթով (բռնի, ագրեսիվ, ակտիվ, պասիվ), մասամբ կամ ամբողջությամբ կարող են բնութագրվել բացի օգտագործման իրավունքին բնորոշ հատկանիշներից նաև տիրապետման իրավունքին բնորոշ հատկանիշներով:

Հանցակազմը ձևական է: Հանցագործությունը համարվում է ավարտված այն պահից, երբ հանցավորը սկսել է կատարել շահագործման վիճակում գտնվող անձի ծառայություններից փաստացի օգտվելուն ուղղված գործողություն՝ անկախ հնարավոր հետևանքների առաջացումից:

Քննարկվող հանցավոր արարքի որակման համար նշանակություն չունի դրա տևողությունը:

Սուբյեկտիվ կողմը բնութագրվում է մեղքի դիտավորության ձևով: Անձը հաստատապես իմանում կամ գիտակցում է շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելու հանրային վտանգավորությունը և ցանկանում է օգտվել այդ ծառայությունից: Իմանալը դրսևորվում է նրանում, որ այլ անձի ծառայություններից օգտվող անձը հաստատապես գիտի, որ իրեն ծառայությունները մատուցում է այնպիսի անձ, որը գտնվում է ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված շահագործման վիճակի մեջ (օրինակ՝ շահագործվողի կողմից ծառայությունից օգտվողից օգնութ-

յուն խնդրելը, շահագործողի կողմից ծառայություններ մատուցողի կարգավիճակի մասին ծառայությունից օգտվողին տեղեկացնելը և այլն): Գիտակցելը դրսևորվում է նրանում, որ շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվողի համար ծառայություն մատուցող անձի՝ այդ վիճակի մեջ լինելն ակնհայտ է: «Ակնհայտ» եզրույթը ենթակա է գնահատման՝ հաշվի առնելով քրեական գործի բոլոր նյութերը: Այսպես, ծառայություն մատուցող անձի առերևույթ անազատ վիճակը կամ դրությունը կարող է գնահատվել որպես ծառայությունից օգտվողի համար ծառայություն մատուցող անձի շահագործման վիճակի մեջ լինելը փաստող ակնհայտ իմացություն (ձեռնաշղթաներ, ոտնաշղթաներ, ուղեկցումը զինված պահախմբի կողմից կամ, օրինակ, այնպիսի ծառայության մատուցումը կամ այնպիսի պայմաններում ծառայության մատուցումը, որոնք իրենց բնույթով առերևույթ վկայում են ծառայություններ մատուցողի՝ շահագործման վիճակի մեջ գտնվելու մասին և այլն):

Նշված հանցագործության **սուբյեկտ** կարող է լինել 16 տարին լրացած յուրաքանչյուր մեղսունակ անձ:

ՀՀ քր. օր-ի 132³-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված են շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելու ծանրացնող հանգամանքները, որոնցից երեքը պայմանավորված են տուժողի անձի առանձնահատկություններով, իսկ մեկը՝ տուժողների քանակով:

ՀՀ քր. օր-ի 132³-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ

Շահագործման վիճակում գտնվող ակնհայտ անչափահասի ծառայությունից օգտվելը, եթե այդ անձի՝ շահագործման վիճակի մեջ լինելը ակնհայտ է ծառայությունից օգտվողի համար, և եթե հանցագործություն կատարած անձի արարքում բացակայում են ՀՀ քր. օր-ի 132-րդ կամ 132²-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները, ենթադրում է, որ հանցավորը կամ հաստատապես իմացել է տուժողի 18 տարին լրացած չլինելու մասին, կամ էլ գիտակցել է այդ հանգամանքը (օրինակ, եթե շահագործողը կամ ծառայություններ մատուցողը կամ այլ երրորդ անձինք սեքսուալ կամ աշխատանքային ծառայություններից օգտվողին տեղեկացնում են շահագործվողի անչափահաս լինելու մասին, կամ, օրինակ, երբ տուժողի արտաքինը առևրևույթ վկայում է նրա անչափահաս տարիքի մասին, կամ եթե տուժողը ծառայություններից օգտվողի ծանոթն է, հարևանը, բարեկամը և այլն):

Պետք է նկատի ունենալ, որ տուժողի ակսելերացիայի կամ արտաքին տեսքի պատճառով տուժողի տարիքի վերաբերյալ ծագած բարեխիղճ մոլորությունը բացառում է արարքի որակումը ՀՀ քր. օր-ի 132^3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Այդ դեպքում որակման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների բացակայության դեպքում արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր-ի 132^3-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: Իսկ այն դեպքում, երբ հանցավորի համար ակնհայտ է, որ տուժողն անչափահաս է, սակայն իրականում տուժողն անչափահաս չէ, արարքը պետք է որակել ծանրացնող հանգամանքների առկայության մեջ փաստական սխալի որակման ընդհանուր կանոններով: Այդ դեպքում արարքը պետք է որակվի որպես հանցափորձ (ՀՀ քր. օր-ի 34-րդ հոդված և 132^3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ):

ՀՀ քր. օր-ի 132^3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ

Շահագործման վիճակում գտնվող հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի ծառայությունից օգտվելը, եթե այդ անձի՝ շահագործման վիճակի մեջ լինելը ակնհայտ է ծառայությունից օգտվողի համար, և եթե հանցագործություն կատարած անձի արարքում բացակայում են ՀՀ քր. օր-ի 132-րդ կամ 132^2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները, ենթադրում է, որ հանցավորը կամ հաստատապես իմացել է տուժողի՝ վերը նկարագրված հոգեվիճակի մասին, կամ էլ գիտակցել է այդ հանգամանքը (օրինակ, եթե սեքսուալ կամ աշխատանքային ծառայություններից օգտվողը գիտի, որ ծառայություններ մատուցողը բուժվում կամ հաշվառված է հոգեբուժական կլինիկայում, կամ, օրինակ, երբ տուժողի արտաքինը կամ վարքագիծը առնրևույթ վկայում են նրա վերը նկարագրված հոգեվիճակի մասին (արտահայտված դեբիլություն, իմբեցիլություն կամ այլն), կամ եթե տուժողը ծառայություններից օգտվողի ծանոթն է, հարևանը, բարեկամը և այլն և գիտի վերջինիս հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված լինելու հանգամանքի մասին: Պետք է նկատի ունենալ, որ հանցավորի բարեխիղճ մոլորությունը տուժողի՝ վերը նկարագրված հոգեվիճակի մասին բացառում է արարքի որակումը ՀՀ քր. օր-ի 132^3-րդ հոդվա-

ծի 2-րդ մասի 2-րդ կետով: Այդ դեպքում որակման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների բացակայության դեպքում արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր-ի 132^3-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Իսկ այն դեպքում, երբ հանցավորի համար ակնհայտ է, որ տուժողը հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձ է, սակայն նա սխալվում է այդ հանգամանքի վերաբերյալ, ապա արարքը պետք է որակվի որպես հանցափորձ (ՀՀ քր. օր-ի 34-րդ հոդված և 132^3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ):

ՀՀ քր. օր-ի 132^3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ

<u>Շահագործման վիճակում գտնվող</u> <u>ակնհայտ հղի կնոջ</u> ծառայությունից օգտվելը, եթե այդ անձի շահագործման վիճակի մեջ լինելը ակնհայտ է ծառայությունից օգտվողի համար, և եթե հանցագործություն կատարած անձի արարքում բացակայում են ՀՀ քր. օր-ի 132-րդ կամ 132^2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները, ենթադրում է կա'մ հանցավորի հաստատապես իմացությունը տուժողի հղի լինելու մասին, կա'մ էլ այդ հանգամանքը գիտակցելը: Տուժողի հղի լինելու մասին հանցավորի տեղեկացվածության աղբյուրները (օրինակ, եթե շահագործողը, կամ ծառայություններ մատուցողը, կամ երրորդ անձինք սեքսուալ ծառայություններից օգտվողին տեղեկացնում են ծառայություններ մատուցողի հղի լինելու մասին) կամ բնույթը (օրինակ, երբ տուժողի արտաքինը առնրևույթ վկայում է նրա հղի լինելու մասին) կամ հղիության տևողությունն արարքի քրեաիրավական որակման համար նշանակություն չունեն:

Պետք է նկատի ունենալ, որ տուժողի հղի լինելու հանգամանքի վերաբերյալ հանցավորի չիմանալը կամ չգիտակցելը բացառում է արարքի որակումը ՀՀ քր. օր-ի 132^3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Այդ դեպքում որակման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների բացակայության դեպքում արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր-ի 132^3-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Իսկ այն դեպքում, երբ հանցավորի համար ակնհայտ է, որ տուժողը հղի է, սակայն նա սխալվում է այդ հանգամանքի վերաբերյալ, ապա արարքը պետք է որակվի որպես հանցափորձ (ՀՀ քր. օր-ի 34-րդ հոդված և 132^3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ):

ՀՀ քր. օր-ի 132[3]-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ.

Շահագործման վիճակում գտնվող երկու կամ ավելի անձանց ծառայությունից օգտվելը, եթե այդ անձանց շահագործման վիճակի մեջ լինելը ակնհայտ է ծառայությունից օգտվողի համար, և եթե հանցագործություն կատարած անձի արարքում բացակայում են ՀՀ քր. օր-ի 132-րդ կամ 132[2]-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները, ենթադրում է, որ հանցավորը հաստատապես գիտի երկու կամ ավելի տուժողների՝ շահագործման մեջ գտնվելու հանգամանքի մասին կամ էլ այդ հանգամանքը գիտակցում է: Ընդ որում, տուժողների կարգավիճակի մասին հանցավորի տեղեկացվածության աղբյուրները (օրինակ, երբ շահագործողը կամ երրորդ անձինք աշխատանքային ծառայություններից օգտվողին տեղեկացնում են ծառայություններ մատուցողների ստրկական կամ կաբալային կախվածության վիճակի մասին) կամ բնույթը (օրինակ, երբ տուժողներին գաղտնիության պայմաններում տեղափոխում են ժամանակավոր աշխատավայր, պահելով նրանց անազատ վիճակում) կամ մատուցվող ծառայությունների տևողությունը արարքի քրեաիրավական որակման համար նշանակություն չունեն:

Պետք է նկատի ունենալ, որ եթե ծառայություններից օգտվողը չգիտեր և չէր գիտակցում տուժողների՝ շահագործման մեջ լինելու հանգամանքի մասին, ապա դա բացառում է արարքի որակումը ՀՀ քր. օր-ի 132[3]-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով: Այդ դեպքում որակման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների բացակայության պարագայում արարքը պետք է որակվի ՀՀ քր. օր-ի 132[3]-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Իսկ այն դեպքում, երբ հանցավորի համար ակնհայտ է, որ տուժողները շահագործման վիճակի մեջ են, սակայն նա սխալվում է այդ հանգամանքի առումով, ապա արարքը պետք է որակվի որպես հանցափորձ (ՀՀ քր. օր-ի 34-րդ հոդված և 132[3]-րդ հոդվածի 2-րդ - մասի 3-րդ կետ):

ՀՀ քր. օր-ի 132[3]-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններին տուժողի մասին կամովին տեղեկություններ հայտնած անձն ազատվում է ՀՀ քր. օր-ի 132[3]-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում:

Այս իրավանորմը նախատեսում է անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հատուկ տեսակ: Սա գործուն զղջալու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու քրեաիրավական ինստիտուտի (ՀՀ քր. օր-ի 72-րդ հոդված) հատուկ դեպք է, որը բնութագրվում է իր առանձնահատկություններով:

Նախ՝ այս դրույթը կարող է կիրառվել բացառապես այն անձի նկատմամբ, ով կատարել է ՀՀ քր. օր-ի 132[3]-րդ հոդվածով նախատեսված արարքը, այսինքն՝ օգտվել է շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից:

Երկրորդ՝ այդ անձը քրեական պատասխանատվությունից ենթակա է ազատման պայմանով, որ՝

ա) տեղեկություններ է հայտնել այն անձի մասին, ում ծառայություններից օգտվել է, հաստատապես իմանալով, որ այդ անձը գտնվում է ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի իմաստով շահագործման վիճակում: Տեղեկություններ հայտնելու եղանակը (նամակով, հեռախոսով, հայտարարությամբ կամ այլ) նշանակություն չունի: Կարևորվում է տեղեկություն հայտնելու փաստը: Եթե տեղեկությունը իրավապահ մարմնին հայտնվել է անանուն եղանակով, այնուհետև պարզվել է տեղեկություն հայտնողի ինքնությունը, ապա գործի բոլոր փաստական հանգամանքների գնահատմամբ կարելի է եզրահանգել, որ անձը տեղեկությունը հայտնել է,

բ) վերը՝ «ա» կետում նշված տեղեկությունները հայտնել է ՀՀ իրավապահ մարմիններին: Տեղեկությունն այլ մարմինների (պետական կառավարման, տեղական ինքնակառավարման) կամ կազմակերպությունների (հասարակական, հասարակական-քաղաքական, առևտրային և այլն) կամ անձանց հայտնելը չի կարող գնահատվել որպես իրավապահ մարմնին տեղեկություն հայտնելու փաստ,

գ) վերը՝ «ա» կետում նշված տեղեկությունները ՀՀ իրավապահ մարմիններին հայտնել է կամովին: «Կամովին» եզրույթը նշանակում է, որ անձը համապատասխան տեղեկությունը հայտնել է ՀՀ իրավապահ մարմիններին այն դեպքում, երբ նա ուներ այդ տեղեկությունը չհայտնելու իրական հնարավորություն: Անձի ձերբակալման կամ, օրինակ, քննչական գործողությունների արդյուքում պարզված տեղեկությունը չի կարող գնահատվել որպես կամովին հայտնած տեղեկություն:

Երրորդ՝ իրավանորմում չի մասնավորեցվում այն, թե երբ պետք է անձը իրավապահ մարմնին կամովին հայտնի տեղեկություններ

տուժողի մասին, այսինքն՝ ժամանակի մեջ այդ հնարավորությունը սահմանափակված չէ: Կարծում ենք, որ կամովին հայտնելու հնարավորությունն անձն ունենում է սկսած ծառայությունից օգտվելու պահից: Այսպիսի ձևակերպման իրավական նշանակությունը կայանում է նրանում, որ անգամ ուշացմամբ հայտնած տեղեկությունը կարող է նշանակալի լինել թրաֆիքինգի կամ շահագործման զոհին փրկելու, հանցագործությունը բացահայտելու և մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու համար: Նման տեղեկությունը կարող է ունենալ անգնահատելի նշանակություն օպերատիվ-հետախուզական աշխատանքում:

Չորրորդ՝ ՀՀ քր. օր-ի 132^3-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմը կիրառելի է, եթե հանցավորի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում: Սակայն, եթե նրա փաստացի կատարած արարքը պարունակում է այլ հանցակազմ, ապա այդ դեպքում նա չի ազատվում ՀՀ քր. օր-ի 132^3-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Այսպես, տուժողի մասին ՀՀ իրավապահ մարմիններին կամովին տեղեկություններ հայտնած անձի նկատմամբ չի կարող կիրառվել ՀՀ քր. օր-ի 132^3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատելու իրավանորմը, եթե վերջինս տուժողի ծառայությունից օգտվելիս նաև տուժողի կամ այլ անձանց նկատմամբ գործադրել է քրեորեն հետապնդելի բռնություն:

ՀՀ քր. օր-ի 132^3-րդ հոդվածի 3-րդ մասում նշված բոլոր պայմանների միաժամանակյա առկայության դեպքում տեղեկություններ հայտնած անձը ոչ թե կարող է ազատվել, այլ իմպերատիվ կարգով ազատվում է ՀՀ քր. օր-ի 132^3-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից:

3.2. «Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը», «Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը» և «Պոռնկագրական առարկաներ կամ նյութեր տարածելը»

ՀՀ քր. օր-ի 261-րդ, 262-րդ և 263-րդ հոդվածներով նախատեսված է քրեական պատասխանատվություն համապատասխանաբար «Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելու», «Պոռնկությամբ զբաղվելուն նպաստե-

լու» և «Պոռնկագրական առարկաներ կամ նյութեր տարածելու» համար:

Այս հանցագործությունները ներառվել են ՀՀ քրեական օրենսգրքի «Հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործությունները» վերնագրով 25-րդ գլխում:

3.2.1. Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը (ՀՀ քր. օր-ի 261-րդ հոդված)

ՀՈԴՎԱԾ 261. ՇԱՀԱԴԻՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՅԼ ԱՆՁԻ ՊՈՌՆԿՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼՈՒՆ ՆԵՐԳՐԱՎԵԼԸ

1. Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 132-րդ - հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մինչև երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

3) ՀՀ պետական սահմանը հատելով անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով,

4) ակնհայտ հղի կնոջը նկատմամբ,

5) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավուն-

քից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

ՀՀ քր. օր-ի 261-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանվում շահադիտական նպատակով այլ անձի՝ պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելու համար, եթե բացակայում են նույն օրենսգրքի 132-րդ հոդվածով («Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը») նախատեսված հանցագործության հատկանիշները:

Պոռնկությունը անձանց անորոշ շրջանակի հետ վարձատրության դիմաց պարբերաբար սեքսուալ հարաբերությունների մեջ մտնելն է: Պարբերաբարությունը պոռնկության հատկանիշներից է, այն ՀՀ քր. օր-ի 261-րդ հոդվածում անվանվում է «զբաղվել» բառով: Պոռնկությամբ զբաղվելը ենթադրում է գործունեություն, որը քիչ թե շատ կանոնավոր եկամտի աղբյուր է: Անձանց անորոշ շրջանակը կարող է լինել ինչպես լայն, այնպես էլ՝ նեղ: Եթե առաջին դեպքում դրան բնորոշ են «հրապարակային օֆերտայի» կանոնները, երբ անձն առաջարկում է իր կողմից որոշված վարձատրության դիմաց իր սեքսուալ ծառայությունները դրանցից օգտվել ցանկացող յուրաքանչյուր անձի, ապա մյուս դեպքում այդ ծառայություններից օգտվող անձանց շրջանակը կարող է սահմանափակվել տարբեր չափանիշներով (օրինակ՝ կոնկրետ ակումբի այցելուներով կամ, օրինակ, իր կողմից ընտրված անձանց շրջանակով և այլն): Վարձատրությունը կարող է արտահայտվել արժութային տեսքով (դրամ, արտարժույթ, բաժնետոմսեր) կամ գույքով (բնամթերք, հագուստ, զարդեր և այլն):

Օբյեկտը. Հասարակության բարոյականությունից բացի՝ տվյալ հանցագործության օբյեկտ կարող են հանդիսանալ նաև առողջության, մարմնական անձեռնմխելիության պահպանմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Տուժող կարող է լինել 18 տարին լրացած և իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ գիտակցելու և դա ղեկավարելու հնարավորությամբ օժտված անձը՝ անկախ սեռի պատկանելիությունից, որն իրեն պոռնկությամբ զբաղվելու մեջ ներգրավողին կամավոր տալիս է պոռնկությամբ զբաղվելու համաձայնություն:

Տասնութ տարին չլրացած կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից

զրկված անձը չի կարող հանդիսանալ քննարկվող հանցագործությունից տուժող, քանի որ այդ կատեգորիաների անձինք օժտված չեն իրավիճակը ճիշտ գնահատելու և պոռնկությամբ զբաղվելու համար կշռադատված համաձայնություն տալու ունակությամբ: Նրանց վիճակն ինքնին խոցելի է, և շահադիտական նպատակով այդ անձանց պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը պետք է գնահատվի որպես պոռնկության շահագործման նպատակով մարդու հավաքագրում՝ վիճակի խոցելիությունն օգտագործելով, իսկ պոռնկությամբ զբաղվել շարունակելուն հակելը՝ որպես շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ վիճակի խոցելիությունը օգտագործելով: Այդ դեպքերում արարքը պետք է որակվի որպես ՀՀ քր. օր.-ի 132[2]-րդ հոդվածով նախատեսված թրաֆիքինգ: Եթե հանցավորը տասնութ տարին չլրացած անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավել է առանց շահադիտական նպատակի, ապա այդ արարքը պետք է որակվի որպես ՀՀ քր. օր-ի 166-րդ հոդվածի հատկանիշներով կատարված հանցագործություն (Երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը):

Օբյեկտիվ կողմը բնութագրվում է գործողությամբ և դրսևորվում է այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելու մեջ:

Ներգրավել պոռնկությամբ զբաղվելուն նշանակում է հակել կամ դրդել այլ անձի՝ վարձատրության դիմաց մտնելու պարբերաբար սեքսուալ հարաբերությունների մեջ անորոշ քանակությամբ անձանց հետ: Հակել կամ դրդել ասելով պետք է հասկանալ այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են անձի մոտ պոռնկությամբ զբաղվելու ցանկություն առաջացնելուն (օրինակ՝ համոզելը, խոստումները, խաբեությունը, նախանձ առաջացնելը, շահագրգռելը և այլն): Անձը, սակայն, ի տարբերություն թրաֆիքինգի զոհի, ունի հնարավորություն հրաժարվելու պոռնկությամբ զբաղվելու առաջարկությունից և ի վիճակի է ինքնուրույն համապատասխան որոշում ընդունել:

Պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը ենթադրում է, որ մինչև հանցագործության կատարման պահը տուժողը կամ չի զբաղվել պոռնկությամբ, կամ էլ թեև նախկինում զբաղվել է պոռնկությամբ, սակայն հանցագործության կատարման պահին դադարեցրել է պոռնկությամբ զբաղվելը, այլևս չի ցանկանում այն շարունակել և

այդ նպատակով գործողություններ կատարել (սեքսուալ հարաբերության համար հաճախորդներ փնտրել, առաջարկ անել կամ տալ համաձայնություն և այլն), հրաժարվել է որպես եկամտի աղբյուր դիտել այդ գործունեությունը, սակայն հանցավորը տարբեր միջոցներով հակում է նրան զբաղվելու պոռնկությամբ:

Յուրաքանչյուր դեպքում, հաշվի առնելով քրեական գործի բոլոր հանգամանքները, անհրաժեշտ է տարանջատել այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը մարդու թրաֆիքինգից կամ շահագործումից: Հանցագործության օբյեկտիվ կողմից տարանջատումը պետք է կատարվի ըստ գործողությունների (մանրամասն տե'ս թիվ 2 մոդուլը): Եթե, օրինակ, պոռնկությամբ զբաղվելու մեջ ներգրավելու ընթացքում անձի նկատմամբ կիրառվել է որևէ հարկադրանքի եղանակ, որի ազդեցության ներքո, այլ ոչ թե կամավոր է տուժողը տվել պոռնկությամբ զբաղվելու համար իր համաձայնությունը, ապա պետք է քննարկել արարքը ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածով որակելու հնարավորության մասին: Իհարկե, պետք է հաշվի առնվեն նաև հանցագործության սուբյեկտիվ կողմը, տուժողի անձը և արարքը որակելու համար նշանակություն ունեցող բոլոր այլ հանգամանքները:

<u>Հանցակազմը ձևական է.</u> հանցագործությունը համարվում է ավարտված անձին պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելու գործողության կատարման պահից, անկախ այն հանգամանքից, ներգրավվե՞լ է, արդյոք, տուժողը փաստացի պոռնկությամբ զբաղվելու մեջ, թե՞ ոչ: Ընդ որում, եթե անձը տվել է իր համաձայնությունը՝ զբաղվելու պոռնկությամբ, ապա արարքը պետք է որակել որպես ավարտված հանցագործություն, իսկ եթե չի հաջողվել ստանալ անձի համաձայնությունը, ապա արարքը պետք է որակել որպես հանցափորձ:

Սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Հանցավորը գիտակցում է, որ իր գործողություններով հոգեբանական ազդեցություն է գործում անձի վրա և այդպիսով ցանկանում է ներգրավել (հակել, դրդել) նրան պոռնկությամբ զբաղվելուն և դա կատարում է շահադիտական նպատակով:

Շահադիտական նպատակը նշանակում է անձի՝ պոռնկությամբ զբաղվելու մեջ ներքաշելու արդյունքում ակնկալվող նյութական կամ այլ շահ, օգուտ: Եթե առկա է անձի՝ պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելու փաստը, ապա արդյունքում ստացված շահը

հանցավորի և տուժողի կողմից համատեղ տնօրինման հանգամանքը չի կարող առիթ հանդիսանալ՝ արարքը որպես ՀՀ քր. օր-ի 261-րդ հոդվածով նախատեսված հանցագործություն չորակելու համար:

Հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ 16 տարին լրացած անձը:

ՀՀ քր. օր-ի 261-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված են հանցակազմի ծանրացնող հանգամանքները: Ընդ որում, ինչպես 2-րդ, այնպես էլ 3-րդ մասերում նկարագրված արարքները դասվում են ծանր հանցագործությունների շարքին: Դրանց տարանջատումն իրականացվել է ըստ արարքի բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի, ու այդ հիմքերով էլ տարբերվում են սանկցիաները: Կազմակերպված խմբի կողմից շահադիտական նպատակով այլ անձի՝ պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը (եթե բացակայում են ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները) ինչպես ծանրացուցիչ հանգամանքների առկայության, այնպես էլ դրանց բացակայության դեպքում, ըստ հանրության համար վտանգավորության աստիճանի գնահատվել է առավել վտանգավոր և առանձնացվել է հոդվածի 3-րդ մասում:

Այսպիսով, ՀՀ քր. օր-ի 261-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում սահմանված են շահադիտական նպատակով այլ անձի՝ պոռնկությամբ զբաղվելու մեջ ներգրավելը հանցակազմի ստորև շարադրված ծանրացնող հանգամանքները:

ՀՀ քր. օր-ի 261-րդ հոդվածի 2-րդ մաս

Շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելու ներգրավելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

3) ՀՀ պետական սահմանը հատելով անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով,

4) ակնհայտ հղի կնոջը նկատմամբ,

5) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

ՀՀ քր. օր-ի 261-րդ հոդվածի 3-րդ մաս

ՀՀ քր. օր-ի 261-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

ՀՀ քր. օր-ի 261-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նշված ծանրացնող հանգամանքների բովանդակությանը չենք անդրադառնում, քանի որ դրանք բացահայտվել են թիվ 2 մոդուլի և թիվ 3 մոդուլի այլ հանցակազմերի վերլուծության ժամանակ:

3.2.2. Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը (ՀՀ քր. օր-ի 262-րդ հոդված)

ՀՈԴՎԱԾ 262. ՊՈՌՆԿՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼՈՒՆ ՆՊԱՍՏԵԼԸ

1. Պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելը, ղեկավարելը կամ պահելը կամ որևէ հանրային հաստատություն պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելը կամ այլ անձի պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան պարբերաբար տրամադրելը կամ գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 132-րդ կամ 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով կամ կալան-

քով՝ մինչև երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

3) ՀՀ պետական սահմանը հատելով անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով,

4) ակնհայտ հղի կնոջն օգտագործելով,

5) երկու կամ ավելի անձանց օգտագործելով,

6) անչափահասին օգտագործելով,

7) հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Օբյեկտը. Հասարակության բարոյականությունից բացի՝ տվյալ հանցագործության օբյեկտ կարող են հանդիսանալ նաև առողջության, մարմնական անձեռնմխելիության պահպանմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Հանցագործության օբյեկտիվ կողմը (եթե բացակայում են ՀՀ քր. օր-ի 132-րդ կամ 132^2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները) դրսևորվում է հանցավորի մի քանի այլընտրանքային ակտիվ գործողություններով՝

- գործողություններ, որոնք ուղղված են պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելուն, ղեկավարելուն կամ պահելուն,

- գործողություններ, որոնք ուղղված են որևէ հանրային հաստատություն պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելուն,

- գործողություններ, որոնք ուղղված են այլ անձի՝ պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան պարբերաբար տրամադրելուն,

- գործողություններ, որոնք ուղղված են գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելուն:

Պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելը դրսևորվում է այնպիսի գործողություններում, որոնց արդյունքում ծագում է պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելու նպատակով կառույց: Դա կարող է լինել, օրինակ, օրենքով սահմանված կարգով համապատասխան մարմիններում գրանցված կազմակերպություն (ՍՊԸ, ՓԲԸ կամ այլ), որն ունի այդ կազմակերպության գործունեության տեսակներին համապատասխան արտոնագրեր, ինչպես նաև տարածք և գույք: Դրանք, սակայն, կարող են հանդիսանալ հաստատության ստեղծման իրական նպատակների (պոռնկությամբ զբաղվելու համար) քողարկման ձև:

Պոռնկությամբ զբաղվելու համար ստեղծված կառույցը կարող է լինել նաև ամբողջությամբ անօրինական և ընդհատակյա, երբ այն որևէ կերպ չի գրանցվել որպես գործող հաստատություն:

Պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ստեղծելը գործնականում վերագրվում է այդպիսի հաստատությունների սեփականատերերին կամ իրական բենեֆիցիարներին:

Պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն ղեկավարելը դրսևորվում է արդեն ստեղծված հաստատության վարչարարական գործառույթների իրականացմամբ, բնականոն գործունեության ապահովման համար որոշումներ կայացնելով և դրանց կատարմանն ուղղված միջոցառումներ իրականացնելով (դերերի բաշխում, նյութատեխնիկական մասի համակարգում, տարբեր միջոցառումների կազմակերպում, պոռնիկների հավաքագրում, ընտրություն կամ նրանց հետ համապատասխան պայմանավորվածությունների ձեռքբերում, գործունեության կառուցակարգերի ընտրություն, գովազդների տեղադրում, հաճախորդներով ապահովելուն ուղղված միջոցառումների իրականացում և այլն):

Պոռնկությամբ զբաղվելու համար հաստատությունը, որպես կանոն, ղեկավարվում է տնօրենի կողմից:

Պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն պահելը դրսևորվում է հաստատության առօրյա բնականոն գործունեությունն ապահովելով (սնունդ, խմիչք, պահպանակներ, անհրաժեշտ գույք և ծառայություններ, ծագող տարբեր խնդիրների լուծում, պոռնիկների հավաքագրում կամ նրանց հետ համապատասխան պայմանավորվածությունների ձեռքբերում):

Պոռնկությամբ զբաղվելու համար հաստատություն պահողը փաստացի՝ հաստատության բնականոն ամենօրյա գործունեության աշխատանքները կանոնակարգողն է և դրանց նկատմամբ հսկողություն իրականացնողը:

Որևէ հանրային հաստատություն պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելը դրսևորվում է արդեն իսկ գոյություն ունեցող օրինական հաստատությունը (հյուրանոցը, գիշերային ակումբը, սրճարանը, բաղնիքը և այլն) պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելով: Հաստատության առանձին աշխատակիցներ ինքնուրույն կարող են կիրառել իրենց գործառույթները՝ այլ անձանց պոռնկությանը զբաղվելուն նպաստելու համար:

Այլ անձի՝ պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան պարբերաբար տրամադրելը դրսևորվում է բնակարանը կամ որևէ այլ կացարան, որոնք նախատեսված չեն հանրային օգտագործման համար, պոռնկությամբ զբաղվելու նպատակով այլ անձի պարբերաբար տրամադրելու մեջ: Նման կացարան կարող է հանդիսանալ նաև ավտոմեքենան: Պոռնկությամբ զբաղվող անձի հետ սեռական հարաբերություն ունենալու համար կացարանը միանվագ տրամադրելը հանցակազմ չի պարունակում:

Գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելը դրսևորվում է հիմնականում կավատության ձևով՝ որպես գույքային օգուտի դիմաց սեռական հարաբերության համար միջնորդություն: Այդպիսի միջնորդություն պետք է գնահատել նաև պոռնկությամբ զբաղվողների տվյալներով կայքէջերի ստեղծումը կամ հայտարարությունների տեղադրումը:

Գույքային օգուտ ստանալով պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստել ասելով պետք է հասկանալ նաև այն դեպքերը, երբ հանցավորը գույքային օգուտի դիմաց իր գործողություններով բարենպաստ պայմաններ է ստեղծում այլ անձի՝ պոռնկությամբ զբաղվելու համար: Այդ գործողությունները կարող են դրսևորվել անձի՝ պոռնկությամբ զբաղվելը խոչընդոտող տարբեր միջադեպե-

րից, հանցավոր տարրերի ոտնձգություններից պաշտպանելով, իրավապահ մարմինների հետապնդումներից թաքցնելով կամ չպատժելու, պոռնկությամբ զբաղվելու «թույլտվություն ստանալու» նպատակով համաձայնություն ձեռք բերելով և այլն:

Հաստատությունը կամ որևէ կացարան կարող է օգտագործվել նաև որպես հավաքատեղ՝ սեքսուալ ծառայությունների մատուցման համար սկզբնական գործողություններ իրականացնելու նպատակով (հաճախորդներ գտնելու կամ նրանց հետ ծանոթանալու, պայմանավորվածություններ ձեռք բերելու, սեքսուալ ծառայությունների պատվերներ ստանալու, սեքսուալ հարաբերության մեջ մտնելու առաջարկ կատարելու կամ համաձայնություն տալու և այլն): Եթե դա իրականացվել է գույքային օգուտ ստանալով, ապա պետք է քննարկվի արարքը որպես պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելը որակելու հնարավորության հարցը: Գույքային օգուտը, սակայն, պետք է անմիջապես կապված լինի պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու հետ: Պետք է հաշվի առնել, որ շահույթ ստանալու օրինական նպատակ հետապնդող ծառայություններ մատուցող հաստատությունները (օրինակ՝ հասարակական սննդի, զվարճանքի վայրերի հաստատությունները և այլն) իրենց գործունեությունն իրականացնում են հրապարակային օֆերտայի սկզբունքով: Դա նշանակում է, որ այդ կազմակերպությունների ծառայություններից իրավունք ունի օգտվելու ցանկացած անձ, եթե օրենքով նախատեսված չեն արգելքներ կամ սահմանափակումներ (օրինակ՝ անչափահասների սպասարկումը որոշակի ժամերի կամ որոշակի պայմաններով): Եվ եթե, օրինակ, այդ վայրը երրորդ անձանց կողմից օգտագործվել է որպես պոռնկությամբ զբաղվելու համար պայմանավորվածություններ ձեռք բերելու հավաքատեղ, որտեղ վճարվել է նաև պատվիրված սննդամթերքի համար, ապա դա ինքնին չի կարող որակվել որպես արարք, որը կազմում է հաստատության սեփականատերերի, տիրապետողների կամ օգտագործողների կողմից գույքային օգուտ ստանալով պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելու հանցակազմ:

<u>Հանցակազմը ձևական է.</u> հանցագործությունը համարվում է ավարտված օբյեկտիվ կողմը բնութագրող ցանկացած գործողություն հանցավորի կողմից կատարելու պահից, այլ ոչ թե այն պահից, երբ փաստացի սկսել են զբաղվել պոռնկությամբ:

Սուբյեկտիվ կողմից հանցագործությունը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Հանցավորը գիտակցում է, որ իր գործողություններով նպաստում է այլ անձի՝ պոռնկությամբ զբաղվելուն և դա կատարում է գույքային օգուտ ստանալու ակնկալիքով:

Հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ 16 տարին լրացած անձը:

ՀՀ քր. օր-ի 262-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված են հանցակազմի ծանրացնող հանգամանքները: Ընդ որում, ինչպես 2-րդ, այնպես էլ 3-րդ մասերում նկարագրված արարքները դասվում են ծանր հանցագործությունների շարքին: Դրանց տարանջատումն իրականացվել է ըստ արարքի բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի, ու այդ հիմքերով էլ տարբերվում են սանկցիաները: Կազմակերպված խմբի կողմից պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը (եթե բացակայում են ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները) ինչպես ծանրացուցիչ հանգամանքների առկայության, այնպես էլ դրանց բացակայության դեպքում, ըստ հանրության համար վտանգավորության աստիճանի՝ գնահատվել է առավել վտանգավոր և առանձնացվել է հոդվածի 3-րդ մասում:

Այսպիսով, ՀՀ քր. օր-ի 262-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում սահմանված են պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու հանցակազմի հետևյալ ծանրացնող հանգամանքները.

ՀՀ քր. օր-ի 262-րդ հոդվածի 2-րդ մաս

Պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը (ՀՀ քր. օր-ի 262-րդ հոդվածի 1-ին մաս), որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
2) պաշտոնեական դիրքն օգտագործելով,
3) ՀՀ պետական սահմանը հատելով անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով,
4) ակնհայտ հղի կնոջն օգտագործելով,
5) երկու կամ ավելի անձանց օգտագործելով,
6) անչափահասին օգտագործելով,
7) հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

ՀՀ քր. օր-ի 262-րդ հոդվածի 3-րդ մաս

ՀՀ քր. օր-ի 262-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

ՀՀ քր. օր-ի 262-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նշված ծանրացնող հանգամանքների բովանդակությանը չենք անդրադառնում, քանի որ դրանք բացահայտվել են թիվ 2 մոդուլի և թիվ 3 մոդուլի այլ հանցակազմերի վերլուծության ժամանակ:

3.3. ՀՀ քրեական օրենսգրքի «Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները» վերնագրով 20-րդ գլխում ներառված առանձին հանցագործություններ

ՀՀ քր. օր-ի 166-րդ և 166[1]-րդ հոդվածները դասվում են կոնվենցիոնալ նորմերի շարքին, որոնք ուղղակիորեն բխում են ՀՀ կողմից վավերացված միջազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորություններից: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի Երեխայի իրավունքների հռչակագրի (1959 թ. նոյեմբերի 20) 6-րդ հոդվածով սահմանված է, որ երեխան, նկատի առնելով նրա ֆիզիկական և մտավոր անհասությունը, կարիք ունի հատուկ պաշտպանության և հոգատարության, ներառյալ պատշաճ իրավական պաշտպանությունը ծնվելուց առաջ և հետո: Երեխայի իրավունքներն առավել ամբողջական ամրագրված են Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայում, ինչպես նաև միջազգային այլ փաստաթղթերում:

ՀՀ Սահմանադրությամբ նույնպես ամրագրված են երեխայի իրավունքները և ազատությունները, որոնք իրենց զարգացումն են ստացել «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում:

ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ գլխում ներառվել են «Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունները»:

Այդ գլխում ներառված առանձին հանցագործություններ անհրաժեշտ է տարբերակել անչափահասի թրաֆիքինգից և շահագործումից: Այսպես, ՀՀ քր. օր-ի 165-րդ հոդվածով նախատեսված է քրեական պատասխանատվություն «Անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու», 166-րդ հոդվածով՝ «Երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելու», 166[1]-րդ հոդվածով՝ «Երեխային ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը, թափառաշրջիկությանը ներգրավելու կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելու», 167-րդ հոդվածով՝ «Ծնողներից երեխային ապօրինի բաժանելու կամ երեխային փոխելու» և 168-րդ հոդվածով՝ «Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքի կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքի» համար:

Վերլուծենք թվարկվածներից այն հանցագործությունները, որոնք առավել հաճախ բարդություններ են առաջացնում որակման տեսանկյունից:

Այս հանցագործությունների **սեռային օբյեկտն են** կազմում ընտանիքի և երեխայի օրինական շահերի պաշտպանության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 34-րդ հոդվածի ուժով մասնակից պետությունները պարտավորվում են երեխային պաշտպանել սեռական շահագործման բոլոր ձևերից և սեռական այլասերումից: Այդ նպատակով մասնակից պետությունները, մասնավորապես, ազգային, երկկողմ և բազմակողմանի մակարդակներով ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի կանխարգելեն՝

ա) երեխային ցանկացած ապօրինի սեռական գործունեության դրդելը կամ հարկադրելը,

բ) շահագործման նպատակով երեխաներին պոռնկության մեջ կամ այլ ապօրինի սեռական պրակտիկայում օգտագործելը,

գ) շահագործման նպատակով երեխաներին պոռնոգրաֆիայի և պոռնկագրաֆիկ նյութերի մեջ օգտագործելը:

Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին ՄԱԿ-ի 1999 թ. կոնվենցիայի (ուժի մեջ է մտել 2006 թ.) 3-րդ հոդվածով սահմանվել է, որ «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը» եզրույթն ընդգրկում է երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ երեխային առաջարկելը մարմնավաճառությամբ զբաղվելու, պոռնոգրաֆիկական արտադրանքի արտադրության կամ պոռնոգրաֆիկ ներկայացումների համար:

ՀՀ քր. օր-ի 165-րդ, 166-րդ, 166[1]-րդ հոդվածներում նկարագրված հանցագործությունների **հիմնական օբյեկտը** երեխայի նորմալ ֆիզիկական, հոգեկան և բարոյական զարգացման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Այդ հանցագործությունների **լրացուցիչ անմիջական օբյեկտ** կարող են հանդես գալ երեխայի առողջության պահպանման ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները:

ՀՀ քր. օր-ի 167-րդ և 168-րդ հոդվածներում նկարագրված հանցագործությունների **հիմնական օբյեկտը** ընտանիքի շահերի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

3.3.1. Երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը (ՀՀ քր. օր-ի 166-րդ հոդված)

ՀՈԴՎԱԾ 166. ԵՐԵԽԱՅԻՆ ՊՈՌՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՊՈՌՆԿԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՆՅՈՒԹԵՐ ԿԱՄ ԱՌԱՐԿԱՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՆԵՐԳՐԱՎԵԼԸ

1. Տասնութ տարին լրացած անձի կողմից երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 132.2-րդ - հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից հինգ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք՝

1) կատարվել են երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

«Պոռնկություն» հասկացության բովանդակությանը չենք անդրադառնում, քանի որ այն բացահայտվել է թիվ 2 մոդուլի և թիվ 3 մոդուլի այլ հանցակազմերի վերլուծության ժամանակ:

Պոռնկագրական բնույթի նյութերը կամ առարկաները կարելի է բնութագրել որպես ոչ էրոտիկ և ոչ գիտահանրամատչելի սեռական ուղղվածություն ունեցող տեղեկատվություն՝

ա) որը պարունակում է ոչ գեղարվեստական՝ բնական և անպատկառ (ցինիկ) սեռական հարաբերության պատկեր կամ մանրամասն նկարագիր,

բ) որն ինքնանպատակ կամ անպատկառ (ցինիկ) նպատակներով խոշոր պլանով պարունակում է մարդու կամ կենդանու սեռական օրգան կամ դրա նկարագիր,

գ) որը խոշոր պլանով պարունակում կամ մանրամասն նկարագրում է մարդու կամ կենդանու սեռական օրգաններ կամ մարդակազմության կամ ֆիզիոլոգիական մանրամասների վերաբերյալ տեղեկատվություն՝ սեռական հարաբերության ժամանակ,

դ) որը պարունակում է մարդկանց կամ կենդանիների միջև իրական սեռական հարաբերության խոշոր պլանով պատկեր կամ մանրամասն նկարագիր,

ե) որը պարունակում է սեռական բռնության կամ անձը նվաստացնող սեռական գործողությունների վերաբերյալ պատկեր կամ մանրամասն նկարագիր,

զ) որը պարունակում է անչափահասների մասնակցությամբ սեռական գործողության վերաբերյալ պատկեր կամ մանրամասն նկարագիր,

է) որը պարունակում է սեռահոգեբանական շեղումներով կամ մարդու կողմից դիակների կամ կենդանիների նկատմամբ սեռական հարաբերության պատկեր կամ մանրամասն նկարագիր:

Տուժողը, այսինքն՝ երեխան, 18 տարին չլրացած մարդն է: Մարդը համարվում է անչափահաս, եթե նույնիսկ մինչև 18 տարեկանը ձեռք է բերել քաղաքացիաիրավական լրիվ գործունակություն:

Օբյեկտիվ կողմից հանցագործությունը դրսևորվում է ակտիվ գործողություններում, որոնք ուղղված են տասնութ տարին լրացած անձի կողմից երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելուն, եթե բացակայում են ՀՀ քր. օր-ի 132^2-րդ հոդվածով (Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը) նախատեսված հանցագործության հատկանիշները:

Երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն <u>ներգրավելը դրսևորվում է</u> չափահասի կողմից երեխային համոզելով, խոստումներ տալով, խաբեությամբ, բռնությամբ (տե՛ս ՀՀ քր. օր-ի 132^2-րդ հոդվածի մեկնաբանությունը):

ՀՀ քր. օր-ի 166-րդ հոդվածով նախատեսված հանցակազմն իր բնույթով մոտ է ՀՀ քր. օր-ի 132^2-րդ հոդվածին: Նշված հանցակազմերը միմյանցից կարելի է տարբերակել հանցագործության օբյեկտով և սուբյեկտիվ կողմերով: Եթե երեխան ներգրավվել է պոռնկության և պոռնկագրական բնույթի նյութերի պատրաստման հետ կապված գործողությունների մեջ, որն իրականացվում է շահագործման նպատակով, ապա արարքը պետք է որակել ՀՀ քր. օր-ի 132^2-րդ հոդվածով: Ընդ որում, արարքը ՀՀ քր. օր-ի 132^2-րդ հոդվածով որակելու համար որևէ նշանակություն չունի հակաիրավական եղանակի կիրառությունը: Իսկ եթե երեխան ներգրավվել է պոռն-

կության կամ պոռնկագրական բնույթի նյութեր պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելու մեջ առանց շահագործման նպատակի (ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի իմաստով), ապա արարքը պետք է որակել ՀՀ քր. օր-ի 166-րդ հոդվածով: Այդպես կարող է որակվել, օրինակ, այն դեպքը, երբ ընտանիքի նյութական վիճակը բարելավելու նպատակով չափահասը, չհետապնդելով շահագործման նպատակ, երեխային կոնկրետ խորհուրդներ է տալիս զբաղվելու պոռնկությամբ կամ մասնակցելու պոռնկագրական բնույթի նյութերի պատրաստմանը (ամսագիր, լուսանկարներ և այլն):

ՀՀ քր. օր-ի 166-րդ հոդվածում թվարկված գործողությունները սպառիչ են: Այդ հիմքով երեխային այլ բնույթի հակահասարակական գործողություններ կատարելու մեջ ներգրավելը, օրինակ՝ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ տարածելու հետ կված գործողությունների մեջ ներգրավելը չի կարող որակվել ՀՀ քր. օր-ի 166-րդ հոդվածով: Այդ դեպքում պետք է հաշվի առնել նախ այն, որ ՀՀ քր. օր-ի 263-րդ հոդվածի համաձայն՝ պոռնկագրական նյութերի կամ առարկաների տարածումն ինքնին հանցավոր արարք է: Այնուհետև պետք է հաշվի առնել այն, որ ՀՀ քր. օր-ի 165-րդ հոդվածի համաձայն՝ անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը նույնպես հանցավոր արարք է: Պետք է հաշվի առնվեն նաև արարքը ճիշտ որակելու համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

<u>Ըստ կառուցվածքի՝ հանցակազմը ձևական է.</u> հանցանքը ավարտված է համարվում երեխային պոռնկության և պոռնկագրական բնույթի նյութերի պատրաստման հետ կապված գործողությունների մեջ ներգրավելու պահից: Արարքը որպես ավարտված հանցագործություն որակելու համար որևէ նշանակություն չունի, թե անչափահասն արդյոք փաստացի կատարել է վերը նշված արարքները, թե՝ ոչ: Անչափահասի կողմից պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելը չի ազդում արարքի իրավաբանական որակման վրա:

Սուբյեկտիվ կողմից հանցագործությունը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Անձը գիտակցում է, որ անչափահասին ներգրավում է պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ

կատարելու մեջ և ցանկանում է նրան ներգրավել այդ գործողությունների կատարմանը:

Անձը ՀՀ քր. օր-ի 166-րդ հոդվածով ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե չի գիտակցել, որ իր գործողություններով պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելու մեջ ներգրավում է անչափահասին կամ չի գիտակցել, որ անձը անչափահաս է:

Հանցագործության սուբյեկտը 18 տարին լրացած, ֆիզիկական մեղսունակ անձն է:

Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասում որպես արարքը ծանրացնող հանգամանք նախատեսված է ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն, երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը, եթե բացակայում են ՀՀ քր. օր-ի 132[2]-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մասնակից պետությունները գործադրում են բոլոր հնարավոր ջանքերը՝ երեխայի դաստիարակության և զարգացման գործում երկու ծնողների ընդհանուր պատասխանատվության սկզբունքի ճանաչումն ապահովելու համար: Ծնողները կամ համապատասխան դեպքերում օրինական խնամակալները երեխայի դաստիարակության ու զարգացման համար կրում են հիմնական պատասխանատվություն:

ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ և 13-րդ կետերի համաձայն՝ մանկավարժական աշխատողը՝ սովորողների կողմից հանրակրթական (հիմնական, լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների պահանջների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձ-

նավորմանը նպաստող և (կամ) դրանք ապահովող ուսումնական հաստատության աշխատակիցն է, իսկ ուսուցիչը՝ ուսումնական հաստատությունում սովորողների կողմից առարկայական ծրագրերի յուրացումը դասապրոցեսի միջոցով ապահովող և այդ գործընթացի համար անմիջականորեն պատասխանատու մանկավարժական աշխատողն է:

Այլ անձինք, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն, համարվում են, օրինակ, որդեգրողները, խնամակալները և հոգաբարձուները, խնամատար ծնողները:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որդեգրումը իրավաբանական այն ակտն է, որի համաձայն որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ: Ինչպես նկատում ենք, որդեգրողների և որդեգրվածների միջև իրավահարաբերությունները հավասարեցվում են ծնողների և զավակների փոխհարաբերություններին, ներառյալ՝ որդեգրողի՝ որդեգրվածին դաստիարակելու պարտականության առումով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 134-րդ հոդվածի համաձայն՝ խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանվում է այն երեխաների նկատմամբ, ովքեր մնացել են առանց ծնողական խնամքի՝ նրանց պահելու, դաստիարակելու և կրթություն տալու, ինչպես նաև նրանց իրավունքները և շահերը պաշտպանելու նպատակներով: Նշված նորմից բխում է, որ խնամակալները և հոգաբարձուները նույնպես կրում են երեխային դաստիարակելու պարտականություն:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 137-րդ հոդվածի համաձայն՝ երեխայի (երեխաների) դաստիարակությունը կարող է իրականացվել խնամատար ընտանիքում՝ երեխային (երեխաներին) ընտանիք դաստիարակության հանձնելու մասին պայմանագրի հիման վրա: Խնամատար ընտանիքը առանց ծնողական խնամքի մնացած երեխայի (երեխաների) դաստիարակության համար տեղավորման ձևերից մեկն է:

Խնամատար ծնողներ են համարվում քաղաքացիները (ամուսինները կամ առանձին անձինք), որոնք ցանկություն են հայտնել դաստիարակության վերցնել առանց ծնողական խնամքի մնացած երեխայի (երեխաների): Խնամատար ընտանիք դաստիարակութ-

յան համար հանձնվող երեխան (երեխաները) համարվում է հոգեզավակ, իսկ խնամատար ծնողներից և հոգեզավակներից կազմված ընտանիքը՝ խնամատար ընտանիք:

Մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասում որպես արարքը առավել ծանրացնող հանգամանքներ սահմանված են նույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները (երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը, եթե բացակայում են ՀՀ քր. օր-ի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները), որոնք՝

1) կատարվել են երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով:

2.3.2. Երեխային ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը, թափառաշրջիկությանը ներգրավելը կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը (ՀՀ քր. օր-ի 166.1-րդ հոդված)

ՀՈԴՎԱԾ 166.1. ԵՐԵԽԱՅԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ, ՈՒԺԵՂ ՆԵՐԳՈՐԾՈՂ ԿԱՄ ԱՅԼ ԹՄՐԵՑՆՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ, ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԳՐԱՎԵԼԸ ԿԱՄ ՄՈՒՐԱՑԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՆԵՐԳՐԱՎԵԼԸ

1. Տասնութ տարին լրացած անձի կողմից երեխային պարբերաբար ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը, թափառաշրջիկությանը ներգրավելը կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալան-

քով՝ մեկից երեք ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք՝

1) կատարվել են երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 32-րդ - հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները ճանաչում են երեխայի՝ տնտեսական շահագործումից և այնպիսի աշխատանք կատարելուց պաշտպանվելու իրավունքը, որը կարող է վտանգավոր լինել առողջության համար, խոչընդոտել երեխայի կրթությունը կամ վնասել նրա ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացումը: Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցառումներ՝ սույն հոդվածի իրականացումն ապահովելու համար:

Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին ՄԱԿ-ի 1999 թ. կոնվենցիայի 3-րդ հոդվածում սահմանված է, որ «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը» եզրույթն ընդգրկում է՝ երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը հակահրավական գործունեությամբ զբաղվելու, մասնավորապես՝ թմրանյութերի արտադրման և վաճառքի համար, ինչպես դրանք սահմանված են համապատասխան միջազգային պայմանագրերում, աշ-

խատանքը, որն իր բնույթով կամ իր կատարման պայմաններով կարող է վնասել երեխաների առողջությունը, անվտանգությունը կամ բարոյականությունը:

Մուրացկանություն ասելով պետք է հասկանալ այլ անձանցից դրամ կամ այլ նյութական արժեքներ խնդրելը:

Տուժողը, այսինքն՝ երեխան, 18 տարին չլրացած մարդն է: Մարդը համարվում է անչափահաս, եթե նույնիսկ մինչև 18 տարեկանը ձեռք է բերել քաղաքացիաիրավական լրիվ գործունակություն:

Օբյեկտիվ կողմից հանցագործությունը դրսևորվում է ակտիվ գործողություններում, որոնք ուղղված են տասնութ տարին լրացած անձի կողմից երեխային մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելուն, եթե բացակայում են ՀՀ քր. օր-ի 132[2]-րդ հոդվածով (Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը) նախատեսված հանցագործության հատկանիշները:

Երեխային մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը դրսևորվում է չափահասի կողմից երեխային համոզելով, խոստումներ տալով, խաբեությամբ, բռնությամբ (տես ՀՀ քր. օր-ի 132[2]-րդ հոդվածի մեկնաբանությունը):

ՀՀ քր. օր-ի 166[1]-րդ հոդվածով նախատեսված հանցակազմն իր բնույթով մոտ է ՀՀ քր. օր-ի 132[2]-րդ հոդվածին: Նշված հանցակազմերը միմյանցից կարելի է տարբերակել հանցագործության օբյեկտով և սուբյեկտիվ կողմերով: Եթե երեխան ներգրավվել է մուրացկանության հետ կապված գործողությունների մեջ, որն իրականացվում է շահագործման նպատակով, ապա արարքը պետք է որակել ՀՀ քր. օր-ի 132[2]-րդ հոդվածով: Ընդ որում, արարքը ՀՀ քր. օր-ի 132[2]-րդ հոդվածով որակելու համար որևէ նշանակություն չունի հակահիրավական եղանակի կիրառությունը:

Երեխայի կողմից ոչ արժեքավոր առարկաներ (նկարներ, կախազարդ) վաճառելու եղանակով գումարներ խնդրելը չի համարվում մուրացկանություն: Եթե ծնողը անչափահաս երեխայի մասնակցությամբ (երեխային կողքը նստեցնելով, գրկելով) անձամբ է զբաղվում մուրացկանությամբ, ապա նրա արարքում բացակայում է մուրացկանության մեջ ներգրավելու հանցակազմը: Այսպես, եթե երեխային մուրացկանության մեջ ներգրավելու նպատակը մուրաց-

կանության արդյունքում ձեռք բերված գումարները ստանալն է, ապա նման դեպքում առկա է ՀՀ քր. օր-ի 132[2]-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներ:

Օրինակ՝ ոմն Գ-ն գիշերելու համար կացարան էր տրամադրել իր հետ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող Լ.-ի որդու երկու ընկերներին, որոնք լքել էին կրթահամալիրը ու զբաղվում էին մուրացկանությամբ: Այնուհետև, երբ երեխաները դադարել էին զբաղվել մուրացկանությամբ, Գ-ն, սպառնալով վտարել նրանց կացարանից և չհոգալ կենցաղային հարցերը, երկուսին էլ պարբերաբար հարկադրել էր զբաղվել մուրացկանությամբ ու հավաքած գումարը հանձնել իրեն: Նույն եղանակով նա հավաքագրել է և այլ երեխաների, ներգրավել մուրացկանությամբ զբաղվելու մեջ և հարկադրել է վաստակած գումարները հանձնել իրեն: Նախաքննության փուլում սկզբից Գ-ին առաջադրվել էր մեղադրանք մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն երկու և ավելի անձանց ներգրավելու համար: Հետագայում՝ մինչդատական փուլում, այդ մեղադրանքը փոփոխվել էր: Հանցավորը դատապարտվել է տասնութ տարին չլրացած երկու կամ ավելի անձանց հարկադիր աշխատանքի մեջ դնելու կամ պահելու համար (հանցագործությունը կատարելու ժամանակ ՀՀ քր. օր-ի 132[1]-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով):

<u>Ըստ կառուցվածքի՝ հանցակազմը ձևական է</u> և ավարտված է համարվում երեխային մուրացկանության հետ կապված գործողությունների մեջ ներգրավելու պահից: Արարքը որպես ավարտված հանցագործություն որակելու համար որևէ նշանակություն չունի, թե անչափահասը արդյոք փաստացի կատարել է վերը նշված արարքները, թե՝ ոչ: Անչափահասի կողմից մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելը չի ազդում արարքի իրավաբանական որակման վրա:

Սուբյեկտիվ կողմից հանցագործությունը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Անձը գիտակցում է, որ անչափահասին ներգրավում է մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելու մեջ և ցանկանում է հասնել այդ արդյունքին:

Անձը ՀՀ քր. օր-ի 166[1]-րդ հոդվածով ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե չի գիտակցել, որ իր գործողություններով մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելու

մեջ ներգրավում է անչափահասին, կամ չի գիտակցել, որ անձը անչափահաս է:

Հանցագործության սուբյեկտը 18 տարին լրացած, ֆիզիկական մեղսունակ անձն է:

Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է նույն արարքը, որը կատարվել է ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն:

Հիշյալ դրույթն այս հատվածում չի մեկնաբանվում, քանի որ հիմնական հասկացությունները բացահայտվել են ՀՀ քր. օր-ի 166-րդ հոդվածի 2-րդ մասի մեկնաբանությունում:

Մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասում որպես արարքը առավել ծանրացնող հանգամանքներ սահմանված են նույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները (երեխային մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը, եթե բացակայում են ՀՀ քր. օր-ի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները), որոնք՝

1) կատարվել են երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով:

3.3.3. Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը և ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով ծնողի կողմից երեխայի վաճառքը (ՀՀ քր. օր-ի 168-րդ հոդված)

ՀՈԴՎԱԾ 168. ԽՆԱՄՔԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԵԽԱՅԻ ԱՌՔԸ ԵՎ ՍՏԱՆՁՆՈՂԻ ԽՆԱՄՔԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԾՆՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԵԽԱՅԻ ՎԱՃԱՌՔԸ

1. Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը և ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով ծնողի կողմից երեխայի վաճառքը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

2) երկու կամ ավելի երեխաների նկատմամբ,

3) ՀՀ պետական սահմանը հատելով անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով,

4) կեղծ որդեգրում կատարելու միջոցով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

ՀՀ քր. օր-ի 168-րդ հոդվածով նախատեսված է քրեական պատասխանատվություն երեխայի առևտրի այն դեպքերի համար, երբ երեխայի առքը կատարվել է նրա խնամքը ստանձնելու նպատակով, իսկ ծնողի կողմից երեխայի վաճառքը կատարվել է նրա խնամքը ստանձնողին հանձնելու նպատակով:

Դիսպոզիցիան կառուցված է այնպես, որ հանցավոր է ինչպես երեխայի գնորդի, այնպես էլ երեխային վաճառողի վարքագիծը:

Հանցագործության հիմնական անմիջական օբյեկտը կազմում են այն հասարակական հարաբերությունները, որոնք երաշխավորում են երեխայի ազատությունը և նրա անձնական իրավունքների իրացումը:

Հանցագործությունից տուժող կարող է հանդիսանալ հանցագործության կատարման պահին 18 տարին չլրացած՝ ծնողի կողմից վաճառված և այլ անձի կողմից գնված յուրաքանչյուր անձ:

Օբյեկտիվ կողմից հանցագործությունը բնութագրվում է գործողություններով, որոնք կատարվում են մի կողմից՝ երեխայի գնորդի, իսկ մյուս կողմից՝ երեխային վաճառողի միջև: Երեխայի գնորդն իր ակտիվ գործողություններով վճարի (նյութական հատուցման) դիմաց «ձեռք է բերում» երեխայի: Երեխային վաճառողն իր ակտիվ գործողություններով վճարի (նյութական հատուցման) դիմաց երեխային հանձնում է գնորդին:

«Գործարքի» կողմերից յուրաքանչյուրը պատասխանատու է իր գործողությունների համար: Այդպիսի գործարքում երեխայի նկատմամբ իրականացվում են գույքային շրջանառությանը բնորոշ գործողություններ, երբ երեխայի առքին ու վաճառքին կարող են նախորդել գնելու կամ վաճառելու առաջարկը, պայմանների քննար-

կումները և բանակցությունները, տարաձայնությունների հարթումը, համաձայնությունների ձեռքբերումը: Արդյունքում ձևավորվում, հստակեցվում և որոշվում են գործարքի առարկան, պայմանները, կատարման ժամանակը (իսկ տարաժամկետ վճարման (հատուցման) դեպքում՝ ժամկետները) և այլ մանրամասներ (օրինակ՝ երեխայի հանձնման և ընդունման ձևը և այլն):

«Գործարքը» հատուցելի է: Հատուցման եղանակը չի ազդում արարքի որակման վրա: Այն կարող է արտահայտվել նյութական հատուցման ցանկացած եղանակով՝ դրամական միջոցներ, բնահրային պաշարներ, զարդեր և այլն: Պարտքի մարումը երեխայի դիմաց նույնպես հատուցելի գործարք է:

Հանցակազմը ձևական է. հանցագործությունը համարվում է ավարտված երեխայի առքն ու վաճառքը իրականացնելու պահից:

Սուբյեկտիվ կողմից հանցագործությունը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Երեխային վաճառող ծնողը գիտակցում է իր գործողությունների հանրային վտանգավորությունը, մասնավորապես այն, որ իր երեխային վաճառելով՝ ոտնձգություն է կատարում ընտանիքի շահերի, երեխայի ազատության և անձնական իրավունքների իրացման դեմ: Պետք է, սակայն, հաշվի առնել, որ փոխհատուցման պայմանով ընդմիշտ հանձնելով իր երեխային այլ անձի խնամքին՝ ծնողը, իր կարծիքով, դա կատարում է ի նպաստ երեխայի՝ նրա համար իր տրամադրածից ավելի բարվոք պայմաններ ստեղծելու նպատակով: Գնորդն իր հերթին գիտակցում է, որ փոխհատուցում տալով՝ ընդմիշտ ստանձնում է երեխայի խնամքը և ստանում նրան խնամակալելու, դաստիարակելու հնարավորություն և իրավունք:

Արարքը ճիշտ որակելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր քրեական գործով, առանձին-առանձին, պարզել ծնողի և խնամքը ստանձնողի իրական շարժառիթներն ու նպատակները:

Երեխային գնելու համար խնամքը ստանձնողի շարժառիթ տվյալ հանցագործության տեսանկյունից կարող է հանդիսանալ, օրինակ, երեխա ունենալու ցանկությունը կամ անբարենապաստ պայմաններում ապրող կամ վատ ծնողների խնամքի տակ գտնվող երեխային փրկելու ձգտումը կամ երեխայի շահերից բխող այլ նպատակներ: Եթե երեխան գնվում է հետագայում վերավաճառելու կամ գնորդի այլ՝ նեղ շահադիտական նպատակներով (օրինակ՝ պետությունից կամ այլ կառույցներից օգնություն ստանալու, երե-

խային մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելու կամ ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով շահագործման նպատակով), ապա նրա արարքը պետք է որակել ՀՀ քր. օր-ի 132^2-րդ հոդվածով:

Իր երեխային վաճառող ծնողի արարքի նկատմամբ պետք է ցուցաբերել նույն մոտեցումը: Շարժառիթները նույնպես պետք է լինեն «ի շահ երեխայի»՝ նրան ավելի բարենպաստ պայմաններ տրամադրելուն: Իսկ երբ հղիության ընթացքում ծնողի հետ ձեռք է բերվում համաձայնություն՝ «ի շահ երեխայի» ապագա երեխային վաճառելու վերաբերյալ, ապա որակման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների բացակայության դեպքում արարքը պետք է որակել ՀՀ քր. օր-ի 35-րդ և 168-րդ հոդվածներով՝ որպես հանցագործության նախապատրաստություն: Սակայն եթե ծնողն օգտվում է երեխայի նկատմամբ իր իրավունքներից կամ հնարավորություններից ու շահ ստանալու, այլ ոչ թե երեխայի բարօրությունը ապահովելու համար է վաճառում նրան, ապա պետք է քննարկել այդ արարքը ՀՀ քր. օր-ի 132^2-րդ հոդվածով որակելու հարցը: Երեխայի նկատմամբ թրաֆիքինգ պետք է որակել նաև այն դեպքերը, երբ ծնողը ի սկզբանե, կանխամտախված հղիանում և երեխա է ծննդաբերում վաճառելու նպատակով:

Եթե երեխան վաճառվում է ծնողի նկատմամբ կիրառված հարկադրանքի որևէ եղանակի ազդեցության ներքո, ապա արարքը պետք է որակել ՀՀ քր. օր-ի 132^2-րդ հոդվածով: Այս դեպքում ծնողը նույնպես հանդիսանում է հանցագործությունից տուժող:

Հանցագործության սուբյեկտային կազմը. Այս հանցագործությունը բնութագրվում է ընդհանուր և հատուկ սուբյեկտային կազմով: Երեխայի վաճառք իրականացնող անձը բնութագրվում է որպես հատուկ սուբյեկտ, քանի որ այդ դերում, ըստ հոդվածի դիսպոզիցիայի, կարող է հանդես գալ վաճառվող երեխայի ծնողը: Երեխայի առք իրականացնող անձը բնութագրվում է որպես ընդհանուր սուբյեկտ: Երկու դեպքում էլ հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

Մեկնաբանվող հոդվածի 2-րդ մասում որպես արարքը ծանրացնող հանգամանքներ սահմանված են խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը և ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով ծնողի կողմից երեխայի վաճառքը (եթե բացակայում են ՀՀ

քր. օր-ի օրենսգրքի 132[2]-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները), որը կատարվել է՝

1) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

2) երկու կամ ավելի երեխաների նկատմամբ,

3) ՀՀ պետական սահմանը հատելով անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով,

4) կեղծ որդեգրում կատարելու միջոցով:

Գլուխ 4. Թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերի քննության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում

4.1. Թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերի քննության առանձնահատկությունները

Նախաքննության կազմակերպման առումով պետք է նկատի ունենալ, որ նշված հանցագործության մասին զոհի/ տուժողի հայրենիքում հայտնում են հիմնականում նրա ազգականները, հետևաբար անհրաժեշտ է պարզել որոշակի հանգամանքներ, որոնք վերաբերում են տուժողի տեղափոխմանն ու ներկայումս գտնվելու վայրի հարցին:

Նախաքննության սկզբնական փուլում ապացուցման ենթակա հիմնական հանգամանքներն են՝

1. տուժողի և նրա ենթադրյալ հավաքագրողի շփումների փաստը,

2. տուժողի կողմից իր բնակության երկրի սահմանը հատելու փաստը,

3. տուժողին այլ մարզ տեղափոխելու (կամ հարկադրաբար փոխադրելու) և այնտեղ շահագործելու փաստը,

4. տուժողի՝ այլ երկրում կամ մարզում գտնվելու փաստը, ուր նա փոխադրվել էր հավաքագրումից կամ առևանգումից հետո, և որտեղ նրան շահագործել են կամ պահել են շահագործման վիճակում կամ դրել այդ վիճակի մեջ:

Հարազատներից նշված հաղորդման ստացման դեպքում պետք է ստույգ պարզել, թե որտեղ է գտնվում առևանգված կամ հավա-

քագրված անձը, իրականացնել օպերատիվ-հետախուզական համալիր միջոցառումներ, ստանալ թրաֆիքինգի փաստացի ապացույցներ, դրանք օգտագործել որպես հիմք՝ քրեական գործ հարուցելու համար:

Թրաֆիքինգի և անձի շահագործման մասին հաղորդումները կարող են ստացվել նաև ոչ կառավարական, հասարակական կազմակերպության կողմից, ուր փախուստից հետո դիմել է հավաքագրված կամ առևանգված անձը կամ նրա մերձավորները: Տվյալ իրավիճակում, հասարակական կազմակերպության աշխատակիցների օգնությունը կարող է օգտագործվել՝ քննություն իրականացնողի և տուժողի հետ փոխվստահության հարաբերություններ ստեղծելու համար: Հասարակական կազմակերպության հաղորդումը մասամբ ազատում է տուժողին ժամանակավորապես ապաստանելու խնդրից, հատկապես՝ տվյալ տարածաշրջանում զոհերի համար պետական ապաստարանի բացակայության դեպքում, սակայն չի բացառում իրավապահ մարմինների կողմից տուժողի և հասարակական կազմակերպության աշխատակիցների նկատմամբ անվտանգության միջոցների կիրառումը:

Հավաքագրման և փոխադրման փուլերում թրաֆիքինգը ճանաչելը գործնականորեն շատ բարդ է, իսկ եթե նույնիսկ արձանագրվող գործողություններում պարունակվում են կասկածելի նշաններ, ապա հանցավոր գործունեության ապացուցողական բազան չափազանց աննշան է: Թրաֆիքինգի զոհերի մեծամասնությունը պատկերացում չունի նպատակակետ երկրում (եզակի բացառություններով) իրեն սպասվող փորձությունների մասին: Ընդ որում, հարկ է նշել, որ թրաֆիքինգ իրականացնողներն արդյունավետ քննության համար իրապես խոցելի են դառնում միայն նպատակակետ երկրում կամ այն տարածաշրջանում, որտեղ տեղի է ունենում մարդկանց անմիջական շահագործումը:

Քրեական իրավիճակի նշանների հայտնաբերման ընթացքում նախնական (ահազանգային) տեղեկությունների աղբյուր են դառնում տուժողը, նրա ազգականները կամ ծանոթները: Այդ պատճառով թրաֆիքինգի գործերով նախաքննության համար ընդունված են աշխատանքի նկատմամբ երկու մոտեցումներ՝ նախաքննություն զոհից կամ նրա ազգականներից ստացված տեղեկությունների հիման վրա և նախաքննություն օպերատիվ-հետախուզական գոր-

ծունեության արդյունքում ստացված տվյալների հիման վրա:[39]

Հանցավոր գործունեության մեխանիզմի նշանների հայտնաբերման հիմնական ուղղություններն են՝

ա) մարդու կամ հոնորարի շուրջ կոնֆլիկտների մասին փաստերի հայտնաբերում օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում,

բ) մարդու անհետացման մասին պաշտոնական հաղորդումներով ստուգման նյութերի բովանդակության վերլուծություն,

գ) թրաֆիքինգի փաստի մասին տուժողների և հասարակության ներկայացուցիչների պաշտոնական հայտարարություններին արձագանքում,

դ) մարդկանց թրաֆիքինգի և հարկադիր աշխատանքի օգտագործման մասին թաքնված գովազդի նշաններ հայտնաբերելու նպատակով մասնավոր անձանց և կազմակերպությունների գովազդային գործունեության վերլուծություն,

ե) գիշերային ակումբներում և այլ հնարավոր թաքստոցներում կամ հարկադիր աշխատանքի օգտագործման հավանական վայրերում ստուգայցերի անցկացում:

Հարկադիր աշխատանքի օգտագործման և պոռնկությամբ զբաղվելու մեջ ներգրավելու հետ կապված հանցավոր գործունեության նշանների հայտնաբերումը կարող է տեղի ունենալ նաև խառը հանցակազմերի բացահայտման ընթացքում:

Թրաֆիքինգի և մարդկանց շահագործման հնարավոր նշանների մասին տեղեկությունների բնորոշ աղբյուրներ են՝

ա) գովազդային հայտարարությունները (ամսագրեր, թերթեր, համացանց և այլն), որոնք «շահավետ պայմաններով» աշխատանք են առաջարկում արտերկրում՝ չնշելով աշխատանքի բնույթը, կամ որոնք նշում են, թե այդ աշխատանքը հատուկ որակավորում կամ հմտություններ չի պահանջում,

բ) սաունաներում, մերսման սրահներում, զվարճանքի ակումբներում և նման այլ վայրերում ազատ ժամանցի անցկացման ապահովման վերաբերյալ կասկածելի ծառայությունների մատուցման

---

[39] Մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցագործությունների քննությունը: Մեթոդական Ձեռնարկ, ՀՀ ոստիկանություն: Երևան, 2010, էջ 15:

մասին հայտարարությունները,

գ) դեսպանատների կամ հյուպատոսարանների վիզաների բաժնի, ինչպես նաև զբոսաշրջությամբ և արտերկրում աշխատանքի տեղավորմամբ զբաղվող կազմակերպությունների կամ գործակալությունների տվյալների շտեմարանները,

դ) վերոնշյալ ընկերությունների, դեսպանատների և հյուպատոսարանների ներկայացուցիչները,

ե) սաունաների, մերսման սրահների, հյուրանոցների, բարերի, ակումբների, գովազդային գործակալությունների, աշխատանքի տեղավորման, անշարժ գույքի գործակալությունների ներկայացուցիչները, նավահանգիստների և օդուղիների աշխատակիցները,

զ) ոչ կառավարական, հասարակական կազմակերպությունների աշխատակիցները, ում դիմում են թրաֆիքինգի զոհերը կամ նրանց ազգականները,

է) այլ անձինք, ովքեր իրենց աշխատանքի բնույթով կամ պատահաբար ստացել են տեղեկություններ նշված փաստերի մասին, օրինակ՝ միգրացիոն ծառայության աշխատակիցները, ովքեր աշխատում են օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց հետ:

Տիպային քննչական իրավիճակների կառուցվածքում անհրաժեշտ է առանձնացնել տեղեկատվական տարրերի երեք խումբ. առաջինը՝ զոհի մասին տեղեկատվություն, որի կառուցվածքում կարելի է առանձնացնել հետևյալ իրավիճակները՝ զոհի գտնվելու վայրը հայտնի է, զոհի գտնվելու վայրը անհայտ է, հայտնի՞ են արդյոք բոլոր զոհերը: Երկրորդ տեղեկատվությունը կապված է քննվող դեպքի հետ, որի մեջ ընդգրկվում են հետևյալ իրավիճակները՝ արդյոք քննվող հանցագործությունը միանվագ բնույթ ունի, թե՞ իրենից ներկայացնում է թրաֆիքինգի շղթա, եթե հանցագործությունը թրաֆիքինգի շղթա է, ապա արդյոք այն դադարել է, թե շարունակվում է, այն ներքի՞ն է, թե՞ անդրազգային, հանցագործությունների կատարման եղանակը և այլն: Երրորդ խումբը ներառում է հանցագործության դեպքին առնչվող անձանց, մասնավորապես՝ հայտնի՞ են արդյոք հանցավոր խմբի բոլոր անդամները, ինչպես նաև այն պաշտոնատար անձինք, ովքեր կարող են առնչություն ունենալ դեպքին, հայտնի՞ է արդյոք հանցակիցներից յուրաքանչյուրի դերակատարությունը քննվող հանցագործության մեջ, տեղեկություններ կա՞ն նրանց կողմից այլ նմանատիպ հանցագործութ-

յուններ կատարելու մասին, թե՝ ոչ[40]:

ՀՀ քննչական պրակտիկայում երեխաներին շահագործման նպատակով մուրացկանության մեջ ներգրավելը որակվում է որպես թրաֆիքինգ: ՀՀ իրավապահ մարմինները, հիմք ընդունելով «Երեխայի աշխատանքային վատթարագույն ձևերի մասին» ԱՄԿ կոնվենցիայի դրույթները, ՀՀ քր. օր-ի 166-րդ հոդվածով նախատեսված անչափահասների՝ մուրացկանության և պոռնկագրական նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելը՝ շահագործման նպատակի առկայության դեպքում, դիտվում է որպես թրաֆիքինգ:

Այդ նպատակով ուսումնասիրվել են նաև թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում միջազգային իրավական փաստաթղթերը, մասնավորապես՝ 2000 թ. Պալերմոյի արձանագրությունը, որի համաձայն՝ անչափահասներին շահագործման մեջ ներգրավելը, անկախ անչափահասի համաձայնությանից, դիտվում է որպես թրաֆիքինգ:

Անչափահասներին շահագործման նպատակով մուրացկանության մեջ ներգրավելը թրաֆիքինգի ինքնուրույն ձև է: Մինչդեռ, մինչև ՀՀ քր. օր-ի բարեփոխումները, ՀՀ քրեական օրենսդրությամբ երեխաներին մուրացկանության մեջ ներգրավելու հանցակազմը հատուկ նորմով ամրագրված էր ոչ թե ՀՀ քր. օր-ի 132-րդ և 132[1]-րդ[41] հոդվածներով, այլ 166-րդ հոդվածով:

Այսպես՝ Գարիկ Հովհաննիսյանը 2007 թ. մայիս ամսին ծանոթացել է իր հետ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող Լիանուշ Միրզոյանի որդու՝ Վ. Ի.-ի ընկերներ՝ Վարդաշենի թիվ 1 հատուկ կրթահամալիրի սաներ, 1995 թ. ծնված, Ա. Հ.-ի և Ա. Հ-ի հետ և տեղեկանալով, որ վերջիններս լքել են կրթահամալիրը և զբաղվում են մուրացկանությամբ, գիշերելու համար նրանց տրամադրել է Երևան քաղաքի Շիրակի փող. 2ա շենքի՝ Լ. Միրզոյանին պատկանող թիվ 727 հանրակացարանային սենյակը:

Այնուհետև, 2008 թ. մայիսի վերջերին, երբ Ա. Հ.-ն և Ա. Հ.-ն հրաժարվել են զբաղվել մուրացկանությամբ, Գ. Հովհաննիսյանը վերջիններիս սպառնացել է վտարել բնակարանից և չհոգալ նրանց կենցաղային հարցերը, ապա՝ Ա. Հ-ին և Ա. Հ-ին ներգրավել է հակահասարակական գործողություններում և մինչև 2008 թ. հուլիս ա-

---

[40] Մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցագործությունների քննությունը: Մեթոդական Ձեռնարկ, ՀՀ ոստիկանություն: Եր., 2010, էջ 17:

[41] Այս հոդվածը ուժը կորցրել է 2011թ.-ի մարտի 1-ի օրենքի ուժով:

միսն ընկած ժամանակահատվածը նրանց պարբերաբար հարկադրել է Երևան քաղաքի Աբովյան, Ամիրյան, և Սայաթ-Նովա փողոցներում զբաղվել մուրացկանությամբ և հավաքած գումարը հանձնել իրեն:

Դեպքի առթիվ 12.07.2008 թ. Էրեբունու քննչական բաժնում ՀՀ քր. օր-ի 166 հոդ. 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 12113608 քրեական գործը:

12.07.2008 թ. Գ. Հովհաննիսյանը ձերբակալվել է, 15.07.2008 թ. նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր-ի 166 հոդ-ի 3-րդ մասի 1-ին կետով, որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը: Սակայն ՀՀ գլխավոր դատախազության կողմից ցուցում է տրվել արարքը վերաորակել ՀՀ քր. օր-ի 132^1-րդ հոդվածի 2-րդ մասով: Ցուցումը կատարվել է, և քրեական գործն այդ մեղադրանքով ուղարկվել է դատարան: Դատարանը Գ. Հովհաննիսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քր. օր-ի 132^1-րդ հոդվածի 2-րդ մասով:

Մարդկանց շահագործումը քրեագետների կողմից գնահատվում է ամենաեկամտաբեր հանցավոր գործունեություններից մեկը: Այս հանցագործության կատարման եղանակով ստացված եկամուտները շատ դեպքերում փորձ է արվում օրինականացնել, մասնավորապես թաքցնել այդ եկամուտների իրական աղբյուրները: Այս իմաստով, թրաֆիքինգը սերտորեն կապված է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման հանցակազմի հետ: Պատահական չէ, որ մարդկանց շահագործելու հանցակազմերը (ՀՀ քր. օր-ի 132-րդ և 132^1-րդ հոդվածներ) ՀՀ քր. օր-ի 190-րդ հոդվածի 5-րդ մասում դիտվում են որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացմանը նախորդող հանցակազմեր: Թերևս ասվածով է պայմանավորված այն պրակտիկայի ձևավորումը, երբ ՀՀ քր. օր-ի 132-րդ և 132^2-րդ հոդվածներով հարուցված քրեական գործերով նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների կողմից՝ մարդկանց շահագործման ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման ողջամիտ կասկածի առկայության պարագայում պետք է տրվեն ցուցումներ ՀՀ քր. օր-ի 190-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշների առկայության ուղղությամբ քննություն կատարելու վերաբերյալ:

4.2. Թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերով առանձին քննչական գործողությունների մարտավարությունը

Տվյալ կատեգորիայի քրեական գործերով քննչական գործողությունների անցկացման մարտավարության առանձնահատկությունները կապված են ինչպես հանցավոր գործունեության կոնկրետ մեխանիզմի, այնպես էլ քրեական գործի հարուցման և քրեական իրավիճակի հայտնաբերման հնարավոր հանգամանքների հետ: Վերջին հաշվով, առանձին քննչական գործողության մարտավարությունը կախված է օպերատիվ-քննչական խմբի աշխատանքի այն մեթոդական սխեմայից, որն առավել նպատակահարմար է՝ հանցավոր գործունեության փաստերի ամբողջական հայտնաբերման և ամրագրման տեսանկյունից:

Քննության հիմնական նպատակը հանցագործության կատարման հետ կապված բոլոր փաստացի հանգամանքների պարզումն է և բոլոր մասնակիցների հայտնաբերումը, ինչպես նաև կասկածյալների կողմից հանցավոր գործունեության նոր դրվագների բացահայտումը:

Մեթոդական տեսանկյունից քննության մեջ շեշտադրումները պետք է կատարվեն տուժողների պաշտպանության և անվտանգության վրա: Տվյալ հանցագործությունների դեմ պայքարի համաշխարհային պրակտիկան ընթանում է տուժողի առավելագույն պաշտպանության ուղիով, այդ թվում՝ նրան քաղաքացիություն շնորհելով և առանձին դեպքերում քրեական պատասխանատվությունից ազատելով, օրինակ՝ ապօրինի սահմանանցման, հրավերի ստացման ժամանակ խաբեության համար և այլն:

Տվյալ հանցագործությունների քննության մեկ այլ առանձնահատկություն է սկզբնաղբյուր, տարանցիկ և նպատակակետ երկրների միջև միջազգային համագործակցության անհրաժեշտությունը: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է օգտագործել օրենսդրության բոլոր առկա նորմերը մեղավորներին քրեական, վարչական կամ քաղաքացիաիրավական պատասխանատվության ենթարկելու համար:

Քննչական գործողությունները նպատակահարմար է անցկացնել տեսագրությունների և ձայնագրությունների օգտագործմամբ, ինչը թույլ է տալիս ոչ միայն լրացուցիչ հաստատել նախորդ ցուցմունքները, այլև ստանալ ձայների նմուշներ ֆոնոսկոպիկ փոր-

ձաքննության անցկացման համար: Դա հնարավոր է դառնում այն դեպքերում, երբ քննությունն իր տրամադրության տակ ունի հեռախոսային խոսակցությունների ձայնագրություններ կամ տարբեր իրադրություններում (ավտոմեքենայի մեջ, փողոցում, շինության ներսում և այլն) գործող անձանց խոսակցությունների որսման արդյունքներ: Քննության սկզբնական փուլում տեսագրությունների և ձայնագրությունների օգտագործման անհրաժեշտությունը պայմանավորված է այն բանով, որ որոշ դեպքերում կասկածյալները հրաժարվում են տրամադրել ձայնի նմուշներ՝ համեմատական հետազոտության համար:

Շինությունների և տեղանքի հատվածների զննության մարտավարությունը: Տվյալ կարգի քրեական գործերի քննության ընթացքում զննության առարկա հանդիսացող շինությունների և տեղանքի հատվածների թվին են դասվում տարբեր տեսակի թաքստոցները, որոնք օգտագործվում են հանցավոր գործունեության սուբյեկտների կողմից թրաֆիքինգի զոհերին ժամանակավորապես պահելու համար, օրինակ՝ նրանց տեղափոխման կամ շահագործման փուլերում:

Զննության հնարավոր օբյեկտների թվին կարելի է դասել հետևյալները.

- տեղանքի հատվածները՝ դրանց վրա գտնվող վրաններով, քողտիկներով կամ գետնատներով, որտեղ ժամանակավորապես պահվում կամ պահվել են զոհերը,
- ձեռնարկությունների, ֆերմերային տնտեսությունների կազմակերպությունների տարածքներում գտնվող ոչ բնակելի շինությունները, որտեղ պահվել կամ շահագործվել են տուժողները,
- «ժամանցի կենտրոնների» շինությունները, մասնավոր բաղնիքները, սաունաները, գիշերային ակումբները, հյուրանոցները:

Հաճախ որպես նման «կենտրոնների» տարածքներ կարող են հանդիսանալ բնակելի շենքերի բնակարանները կամ տները: Բացի պահպանությունից՝ բնակարանները հաճախ հագեցված են լինում տեսադիտման միջոցներով, ինչը հարկ է հաշվի առնել նման զննման օբյեկտներ մուտք գործելիս:

Տվյալ քննչական գործողությունը կարող է անցկացվել քննության ինչպես սկզբնական, այնպես էլ հաջորդ փուլերում: Ընդ որում՝ հարկ է հաշվի առնել տվյալ քննչական գործողության երկակի ուղղվածությունը: Խոսքը մարտավարական իրավիճակների երկու

հնարավոր տեսակների մասին է՝ կախված զննության հիմնական և լրացուցիչ նպատակներից.

ա) զննության անցկացում օբյեկտում տուժողների հայտնաբերման, նրանց ազատման, ինչպես նաև նրանց շահագործման և (կամ) պահման հետքերի ամրագրման նպատակով,

բ) զննություն տուժողների մատնանշած վայրում թաքստոցի հայտնաբերման նպատակով, ինչպես նաև մարդկանց պահելու համար դրա օգտագործման հետքերի ամրագրման նպատակով:

Տարբեր ոչ պետական կազմակերպություններին պատկանող տարածքների և շինությունների զննությունն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ նշված տարածքներն ունեն պահպանություն, որը կարող է խոչընդոտներ ստեղծել օպերատիվ-քննչական խմբի համար՝ նշված տարածք մուտք գործելու ժամանակ:

Տվյալ կատեգորիայի քրեական գործերով շինությունների և տեղանքի հատվածների զննությունը թույլ է տալիս հայտնաբերել և արձանագրել առևանգված կամ հավաքագրված անձի՝ թաքստոցում գտնվելու վերաբերյալ տարբեր տեսակի հետքեր: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է մատնահետքերի, մարդկանց օրգանիզմի արտազատումների, առարկաների, իրերի, գրությունների և նշումների հայտնաբերմանը, որոնց մասին հայտնել է տուժողը:

Առավել մանրամասն զննության համար անհրաժեշտ է սկզբում մանրակրկիտ հարցաքննել տուժողին: Դա կօգնի հայտնաբերելու նրան պատկանող իրերը, նրա թողած նշանները, ինչպես նաև արձանագրելու տուժողի կողմից իր ցուցմունքում նկարագրած իրավիճակը:

Զննության կարևորագույն նպատակն է հետևյալ հանգամանքների հայտնաբերումը և ամրագրումը.

ա) մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի ապրելու (պահվելու) կամ շահագործման պայմանները (պահման կամ շահագործման շինությունների դիրքը, չափերը, պատուհանների և քնելու տեղերի առկայությունը, նկուղի կահավորանքը, սենյակները, գետնաթաքստոցները, լողասենյակը, զուգարանը և այլն),

բ) հավաքագրման ընթացքում տուժողին խոստացված կենցաղային տարրական հարմարությունների բացակայություն,

գ) շահագործման ընթացքում տուժողների կողմից օգտագործված աշխատանքի պարզագույն, հնարավոր է՝ նաև անարդյունա-

վետ գործիքներ,

դ) առևանգված կամ հավաքագրված անձանց շղթայման, խոշ-տանգման և աշխատանքի հարկադրման միջոցներ (ձեռնաշղթա, շղթաներ, պարաններ և այլն),

ե) արյան, սերմնահեղուկի, օգտագործված պահպանակների և պոռնկությամբ զբաղվելու այլ հետքեր,

զ) պատառոտված հագուստ, անձնական իրեր, ինչպես նաև տուժողների կողմից գաղտնի կատարված գրառումներ,

է) հանցավոր գործունեության կազմակերպիչների և նրանց հանցակիցների կողմից կատարված հաշվարկների գրառումներ, ո-րոնք արտացոլում են նրանց մասնակցությունը տուժողների թրա-ֆիքինգի կամ շահագործման կազմակերպմանը և նրանց տեղա-փոխմանը, փոխանցմանը, ստացմանը կամ թաքցմանը,

ը) մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման մեջ կասկած-յալների բջջային հեռախոսները[42]:

Ի տարբերություն հանցավոր գործունեության սուբյեկտների կողմից տուժողների հավաքագրման, թաքցման և շահագործման համար օգտագործվող փոքր շինությունների զննության՝ տուժող-ների փոխադրման համար օգտագործվող տրանսպորտային մի-ջոցների, ինչպես նաև նրանց պահման և շահագործման համար օգտագործվող տեղանքի հատվածների (գյուղատնտեսական բույ-սերի մշակման շրջաններ, ֆերմերային տնտեսություններ, կազմա-կերպությունների, ձեռնարկությունների տարածքներ) զննության մարտավարությունն ունի իր կազմակերպչական առանձնահատ-կությունները:

Տեղափոխման նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցի (ավտոմեքենայի կամ վագոնի) զննությանը, որպես կանոն, նախորդում է դրա կանգնեցումը: Մարդկանցով բեռնված ավտոմե-քենայի կանգնեցման ժամանակ պետք է վթարի հավանականութ-յունը հասցնել նվազագույնի: Անհրաժեշտ է նաև գաղտնարանում կամ կեղծված փաստաթղթերի օգտագործմամբ տուժողների տե-ղափոխում իրականացնող, օրինակ, անօրինական միգրանտների թվում թրաֆիքինգի տուժողներ փոխադրող և մաքսանենգ ճանա-պարհով պետական սահմանը հատող ավտոմեքենայի կանգնեց-

[42] Մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցագործությունների քննությունը Մեթոդական Ձեռնարկ, ՀՀ ոստիկանություն: Եր., 2010, էջ20:

ման ժամանակ զենք կիրառել միայն ամենածայրահեղ դեպքում: Բացառված չէ այն հավանականությունը, որ զննության ընթացքում կարող է առաջանալ բժշկական օգնություն ցուցաբերելու անհրաժեշտություն:

Գյուղատնտեսական կուլտուրաների մշակման տարածքների, ֆերմերային տնտեսությունների զննությունը, ուսումնասիրվող մակերեսի մեծության պատճառով, կարող է պահանջել իրավապահ մարմինների մեծ թվով աշխատակիցների ներգրավում: Ընդ որում, օտարերկրյա քաղաքացի հանդիսացող զոհերից շատերը, որոնք չեն ցանկանում հանդես գալ որպես տուժող, կարող են փորձել թաքնվել կամ փախուստի դիմել զննության վայրից: Տվյալ հանգամանքը պահանջում է զննվող տարածքի շրջափակում:

Շինությունների և տեղանքի հատվածների զննությունը պետք է իրականացվի տեսագրության կամ լուսանկարահանման միջոցների օգտագործմամբ: Ճիշտ կազմված ֆոտոաղյուսակը, որի վրա պետք է ամրագրվեն արձանագրության մեջ շարադրված կահավորանքի, իրաղրության բոլոր տարրերը, զննության արձանագրության տեսողական հավելվածն է: Ֆոտոաղյուսակը կարելի է օգտագործել վկաների և կասկածյալների (մեղադրյալների) հարցաքննության ընթացքում, ինչպես նաև գործածել տեղում ցուցմունքների ստուգումը պլանավորելու ընթացքում:

Քննման մարտավարությունը: Մարդկանց թրաֆիքինգի և նրանց հարկադիր աշխատանքի օգտագործման զոհերը պետք է քննվեն՝ առաջնահերթ պահպանելով նրանց իրավունքներն ու ազատությունները: Անցկացված հետազոտման արդյունքները թույլ են տալիս արձանագրել զոհի վիճակը, ինչը կապված է շահագործումը և աշխատանքի հարկադրումը ապացուցելու անհրաժեշտության հետ: Հաշվի առնելով, որ հարկադրանքին հասնելիս կիրառվում են ծաղրանքների, ծեծի, խոշտանգման և բռնության այլ ձևեր, քննման արդյունքները հանդիսանում են քրեական գործի մասնակիցների հանցավոր գործունեությունն ապացուցող ակնառու փաստեր:

Քննման ընթացքում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել զոհի մարմնի վրա քերծվածքների, կապտուկների, սպիների, այլ մարմնական վնասվածքների առկայությանը և պարզել դրանց առաջացման մեխանիզմն ու ծանրության աստիճանը: Հարկ է հատուկ ուշադրություն դարձնել դաստակներին և ոտնակո-

ճերին կապանքների հնարավոր հետքերին, ինչպես նաև տուժողի ճիչերը կանխելու նպատակով դեմքին, պարանոցին, մազերին կպչուն ժապավենի կամ այլ նյութի օգտագործման հետքերի հայտնաբերմանը և արձանագրմանը:

Եթե տուժողն ինքուրույն է դիմել բժշկական օգնության, ապա հարկ է պարզել.

ա) երբ և որ բժշկական հիմնարկ է դիմել,

բ) ինչպիսի փաստաթղթավորում է ստացել նրա դիմումը,

գ) բուժկանխարգելիչ կամ բուժական հիմնարկի որ աշխատակցի հետ է շփվել տուժողը,

դ) ինչպիսի բուժում է խորհուրդ տրվել տուժողին[43]:

Նշված հանգամանքները պետք է անպայման ստուգվեն պարզված բուժկանխարգելիչ կամ բուժական հիմնարկներում բժշկական կից փաստաթղթերի (գրանցման թերթիկ, քարտ, հիվանդության պատմություն և այլն) հետագա ուսումնասիրմամբ: Հետագայում այն բուժաշխատողները և սպասարկող անձնակազմը, ովքեր շփվել են տուժողների հետ, պետք է հարցաքննվեն: Հարկ է հաշվի առնել, որ տուժողի դիմելու վերաբերյալ փաստացի գրառումների բացակայության դեպքում բուժաշխատողների ցուցմունքները կարող են լինել օգնության դիմելու պահին տուժողի ֆիզիկական և հոգեկան վիճակի միակ ապացույցը:

Տվյալ քննչական գործողությունը պետք է անցկացնել՝ նկատի ունենալով հետքերի ամբողջ հնարավոր ցանկը, որ հնարավոր է հայտնաբերել:

Նման հետքերի թվին են դասվում՝

- առևանգված կամ հավաքագրված անձի նյարդային և ֆիզիկական հյուծման հետքերը,

- բռնության, խոշտանգումների, պատիժների հետքերը, որոնց ենթարկվել է առևանգված կամ հավաքագրված անձը անազատության մեջ պահվելու, տեղափոխման և նրա հարկադիր աշխատանքի օգտագործման ընթացքում,

- ներարկումների հետքերը՝ որպես թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի օգտագործման արդյունք՝ տուժողի կամքը կոտրելու համար,

- առևանգված կամ հավաքագրված անձին որոշակի ֆիզիկա-

[43] Մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցագործությունների քննությունը: Մեթոդական Ձեռնարկ, ՀՀ ոստիկանություն: Եր., 2010, էջ 26:

կան աշխատանքի և դրա հետ կապված գործընթացների մեջ օգտագործելու հետքերը,

- անդամախեղության հետքերը, որին դիմել է առևանգված կամ հավաքագրված անձը՝ շահագործումից խուսափելու համար:

Մեղադրական եզրակացությունների ձևակերպման համար շատ կարևոր է, որ տուժողի ցուցմունքները համապատասխանեն նրա մարմնի վրա առկա հետքերի բնույթին, իսկ դատական փորձաքննության արդյունքների հիման վրա տրված եզրակացությունը՝ բացատրի հետազոտման ընթացքում պարզված հետքերի ծագումը:

Դա թույլ կտա քննության արդյունքներով ձևավորել ապացուցողական կապեր հետևյալների միջև.

- շինության զննության կամ խուզարկության ընթացքում հայտնաբերված տուժողի «հարկադրանքի միջոցների», նրա ցուցմունքների և նրա մարմնի ու հագուստի վրայի հետքերի,

- հայտնաբերված «աշխատանքի միջոցների», տուժողի մարմնի ու հագուստի վրայի հետքերի և որոշակի աշխատանքային գործողությունների բնույթի և բովանդակության մասին տուժողի տված ցուցմունքների:

Հարցաքննության մարտավարությունը: Տվյալ կարգի քրեական գործերի քննության ընթացքում, հատկապես տուժողների մեծ թվի և մի քանի կասկածյալների առկայության դեպքում, նպատակահարմար է հարցաքննություններն անցկացնել օպերատիվ-քննչական խմբի կազմում ընդգրկված քննիչներից և օպերատիվ աշխատակիցներից կազմված երկու ենթախմբերով:

Կասկածյալների և տուժողների հարցաքննությունների կազմակերպումը և անցկացումը տարբեր աշխատակիցների կողմից ամենից առաջ նպատակահարմար է նրանով, որ թրաֆիքինգի գործերով քննությունը բավականին աշխատատար է, որն ընդգրկում է քրեական գործի շրջանակներում մեծ թվով մասնակիցների (տուժողների, վկաների, կասկածյալների և այլն): Երկու ենթախմբերը, որոնք աշխատում են միաժամանակ և միմյանց հետ սերտորեն փոխկապակցված, թույլ են տալիս օգտագործել տուժողների կողմից տրամադրված յուրաքանչյուր ապացույց կասկածյալների հարցաքննությունների ժամանակ: Ուստի քննության արդյունավետության համար անհրաժեշտ պայման է օպերատիվ նյութերի իրացման սկզբից նեթ գործառույթների ներքին բաշխմամբ օպերատիվ-քննչական խմբի ստեղծումը:

Տուժողների հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է մանրակրկիտ կերպով պատրաստվել նրանց հարցաքննությանը: Հոգեբանական տեսանկյունից անհրաժեշտ է հնարավորինս նախատեսել նրանց հետագա վարքի բոլոր հնարավոր տարբերակները: Անհրաժեշտ է ազատված կամ բռնված զոհերին բացատրել իրենց իրավունքները և պարտականությունները: Պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ երաշխավորվում է զոհերին վարկաբեկող տեղեկությունների չհրապարակումը և նրանց պաշտպանությունը: Բռնված զոհերին պետք է բացատրել նաև անօրինական գործողությունների համար պատասխանատվությունից նրանց ազատելու հնարավորության մասին, օրինակ՝ նրանց կողմից ապօրինի սահմանանցման, պոռնկությամբ զբաղվելու, առանց գրանցման բնակվելու և այլն: Շեշտադրումը պետք է կատարվի հարցաքննվողի կողմից հանցավոր խմբի կազմակերպիչների և ակտիվ անդամների բացահայտման գործում քննության հետ համագործակցելու վրա: Թրաֆիքինգի զոհերի հարցաքննության ընդհանուր պայմանները նման են այլ հանցագործություններով հարցաքննության պայմաններին, երբ տուժողը ենթարկվել է ֆիզիկական կամ հոգեբանական բռնության: Առաջին հերթին, անթույլատրելի է քննիչի ձևական մոտեցումը գործին կամ տուժողի հարցաքննությանը: Տվյալ քննչական գործողության անցկացման ժամանակ չափազանց կարևոր է շրջակա միջավայրը: Հարցաքննության պայմանները ոչ միայն պետք է հարցաքննվողին մղեն համագործակցելու քննիչի հետ, այլև ապահովեն նրա լիարժեք վստահությունը: Որքան ավելի հարմարավետ լինեն հարցաքննության պայմանները և քննիչի հետ հաղորդակցվելու մթնոլորտը, այնքան ավելի մեծ է խոստովանական ցուցմունքներ և հանցավոր գործունեության մեխանիզմի մասին մանրամասն տեղեկություններ ստանալու հավանականությունը:

Ի սկզբանե հարցաքննությունը պետք է միտված լինի հանցավոր գործունեության հետքերի թաքցմանն ուղղված գործողությունների երեք փուլերից յուրաքանչյուրի վերաբերյալ հանցավոր արարքի նախապատրաստման և իրականացման միջոցի մասին, զոհի վարկածների հիմնական կետերի բացահայտմանը՝

ա) հավաքագրում և արտահանում,

բ) տեղափոխում և փոխանցում,

գ) ընդունում և շահագործում:

Հարցաքննությանը նախապատրաստվելու գործընթացում անհրաժեշտ է որոշել կոնկրետ հարցերը, որոնք առնչվում են հարցաքննվող անձի տեղեկացվածությանը հանցավոր գործունեության մեխանիզմի բաղկացուցիչ մասերի մասին.

1. աշխատանքի տեղավորվելու հնարավորության գովազդի տեխնոլոգիան,
2. զոհերի հավաքագրման ընթացակարգը,
3. զոհերին թաքցնելու և շահագործելու նպատակով շինություն փնտրելու ուղիները, այդ թվում՝ շինության վարձակալման սխեման,
4. թրաֆիքինգի զոհերի տեղափոխման (փոխադրման) եղանակները,
5. հանցավոր գործունեության մասնակիցների կապի եղանակները,
6. գովազդի ֆինանսավորման, թրաֆիքինգի զոհերի հավաքագրման, փոխադրման և թաքցման ընթացակարգը,
7. թրաֆիքինգի օգտագործման զոհերի անմիջական շահագործումը[44]:

Նշված ուղղությունների շրջանակներում էլ պետք է վարել զոհի կամ վկաների հարցաքննությունը: Դա թույլ կտա ոչ միայն ստանալ մեծ քանակությամբ փաստացի տվյալներ, այլև կնպաստի նոր վկաների հայտնաբերմանը:

Տուժողների և կատարողների հարցաքննության ընթացքում պարզվում է զոհի նկատմամբ ֆիզիկական և հոգեբանական բռնության տեսակը: Այնպիսի հանցավոր գործողություններ, ինչպիսիք են՝ մարդու առևանգումը, ազատությունից ապօրինի զրկելը, հարկադիր աշխատանքի օգտագործումը, անօրինական որդեգրումը, պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը, պոռնկությամբ զբաղվելու կազմակերպումը, անչափահասների՝ պոռնոգրաֆիկ պատկերներով նյութերի կամ առարկաների պատրաստումը և շրջանառությունը, ֆիզիկական բռնությունը և զոհին ու նրա ընտանիքին սպանելու սպառնալիքը և առողջության, սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված այլ հանցագործություններ, որպես կանոն, կապված են հարկադրանքի և բռնության հետ: Դրանք կարիք ունեն քրեադատավարական ամրագր-

[44] Մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցագործությունների քննությունը: Մեթոդական Ձեռնարկ, ՀՀ ոստիկանություն: Եր., 2010, էջ 28.:

ման, այդ թվում՝ հարցաքննության ընթացքում:

Թրաֆիքինգում ներգրավվածությունը զգալի ազդեցություն է ունենում զոհի վրա: Կարևոր է տուժողից ստանալ ցուցմունքներ շահագործման մանրամասների մասին: Լրացուցիչ հոգեբանական տրավմայից խուսափելու նպատակով, կրկնվող հարցաքննությունների ընթացքում հարկ չկա բազմիցս ուշադրությունը սևեռել բռնության և զոհի նվաստացումների տեսարանների վրա:

Հարցաքննության ընթացքում պետք է արտացոլվեն զոհի ցուցմունքները կասկածյալների (մեղադրյալների) կողմից հանցավոր գործողություններով հասցված ֆիզիկական և հոգեբանական վնասների կապակցությամբ: Դրանց մեջ մտնում են բռնության, խաբեության, ստրկացման և շահագործման նկատմամբ տուժող կողմի ռեակցիան: Բացի դրանից՝ անհրաժեշտ է շեշտադրել և պարզել.

1. ինչպես են վաճառքը, շահագործումը և նրա հետ կատարված այլ գործողություններն ազդել տուժողի կյանքի որակի վրա նրա փախուստից, փրկագնումից, ազատումից հետո,

2. որքան է տուժողի՝ իր և իր մտերիմների համար մտավախության աստիճանը,

3. արդյոք թրաֆիքինգի իրադարձություններն ազդել են տուժողի՝ դրանից հետո ազատ ապրելու կարողության վրա, փոխվել է արդյոք տուժողի սեփական արժանապատվության և լիարժեքության զգացումը:

Այս կապակցությամբ օպերատիվ-քննչական խմբի անդամների վարքագիծը պետք է նպաստի զոհերի կողմից լրացուցիչ ապացուցողական տեղեկությունների տրամադրմանը՝ թրաֆիքինգով զբաղվողների և այն անձանց մասին, ովքեր անմիջապես իրականացրել են նրանց շահագործումը:

Հարկ է հաշվի առնել նաև, որ զոհերը սովորաբար անհանգստացած են շահագործման հետ կապված իրենց անձնական կյանքի՝ ՁԼՄ-ներով հրապարակմամբ: Ցավոք, քրեական թեմաներով առանձին հեռուստահաղորդումների բարոյաէթիկական կողմերը շատ հեռու են գոհացուցիչ լինելուց: Օրինակ, ինչպե՞ս կարելի է գնահատել սեռական շահագործման փաստին վերաբերող ռեպորտաժը, որտեղ հանցագործը մնում է կադրից դուրս, իսկ տուժողի անձը լիովին ներկայացվում է՝ այն էլ մանրամասներով: Ուստի հրապարակման վտանգը կարող է բացասաբար ազդել տուժողնե-

րի խոստովանական ցուցմունքների վրա:

Թրաֆիքինգի զոհերը դասվում են մարդկանց այն կատեգորիային, ովքեր անվստահությամբ, երբեմն էլ թշնամաբար են տրամադրված իշխանությունների ներկայացուցիչների հանդեպ: Դա հնարավոր է հատկապես այն դեպքում, երբ զոհը, գտնվելով արտերկրում, հանդիպել է ոստիկանների, հյուպատոսական և միգրացիոն ծառայությունների անտարբեր վերաբերմունքին: Դա պետք է հաշվի առնել նաև հարցաքննության նախապատրաստման սկզբնական փուլում: Անհրաժեշտ է լրացուցիչ ջանքեր ձեռնարկել փոխըմբռնման հաստատման համար: Վստահության ձեռքբերման համար նախաքննության ամբողջ ընթացքում կարևոր է, որ քննիչը հարցաքննվողի հետ ազնիվ լինի:

Տուժողների առաջին հարցաքննությանը նախապատրաստվելու գործընթացում հարկ է նկատի ունենալ մի շարք հանգամանքներ, որոնք պետք է պարզվեն առաջին հերթին: Օրինակ, որպես պոռնիկի՝ շահագործված կնոջ հարցաքննության դեպքում հարկավոր է առաջին հերթին պարզել, թե տուժողը ինքնակա՞մ, խաբեությա՞մբ, թե՞ հարկադրանքով է հայտնվել արտասահմանում կամ մեկ այլ տարածաշրջանում: Պետք է նկատի ունենալ, որ օրինակ՝ արտասահման ինքնակամ մեկնելը չի բացառում խաբեությամբ նման գործողությունների կատարումը հավաքագրողի կողմից, որը ներկայանում է որպես օրինապահ գործատուի ներկայացուցիչ: Եթե մեկնումը տեղի է ունեցել հարկադրանքով, ապա անհրաժեշտ է պարզել, թե որն է եղել հարկադրանքի միջոցը.

- ֆիզիկական ուժի, սպառնալիքների օգտագործումը,

-հանցավոր գործունեության սուբյեկտի նկատմամբ տուժողի պարտքային պարտավորություններ ունենալը և այլն[45]:

Հարցաքննության սկզբնական փուլում անհրաժեշտ է պարզել տուժողի տեղեկացվածության աստիճանն արտերկիր կամ մեկ այլ տարածաշրջան մեկնելու իրական նպատակի մասին, անհրաժեշտ է մանրամասնել հավաքագրողի և փոխադրողի կողմից տուժողին բառացի ներկայացրած մեկնման հիմնավորումը և դրա հետ կապված այլ հարցեր:

Եթե տուժողների առաջին հարցաքննության ժամանակ պարզ-

[45] Смирнов, Г. К. Методика расследования торговли людьми. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2008. С. 29.

վի, որ նրանց ձեռքի տակ դեռևս կան արտասահմանյան անձնագրեր, այլ փաստաթղթեր կամ առարկաներ, որոնք կարող են օգտագործվել որպես կասկածյալների մեղավորության ապացույցներ, ապա պետք է դրանք առգրավել և կցել քրեական գործին՝ որպես իրեղեն ապացույցներ:

Սեռական շահագործման զոհ դարձած կանանց հարցաքննության ժամանակ անհրաժեշտ է պարզել հետևյալը.

1. որտե՞ղ և ինչպիսի՞ հանգամանքներում են նրանք հանդիպել իրենց արտասահման ուղարկելը կազմակերպողներին,

2. ուրիշ ո՞ւմ հետ են նրանք հանդիպել այդ առիթով, ինչպիսի՞ առաջարկներ են նրանց արվել՝ իրենց ապագա աշխատանքի, պայմանների և վարձատրության առնչությամբ,

3. եղե՞լ է արդյոք պայմանավորվածություն պոռնկության մեջ ներգրավվելու կամ սեռական բնույթի այլ ծառայություններ մատուցելու մասին, եթե այո՝ ապա ինչպիսի պայմաններով,

4. ի վերջո, ինչպիսի՞ համաձայնություն է ձեռք բերվել, ներառյալ աշխատանքի տեղավորման միջնորդների ծառայությունների վարձատրության, ուղևորությունների տոմսերի, փաստաթղթերի և այլնի դիմաց վճարման հարցը,

5. ինչպե՞ս է որոշվել արտերկիր մեկնելու համար պահանջվող փաստաթղթերի ստացման հարցը, ո՞վ է զբաղվել այդ հարցով, գործին առնչվող ինչպիսի՞ տեղեկությունների կարող են տիրապետել այդ անձինք,

6. ինչպիսի՞ հանգամանքներում է իրականացվել արտերկիր կամ այլ տարածաշրջան ուղարկելը, ինչպե՞ս է տեղի ունեցել պետական սահմանի հատումը (ժամանակը, վայրը, այլ հանգամանքներ), ո՞վ է ուղեկցել տուժողներին, ուղեկցողը շփվե՞լ է արդյոք սահմանային ծառայության աշխատակիցների հետ, ի՞նչ պայմաններում և հանգամանքներում,

7. ի՞նչ է տեղի ունեցել արտերկիր նրանց ժամանելուց հետո. ո՞ր երկիր և ո՞ր բնակավայր են նրանք ժամանել, ո՞վ է նրանց դիմավորել, ինչպե՞ս է լուծվել նրանց աշխատանքի հարցը, նրանց առաջարկե՞լ են արդյոք անմիջապես զբաղվել պոռնկությամբ կամ այլ գործունեությամբ, ինչպիսի՞ բացատրություններ է տվել նրանց նոր «տերը», վերջինս հղում կատարե՞լ է իր և հանցագործության կազմակերպչի (կազմակերպիչների) միջև գոյություն ունեցող համաձայնությանը դեռևս նախքան տուժողների մեկնելը նպատակակետ

երկիր,

8. ինպե՞ս է լուծվել ժամանման երկրում տուժողների գտնվելն օրինականացնող փաստաթղթերի և գրանցման հարցը, ինչպիսի՞ն էին «աշխատանքի» պայմանները,

9. տուժողները հրաժարվե՞լ են արդյոք պոռնկությամբ զբաղվելուց կամ սեռական բնույթի ծառայություններ մատուցելուց, եթե այո՛, ապա ինչպես են նրանց հարկադրել դա անել,

10. նպատակակետ երկրում տուժողները դիմե՞լ են իրավապահ մարմիններին կամ իշխանությունների այլ ներկայացուցիչներին, իրենց պետության դիվանագիտական ներկայացուցչությանը, եթե ո՛չ, ապա ինչու,

11. ի՞նչ է նրանց հայտնի հանցավոր խմբի անդամների մասին, ուրիշ ո՞ւմ հետ են նրանք շփվել նկարագրվող դեպքերի ժամանակ (հավաքագրողներ, փոխադրողներ, լուսանկարիչներ, միգրացիոն ծառայությունների ներկայացուցիչներ և այլն),

12. ի՞նչ է հայտնի տուժողներին մյուս անձանց մասին, ովքե՞ր նրանց հետ հայտնվել են արտերկրում՝ համանման հանգամանքներում:

Եթե քննության ընթացքում պարզվի, որ վաճառված անձանց համար դրամը փոխանցվել է բանկային համակարգերի միջոցով կամ վճարման տարբեր համակարգերի օգտագործմամբ, ապա այդ գործողություններին մասնակցած ընկերությունների աշխատակիցներին ևս պետք է հարցաքննել որպես վկաների: Նշված անձանց հարցաքննության ընթացքում հարկ է ոչ միայն հաստատել հանցավոր գործունեության սուբյեկտների կողմից դրամի փոխանցման կամ ստացման փաստը, այլև հարցաքննել նշված վկաներին՝ պարզելու նրանց հիշողության մեջ տպավորված հագամանքները, հաճախորդի նշանները, այն անձանց քանակը և արտաքին նշանները, ովքեր դրամական միջոցները վճարողի կամ ստացողի հետ էին:

Կասկածյալների հարցաքննության ընթացքում հարցաքննվողի հետ հոգեբանական կապ (կոնտակտ) հաստատելը պակաս կարևոր չէ, քան տուժողների և վկաների հարցաքննության ընթացքում:

Եթե հարցաքննության պահին նախաքննության մարմնի տրամադրության տակ առկա է բավարար ապացուցողական բազա, որը մերկացնում է կասկածյալին հանցագործության կատարման մեջ,

ապա հարցաքննության ընթացքը կառուցվում է առկա ապացույցներով հարցաքննվողի մերկացման սխեմայով: Տվյալ իրավիճակում պետք է կասկածյալին հասկացնել, որ անկախ ցուցմունքներ տալու, ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ սուտ ցուցմունքներ տալով քննությանը խոչընդոտելու իր որոշումից, եզրակացություն է արվել նրա գործողություններում հանցակազմի հատկանիշների առկայության մասին, իսկ քրեական պատասխանատվության ենթարկելն անխուսափելի փաստ է:

Եթե հարցաքննվողը մտնում է շփման մեջ, ապա, հաշվի առնելով, որ թրաֆիքինգով զբաղվողները հիմնականում կազմակերպված հանցավոր խմբավորման անդամներ են, հարկավոր է ուշադրություն դարձնել այդ խմբավորման բոլոր անդամների բացահայտմանը և մերկացմանը, ովքեր մասնակցել են հանցագործության կատարմանը տարբեր փուլերում: Այդ նպատակով անհրաժեշտ է պարզել ամեն ինչ՝ սկսած անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման ընթացակարգից մինչև պետական սահմանը հատելու կամ նպատակակետ երկիր հասնելու պահը:

Կասկածյալներին պետք է հարցաքննել մանրակրկիտ կերպով պատրաստվելուց հետո՝ ելնելով հանցավոր խմբի յուրաքանչյուր անդամի՝ հանցավոր գործունեության՝ նրանց վերագրվող դրվագներում մասնակցության բնույթի և աստիճանի մասին առկա տվյալներից: Հարցաքննությանը պատրաստվելիս անհրաժեշտ է նկատի ունենալ տուժողների և մեղադրող կողմի վկաների արդեն առկա ցուցմունքները, ինչպես նաև հաշվի առնել հարցաքննվողի հոգեբանական վիճակը: Այդ իմաստով հանցավոր խմբի անդամների միջև հակասության (կոնֆլիկտի) հրահրման մասին հանձնարարականները լիովին արդարացված են՝ հանցավոր գործունեության սուբյեկտների պառակտիչ դիրքորոշումներ առաջացնելու և մեղքը համախոհների վրա «գցելու» նրանց ձգտումները խթանելու համար:

Առաջին հերթին, հարկավոր է հարցաքննել այն անձանց,

- ովքեր հանցավոր խմբում կատարել են շարքային, «տեխնիկական» պարտականություններ,
- ովքեր եղել են հավաքագրողներ, սուրհանդակներ, փոխադրողներ, ուղեկցողներ և այլն,
- ում փաստաթղթերի օգտագործմամբ վարձվել է բնակարան կամ վարձակալվել այլ շինություն (տարածք),

- ովքեր հանցավոր խմբում կատարել են առաքիչի (դիսպետչերի), վարորդի կամ պահապանի գործառույթներ:

Եթե կասկածյալները խոստովանում են իրենց մասնակցությունը հանցագործության կատարմանը, ապա առաջին հարցաքննության ժամանակ հարկավոր է մանրամասն պարզել հետևյալը.

1. Ե՞րբ, որտե՞ղ, ո՞ւմ հետ, ինչպիսի՞ հանգամանքներում է ձեռք բերվել համաձայնություն մարդկանց վաճառքի և (կամ) շահագործման մասին:

2. Ի՞նչ պայմաններում է պայմանավորվածություն ձեռք բերվել տուժողների տեղաշարժի մասին արտասահման, ո՞վ է վճարել նպատակակետ երկրում ապրելու ծախսերը, և ո՞վ է կատարել վճարումը՝ ստացված «կենդանի ապրանքի» համար:

3. Ո՞ւմ կողմից, ե՞րբ և ինչպե՞ս են հաստատվել շփումներ գնորդների, օրինակ, արտասահմանյան «գործընկերների» հետ, ինչպե՞ս է կատարվել վճարումը մատակարարված «կենդանի ապրանքի» համար:

4. Ե՞րբ, որտե՞ղ, ո՞ւմ կողմից և ինչպե՞ս են հավաքագրել ապագա զոհերին, աշխատանքի տեղավորելու ինչպիսի՞ փաստարկներ են օգտագործվել հավաքագրման ընթացքում:

5. Ո՞ւմ կողմից է հիմնվել «աշխատանքի տեղավորման գործակալությունը», կամ ո՞վ է կեղծել փաստաթղթերը՝ տուժողներին մոլորության մեջ գցելու համար:

6. Ինչպե՞ս են «կենդանի ապրանքը» ուղարկել արտերկիր: Այս առումով անհրաժեշտ է պարզել ամեն ինչ, սկսած անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումից (ով է դրանք ձևակերպել, ինչպիսի հանգամանքներում. եթե նշված փաստաթղթերը կեղծ են, ապա կոնկրետ ով և ինչ պայմաններով է դրանք պատրաստել), վերջացրած ծագման երկրի պետական սահմանը հատելու պահով (ժամանակը, վայրը, կերպը. եթե սահմանի հատումը եղել է ապօրինի, ապա ում օգնությամբ, ինչ պայմաններով և այլն):

7. Ինչպե՞ս է կատարվել զոհերին «աշխատանքի տեղավորելը» արտասահմանում (ով, երբ և որտեղ է նրանց դիմավորել, որտեղ և որպես ինչ են «աշխատել» զոհերը, ինչ են նրանց հայտնվել նպատակակետ երկրում նրանց հետագա գտնվելու պայմանների մասին):

8. Ովքե՞ր են եղել հանցավոր խմբի կազմում, և ինչպե՞ս են

բաշխվել դերերը դրա անդամների միջև[46]:

Առերեսման մարտավարությունը: Կասկածյալների, տուժողների և վկաների ցուցմունքների միջև էական հակասությունների առկայության դեպքում քննիչը պարտավոր է նրանց միջև անցկացնել առերեսումներ: Առանձին դեպքերում հարկավոր է առերեսումից առաջ հանցավոր գործունեության սուբյեկտներին ներկայացնել իրար՝ ճանաչման նպատակով: Հաշվի առնելով, որ տուժողները բավական հաճախ են շփվել կասկածյալների հետ և լավ են ճանաչում նրանց, ճանաչման նպատակով ներկայացնելը կարող է և չպահանջվել:

Առերեսման ընթացքում պետք է ուշադրություն դարձնել, որ մասնակիցները չշփվեն միմյանց հետ՝ քննիչի կողմից անցկացվող քննչական գործողության պլանի շրջանակներից դուրս: Հարկավոր է առերեսման մասնակիցների միջև բացառել ցանկացած խոսակցություն կամ տեղեկությունների փոխանակման այլ եղանակ, որը չի նախաձեռնվել քննիչի կողմից:

Առերեսման ժամանակ տուժողների և կասկածյալների ցուցմունքների հաստատման կամ հերքման նպատակով անհրաժեշտ է անհապաղ պարզել և հարցաքննել այն անձանց, ում մասին նրանք նշում են իրենց ցուցմունքներում:

Բացի հարցաքննվող անձանց ցուցմունքների հակասությունները վերացնելուց՝ առերեսումը կարող է օգնել լուծելու մեկ այլ կարևոր խնդիր: Խոսքն այն վկաների և կասկածյալների վրա դրական ներգործություն ունենալու մասին է, ովքեր թաքցնում են իրենց հայտնի հանգամանքները կամ կեղծում իրենց ցուցմունքները:

Մեթոդապես ճիշտ է առերեսումներ անցկացնել այն անձանց միջև, ում գործողությունները թրաֆիքինգի սխեմայում համատեղ են կամ փոխկապակցված: Օրինակ՝ նման անձանց թվին են դասվում.

1. տուժողը և հանցավոր սխեմայի մասնակիցը, ում հետ տուժողը բախվել է ուղևորության և (կամ) շահագործման ընթացքում,
2. հավաքագրողը և փոխադրողը,
3. փոխադրողը և գնորդը (կամ թաքցնողը),
4. հավաքագրողը և հանցակիցը, ով ձևակերպել է փաստաթղթե-

[46] Фахрутдинов Р. Р. Методика расследования торговли людьми. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Челябинск, 2011. С. 26.

ը, դրամ տվել ճանապարհի համար և զոհերին ուղարկել արտերկիր,

5. հավաքագրման, փոխադրման կազմակերպիչը և այն անձը, ով զբաղվել է անմիջական շահագործմամբ (գնորդը),

6. պահապանը, վարորդը և այն անձինք, ում շահի համար նրանք աշխատել են թրաֆիքինգի սխեմայի շրջանակներում:

Ճանաչման ներկայացնելու մարտավարությունը: Ճանաչման ներկայացնելու ընթացքում որպես ճանաչող անձինք կարող են հանդես գալ ոչ միայն տուժողները, այլև հանցավոր գործունեության երկրորդական մասնակիցներից որևէ մեկը, օրինակ՝

ա) «ժամանցի» կենտրոնի պահապանները, ովքեր լավ տեղեկացված են կենտրոնի գործունեության բնույթի և դրա աշխատանքը ղեկավարող անձանց մասին,

բ) վարորդը, ով պոռնիկներին ցրում է «կետերում» և առանձին դեպքերում՝ պատվիրատուներից ստանում դրամ ու փոխանցում մարդկանց շահագործողներին կամ այլ անձանց,

գ) առաքիչը (դիսպետչերը), ով ստանում է պատվերները և ծառայում որպես կապող օղակ շահագործման կազմակերպչի, վարորդի և, օրինակ, պոռնիկների միջև:

Տարբեր սուբյեկտներին նշված անձանց՝ ճանաչման ներկայացնելու շնորհիվ հնարավորություն է ստեղծվում ճշտել գործող անձանց դերը հանցավոր գործունեության մեխանիզմում, պարզել այն տուժողներին, ովքեր, «կողմնորոշվելով» բարդ իրադրության մեջ, դարձել են կասկածյալների (մեղադրյալների) փաստացի հանցակիցները: Այդ դեպքում, ճանաչման ներկայացնելուց հետո, հարկավոր է անցկացնել ճանաչման ենթակա անձի և «ճանաչողի» առերեսում:

Տվյալ կարգի քրեական գործերով ճանաչման ներկայացնելն ունի երկու մարտավարական առանձնահատկություն, որոնք բխում են հանցավոր գործունեության քննվող մեխանիզմի յուրահատկություններից: Վկաների և տուժողների անվտանգության տեսակետից, ինչպես նաև ճանաչողի վրա հոգեբանական ազդեցությունը կանխելու նպատակով ճիշտ կլինի տվյալ քննչական գործողությունն անցկացնել տեսողական դիտարկումից դուրս: Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ հանցավոր գործունեության որոշ կատեգորիաների մասնակիցներ, օրինակ՝ առաքիչները, կարող են հիմնական գործող անձանց հետ տեսողական շփում ունեցած չլի-

նել և վերջիններիս հետ հաղորդակցված լինել միայն հեռախոսով: Այդ նկատառումով, հարկավոր է ներկայացնել նրանց՝ ձայնով ճանաչման նպատակով: Ներկայացնելու այս տեսակը պահանջում է ոչ միայն ճանաչողի նախնական մանրակրկիտ հարցաքննություն, այլև, հնարավոր է, տարբեր անձանց ձայներն ընկալելու նրա ունակության և լսելով (այդ թվում՝ հեռախոսով) զանազանելու կարողության քննչական փորձարարության անցկացում:

4.3. Քննչական և օպերատիվ մարմինների համագործակցության կազմակերպումը թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործերով

Քրեական գործով նախաքննության զուգորդումը օպերատիվ միջոցառումներով իրականացվում է օպերատիվ և քննչական ստորաբաժանումների համագործակցության շրջանակներում: Նման համագործակցության իրավական հիմքը կազմում են ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը, միջազգային իրավունքի համընդհանուր կերպով ճանաչված սկզբունքներն ու նորմերը և ՀՀ միջազգային համաձայնագրերը, ՀՀ այլ օրենքներն ու նորմատիվ իրավական ակտերը, այդ թվում՝ միջգերատեսչական և գերատեսչական նորմատիվ իրավական ակտերը:

Քննչական և օպերատիվ մարմինների համագործակցության կազմակերպումը նպատակահարմար է հանցավոր գործունեության օպերատիվ-հետախուզական փաստագրման վաղ փուլերում: Այս մոտեցումը թույլ է տալիս օպերատիվ ստորաբաժանումների աշխատակիցներին ոչ միայն օգնություն ստանալ նախաքննության մարմիններից ուսումնասիրվող դեպքի և վերջինիս մասին ստացված տեղեկատվության իրավական գնահատման գործում, այլև նշել այն հարցերի շրջանակը, որոնք վերաբերում են մարդկանց թրաֆիքինգով զբաղվողների գործունեությանը և այն անձանց, ովքեր իրականացնում են զոհերի անմիջական շահագործումը, որոշել տվյալ կատեգորիայի հանցագործների մերկացման և նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու միջոցներն ու մեթոդները:

Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների

արդյունավետ իրացման անհրաժեշտ պայմանը օպերատիվ և քննչական ստորաբաժանումների ղեկավարների կողմից աշխատանքի համատեղ պլանավորումն է: Վերլուծելով առկա տվյալները՝ անհրաժեշտ է անհապաղ լուծել քրեական գործ հարուցելու և օպերատիվ-քննչական խումբ (ՕՔԽ) ստեղծելու հարցը: Այս հարցի լուծման ժամանակ որոշվում են ՕՔԽ-ի քանակական և որակական կազմը, ավտոտրանսպորտի, կապի միջոցների ցուցակը, ձերբակալված անձանց և առգրավված իրերի տեղավորման վայրը, տուժողների ժամանակավոր ապաստանի վայրը՝ նրանց անվտանգութիւնն ապահովելու նպատակով:

ՕՔԽ-ի ղեկավարի կողմից հաստատված պլանում, որն անհրաժեշտության դեպքում ճշտվում և լրացվում է, քրեական գործի քննության սկզբնական փուլում, սահմանվում են աշխատանքի հետևյալ ուղղությունները.

- կասկածյալների ձերբակալում թրաֆիքինգի զոհերի տեղափոխման, թաքցման, փոխանցման կամ շահագործման պահին,
- փախուստի դիմած կամ այլ վայրում ազատված տուժողների պահման և շահագործման վայրի զննություն,
- թրաֆիքինգի այն զոհերի (տուժողների) բժշկական զննության անցկացում, ովքեր ազատվել են ստուգայցի, օպերատիվ զննության կամ խուզարկության արդյունքում, ինչպես նաև հայտնաբերվել են ստուգիչ գնման ընթացքում,
- լրացուցիչ վկաների և քննությանը նախկինում անհայտ տուժողների հայտնաբերում, մատնանշված անձանց հարցաքննություն,
- այն անձանց հեռախոսային խոսակցությունների գաղտնալսում և նրանց նկատմամբ հսկողության սահմանում, ովքեր չեն կալանավորվել և չեն ձերբակալվել՝ այն նկատառումներով, որ իրենց շփումներով և հեռախոսային խոսակցությունների բովանդակությամբ ի հայտ կբերեն իրենց հանցավոր կապերը, կօգնեն հաստատել վճարման ուղիները, թրաֆիքինգի զոհերի հնարավոր թաքստոցի վայրերը,
-տարբեր օբյեկտների զննություններ, խուզարկություններ, առգրավումներ,
-առկա և նոր ստացած նմուշների դատական փորձաքննությունների նշանակում,
- համագործակցություն հասարակական կազմակերպություն-

ների հետ և վկաների ու տուժողների նկատմամբ անվտանգության միջոցառումների անցկացում:

Պլանում սահմանվում են նաև քրեական գործի հարուցումից հետո օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների անցկացման առավել բարենպաստ ժամանակը, դրանց անցկացման հաջորդականությունը և ժամկետները, կատարողները, ուժերի և միջոցների հաշվարկը, քննության ապահովման կազմակերպչական և նյութական միջոցները, կապի և փոխադարձ իրազեկման համակարգի կազմակերպումը: Գնահատելով ներկայացված ապացույցները՝ քննիչը (ՕՔԽ ղեկավարը) պետք է անհապաղ լուծի զոհին տուժողի դատավարական կարգավիճակ տալու հարցը:

Օպերատիվ նյութերի իրացումը պլանավորելիս և քննության նախնական փուլի ընթացքում հարկ չէ ուշադրություն դարձնել միայն արդեն հաստատված և հարցաքննված տուժողների առքուվաճառքի կամ շահագործման հանգամանքների հաստատման վրա: Անհրաժեշտ է պլանավորել այլ զոհերի որոնողական աշխատանքներ, որոնց մասին հայտնի է դարձել հայտնաբերված և հարցաքննված տուժողներից:

Քննության ընթացքում հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն անձանց վերաբերող տեղեկությունների փնտրմանը, ովքեր ինչ-որ կերպ մասնակցել են տուժողների հավաքագրմանը, նրանց՝ այլ պետություններ ուղարկելուն (այդ թվում՝ փաստաթղթերի ստացման գործում ցուցաբերած «օգնությանը»), «աշխատանքի տեղավորմանը» և այլն, քանի որ հիմնական դեպքերում այդ անձինք նաև կազմակերպված հանցավոր խմբերի անդամներ են:

Նախաքննության ներկայացուցիչների և օպերատիվ ծառայությունների համաձայնեցված որոշմամբ օպերատիվ միջոցառումների իրականացմանը նպատակահարմար է ներգրավել ոստիկանության մարմինների հատուկ ստորաբաժանումների, ինչպես նաև, սահմանված կարգով, այլ իրավապահ մարմինների և ծառայությունների աշխատակիցներին: Վերջիններս կարող են օգտագործվել՝

- դիտարկման ընթացքում, որը նախորդում է հանցավոր գործունեության սուբյեկտների ձերբակալմանը,
- հանցագործներին ֆիզիկապես բռնելու և հսկողության տակ նրանց ուղեկցելու համար,

- խուզարկության վայրի, օպերատիվ-քննչական այլ միջոցառումների վայրերի և մասնակիցների պահպանության ապահովման նպատակներով,

- քննության սուբյեկտների, ինչպես նաև տուժողների և վկաների, այդ թվում՝ ոչ կառավարական, հասարակական կազմակերպությունների ապաստաններում պահվողների նկատմամբ պաշտպանության (պահպանության) իրականացման համար[47]:

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ մղվող պայքարի արդյունավետության գործում կարևոր, երբեմն էլ՝ հիմնարար դեր են խաղում պետությունների իրավապահ մարմինների միջազգային համագործակցությունը և այդ համագործակցության պլանավորումը:

Նշված գործունեությունը կարգավորվում է փոխադարձ իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին միջազգային ակտերով, այդ թվում՝ նաև միջպետական քրեական գործերում, ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ կարգով: Նման ակտերի թվում են կոնվենցիաները, պայմանագրերը և համաձայնագրերը, ինչպես նաև դրանց լրացնող արձանագրությունները:

Միջազգային համագործակցության համընդհանուր կերպով ընդունված չորս հիմնական ձևերն են.

- հանձնումը (էքստրադիցիա),

- գրավոր միջնորդության ներկայացումը և կատարումը իրավական փոխօգնության պայմանագրերի համաձայն՝ այնպիսի գործողությունների իրականացման նպատակով, ինչպիսիք են՝ խուզարկությունը, վկաների հարցաքննությունը, փաստացի ապացույցների ստացումը և այլն,

- մեկ իրավապահ մարմնի հարցումը մյուսին ապացուցողական փաստերի առկայության կամ այլ՝ դրանց հետ կապված հարցերի մասին՝ նախքան գրավոր պաշտոնական միջնորդություն ներկայացնելը,

- մեկ իրավապահ մարմնի հարցումները մյուսին այնպիսի օպերատիվ օգնության տրամադրման մասին, ինչպիսիք են՝ գաղտնի արտաքին դիտումը, հսկվող մատակարարումները, ձերբակալում-

[47] Մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցագործությունների քննությունը: Մեթոդական Ձեռնարկ, ՀՀ ոստիկանություն: Եր., 2010, էջ 20:

ները և այլն:

Քանի որ մարդկանց թրաֆիքինգին առնչվող քրեական գործերի քննությունը համակցված է ոչ միայն օպերատիվ-քննչական համալիր միջոցառումների անցկացմամբ, այլև այլ պետությունների իրավապահ մարմինների հետ համագործակցությամբ, ապա հենց սկզբնական փուլում հարկ է լուծել հետևյալ հարցերը.

- օպերատիվ-քննչական խմբի կազմում օտար լեզուների տիրապետող քննիչների և օպերատիվ աշխատակիցների ընդգրկում,
- քրեական գործի նախաքննության ընթացքում մեկ կամ մի քանի թարգմանիչների օգտագործում:

Քրեական գործի ապացուցողական բազայի վերջնական հաստատման համար անհրաժեշտ է, միջազգային իրավական օգնության տրամադրման պայմանագրերի հիման վրա, պլանավորել վերադարձած (կամ ազատված) թրաֆիքինգի զոհերի ցուցմունքների համեմատումը նախկին ցուցմունքների հետ, որոնք նրանք տվել էին այն երկրի իրավապահ մարմիններին դիմելիս, որտեղ ենթարկվել են շահագործման: Այս առումով հարկ է հաշվի առնել, որ նպատակակետ երկրի իրավապահ մարմինների աշխատակիցներին զոհերը կարող էին ճշմարտացիորեն պատմած լինել տվյալ երկրում գտնվելու իրական պայմանների մասին:

Նկատի ունենալով, որ իրավական օգնության տրամադրման միջազգային հանձնարարությունների կատարումը տևում է բավական երկար, անհրաժեշտ է ժամանակին պատրաստել համապատասխան հանձնարարությունները՝ դրանցում նշելով այն անձանց տվյալները, ում պետք է անպայման հարցաքննել որպես վկաների, որտեղ և ինչպիսի փաստաթղթեր պետք է առգրավել և այլն[48]:

Քննության հաջորդ փուլում պլանավորումը տեղի է ունենում մեղադրանքի ներկայացման պահի և քրեական գործը դատարան ուղարկելու կամ կասեցնելու որոշման միջև ընկած ժամանակահատվածի համար:

Մեթոդական առումով գլխավոր ուղղությունը կլինի այնպիսի լրացուցիչ փաստացի տվյալների կուտակումը, որոնք թույլ են տալիս.

ա) մերկացնել հայտնաբերված հանցագործին և մեղադրանք առաջադրել նրան,

---

[48] Մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցագործությունների քննությունը: Մեթոդական Ձեռնարկ, ՀՀ ոստիկանություն, Եր., 2010, էջ 21:

բ) լրացուցիչ մեղադրանքներ առաջադրել արդեն իսկ կալանավորված հանցագործին:

Տակտիկական առումով էական նշանակություն ունեն.

ա) մարդու թրաֆիքինգով և շահագործմամբ զբաղվող այլ անձանց հետագա ուսումնասիրությունը,

բ) շահագրգռված անձանց կողմից հակազդման չեզոքացումը,

գ) մեղադրյալների լրացուցիչ, օրինակ, կոռումպացված կապերի բացահայտումը և կատարված հանցագործությանը նրանց մեղսակցության ապացուցումը:

Գլուխ 5. Թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ գործերով օպերատիվ հետախուզական միջոցառումները Հայաստանի Հանրապետությունում

5.1. Օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը, սկզբունքները և նպատակները

Օպերատիվ-հետախուզական գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է 22.10.2007թ. ընդունված՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև մի շարք այլ օրենքներով և դրանցից բխող իրավական ակտերով:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանվում են՝ օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը, խնդիրները, սկզբունքները, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելիս նրանց իրավունքները և պարտականությունները, օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ հսկողությունը և վերահսկողությունը:

Օպերատիվ-հետախուզական գործունեություն հասկացությունը սահմանված է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով, համաձայն որի՝ օպերատիվ-հետախուզական գործունեությունը մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական ու հասարակական անվ-

տանգությունը հակահիրավական ոտնձգություններից պաշտպանելու նպատակով՝ օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացումն է:

Օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացվում է հետևյալ հիմնական սկզբունքների հիման վրա՝

1) օրինականություն,

2) մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների և օրինական շահերի պաշտպանություն և գերակայություն,

3) գործունեության բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների համակցություն,

4) օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների, աշխատանքի ձևերի, մեթոդների, ուժերի և միջոցների գաղտնապահություն,

5) օպերատիվ-հետախուզական գործունեության բազմակողմանիություն, ամբողջականություն և օբյեկտիվություն:

Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակներն են՝

1) հանցագործությունների հայտնաբերումը, բացահայտումը, կանխումը և խափանումը,

2) հանցագործությունը նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերումը,

3) քրեական պատասխանատվությունից խուսափող անձանց հետախուզումը և հայտնաբերումը, ինչպես նաև անհայտ կորած անձանց հետախուզումը,

4) վկաների, դիակի, հանցագործության հետքերի, առարկաների, իրեղեն ապացույցների և այլ իրերի, փաստաթղթերի հայտնաբերումը,

5) ազգային անվտանգության ապահովման համար անհրաժեշտ տեղեկությունների ձեռքբերումը,

6) մաքսանենգության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տրանսպորտային միջոցների ապօրինի տեղափոխման խափանումն ու բացահայտումը,

7) հարկային օրենսդրության խախտումների նախազգուշացումը, հայտնաբերումը, կանխումը և բացահայտումը,

8) քրեակատարողական հիմնարկների բնականոն գործունեության ապահովումը, քրեակատարողական հիմնարկներում նա-

խապատրաստվող հանցագործությունների նախազգուշացումը, կանխումը և բացահայտումը,

9) հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգությանն սպառնացող հանգամանքների առկայությունը, ինչպես նաև հատուկ պետական պաշտպանություն իրականացնող մարմնի կողմից՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում օպերատիվ-հետախուզական մարմիններին տրված ցուցումները, որոնք վերաբերում են հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգությանն սպառնացող հանգամանքների վերացմանը,

10) պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկություններին առնչվելու թույլտվության որոշման կայացման համար տեղեկություններ հավաքելը,

11) օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների, ինչպես նաև այդ մարմինների հետ համագործակցող կամ համագործակցած անձանց (և նրանց ընտանիքի անդամների) անվտանգությունն ապահովելու համար տեղեկություններ հավաքելը,

12) ոստիկանության կողմից օրենքով սահմանված կարգով սահմանային գոտում գտնվելու թույլտվության համար տեղեկություններ հավաքելը,

13) սահմանապահ զորքերի կողմից օրենքով սահմանված կարգով սահմանային շերտ մուտք գործելու և այնտեղ գտնվելու թույլտվության համար տեղեկություններ հավաքելը,

14) օպերատիվ-հետախուզական գործունեությանը մասնակցելու կամ դրա իրականացման հետևանքով ստացված նյութերին ծանոթանալու թույլտվության մասին որոշում ընդունելու համար տեղեկություններ հավաքելը,

15) ազգային անվտանգության մարմիններում և ոստիկանությունում, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում այլ պետական մարմիններում աշխատանքի անցնելու համար դիմում ներկայացրած անձանց ուսումնասիրելու համար տեղեկություններ հավաքելը,

16) օտարերկրյա քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան կամ կացության կարգավիճակ տալու մասին եզրակացություն

կազմելու և որոշում ընդունելու համար տեղեկություններ հավաքելը:

5.2. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ գործերով օպերատիվ-հետախուզական գործունեության առանձնահատկությունները և միջոցառումների տեսակները

Մարդկանց շահագործման, թրաֆիքինգի հանցագործության դեպքերի բացահայտման և դրան հաջորդող նախաքննության առանձնահատկությունն այն է, որ քրեական գործի հարուցումը հաճախ տեղի է ունենում օպերատիվ-հետախուզական նյութերի իրացման ընթացքում: Բարդությունը կայանում է նրանում, որ այս գործերով իրեղեն ապացույցները փաստացի կա՞մ բացակայում են, կա՞մ չափազանց դժվար է դրանց հայտնաբերումը, դժվար է նաև հանցագործության բոլոր դերակատարների և զոհերի մասնակցության ապահովումը քննության ընթացքում:

Թրաֆիքինգի դեմ պայքարի կարևորագույն նպատակն է զոհերին ազատելը, փրկելը և նրանց պաշտպանության կազմակերպելը, և օպերատիվ հետախուզական միջոցառումները որևէ կերպ չպետք է վտանգեն կամ բարդացնեն զոհերի առանց այդ էլ ծանր վիճակը:

Օպերատիվ-հետախուզական գործունեությունը պետք է իրականացվի չափազանց զգուշությամբ, օրենքով սահմանված կարգով խստորեն պահպանելով դրանց գաղտնիությունը: Այդ գործունեության առանձին միջոցառումների վաղաժամ բացահայտ դարձնելը կարող է ունենալ անդառնալի հետևանքներ՝ զոհի/տուժողի սպանություն, զոհի փոխադրում այլ վայր, որը հայտնի չէ իրավապահ մարմնին, հավաքագրման գործունեության դադարեցում, հանցագործության հետքերի ոչնչացում, հանցավոր գործունեությունը քողարկելու այլ գործողություններ և այլ հետևանքներ:

Թրաֆիքինգի կամ մարդկանց շահագործման վերաբերյալ տեղեկությունները ստուգելուն և դրանք իրացնելուն ուղղված օպերատիվ-հետախուզական միջոցառումները՝ օպերատիվ տեղեկությունների կուտակումից բացի, պետք է հետապնդեն ապացուցողական դաշտն ապահովելու նպատակ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է այդ աշխատանքները պլանավորելիս առաջնահերթությունը տալ այն միջոցառումներին, որոնց արդյունքները հետագայում

կարող են օգտագործվել նախաքննության և դատաքննության ընթացքում:

5.2.1. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում կարող են անցկացվել օպերատիվ-հետախուզական հետևյալ միջոցառումները.

1) օպերատիվ հարցում,
2) օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում,
3) համեմատական հետազոտումների նմուշների հավաքում,
4) հսկիչ գնում,
5) վերահսկելի մատակարարում և գնում,
6) իրերի և փաստաթղթերի հետազոտում,
7) արտաքին դիտում,
8) ներքին դիտում,
9) անձի նույնացում,
10) շենքերի, կառույցների, տեղանքի, շինությունների և տրանսպորտային միջոցների հետազոտում,
11) նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում,
12) հեռախոսային խոսակցությունների վերահսկում,
13) օպերատիվ ներդրում,
14) օպերատիվ փորձարարություն,
15) ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում,
16) կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում:

Օպերատիվ հարցումը կատարված, նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունների, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում պարզաբանման ենթակա այլ հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ հավաքելն է՝ իրականում կամ հավանաբար այդպիսի տեղեկատվության տիրապետող իրավաբանական և ֆիզիկական անձանց հարցեր տալու (հարցումներ անելու) և պատասխաններ ստանալու միջոցով:

Օպերատիվ տեղեկությունների ձեռքբերումը օպերատիվ-հետախուզական գործունեության խնդիրների իրականացման նպատա-

կով օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող անձանց և փաստերի վերաբերյալ տեղեկությունների հավաքումն է:

Համեմատական հետազոտությունների համար նմուշների հավաքումը համապատասխան նյութերի, առարկաների, իրերի, փաստաթղթերի և այլ նշումների հավաքումն է (ստացումն է) անհրաժեշտ համեմատություններ և ուսումնասիրություններ կատարելու համար:

Հսկիչ գնումն իրականացվում է ստանդարտացման և չափումների միասնականության ապահովման օրենսդրության և հարկային հաշվառման կանոնների պահպանումը ստուգելու, ինչպես նաև հետագա հետազոտությունների նպատակով նմուշներ ստանալու, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների իրական գների բացահայտման համար: Հսկիչ գնում միջոցառման իրականացումը թույլատրված է միայն հարկային մարմիններին:

Վերահսկելի մատակարարումը և գնումը ապրանքների և ծառայությունների շրջանառության վերահսկումն է, այդ թվում՝ ապրանքներն ու ծառայությունները գնելու կամ այդպիսիք վաճառելու միջոցով հանցագործության մասնակիցներին պարզելու նպատակով: Այն առարկաների, ապրանքների և արտադրանքի վերահսկելի մատակարարումը և գնումը, որոնց ազատ իրացումն արգելված է, կամ որոնց շրջանառությունը սահմանափակված է, իրականացվում են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի որոշման հիման վրա:

Իրերի և փաստաթղթերի հետազոտումը դրանց զննումն է, հատկանիշների և բովանդակության բացահայտումը՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց, ինչպես նաև հետազոտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց: Հետազոտման ընթացքում դրանից հետո ապահովվում է օբյեկտների և դրանց վրա եղած հետքերի պահպանությունը:

Արտաքին դիտումը, առանց բնակարանի անձեռնմխելիության խախտման, անձանց հետևելը կամ առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքի վերահսկումն է բաց տարածությունում կամ հասարակական վայրերում՝ հատուկ և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց, ինչպես նաև դիտման արդ-

յունքների ամրագրումը տեսանկարահանման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց:

Ներքին դիտումը բնակարանում հատուկ և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց անձին (անձանց) հետևելն ու առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքի վերահսկումն է, ինչպես նաև դիտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց:

Պետք է նշել, որ բնակարան հասկացությունն օգտագործվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իմաստով:

Անձի նույնացումը օպերատիվ-հետախուզական նպատակներով նրա ինքնությունը պարզելն է՝ արտաքին նշանների, մատնահետքերի և քրեագիտական այլ հետքերի հիման վրա:

Շենքերի, շինությունների, կառույցների, տեղանքի և տրանսպորտային միջոցների հետազոտումը դրանց արտաքին զննումն է, հատկանիշների և այլ տեղեկությունների բացահայտումն է՝ հատուկ և այլ տեխնիկական միջոցներով կամ առանց դրանց, ինչպես նաև հետազոտման արդյունքների ամրագրումը՝ տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց:

Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, այդ թվում՝ հեռապատճենի (ֆաքսի) վերահսկումը՝ տեխնիկական միջոցների օգտագործմամբ կամ առանց դրանց, փոխանցվող նամակների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, այդ թվում՝ դրանց բովանդակության հետազոտումն է և դրանց արդյունքների ամրագրումը, ինչպես նաև նամակը, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներն ուղարկող անձի նույնացումը նրա ձեռագրի միջոցով կամ այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Հեռախոսային խոսակցությունների վերահսկումը հատուկ և այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ իրականացվող խոսակցությունների, այդ թվում՝ ինտերնետային հեռախոսային խոսակցությունների և էլեկտրոնային հաղորդումների գաղտնի վերահսկումն է, որը նշանակում է՝

1) հեռախոսային ֆիքսված ցանցի դեպքում՝

ա) հեռախոսային խոսակցության ձայնագրումը կամ դրա բովանդակության այլ ձևով ամրագրումը,

բ) հեռախոսահամարի պարզումը,

գ) տվյալ հեռախոսահամարի բաժանորդի անհատական տվյալները, հեռախոսային խոսակցությունն սկսելու պահին և ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և տեղաշարժը պարզելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքելը և (կամ) ամրագրելը,

դ) հեռախոսային զանգի վերահասցեագրման կամ փոխանցման դեպքում այն հեռախոսի համարի պարզումը, որի վրա փոխանցվել է զանգը:

2) բջջային հեռախոսային ցանցի դեպքում՝

ա) հեռախոսային խոսակցության, ներառյալ՝ կարճ հաղորդագրությունների (sms) և ձայնային հաղորդագրությունների ձայնագրումը կամ դրանց բովանդակության այլ ձևով ամրագրումը,

բ) հեռախոսային խոսակցությունն սկսելու ամսաթիվը, սկիզբը և ավարտը, հեռախոսահամարը, տվյալ հեռախոսահամարի բաժանորդի անհատական տվյալները, հեռախոսային խոսակցությունն սկսելու պահին և ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և տեղաշարժը պարզելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքելը և (կամ) ամրագրելը.

3) ինտերնետային հաղորդակցության, այդ թվում՝ ինտերնետային հեռախոսային խոսակցությունների և ինտերնետի միջոցով փոխանցվող էլեկտրոնային հաղորդումների դեպքում հաղորդման ձայնագրումը կամ դրա բովանդակության այլ ձևով ամրագրումը, ինչպես նաև տվյալները, որոնց միջոցով կարող են պարզվել՝

ա) ինտերնետային ցանցին միանալու և ցանցից դուրս գալու աշխարհագրական վայրը, օրը, ժամը և տևողությունը, ներառյալ՝ IP (ինտերնետ պրոտոկոլի) հասցեն,

բ) ինտերնետն օգտագործողի կամ բաժանորդի անունը և անհատականացման տվյալները (user ID),

գ) հեռախոսի համարը, որով նա միանում է ընդհանուր օգտագործման հեռախոսացանցին, ինտերնետային հասցեն, ինտերնետային հեռախոսային զանգն ստացողի անունը կամ այդ անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին յուրաքանչյուր տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել նրա ինքնությունը:

Օպերատիվ ներդրումը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցների, ինչպես նաև այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց գաղտնի ներդրումն է որոշակի մարմիններում, կազմակերպություններում կամ խմբավորումներում:

Օպերատիվ փորձարարությունը որոշակի հանգամանքներում այս կամ այն իրադարձությունների կատարման հնարավորության ստուգումն է՝ օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում պարզաբանման ենթակա հանգամանքների կամ դրանց մի մասի վերարտադրության միջոցով:

Ֆինանսական տվյալների մատչելիության ապահովումը և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկումը բանկային կամ այլ ֆինանսական կազմակերպություններից բանկային և այլ տեսակի հաշիվների (ավանդների) վերաբերյալ տեղեկությունների ստացումն է, ինչպես նաև իրականացվող ֆինանսական գործարքների մշտական վերահսկումը առանց այն անձանց գիտության, որոնց վերաբերում են այդ գործարքները:

Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը ՝ որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում, կարող է իրականացվել միայն կաշառք ստանալու կամ կաշառք տալու հանցագործության բացահայտման համար՝ բացառապես կաշառք ստանալու կամ կաշառք տալու առաջարկ ստացած անձի գրավոր հայտարարության հիման վրա: Պետք է նշել, որ «կաշառք ստանալ» և «կաշառք տալ» հասկացությունները քննարկվող օրենքում օգտագործվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված իմաստով:

Տեսանկարահանումը կամ ձայնագրումը անձի բնակարանում իրականացվում է բացառապես դատարանի որոշմամբ:

Օպերատիվ - հետախուզական գործունեության արդյունքները, որոնք ձեռք են բերվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, հանդիսանում են ապացույցներ, բացառությամբ օպերատիվ հարցման, օպերատիվ տեղեկությունների ձեռքբերման, իրերի և փաստաթղթերի հետազոտման, անձի նույնացման:

5.2. 2. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ գործերով օպերատիվ-հետախուզական գործունեության առանձնահատկությունները

Թրաֆիքինգի կամ շահագործման դեպքի մասին առաջին իսկ տեղեկության ստացման ժամանակ, դրա իսկությունը պարզելուց անմիջապես հետո պետք է կատարել խոր վերլուծություն և հստակ ուրվագծել այն նպատակները, որոնց անհրաժեշտ է հասնել օպերատիվ հետախուզական միջոցառումների իրականացմամբ, գնահատել առկա ուժերն ու միջոցները՝ այդ նպատակներին հասնելու համար, որից հետո միայն պլանավորել անհրաժեշտ միջոցառումների ցանկը, հերթականությունը և ժամանակացույցը:

Նշված նպատակների էությունը և քանակը պայմանավորված են նախնական տեղեկության ծավալով և օպերատիվ հնարավորություններով:

Ամեն դեպքում օպերատիվ միջոցառումները պետք է սկսվեն՝ նախնական տեղեկությամբ նշված անձանց ինքնությունները և գտնվելու վայրերը պարզելով:

Անձի ինքնությունը պարզելու համար կարևոր է նրան վերաբերող, հասանելի ցանկացած տեղեկություն՝ անունը, ազգանունը, հայրանունը, այլ հարազատների, երեխաների տվյալները, հաշվառման կամ բնակության վայրերի, ազգության, քաղաքացիության, տարիքի, ուսումնական հաստատությունների, անձնական ավտոմեքենայի, հեռախոսահամարների, նախասիրությունների և հաճախման վայրերի, պատասխանատվության ենթարկված լինելու, նախկինում արտերկիր մեկնելու հանգամանքի մասին տեղեկությունները: Առաջին հայացքից հետաքրքրություն չներկայացնող տեղեկությունը կարող է անձի ինքնությունը նույնացնելու միակ միջոցը լինել: Նշված տեղեկությունները հնարավորություն են տալիս՝ տարբեր շտեմարաններով հարցումներ կատարելու և դրանց արդյունքները համադրելու միջոցով պարզել հետաքրքրություն ներկայացնող անձի ինքնությունը և գտնվելու վայրը:

Նախնական տեղեկության օբյեկտ հանդիսացող անձանց ինքնությունները պարզելուց հետո հաջորդ տրամաբանական միջոցառումը անձի հանցավոր, հարազատական կապերի, ինչպես նաև ծանոթների շրջանակը պարզելն է: Նշված տեղեկությունները թույլ կտան ճիշտ պլանավորել հետագա ՕՀ միջոցառումները՝ առանց

վտանգելու դրանց ընթացքը, ինչպես նաև ի հայտ բերել հավանական վկաներին, հանցակիցներին կամ այլ տուժողներին:

Վերոգրյալը այն միջոցառումների ցանկն է, որոնք նպատակահարմար է իրականացնել մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման վերաբերյալ ցանկացած տեղեկություն ստանալու դեպքում:

Հաջորդող միջոցառումները կարող են տարբեր լինել՝ կախված նրանից՝ դրանք իրականացվում են զոհի՞ նկատմամբ, թե՞ հանցավորի, իրականացվում են սկզբնաղբյո՞ւր երկրում, միջանկյա՞լ, թե՞ նպատակակետ երկրում, ինչ փուլում է գտնվում հանցագործությունը և այլն:

Պլանավորվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներն անհրաժեշտ է դիտարկել այն խնդիրների համատեքստում, որոնք կարող են լուծվել դրանց անցկացման ընթացքում: Այլ կերպ ասած, այդ միջոցառումները պետք է ունենան վերջնական ապացուցողական ուղղվածություն և իմաստ:

5.2.3. «Զոհեր» և «Հանցավորներ»

Ամեն դեպքում հիմնական «թիրախները» պայմանականորեն երկուսն են՝ «Զոհեր» և «Հանցավորներ», և պլանավորվող ՕՀ միջոցառումները պետք է նպատակաուղղված լինեն այս թիրախների կապի, հանցագործության և դրա հետ կապված առանձին դեպքերի, իրադարձությունների փաստի, հանցագործությանը նրանց մասնակցության, դերակատարության, վկաների, ինչպես նաև հետագայում նրանց ցուցմունքների իսկության վերաբերյալ ապացույցների ամբողջականությունը ապահովելուն, որոնք կարող են հիմք հանդիսանալ քրեական գործի հարուցման, նախաքննության, դատաքննության և հիմնավոր արդարացի դատավճիռ կայացնելու համար:

Զոհերի և հանցավորների նկատմամբ ընդհանուր օպերատիվ-հետախուզական միջոցառումները այն նպատակներին ուղղված միջոցառումներն են, որոնք հնարավորություն են տալիս հայտնաբերել և կուտակել ապացույցներ նշված թիրախների կապի, փոխհարաբերությունների, տվյալ հանցագործության հետ կապված ընդհանուր դեպքերի, իրադարձությունների և փաստերի վերաբերյալ:



Անհատական նպատակի ծառայող օպերատիվ-հետախուզական միջոցառումների համար որպես արդյունք պետք է հանդիսանան ստույգ անձի (լինի դա զոհ, թե հանցավոր) մասնակցությունը հանցագործությանը կամ դրա առանձին բաղկացուցիչները հաստատող ապացույցների, փաստերի ձեռքբերումը: Կարևոր է նաև այդ միջոցառումների ընթացքում ձեռք բերել տեղեկություններ իրադարձությունների հնարավոր վկաների ներկայության կամ մասնակցության վերաբերյալ:

Անհատական օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունավետությունը ապահովելու համար դրանք պլանավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել հանցավորի և զոհի դերակատարության առանձնահատկությունները:

Եվ զոհի, և հանցավորի պարագայում այդպիսի առանձնահատկություն կարելի է համարել շահագործման տեսակը, որին ենթարկվում է կամ ենթարկման վտանգի մեջ է հայտնվել զոհը, կամ որում ներգրավված է հանցավորը, ինչպես նաև հանցագործության փուլը և հանցավորի դերակատարությունը:



Հանցագործության պատկերը պարզ դարձնելու և անհրաժեշտ ապացույցներին հասնելու համար պետք է այն դիտարկել մասնատված և միջոցառումներ ձեռնարկել յուրաքանչյուր մասի ապացույցների ամբողջականությունն ապահովելու ուղղությամբ:

Հավաքագրման և փոխադրման փուլերում թրաֆիքինգը ճանաչելը գործնականորեն անհնար է, իսկ եթե նույնիսկ արձանագրվող գործողություններում պարունակվում են կասկածելի նշաններ, ապա հանցավոր գործունեության ապացուցողական բազան չափազանց աննշան է: Թրաֆիքինգի զոհերի մեծամասնությունը չի պատկերացնում այն փորձությունները, որ նրանց համար պատրաստված է նպատակակետ երկրում (եզակի բացառություններով): Ընդ որում, հարկ է նշել, որ թրաֆիքինգ իրականացնողները, արդյունավետ քննության համար, իրապես խոցելի են դառնում միայն նպատակակետ երկրում կամ այն տարածաշրջանում, որտեղ տեղի է ունենում մարդկանց անմիջական շահագործումը:

Որպես օրինակ կարելի է նշել ներոգրյալ դեպքը:

ՀՀ ոստիկանությունում «Աղբյուրից» օպերատիվ տեղեկություններ էին ստացվել այն մասին, որ քաղ. Ա-ին իր ծանոթը հավաքագրում է՝ ԱՄԷ տանելու նպատակով:

Այդ պահին չպարզված անձը առաջարկել է բարձր վարձատրությամբ աշխատանքի մեկնել ԱՄԷ:

Սկզբում հավաքագրողի կողմից չէր նշվել աշխատանքի տեսակը, սակայն երբ քաղ. Ա-ն տվել է իր համաձայնությունը մեկնելու համար, հավաքագրողը, տեղեկանալով վերջինիս ծանր սոցիալական վիճակի մասին, հայտնել էր նրան, որ «Աշխատանքը» մարմնավաճառությամբ զբաղվելն է, և համոզել՝ մեծ գումարներ վաստակելու խոստումների դիմաց տալ համաձայնություն մարմնավաճառությամբ զբաղվելու համար:

Նախնական օպերատիվ - հետախուզական միջոցառումների իրականացման արդյունքում պարզվեց, որ հավաքագրողը հանդիսանում է.

Մարինե Սահակյանը, որը նախկինում մարմնավաճառությամբ է զբաղվել ԱՄԷ-ում, ներկայումս մարմնավաճառների է հավաքագրում:

Մ. Սահակյանի նկատմամբ իրականացվեց «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» ՕՀ միջոցառումը: Դատարանի համապատասխան որոշմամբ ստացվեցին վերջինիս հեռախոսահամարի վերծանումները և դրանց վերլուծությամբ.

Պարզվեցին նրա հանցավոր կապերը, այդ թվում որպես հանցավոր կապ՝ ի հայտ եկավ երկրորդ հավաքագրողը:

Ծաղիկ Ասատրյանի հեռախոսահամարը, որի հետ նկատվում էր հեռախոսային խոսակցությունների ակտիվացում՝ քաղ. Ա-ի հավաքագրման ընթացքում: Պարզաբանվեց, որ Ծ. Ասատրյանը բազմիցս Վրաստանով մեկնել է ԱՄԷ, և որ նա նաև թրաֆիքինգով զբաղվելու համար միջազգային հետախուզման մեջ գտնվող՝ Նոնա Մոսինյանի հանցավոր կապն է:

Այդ պահին ակնհայտ էր, որ քաղ. Ա-ն հավաքագրվում էր ԱՄԷ-ում պոռնկության շահագործման ենթարկելու նպատակով, չնայած որ նա տեղեկացվել էր, որ զբաղվելու է մարմնավաճառությամբ: Շահագործման փաստն ակնհայտ էր, սակայն բացակայում էր բավարար ապացուցողական բազան, որը կարող էր թույլ տալ պատասխանատվության ենթարկելու հանցավորներին:

Որոշում կայացվեց օպերատիվ ճանապարհով կանխել քաղ. Ա-ի մեկնումը ԱՄԷ և միևնույն ժամանակ շարունակել ապացույցների կուտակումը:

Որոշում կայացվեց նաև Մ. Սահակյանի նկատմամբ շարունակել «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» ՕՀ միջոցառումը, իսկ աղբյուրին հանձնարարվեց բացահայտել քաղ. Ա-ի համար հավաքագրման իրական նպատակը և խորհուրդ տալ հրաժարվել ԱՄԷ մեկնելուց:

Զուգահեռ անցկացվեց նաև «Արտաքին դիտում» ՕՀ միջոցառումը:

Քաղ. Ա-ի ԱՄԷ մեկնելու փաստաթղթերն արդեն պատրաստ էին, երբ վերջինս հեռախոսային հերթական զրույցի ընթացքում հայտնեց Մ. Սահակյանին, որ հրաժարվում է մեկնել, որովհետև վախենում է: Սկզբում վերջինս համոզում էր, որ ամեն ինչ շատ լավ է լինելու: Համոզելու գործընթացին միացել էր նաև Ծ. Ասատրյանը: Այնուհետև, երբ հավաքագրողները զգացին, որ համոզելու միջոցը չի արդարացնում իրեն, սկսվեցին սպառնալիքները:

Քաղ. Ա-ին հեռախոսով սպառնում էին, որ կպատժեն, կգցեն նկուղը, կդիմեն ոստիկանություն՝ իբր իրենցից ոսկի է գողացել, և ամեն կերպ փորձում էին հանդիպել նրա հետ:

Որոշում կայացվեց կապ հաստատել քաղ. Ա-ի հետ և ապահովել նրա անվտանգությունը: Վերջինս անլուր կարգով ուղղորդվեց հասարակական կազմակերպություն, սակայն չընդհատեց հավաքագրողների հետ կապը:

Ապացույցների ամբողջականությունն ապահովելու նպատակով քաղ. Ա-ին առաջարկվեց համաձայնել հանդիպել հավաքագրողների հետ, սակայն ոստիկանների կողմից նշված վայրում:

Դատարանի համապատասխան որոշման հիման վրա այդ վայրում տեղադրվեցին տեխնիկական միջոցներ, և իրականացվեց «Ներքին դիտում» ՕՀ միջոցառումը: Միաժամանակ թույլտվություն ձեռք բերվեց խուզարկություն կատարել հավաքագրողների բնակության վայրերում:

Ներքին դիտման ընթացքում պարզաբանվեցին հավաքագրման նոր հանցակիցներ, փաստագրվեցին նոր ապացույցներ, և հենց հավաքագրման պահին երեք հանցավորները ձերբակալվեցին:

Հանցավորներից Արուսյակ Կալյանը ձերբակալվեց Բագրատաշենի անցակետում, երբ փախուստի նպատակով փորձ էր կատարում հատել ՀՀ սահմանը:

Բնակարանների խուզարկությամբ հայտնաբերվեցին լրացուցիչ ապացույցներ, ինչպես նաև ևս երկու զոհեր, որոնք շահագործվելուց հետո վերադարձել էին ԱՄԷ-ից և պահվում էին այդ բնակարաններում:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական ցանկացած միջոցառում կարող է արդյունավետ լինել: Անհրաժեշտ է միայն ճիշտ գնահատել և հասկանալ նպատակը, ճշգրիտ ընտրել օպերատիվ-հետախուզական միջոցառման տեսակը և պլանավորել դրա իրականացման ընթացքը:

Պլանավորման կարևոր բաղադրիչ

Չափազանց կարևոր է ՕՀ միջոցառումները պլանավորելիս և իրականացնելիս գնահատել և հաշվի առնել նաև հնարավոր այն բացասական խնդիրները, որոնք կարող են ծագել դրանց արդյունքում:

Օրինակ՝ օպերատիվ փորձարարություն կամ վերահսկելի գնում օպերատիվ հետախուզական միջոցառումների իրականացումը պետք է պլանավորել այնպես, որ դրանց արդյունքները հետագայում օպերատիվ ստորաբաժանման ծառայողների կողմից չդիտվեն սադրիչ գործողություններ (պրովոկացիա): Այդպիսի բացթողումը կարող է հանգեցնել մինչև անգամ միջոցառումը պլանավորող և իրականացնող ծառայողներին քրեական պատասխանատվության ենթարկելուն:

Նպատակահարմար չէ նաև վերահսկելի մատակարարում օպերատիվ հետախուզական միջոցառման իրականացումը, օրինակ՝ թրաֆիքինգի ուղիները բացահայտելու նպատակով: Այդ նպատակին կարելի է հասնել «Արտաքին դիտում» ՕՀ միջոցառման իրականացման արդյունքում:

Տվյալ հանցագործությունների բացահայտման համաշխարհային փորձը հիմք է տալիս ենթադրելու, որ թրաֆիքինգի դեմ պայքարի առավել արդյունավետ մեթոդը հանցագործության դեպքի մասին օպերատիվ-հետախուզական և քննչական ստորաբաժանումների աշխատակիցների կողմից կուտակված տեղեկությունների հիման վրա քննության անցկացման հնարավորությունն է՝ ինչպես

տուժողների հայտարարությունները և որպես վկա տված ցուցմունքները հաշվի առնելով, այնպես էլ առանց դրանց:

Այդպիսով, տվյալ տեսակի հանցագործությունների բացահայտման և նախաքննության գործընթացների հիմքը պետք է կազմեն օպերատիվ-հետախուզական տեղեկությունները և թրաֆիքինգ, շահագործում իրականացնողների հանցավոր գործունեության փաստերի գրագետ, օրենքի վրա հիմնված փաստագրումը:

Գլուխ 6. Թրաֆիքինգի զոհի (տուժողի) պաշտպանությունը

6.1. Թրաֆիքինգի զոհի (տուժողի) հասկացությունը, կարգավիճակը և պաշտպանության հնարավոր սխեմաները

Մարդկանց թրաֆիքինգի փաստերով քրեական գործերի արդյունավետ քննության նախադրյալներից մեկն այն է, որ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կարող են նպաստել զոհի համագործակցությանը քննության հետ: Այդ պատճառով պետք է նվազագույնի հասցվեն այն հնարավոր ռիսկերը, որոնք ուղեկցում են թրաֆիքինգի զոհին սկսած վերջինիս՝ որպես զոհի նույնացման գործընթացից: Նրանք պետք է իրենց զգան ապահով, որպեսզի քրեական դատավարության համապատասխան փուլերում ներկայացնեն հանցանքը բացահայտող և հանցագործության կատարման մեջ հանցագործներին մերկացնող ապացույցներ:

Հանցագործության զոհերը, տուժողները, վկաները, մեղադրյալները (հատկապես հանցակցությամբ կատարված հանցագործությունների դեպքում) հաճախ խուսափում են ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի կանչով, հրաժարվում են հաղորդում ներկայացնել հանցագործության մասին, տալ ճշմարիտ ցուցմունքներ, փոխում են տրված ցուցմունքները: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատել մարդկանց թրաֆիքինգի կապակցությամբ հնարավոր ռիսկերը և անհրաժեշտ դեպքերում ու այն չափով, որքանով դա հնարավոր է, ապահովել մարդկանց թրաֆիքինգի զոհերի անձնական կյանքի ու անհատականության պաշտպանությունը: Այդ պաշտպանության միջոցներից է նաև թրաֆիքինգին վերաբերող դատավարության ընթացքում քրեադատավարական հատուկ ընթացակարգերի կիրառումը, որոնք առա-

վելապես ուղղված են տուժողի/վկայի[49] անվտանգության ապահովմանը:

«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» 2000թ. Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն իր հնարավորությունների սահմաններում ձեռնարկում է պատշաճ միջոցներ, որոնք ուղղված են քրեական վարույթին մասնակցող վկաներին և հարիր դեպքերում նրանց հարազատներին և մերձավոր այլ անձանց հավանական վրեժից կամ վախեցնելուց արդյունավետ պաշտպանության ապահովմանը, երբ նրանք ցուցմունք են տալիս Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ:

Այդ Կոնվենցիան լրացնող Պալերմոյի առաջին Արձանագրության 6-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն ձգտում է ապահովել մարդկանց թրաֆիքինգի զոհերի ֆիզիկական անվտանգությունն իր տարածքում՝ այդ զոհերի գտնվելու ժամանակահատվածում: Այս դրույթը կարևորվում է հատկապես նրանով, որ սահմանում է թրաֆիքինգի ենթարկված բոլոր անձանց ֆիզիկական անվտանգության ապահովման անհրաժեշտությունը, անկախ այն հանգամանքից, հանդես է գալիս, արդյոք, զոհը /տուժողը/ որպես վկա, թե՝ոչ: Դա նշանակում է նաև, որ եթե, օրինակ, թրաֆիքինգի զոհի հայրենադարձությունը վտանգավոր է վերջինիս համար, ապա անհրաժեշտ է մշակել նրա տեղաշարժվելու և անհատական տվյալները փոփոխելու ծրագիր: Պետք է նկատի ունենալ, որ Կոնվենցիայի /2000թ./ 24-րդ հոդվածի 1-ին մասը տարածվում է ոչ միայն զոհ/վկայի, այլ քրեական դատավարությանը մասնակցող բոլոր վկաների նկատմամբ:

Եվրոպայի խորհրդի «Մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ դեմ պայքարի մասին» 2005թ. Կոնվենցիայի 4-րդ հոդվածում տրված սահմանման համաձայն «զոհ» հասկացությունը նշանակում է մարդկանց առևտրի ենթարկվող ցանկացած ֆիզիկական

[49] «Զոհ» կամ «տուժող» տերմինների օգտագործումը նպատակ է հետապնդում ուշադրության կենտրոնում պահել թրաֆիքինգից տուժած անձը, որի իրավունքների վտանգավոր խախտման փաստի առթիվ է իրականացվում կոնկրետ դատավարությունը: «Վկա»,«զոհ» կամ «տուժող» տերմինների օգտագործումը սույն գլխում ներառում է նաև հարիր դեպքում պաշտպանության ենթակա նրանց ընտանիքի անդամներին, մերձավոր ազգականներին և ցանկացած այլ անձի, ով հանգամանքների բերումով պաշտպանություն հայցող անձի մտերիմն է:

անձ /այն բովանդակությամբ, ինչպես մարդկանց առևտուրը սահմանված է նույն հոդվածի 1-ին կետում:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը նախ նշենք, որ ՀՀ քր. դատ.օր-ի 58 հոդվածի համաձայն տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, ինչպես նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:

Թրաֆիքինգի համատեքստում «Վկա» հասկացությունը վերաբերում է մարդկանց առևտրի ոլորտի հանցագործությունների վերաբերյալ քրեական դատավարության համար էական նշանակություն ունեցող տեղեկություն կրող անձանց /այսինքն՝ բացահայտողները և գործակալները/:

Մարդկանց թրաֆիքինգի համատեքստում այն անձը, ով շահագործման նպատակով հավաքագրվել, տեղափոխվել, հանձնվել, թաքցվել կամ ստացվել է՝ դիսպոզիցիայում նկարագրված միջոցի կամ միջոցների կիրառմամբ, հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմամբ տուժող է ճանաչվում:

Որպես առանձնահատկություն նշենք, որ անչափահասի և հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձինք տուժող են ճանաչվում, երբ շահագործման նպատակով հավաքագրվել, տեղափոխվել, հանձնվել, թաքցվել կամ ստացվել են:

Ընդորում, այն անձը, ում նկատմամբ կատարվել է թրաֆիքինգ, հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմամբ ճանաչվում է տուժող անկախ այն հանգամանքից, հասցվել է հանցագործությունը ավարտի, թե՝ ոչ:

Քրեադատավարական կարգավիճակ ունեցող տուժողի կամ վկայի կողմից առանձին քրեադատավարական պարտականությունների չկատարելը /օրինակ, ցուցմունք տալուց հրաժարվելը/ ՀՀ քր. օր-ի 339 հոդվածի ուժով հանցագործություն է: Թրաֆիքինգի վերաբերյալ քրեական գործով տուժողի կամ վկայի կողմից սուտ ցուցմունք տալը ՀՀ քր. օր-ի 338 հոդվածի 2-րդ մասի համաձայն հանգեցնում է քրեական պատասխանատվության և այդ արարքը

պատժվում է ազատազրկմամբ առավելագույնը հինգ տարի ժամկետով:[50] Կամ, օրինակ, թրաֆիքինգից տուժողի կամ թրաֆիքինգի վկայի դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելը ՀՀ քր. օր-ի 343 հոդվածի 1-ին մասի համաձայն որակվում է որպես դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք: Ստացվում է, որ թվարկված արարքները ենթակա են որակման որպես տուժողի կամ վկայի կողմից կատարված հանցագործություններ նույնիսկ այն դեպքում, երբ դա կարող է վտանգավոր լինել տուժողի, ականատեսի և/կամ նրա մերձավորների համար: Այդպիսի մոտեցումը, սակայն, չի կարող գնահատվել որպես արդար մարդու հիմնարար իրավունքների ապահովման տեսանկյունից և չի կարող գնահատվել որպես ընդունելի արդարադատության արդյունավետության տեսանկյունից, եթե պետությունն իր հերթին չի ստանձնում այն անձի անվտանգության ապահովման պարտականությունը, որը կատարել է կամ համաձայնվել է կատարել թրաֆիքինգից տուժողի կամ թրաֆիքինգի գործով վկայի դատավարական պարտականությունները: Այսպես, եթե ոստիկանությունը, տեղեկացված լինելով կոնկրետ անձի կյանքի նկատմամբ ոտնձգության հավանականության մասին, չի ձեռնարկել նրա անվտանգության ապահովման արդյունավետ միջոցներ, որի հետևանքով տվյալ անձը սպանվել է, ապա կարելի է վիճարկել պետության կողմից Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի (կյանքի իրավունք) կատարումը:[51]:

---

[50] Հղումը կատարվել է ՀՀ քր. օր-ի 338 հոդվածի 2-րդ մասին, քանի որ թրաֆիքինգ արաքի բոլոր դրսևորումները դասվում են ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների շարքին:

[51] Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը Օսմանն ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործով նշել է, որ անձի կամ անձանց պաշտպանությանն ուղղված նախականխիչ միջոցառումներ ձեռնարկելու պետության պոզիտիվ պարտականությունը ծագում է այն դեպքում, երբ իշխանությունները գիտեին կամ պարտավոր էին իմանալ մարդու կյանքի իրական և անմիջական ռիսկի գոյության մասին, որը կապված է երրորդ անձանց հանցավոր գործողությունների հետ: Նման հանգամանքներում, եթե իշխանությունն իր իրավասության շրջանակում չի ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք կարող էին օգնել խուսափել ռիսկից, ապա դա կդիտվի կյանքի իրավունքի խախտում: Դատարանը նշել է, որ այս դեպքում դիմողը պետք է միայն ապացուցի, որ պետությունը չի ձեռնարկել ողջամտորեն ակնկալվող այն միջոցառումները, որոնք նպատակ ունեին խուսափել իրական և անմիջական ռիսկից:

ՀՀ այդ պարտականության սահմանադրահիրավական հիմքերն են ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասում և 14-րդ հոդվածում ամրագրված դրույթները[52]:

Այսպիսով, անհրաժեշտ է գիտակցել, որ թրաֆիքինգի զոհի՝ որպես տուժողի մասնակցությունը քրեական դատավարությանը չպետք է հանգեցնի նրա անվտանգության նվազեցմանը: «Եթե պետությունը չի կարող ապահովել դատավարությանը մասնակցող անձանց անվտանգությունը, ապա վարույթն իրականացնող մարմնի պահանջը՝ կատարել քրեադատավարական պարտականությունները (օրինակ՝ ցուցմունք տալ) համարվում է ոչ իրավաչափ»:[53]

Մարդկանց թրաֆիքինգի փաստերով գործերի քննության ընթացքում կարող են կիրառվել տուժողների և վկաների պաշտպանության տարբեր սխեմաներ՝

1. վկաների պաշտպանություն, որը վերահսկվում է պետության կողմից,
2. զոհերին ցուցաբերվող աջակցություն և/կամ օգնություն, որն իրականացվում է իրավապահ մարմինների, առանձին պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների և ազգային ոչ կառավարական կազմակերպությունների սերտ համագործակցությամբ,
3. զոհերին ցուցաբերվող աջակցություն և/կամ օգնություն, ինչպես նաև քրեադատավարական պաշտպանության հատուկ միջոցների ձեռնարկում և իրականացում:

Հայաստանում մարդկանց թրաֆիքինգի զոհերի նույնականացման դեպքերում /ինչպես գործերի քննության ընթացքում, այնպես էլ դրանից անկախ/, որպես կանոն, կիրառվում են թրաֆիքինգի զոհերին աջակցության կամ օգնության պարզ կամ բարդ սխեմաներ, որոնք իրականացվում են իրավապահ մարմինների, միջազգային

---

[52] «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են» և «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»:

[53] Քրեական դատավարության մասնակիցների անվտանգության հիմնախնդիրների վերլուծության արդյունքում այդ է Վ.Գոնչարովի և Վ.Կոժեվնիկովի հետևությունը. Гончаров В.Б., Кожевников В.В. Проблемы безопасности участников уголовного процесса. Государство и право, 2000. № 2. С. 54-55.

կազմակերպությունների և ազգային ոչ կառավարական կազմակերպությունների սերտ համագործակցությամբ:

6.2. Պաշտպանության ենթակա անձինք

ՀՀ քր. դատ. օր-ի 98 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող է վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք:

Պաշտպանության ենթակա սուբյեկտներն են՝

- քրեական դատավարությանը աջակցող անձինք,
- քրեական դատավարության մասնակիցների ազգականները և մտերիմները,
- քրեական դատավարություն իրականացնող պաշտոնատար անձինք:

Քրեական դատավարությանը աջակցող անձինք իրենց հերթին պայմանականորեն բաժանվում են 4 խմբի[54]:

Առաջին խումբ. սուբյեկտներ, որոնք աջակցում են քրեական դատավարությանը ցուցմունքներ կամ բացատրություններ տալու, հանցագործության մասին հաղորդումներ ներկայացնելու միջոցով. Առաջին խմբի կազմի մեջ են մտնում հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձը, բացատրություն տվող անձը, տուժողը, վկան, մեղադրյալը, այսինքն քրեադատավարական գործունեության այն սուբյեկտները, ովքեր աջակցում են քրեական դատավարությանը հանցագործության մասին հաղորդումներ ներկայացնելու, ցուցմունքներ կամ բացատրություններ տալու միջոցով: Այսպես, թրաֆիքինգի զոհը այդ դատավարական սուբյեկտների կազմում կարող է հանդես գալ սկզբում որպես հաղորդում ներկայացրած անձ, այնուհետև՝ որպես բացատրություն տվող անձ, որին հաջորդում է նրան որպես թրաֆիքինգից տուժող ճանաչելը: Հնարավոր է, որ նա կատարի բացահայտումներ այլ անձանց շահագործման նպատակով վաճառելու փաստերով կամ այլ հանցագոր-

---

[54] Ձեռնարկի սույն գլխի համատեքստում կարևորվում են վերը նշված առաջին, երկրորդ և չորրորդ խմբերը, որոնց կազմերում կարող է հանդես գալ թրաֆիքինգի զոհ-վկան կամ թրաֆիքինգի գործով այլ վկան:

ծությունների կատարման մասին: Այդ դեպքում նա կստանձնի նաև վկայի կարգավիճակ: Այս խմբի կազմում ենք տեսնում նաև այն անձանց, ովքեր մեղադրվել կամ դատապարտվել են և համաձայնվել են համագործակցել քրեական արդարադատության մարմինների հետ, օրինակ, մարդկանց առևտրի ոլորտում իրենց մասնակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու միջոցով:

Երկրորդ խումբ. սուբյեկտներ, որոնք աջակցում են քրեական դատավարությանը քրեադատավարական գործառույթներ իրականացնելու միջոցով. Այս խումբը կազմում են քաղաքացիական հայցվորը և քաղաքացիական պատասխանողը, պաշտպանը, տուժողի, քաղաքացիական հայցվորի և քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչները, այսինքն քրեադատավարական գործունեության այն սուբյեկտները, ովքեր աջակցում են քրեական դատավարությանը քրեադատավարական գործառույթներ իրականացնելու միջոցով:

Երրորդ խումբը կազմում են թարգմանիչը, մասնագետը, փորձագետը, դատական նիստերի քարտուղարը, այսինքն քրեադատավարական գործունեության այն սուբյեկտները, ովքեր աջակցում են քրեական դատավարությանը օժանդակող գործառույթներ իրականացնելու միջոցով:

Եվ չորրորդ խումբը կազմում են այն անձիք, ովքեր թեև օժտված չեն համապատասխան քրեադատավարական կարգավիճակով, սակայն ունեն ապացուցողական բնույթի տեղեկություն: Այս խմբի կազմում կարող է հայտնվել, օրինակ, իր մերձավորի նկատմամբ բռնութուն գործադրելու սպառնալիքի միջոցով հավաքագրված և այնուհետև վճարի դիմաց երրորդ անձի վերահսկողությանը հանձնված այն անձը, ով հրաժարվել է համագործակցել իշխանությունների հետ որպես քրեադատավարական հարաբերությունների սուբյեկտ իրական սպառնալիքը չվերանալու կամ անվտանգությունը չապահովելու պատճառով, սակայն համաձայնվել է հայտնել հանցագործներին բացահայտող տեղեկություններ:

Քրեական դատավարության մասնակիցների ազգականներն ու մտերիմներն են՝

- քրեական դատավարության մասնակցի մերձավոր ազգականների,
- քրեական դատավարության մասնակցի մերձավորի:

Քրեական դատավարության մասնակցի մերձավոր ազգականներն են ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ և ոչ հարազատ /համահայր և համամայր/ եղբայրները և քույրերը, պապը, տատը, թոռները, ինչպես նաև ամուսինը և ամուսնու ծնողները, վերջիններիս համար՝ փեսան և հարսը /ՀՀ քր. դատ. օր-ի 6 հոդվածի 40-րդ կետ /:

Քրեական դատավարության մասնակցի մերձավոր է ցանկացած անձ, որի պաշտպանությունը հայցում է պաշտպանվող անձը: ՀՀ քր. դատ. օր-ի 98 հոդվածի 1-ին մասում տրված «մերձավորի» հասկացությունը կիրառելի է ՀՀ քր. դատ. օր-ի՝ «Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը» վերնագրով 12-րդ գլխով կարգավորվող իրավահարաբերությունների համար: Այլ կերպ ասած, որպես մերձավոր պետք է դիտվի ցանկացած անձ, ով հանգամանքների բերումով պաշտպանություն հայցող անձի մտերիմն է:

Մերձավոր կարող է լինել, օրինակ, պաշտպանվող անձի ազգականը, ընկերը, նրա հետ չգրանցված ամուսնական կամ այլ հարաբերություններում գտնվող անձը կամ յուրաքանչյուր ոք, ով քրեական դատավարությունում մասնակցող անձի հետ կարող է ունենալ մտերմիկ կապ:

Այսպիսով, տուժող ճանաչված թրաֆիքինգի զոհը կարող է հայցել վերը նշված դասակարգմամբ ցանկացած անձի կյանքի, առողջության, գույքի, իրավունքների ու օրինական շահերի պաշտպանություն, որը ՀՀ քր.դատ. օր-ի 98 հոդվածի 3-րդ մասի համաձայն ձեռնակվում է, եթե քրեական վարույթն իրականացնող անձը հայտնաբերում է, որ այդ անձը պաշտպանության կարիք ունի:

6.3. Սպառնալիքի և ռիսկերի գնահատում

Իրական կամ հավանական սպառնալիք. Այն դեպքերում, երբ քրեական վարույթն իրականացնող մարմինը պարզում է, որ անձը պաշտպանության կարիք ունի, այսինքն, երբ պարզվում է, որ քրեական դատավարությանը թրաֆիքինգի զոհի կամ թրաֆիքինգի գործով վկայի մասնակցելու կապակցությամբ կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, պետք է քննարկվի պաշտպանության միջոց ձեռնարկելու հարցը և կայացվի որոշում պաշտպանության միջոց ձեռնարկելու

կամ մերժելու մասին /ՀՀ քր.դատ. օր-ի 98 հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասեր/: «Պաշտպանության կարիք ունի» արտահայտությունը պետք է հասկանալ, որ առկա են նրա կյանքին, առողջությանը, գույքին, իրավունքներին և օրինական շահերին իրական կամ հավանական սպառնալիքներ: Հավանական սպառնալիքի իրականացման հավանականության աստիճանը առանձին դեպքերում կարող է լինել բարձր /օրինակ, երբ թրաֆիքինգից տուժողը պատրաստվում է բացահայտել հանցավոր համագործակցության անդամներին կամ կոռումպացված տարրերին կամ, օրինակ, եթե դատավարությունը իրականացվում է նշանակետ երկրում, որտեղ զոհը միայնակ է և չունի հանցագործներից պատշաճ պատսպառվելու որևէ հնարավորություն ու բազմաթիվ այլ դեպքերում/:

Երբ թրաֆիքինգի զոհը ձեռք է բերում վկայի /տուժողի կարգավիճակ, ռիսկայնության գործոնը բարձրանում է: Այն պետք է անհապաղ գնահատվի, քանի որ անհրաժեշտ է կենտրոնանալ ոչ միայն զոհի անվտանգության, այլև ապաստանում բնակվող այլ զոհերի և ապաստանում աշխատող անձնակազմի անվտանգության հարցերի վրա: Գնահատումը պետք է հաշվի առնի առնվազն հետևյալ գործոնները՝

- մարդկանց թրաֆիքինգի համատեքստում երկրում ձևավորված տիպային ռիսկը,
- տվյալ զոհի առընչությամբ կոնկրետ ռիսկը /խոցելիությունը, տարիքը, անվտանգության կանոնները պահպանելու ունակությունը և այլն/,
- կասկածյալների, մեղադրյալների հետ կապված կոնկրետ ռիսկը / կազմակերպված խումբ, հանցավոր համագործակցություն, օպերատիվ տվյալներ սպսվող կամ հնարավոր ոտնձգության և դրա բնույթի մասին,
- ապաստանի, դրա տարածքների, ինչպես նաև ապաստանի աշխատակիցների համար ռիսկի աստիճանը, անվտանգության ընթացիկ միջոցները:

Պաշտպանության կառուցակարգերը կիրառելու անհրաժեշտության և նպատակահարմարության հարցերի մասին.

Վերը նկարագրված հիմքերով և իմաստով ծագաց իրական կամ հավանական սպառնալիքի և պաշտպանության ենթակա անձի համաձայնության առկայության դեպքում քննարկվում են պետա-

կան պաշտպանության կառուցակարգերը կիրառելու անհրաժեշտության և նպատակահարմարության հարցերը:

Մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ գործերով պետական պաշտպանության ծրագրում հանցագործության վկային, զոհին ներառելու հարցը քննարկելիս, ինչպես նաև միջոցը /միջոցները/ ձեռնարկելիս և իրականացնելիս խորհուրդ է տրվում հաշվի առնել՝

ա) այն արարքի բնույթը և ծանրության աստիճանը, որին վերաբերում է պաշտպանվող անձի ցուցմունքը կամ ապացուցողական նշանակություն ունեցող այլ նյութը,

բ) ցուցմունքի կամ ապացուցողական նշանակություն ունեցող այլ նյութի բնույթը և կարևորությունը,

գ) պաշտպանվող անձի նկատմամբ իրական կամ հավանական սպառնալիքի բնույթը,

դ) պաշտպանության ծրագրում ներառելու համար դիտարկվող մեկ այլ անձի հետ տվյալ պաշտպանվող անձի հարաբերությունների բնույթը,

ե) պաշտպանվող անձի հոգեբանական, հոգեբուժական կամ այլ գնահատման կամ զննության արդյունքները, որն անցկացվել է պաշտպանության ծրագրում նրա պիտանիությունը որոշելու և նրան այդ ծրագրում ներառելու համար,

զ) պաշտպանվող անձին Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված՝ պաշտպանության այլ հիմնական եղանակներով պաշտպանելու ոչ բավարար լինելու հանգամանքը,

է) պաշտպանվող անձին պաշտպանության ծրագրում ներառելու հանրային վտանգավորության աստիճանը՝ կապված նրա դատվածության հետ, հատկապես՝ բռնությամբ կամ բռնության սպառնալիքով կատարված հանցագործությունների համար,

ը) այլ հանգամանքներ, որոնք կարող են էապես անդրադառնալ ձեռնարկվող և իրականացվող պետական պաշտպանության արդյունավետության վրա:

Համաձայնություն ձեռնարկման ենթակա միջոցների վերաբերյալ. Թեև ՀՀ քր.դատ. օր-ի 98 հոդվածի 3-րդ մասում նախատեսված է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին որոշումը կայացվում է պաշտպանության կարիք ունեցող անձի գրավոր դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ, այնուամենայնիվ խորհուրդ է տրվում պաշտպանության ցանկացած միջոց ձեռնակելու համար ստանալ պաշտ-

պանության ենթակա անձի համաձայնությունը և այդ գործելակերպն ընդունել որպես ընդհանուր սկզբունք: Այս դիտարկումը վերաբերում է նաև պաշտպանության լրացուցիչ միջոցների ձեռնարկմանը, կամ մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոփոխելուն: Դրանից հետևում է, որ, ընտրված անվտանգության միջոցի /միջոցների/ փոփոխությունը կամ լրացումը նպատակահարմար է կատարել պետական պաշտպանության միջոցներ ձեռնարկելու համար սահմանված կարգով: Այդ մոտեցումը կապված է մի կողմից անվտանգության միջոցների կիրառմամբ անձի անձնական ազատության հնարավոր սահմանափակումների շրջանակը որոշելու անհրաժեշտությամբ, որը պետք է լինի համարժեք սպառնալիքի բնույթին, իսկ մյուս կողմից՝ պետք է թղթակցի պաշտպանության ենթակա անձի որոշմանը և չի կարող կիրառվել առանց այդ անձի կամքի արտահայտության /օրինակ, արտաքինը փոխելը, բնակության և աշխատանքի վայրը փոխելը, անհատական տվյալների փոփոխելը, որոշված պաշտպանվող վայրը չլքելը և այլն/: Չէ որ պաշտպանվող անձը պետք է ենթարկվի որոշված կանոններին և ռեժիմին, պետք է ստանձնի դրանք չխախտելու պարտականություններ և պատասխանատու լինի իր պարտականությունները չկատարելու պատճառով առաջացած հետևանքների համար: Միայն բացառիկ դեպքերում, օրինակ, եթե պաշտպանության ենթակա անձը գտնվում է անգիտակից վիճակում, անվտանգության ապահովման միջոցները կարող են ձեռնարկվել անգամ առանց այդ անձի համաձայնության:

Պաշտպանության իրականացման ժամանակահատվածը. ՀՀ քր. դատ. օր-ի 99[1] հոդվածի 1-ին մասը սահմանում է պաշտպանության միջոցների դադարեցման հիմքերը, որի համաձայն պաշտպանության միջոցների իրականացումը կարող է դադարեցվել, եթե պաշտպանվող անձը՝

1) այդ մասին ներկայացրել է գրավոր դիմում,

2) տվել է կեղծ ցուցմունք, որը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով,

3) չի կատարել սույն օրենսգքքի 99-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պարտականությունները,

4) այլևս պաշտպանության կարիք չունի՝ իր կյանքին կամ անվտանգությանը սպառնացող իրական վտանգը վերանալու պատճառով,

5) մահացել է:

Այս դրույթից հետևում է, որ պետական պաշտպանության հատուկ միջոցների կիրառման ժամանակային սահմանները կարող են և չհամընկնել քրեական դատավարության ժամանակային սահմանների հետ: *Ժամանակահատվածը, որի ընթացքում պաշտպանող միջոցները պետք է իրականացվեն, կախված է կոնկրետ անձանց նկատմամբ սպառնալիքներից:* Պաշտպանության հատուկ միջոցների կիրառման հարցը չպետք է կախված լինի քրեադատավարական գործունեության ավարտման հանգամանքից: Պետք է հաշվի առնել, որ պաշտպանության անհրաժեշտությունը կարող է ծագել, շարունակվել կամ վերանալ գործի քննության մինչդատական, դատական կամ հետդատական փուլերում: Օրինակ, պետական պաշտպանության մի շարք միջոցներ, որոնք կիրառվել են մինչև դատավճռի կայացումը, օբյեկտիվորեն շարունակում են կամ կարող են շարունակել գործել նաև քրեական դատավարության ավարտից հետո, իսկ առանձին դեպքերում, դրանք գործում են անժամկետ, օրինակ՝ բնակության վայրը կամ արտաքինը փոխելը[55]: Թրաֆիքինգի զոհի ինքնությունը հաստատող փաստաթղթերի փոխարինելը, օրինակ, գործում է այնքան ժամանակ, քանի դեռ օրենքով սահմանված հիմքերով և կարգով այն չի վերացվել, անգամ եթե հանցագործները դատապարտվել և արդեն կրել են պատիժը:

6.4. Զոհերի նկատմամբ վերաբերմունքի սկզբունքները

Ստորև ներկայացված սկզբունքների կիրառումը, որպես կանոն, նպաստում է քրեական արդարադատության իրականացմանը:

Զոհի անվտանգությունը վերջինիս իշխանությունների հետ համագործակցության նախադրյալներից է: Այս հարցում կարևորվում է ռիսկերի գնահատումը: Նկատենք, որ վկային /օրինակ, թրաֆիքինգի զոհին/ հնարավոր չի երաշխավորել հարյուր տոկոսանոց անվտանգություն, սակայն պետք է հասնել անվտանգության ապահովման առավել բարձր աստիճանի: Անհրաժեշտ է, օրինակ, հնարավորինս վերացնել թրաֆիքինգ իրականացնող անձանց և վկայի հաղորդակցվելու հնարավորությունը կամ, օրինակ, բացառել վկայի գտնվելու վայրի մասին հանցագործների տեղեկություններ-

[55]Брусницын Л.В. Правовое обеспечение безопасности лиц, содействующих уголовному правосудию. М. Спарк, 1999. С. 28.

ը: Անհրաժեշտ է պաշտպանվող անձի հետ կառուցել ազնիվ հարաբերություններ և տեղեկացնել նրան բոլոր հնարավոր վտանգների ու դրանցից պաշտպանվելու եղանակների մասին:

Գրավոր համաձայնությունը կարող է ծառայել մի կողմից վստահության մթնոլորտի ձևավորմանը, իսկ մյուս կողմից կպաշտպանի վարույթն իրականացնող անձին և պաշտպանության միջոցներն իրականացնողներին անհատական տվյալների պաշտպանության և դրանց գաղտնիության պահպանման հարցերում:

Քննիչի անփոփոխությունը կարևորվում է այն իմաստով, որ վերջինս քրեական արդարադատության համակարգի և զոհի կապող օղակն է: Դա հատկապես արտահայտվում է այն դեպքերում, երբ չեն ներգրավվել զոհին աջակցության մեխանիզմները /օրինակ, հասարակական կազմակերպությունները/:

Հաղորդակցվելու արձանագրությունները այն գրառումներն են, որոնք ամրագրում են զոհի հետ քննիչի և այլ անձանց ու կառույցների ցանկացած շփումները, ներառյալ տեսակցությունները, հեռախոսային խոսակցությունները, էլեկտրոնային միջոցներով կամ երրորդ անձանց միջոցով հաղորդակցվելը: Ոչ կառավարական կազմակերպությունները և սոցիալական աջակցության այլ կառույցները, որպես կանոն, վարում են նման արձանագրություններ: Խորհուրդ է տրվում արձանագրել թրաֆիքինգի զոհին հասցեագրված բոլոր ցուցումները անվտանգության միջոցների մասին, ապացույցները այլ անձանց հետ քննարկելու արգելքի մասին, զոհի հետ կապված ծախսերի մասին և այլն: Նման գրառումները օգտակար են այն դեպքերում, երբ պետական պաշտպանության միջոցների օրինականությունը կամ համաչափությունը հետագայում վիճարկվում են դատաքննության ընթացքում:

Համագործակցությունը այլ կառույցների հետ նպաստում է թրաֆիքինգի զոհի անձնական անվտանգության ապահովմանը և նրանց առողջական ու սոցիալական վերականգնմանը: Դա զոհի հայրենադարձության կամ հասարակությունում վերաինտեգրվելու նախադրյալներից մեկն է:

Այսպես, զոհին տրամադրվում է ապահով կացարան: «Հայաստանում թրաֆիքինգի զոհերին ցուցաբերված աջակցությունը» վերտառությամբ գրքույկում արտացոլված են Հայաստանում գործող «Ժամանակավոր ապաստան» և «Վերականգնողական կենտրոն» ապաստանների ու Տուժողների աջակցության կենտրոնի տվյալնե-

ը: Վերլուծությունը վկայել է, որ թրաֆիքինգի զոհերի շուրջ 50 տոկոսը օգտվել են Տուժողների աջակցության կենտրոնի, իսկ մնացածը՝ ապաստարանների ծառայություններից[56]: Այդ կառույցներում զոհերի գերակշռող մասը համաձայնվել և ստացել է հոգեբանական և սոցիալական խորհրդատվություն և աջակցություն, իրավաբանական և բժշկական օգնություն: Հոգեբանական աջակցությունը իրականացվել է խորհրդատվության և հոգեկոռեկցիայի /կարճատև, շարունակական կամ խմբային/ եղանակներով: Իրավաբանական օգնությունը ներառել է դատավարական օգնությունը, հաշմանդամության կամ սոցիալական նպաստի համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը, աջակցությունը նոր անձնագիր ստանալու և զինվորական հաշվառման կանգնելու հարցերում: Բժշկական հետազոտությունների արդյունքում թրաֆիքինգի զոհերի շրջանում ախտորոշված հիվանդությունների գերակշռող մասը կազմում են սեռական ճանապարհով փոխանցվող և գինեկոլոգիական հիվանդությունները: Նման աջակցության և օգնության արդյունքում թրաֆիքինգի զոհերը ֆիզիկապես և հոգեպես ամրապնդվում են և նախապատրաստվում են մասնակցելու դատավարությանը[57]: Արտասահմանյան երկրների պրակտիկայում կուտակված փորձը, սակայն, վկայում է, որ տաժանակիր պայմաններում սեռական կամ աշխատանքային շահագործման ենթարկված անձանց ցուցաբերված հոգեբանական և նյութական աջակցությունը կարող են վերածվել շահարկման առարկայի, երբ պաշտպանության կողմը փորձում է կասկածի տակ դնել զոհի /տուժողի/ ցուցմունքների հավաստիությունը և ապացուցել, որ այդ ցուցմունքները հոգեբանական և նյութական աջակցության արդյունք են: Այդ պատճառով թրաֆիքինգի զոհի հոգեբանին, օրինակ, պետք է կողմնորոշել թե ինչ բնույթի կարող է լինել աջակցությունը և որ այն չպետք է ազդի զոհի կողմից ներկայացվող ապացույցների հավաստիության վրա: Ցանկալի է, որ նյութական աջակցություն ցուցաբերող կառույցը իրականացնի այդ աջակցության հաշվառում:

Պաշտպանվող անձի անձնական «պատասխանատվությունը» կառուցվում է այն պարտականությունների շրջանակում, որոնք ստանձնում է պաշտպանվող անձը, օրինակ, տրաֆիքինգի զոհը, ո-

---

[56] Մանրամասն տես՝ «Հայաստանում թրաֆիքինգի զոհերին ցուցաբերված աջակցությունը», Երևան, 2007, էջ 29:
[57] Նույն տեղը, էջ 31-37:

ը քրեական դատավարությունում հանդես է գալիս որպես տուժող և կարող է հաղորդել կամ համաձայնվել է հաղորդել կամ հաղորդել է կատարված կամ նախապատրաստվող մարդկանց առևտրի կամ այլ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին տվյալներ, որոնք նշանակություն ունեն այդ հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար: ՀՀ քր. դատ. օր-ի 99 հոդվածի 2-րդ մասը սահմանում է պաշտպանվող անձի պարտականությունների շրջանակը, որի համաձայն պաշտպանության ներքո գտնվող անձը պարտավոր է՝

1) կատարել քրեական վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի օրինական պահանջները,

2) քրեական վարույթն իրականացնող մարմնին անհապաղ տեղյակ պահել իրեն սպառնացող վտանգի կամ հակաիրավական գործողության յուրաքանչյուր դեպքի, իր անձնական կյանքում և գործունեության մեջ տեղի ունեցած ցանկացած փոփոխության մասին,

3) խուսափել որևէ գործունեությունից, որը կարող է խոչընդոտել պաշտպանության միջոցի արդյունավետ կիրառումը,

4) պահպանել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ ժամանակավոր օգտագործման համար իրեն հանձնված գույքը և փաստաթղթերը:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությանը վերաբերող ՀՀ քր. դատ. օր-ի կամ որևէ այլ օրենքի դրույթները հստակ չեն տարանջատում պաշտպանությունն իրականացնող մարմինները գործի քննության ու քրեական հետապնդման համար պատասխանատու մարմիններից, որոնց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության հիմքերը պետք է էապես տարբեվեն: Նման տարանջատման դեպքում պաշտպանության ներքո գտնվող անձը ՀՀ քր. դատ. օր-ի 99 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերում նշված պարտականությունները կատարելիս պարտավոր կլիներ համագործակցել ոչ միայն «քրեական վարույթն իրականացնող» մարմնի, այլև «պետական պաշտպանությունն ապահովող» մարմնի հետ: Չէ որ իրականում պաշտպանության միջոցներ ձեռնակելու մասին որոշում ընդունող և անվտանգությունը փաստացի ապահովող /իրականացնող/ մարմինները տարբեր են: Պրակտիկայում կարևորվում է, որ թրաֆիքինգի զոհը՝

- պահպանի պաշտպանության Ծրագրի կամ պաշտպանության միջոցի կիրառման համար նախատեսված բոլոր կանոնները,
- եթե գտնվում է ապաստարանում, ապա պահպանի այդ կառույցի ներքին կանոնները,
- լինի զգուշավոր ընկերական հարաբերություններում,
- լինի զգուշավոր ընտանիքի անդամների, ազգականների կամ մտերիմների հետ հարաբերություններում, եթե նման շփումները կարող են բացահայտել իր գտնվելու վայրը,
- չբացահայտի իր գտնվելու վայրի կամ հաղորդակցման միջոցների մասին տեղեկությունները,
- խուսափի այն վայրերը այցելելուց, որտեղ կարող են գտնվել հանցագործները/կասկածյալները կամ նրանց ընկերները կամ հանցագործների ազգությանը պատկանող անձինք,
- խուսափի այնպիսի արարքներ կատարելուց կամ այնպիսի իրավիճակներում հայտնվելուց, որոնց արդյունքում թեև օրինական հիմքերով և կարգով կարող է բացահայտվել կամ պարզվել իր ինքնությունը /օրինակ, իրավախախտման համար ոստիկանությունում հայտնվելը/:

6.5. Պաշտպանության հատուկ միջոցներ

6.5.1.Վկայի և պաշտպանության կողմի շահերի հավասարակշռությունը. Եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն բոլոր ապացույցները պետք է ներկայացվեն հրապարակային դատական լսման ընթացքում, մեղադրյալի ներկայությամբ՝ մրցակցությունն ապահովելու նպատակով: Արդարացի դատաքննության սկզբունքները պահանջում են նաև, որպեսզի հարիր դեպքերում պաշտպանության կողմի շահերը համադրվեն այն վկաների կամ զոհերի շահերի հետ, որոնք դատարան են կանչվել ցուցմունք

տալու համար: Այս սկզբունքից բացառությունները որևէ կերպ չպետք է վնասեն պաշտպանության իրավունքը:

Դոուրսենն ընդդեմ Նիդեռլանդների գործում Եվրոպական Դատարանը եկել է հետևյալ եզրակացության.«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածն (արդար դատաքննության իրավունք) իրականում ուղղակի չի պահանջում, որ հաշվի առնվեն ցուցմունքներ տալու համար կոչված վկաների շահերն ընդհանրապես և զոհերի շահերը՝ մասնավորապես: Այնուամենայնիվ կարող են սպառնալիքների ենթարկվել անձի կյանքը, ազատությունը և անվտանգությունը որպես նրա շահեր, ինչն ամբողջությամբ ներառվում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածով: Վկաների և զոհերի այդպիսի շահերն իրենց հիմքում պաշտպանվում են սույն Կոնվենցիայի իրավունքի այլ նյութական նորմերով, որոնք ենթադրում են, որ մասնակից-պետությունները պարտավոր են այնպես կազմակերպել իրենց քրեական դատավարությունը, որպեսզի այդ շահերը չենթարկվեն անարդարացի ռիսկի: Այդ առումով արդար դատավարության սկզբունքները նաև պահանջում են, որպեսզի համապատասխան դեպքերում պաշտպանության կողմի շահերը հավասարակշռվեն ցուցմունքներ տալուն կոչված վկաների կամ զոհերի շահերի հետ»:

Այդ հավասարակշռությանը կարելի է հասնել պաշտպանության հատուկ միջոցների կիրառմամբ, որոնք կարող են զուգորդվել քրեադատավարական այլ գործիքների կիրառմամբ, ինչպիսիք են դռնփակ դատական քննություն անցկացնելը, տեսալսողական տեխնոլոգիաների կիրառումը և քրեադատավարական այլ ինստիտուտները:

Սույն ձեռնարկի նպատակային ուղղվածությունից ելնելով ստորև համառոտ կներկայացվի քրեական դատավարությանը մասնակցելու կապակցությամբ ծագաց սպառնալիքներից Հայաստանում ձևավորված վկաների, զոհերի և այլ մասնակիցների պաշտպանության համակարգը: Մանրամասն կներկայացվեն միայն այն ինստիտուտները, որոնց կիրառումը մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ գործերով դատավարական պրակտիկայում

թեև արդյունավետ է, սակայն զուգորդվում է բազմաթիվ բարդությունների հետ[58]:

Ստորև սխեմայի օգնությամբ ներկայացվում է քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանության միջոցների համակարգը /ըստ իրավական կարգավորման առանձնահատկությունների և պաշտպանության միջոցների բնույթի/:

6.5.2. ՀՀ Պետական պաշտպանության միջոցների համակարգը



[58] Վկաների, տուժողների և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանց պետական պաշտպանության միջոցների դասակարգմանը , հատուկ միջոցների ձեռնարկման և իրականացման հիմնախնդիրներին,, քրեաիրավական և քրեադատավարական միջոցների կիրառման կարգին և արդյունավետությանը կարելի է ծանոթանալ «Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանությունը» վերտառությամբ աշխատությունում:

ՀՀ քր. դատ. օր.-ի 12-րդ գլխում նախատեսված պաշտպանության հատուկ միջոցները պայմանականորեն դասակարգվում են 3 խմբի:



6.5.3. Անանուն վկայությունների ինստիտուտը կամ այլ կերպ ասած Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունն իրենից ներկայացնում է այնպիսի միջոց, որի կիրառմամբ մի կողմից պետք է ապահովի քրեական դատավարությանը մասնակցելու կապակցությամ ծագաց սպառնալիքից պաշտպանվող անձի /վկայի, տուժողի/ անվտանգությունը, իսկ մյուս կողմից դա չպետք է վնասի պաշտպանության կողմի արդար դատաքննության իրավունքի իրականացմանը:

Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանության դեպքում էականորեն սահմանափակվում է մեղադրյալի պաշտպանության իրավունքը ոչ միայն այն պատճառով, որ չեն բացահայտվում պաշտպանվող անձի մասին տվյալները, այլև այն պատճառով, որ կարող է գաղտնի պահվել պաշտ-

պանվող անձի կողմից ներկայացված ապացույցների բովանդակությունը: Ուստի պաշտպանության այս միջոցի ընտրությունը պետք է կիրառվի բացառիկ դեպքերում, երբ պաշտպանվող անձի կյանքին, առողջությանը սպառնում է իրական վտանգ: Անթույլատրելի է, օրինակ, պաշտպանության այս միջոցը ձեռնարկել տակտիկական նկատառումներով:

Վիսսերն ընդդեմ Նիդեռլանդների գործով (14.02.2002թ.) Եվրոպական դատարանը արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի դ/ կետի խախտում, նշելով հետևյալը. «Վերաքննիչ դատարանը չի ստուգել այն պատճառների լրջությունը և բավարար հիմնավորվածությունը, որոնց հիման վրա վկայի անձը չի բացահատվել: Բացի այդ, դիմումատուի մեղավորությունը առավելապես ապացուցվել է անանուն վկայի կողմից ներկայացված ապացույցների հիման վրա»[59]: Այս նախադեպային որոշման բովանդակությունից հետևում է, որ եթե գործի հանգամանքներից երևում է, որ պաշտպանվող անձի ներկայացրած ապացույցները կամ ցուցմունքները հանդիսանում են մեղադրյալի մեղավորության մասին վկայող միակ ապացույցը կամ այդ մեղադրանքը առավելապես հիմնված է այդ ապացույցների վրա, ապա վարույթն իրականացնող մարմինը պետք է թույլատրի մեղադյալին ծանոթանալու առանձնացված նյութերին:

ՀՀ քր. դատ. օր.-ի 98^3 հոդվածի համաձայն՝ պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունն իրականացվում է՝

1) քրեական գործի նյութերում և այլ փաստաթղթերում կամ տեղեկություններ պարունակող կրիչներում, ինչպես նաև քննչական գործողությունների կամ դատական նիստերի արձանագրություններում[60] անձի մասին տեղեկությունների սահմանափակումով՝ վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ քրեական գործում առկա

[59] Путеводитель о прецедентной практике Европейского суда по правам человека за 2002 года. Науч. ред. – сост. Берестнев Ю.Ю., Виноградов М.В. пер. с англ. Власихин В.А. М.: 2004. С. 84.

[60] Հպանցիկ նշենք, որ պրակտիկայում կարող է հարց ծագել, թե որոնք «քրեական գործի նյութեր», «քննչական և դատական գործողության արձանագրությունները», «այլ փաստաթուղթերը»: Այդ հարցերի պատասխանները պետք է փնտրել ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 3-րդ կետում, 121 և 122 հոդվածներում:

արձանագրային տվյալներում պաշտպանվող անձի ազգանունը, անունը, հայրանունը կեղծանուններով փոխարինելու միջոցով:

2) պաշտպանվող անձի մասին տեղեկություններ հանձնելու վրա ժամանակավոր արգելք դնելով:

«Պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները» անհատական տվյալներ են: Անհատական տվյալը նյութական կրիչի վրա գրավոր կամ այլ կերպ ամրագրված՝ ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ է այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը[61]: Դա, ըստ էության, անանուն վկայությունների ինստիտուտ է, երբ օրենքով սահմանված կարգով գաղտնի են պահվում, օրինակ, թրաֆիքինգի զոհի ինքնությունը հաստատող տվյալները (ազգանունը, անունը, հայրանունը), իսկ գործի համար նշանակություն ունեցող տվյալները նրանից ստացվում են այնպիս, որ բացառվի անձի ինքնության ճանաչումը: Այդ կանոնը վերաբերում է նաև դատական փուլում գործի քննությանը, երբ առանց պաշտպանվող անձի ինքնությունը հրապարակելու (ՀՀ քր. դատ. օր.-ի 98[13] հոդված) կատարվում է հարցաքննություն:

Թեև ՀՀ քր. դատ. օր.-ի 98[3] հոդվածում նշվում է միայն պաշտպանվող անձի ազգանունը, անունը և հայրանունը կեղծանուններով փոխարինելու մասին, սակայն անձի ինքնությունը հաստատող տեղեկություններ կարող են լինել նաև բնակության, աշխատանքի և կրթության վայրի մասին տվյալներում կամ, օրինակ, այնպիսի այլ տվյալներում, որոնք կարող են նպաստել անձի նույնացմանը:

Մարդկանց թրաֆիքինգի գործով վկան կամ զոհը հարցաքննության ընթացքում հաճախ հաղորդում են այնպիսի տեղեկություններ, որոնց մասին կարող է իմանալ միայն մեկ անձ: Նշված տեղեկությունները քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ նշելը հնարավորություն է ընձեռում նույնականացնել վկա կամ զոհ պաշտպանվող անձին: Դրանից խուսափելու նպատակով թրաֆիքինգի գործով պաշտպանության տակ վերցված վկայից կամ զոհից յուրաքանչյուր դեպքում պետք է պարզել, թե հաղորդած որ տեղեկություններն են հայտնի միայն իրեն: Արդյունքում հնարավոր կլինի որոշել այդ տեղեկությունների

[61]«Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված: Տես՝ ՀՀՊՏ, 2002/49 (224), 14.11.02:

նշանակությունը գործի համար և դրանք արձանագրության մեջ ամրագրելու անհրաժեշտությունը: Այդ դեպքերում անձի ինքնությունը հաստատող նման տեղեկություններ պարունակող քրեական գործի նյութերը և այլ փաստաթղթերը կամ տեղեկություններ պարունակող կրիչները, ինչպես նաև քննչական գործողությունների կամ դատական նիստերի արձանագրություններն անհրաժեշտ է առանձնացնել քրեական գործի մյուս նյութերից և պահել վարույթն իրականացնող մարմնի մոտ: Նախաքննության ավարտին դատավարությանը մասնակցող անձինք չեն կարող ծանոթանալ առանձնացված նյութերին:

ՀՀ քր. դատ. օր-ի 98[3] հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, օրինակ, մեղադրական եզրակացությունում պաշտպանվող անձի անունը, ազգանունը և հայրանունը փոխարինվում է կեղծանվամբ: Բացի այդ, պաշտպանվող անձի հարցաքննությունը կարող է կատարվել դատական նիստերի դահլիճից ամբաստանյալի և պաշտպանության կողմի ներկայացուցիչներին հեռացնելուց հետո: Անհրաժեշտության դեպքում պաշտպանվող անձի հարցաքննությունը կարող է կատարվել այնպիսի պայմաններում, որոնք բացառում են անձի ինքնության ճանաչումը: Այդ նպատակով կարող են օգտագործվել դիմակ, շպար, պաշտպանվող անձի ձայնը փոփոխող սարք և օրենքին չհակասող պաշտպանության այլ միջոցներ: Պաշտպանվող անձի հարցաքննությունը, առանց դատավարության մյուս մասնակիցների ակներև տեսանելիության, կարող է կատարվել տեսաձայնային և տեխնիկական այլ միջոցների (շղարշ, պաշտպանիչ էկրան, թաղանթ) օգնությամբ՝ դատավարության սահմանափակ շրջանակով մասնակիցների մասնակցությամբ՝ գաղտնիության պահպանման մասին նախազգուշացնելով: Բացառիկ դեպքերում դատարանը կարող է պաշտպանվող անձին ազատել դատական նիստին մասնակցելու պարտականությունից՝ նրա կողմից նախկինում տրված ցուցմունքների գրավոր հաստատման առկայության դեպքում:

Առերես հարցաքննությունը և պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունը. Պետք է հաշվի առնել, որ երբ սահմանափակվում են ինչպես պաշտպանվող անձի տվյալները, այնպես էլ քննչական գործողության արձանագրությունների բովանդակությունը, ապա դա էականորեն սահմանափակում է մեղադրյալի պաշտպանության իրավունքը, ուստի նման

դեպքում առավել բարձր է դառնում մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման նպատակով պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների բացահայտման անհրաժեշտության հավանականությունը: Պաշտպանության կողմն այդ առումով կարող է ձեռնարկել տարբեր միջոցներ, որոնց նպատակն է բացահայտել վկայի ինքնությունը:

ՀՀ քր. դատ. օր-ի 216 հոդվածի 1-ին մասի համաձայն քննիչը պարտավոր է կատարել առերեսում, եթե էական հակասություններ կան մեղադրյալի և մեկ այլ անձի ցուցմունքներում: Եթե նախաքննության ընթացքում որոշում է կայացվել վկայի նկատմամբ որպես պաշտպանության միջոց ձեռնարկել նրա ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունը, իսկ վերջինիս ցուցմունքների և մեղադրյալի ցուցմունքների միջև ծագում են էական հակասություններ, ապա պետք է իրականացվի առերեսում: Այդ դեպքում ՀՀ քր.դատ.օր-ի 216 հոդվածի ուժով առերեսման սկզբում ճշտվում է, թե արդյոք անձինք, որոնց միջև կատարվում է առերեսում, ճանաչում են իրար և ինչպիսի հարաբերությունների մեջ են միմյանց հետ: Արդյունքում ստացվում է, որ մեղադրյալի և քրեական դատավարության այլ մասնակցի ցուցմունքների միջև էական հակասության առկայության դեպքում քննիչը պարտավոր է անցկացնել առերեսում: Այդ կարգը չի թղթակցում պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանության կանոններին: Հետևություն. անհրաժեշտ է մանրակրկիտ քննությամբ հնարավորինս բացառել հնարավոր էական հակասությունները, որոնք կարող են ծագել մեղադրյալի և այն վկայի /զոհի/ ցուցմունքների միջև, որի նկատմամբ որպես պաշտպանության միջոց ձեռնարկվել է նրա ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունը: Եթե այնուամենայնիվ առերեսում կատարելը դառնում է պարտադիր, ապա խորհուրդ է տրվում այդ դեպքում կիրառել հեռահարցաքննության ինստիտուտը, որի պայմաններում պաշտպանվող անձը չի գտնվում մեղադրյալի հետ նույն սենյակում, ինչը կնվազեցնի նրան վնաս պատճառելու հավանականությունը: Այս դեպքում, պաշտպանվող անձը ֆիզիկապես ներկա չի լինում առերեսմանը, չի բացահայտվում նրա գտնվելու վայրը, որտեղից նա ցուցմունք է տալիս, սակայն մեղադրյալը հնարավորություն է ունենում տեսնելու նրան, տալու հարցեր և անմիջականորեն լսելու նրա պատասխանները:

6.5.4. Պաշտպանվող անձի անվտանգության ապահովման միջոցներն են նաև ՀՀ քր. դատ. օր.-ի 98[1] հոդվածով նախատեսված պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը կամ գույքը պահպանելը, պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը, պաշտպանվող անձի աշխատանքային, ծառայության կամ ուսման վայրը փոխելը, ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը: Միջոցի կամ միջոցների ընտրությունը, ձեռնարկումը և իրականացումը յուրաքանչյուր դեպքում լուծվում է պաշտպանվող անձի անվտանգգության ապահովման և արդար դատավարության ապահովման նպատակներով, այն պետք է լինի համաչափ սպառնալիքին և ապահովի պաշտպանության կողմի իրավունքների իրականացումը:

Գլուխ 7. Թրաֆիքինգի զոհերի ուղղորդման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում

7.1. Համագործակցության ինստիտուցիոնալ համակարգը

Թրաֆիքինգը այն հանցատեսակներից է, որի դեմ պայքարը պահանջում է լինել զոհակենտրոն: Այն պետք է նպատակաուղղված լինի հատկապես զոհերի իրավունքների և շահերի պաշտպանության ապահովմանը: Հանցագործության բացահայտման աշխատանքները որևէ կերպ չպետք է վտանգեն զոհերի և նրանց հարազատների կյանքն ու առողջությունը, ոտնահարեն նրանց իրավունքները:

Սա է թրաֆիքինգի դեմ պայքարի էությունը, առանձնահատկությունն ու դրա կարևորությունը:

Զոհերի ուղղորդման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանց պաշտպանության, կացարանի, մասնագիտական բժշկական և հոգեբանական օգնության, խորհրդատվության, կրթության կամ ուսուցման ապահովման անհրաժեշտությամբ, սոցիալական ինտեգրմամբ և այլն:

Հայաստանի Հանրապետությունում զոհերի նույնացման և ուղղորդման ամբողջ գործընթացը կանոնակարգվում է ՀՀ կառավարության 2008 թ. նոյեմբերի 20-ի թիվ 1385-Ա որոշմամբ հաստատ-

ված՝ «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգ»-ով (այսուհետ՝ Կարգ):

Այն մշակվել է ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի կողմից, եզակի է իր ձևով և արդյունավետ՝ գործածության մեջ: Կարգի մշակման համար որպես հիմք են ընդունվել ՀՀ-ում զոհերի ուղղորդման պրակտիկ գործընթացները, որոնք փաստացի ինքնաբերաբար ձևավորվել են տարիների ընթացքում:

«Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը» վերաբերում է միայն Կարգով սահմանված գերատեսչությունների համապատասխան կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանումների աշխատակիցների գործառույթներին: Մյուս բոլոր ստորաբաժանումների կամ ենթակառուցվածքային միավորների կողմից զոհերի ուղղորդման աշխատանքները կանոնակարգվում են ներգերատեսչական համապատասխան ակտերի դրույթներով:

ՀՀ ոստիկանության պարագայում ոստիկանության տարբեր ստորաբաժանումների, ենթակառույցների միջև զոհերի ուղղորդման գործընթացը կանոնակարգվում է ՀՀ ոստիկանության պետի 21.07.2009 թ. թիվ 1978Ն հրամանով, որով ամրագրված է, որ Կարգով նախատեսված համապատասխան մասնագիտացված ստորաբաժանումն է ԿՀԴՊ գլխավոր վարչության «Թրաֆիքինգի դեմ պայքարի բաժինը»:

Նույն հրամանում սահմանվում է, որ թրաֆիքինգի կամ հարակից հանցատեսակների, դրանցում ներգրավված կամ դրանց առնչվող անձանց, թրաֆիքինգի զոհերի, արտերկրներում պոռնկությամբ զբաղվողների վերաբերյալ տվյալներ ստանալիս հարկ է հայտնել ԿՀԴՊ գլխավոր վարչությանը, և այդ ուղղություններով հետագա միջոցառումները, ինչպես նաև հայտնաբերված զոհերին ՀՀ կառավարության 20.11.08 թ. թիվ 1385-Ա որոշմամբ հաստատված «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգ»-ին համապատասխան վերականգնողական կենտրոններ ուղղորդելը իրականացվում են ԿՀԴՊ գլխավոր վարչության միջոցով:

Նշվածը ոստիկանության ստորաբաժանումների միջև զոհերի ուղղորդման գործընթացի հիմնական տարրերն էին:

Կարգով սահմանվում է պետական կառավարման լիազորված մարմինների, համագործակցող հասարակական կազմակերպությունների փոխհամագործակցության համակարգը, և զոհի հայտնաբերման դեպքի, նույնացման առանձնահատկությունների հետ կապված՝ հստակեցվում են յուրաքանչյուր դերակատարի գործողությունները:

Կարգով գործառույթներ ունեցող պետական կառավարման լիազորված մարմիններն են.

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը,
- ՀՀ արտաքին գործերի նախարարությունը,
- ՀՀ առողջապահության նախարարությունը,
- ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը,
- ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը,
- ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը:

Համագործակցող հասարակական կազմակերպությունները թրաֆիքինգի ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններն են, որոնց փոխհամագործակցությունը պետական կառավարման լիազորված մարմինների հետ ամրագրված է փոխըմբռնման հուշագրով:

Կարգը թույլ է տալիս պետական կառավարման լիազոր մարմիններին՝ ընտրություն կատարել բազմաթիվ հասարակական կազմակերպությունների շարքից և համագործակցել միայն մասնագիտական բարձր ունակությունների և պահանջվող անհրաժեշտ պայմաններին համապատասխանող հասարակական կազմակերպությունների հետ:

Այս մոտեցումը նույնպես բխում է զոհերին պատշաճ աջակցություն տրամադրելու նպատակից:

Կարգով նշված են նաև ուղղորդման գործում հիմնական դերակատարները, որոնք փաստացի պատասխանատու լիազորված մարմիններն են հիմնական երկու ուղղությունների՝ զոհերի աջակցության, դրա համակարգման և թրաֆիքինգ հանցագործության դեմ պայքարի համար:

Զոհերի աջակցության և դրա համակարգման համար լիազորված մարմինը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է, իսկ թրաֆիքինգ հանցագործության դեմ պայքարի համար հիմնական լիազորված մարմինը՝ ՀՀ ոստիկանությունը:

Պետական կառավարման լիազորված մարմինների, համագործակցող հասարակական կազմակերպությունների փոխհամագործակցության ընթացակարգը հեշտացնելու նպատակով Կարգով սահմանված է, որ պետական կառավարման լիազորված մարմինները հանդես են գալիս համապատասխան կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանումներով, որոնք համակարգում են իրենց աղբյուրներից ստացվող տեղեկատվության փոխանակումը միմյանց միջև, ակտիվ փոխհամագործակցում են և օգտագործում միմյանց միջոցներն ու հնարավորությունները թրաֆիքինգի զոհերի հայտնաբերման, նույնացման և վերականգնողական օգնության տրամադրման նպատակով, ինչպես նաև հանցագործության դեպքերի նախականխման, կանխարգելման, բացահայտման ուղղությամբ:

Օրինակ՝ ՀՀ ոստիկանությունում համապատասխան ստորաբաժանումը կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության թմրաբիզնեսի և թրաֆիքինգի դեմ պայքարի վարչությունն է, ՀՀ ԱՍՀ նախարարությունում՝ աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչությունը և այլն:

Այս գերատեսչությունների միջև փոխհամագործակցությունը, գրությունների փոխանակումը իրականացվում են ուղիղ կապով՝ նշված ստորաբաժանումների միջոցով:

7.2. Զոհը ուղղորդման կարգի համատեքստում

Զոհերի ուղղորդման մեխանիզմը ճիշտ պատկերացնելու և ընկալելու համար նախ պետք է հասկանալ, թե ինչ է ենթադրվում *զոհ* ասելով:

Զոհը թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված կամ ենթարկման վտանգի տակ հայտնված անձն է:

Այլ կերպ ասած, զոհն այն անձն է, ում նկատմամբ կատարվել է հանցագործություն՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ, 132^2-րդ հոդվածներով:

ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածը «Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը» հոդվածն է, իսկ 132^2-րդ հոդվածը՝ «Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը» հոդվածը:

Փաստացի զոհն այն անձն է, ում շահագործման նպատակով հավաքագրել, տեղափոխել, փոխանցել, թաքցրել կամ ստացել են, ինչպես նաև շահագործել կամ դրել կամ պահել են շահագործման վիճակի մեջ՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով, ինչպես նաև այն անձը, ով հայտնվել է վերոգրյալ գործողությունների ենթարկվելու վտանգի տակ:

Անչափահաս կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձանց պարագայում հարկադրանքի կիրառման հանգամանքը չի կարող դիտվել որպես պարտադիր պայման:

7.3. Տեղեկատվության հնարավոր աղբյուրները

Հիմնական ուղղությունը և նպատակը, որ կանոնակարգվում նշված կարգով իհարկե, աջակցություն տրամադրելու նպատակով զոհերի ուղղորդումն է, սակայն Կարգով հստակեցվում են նաև այդ նպատակին ծառայող այլ ուղղությունները: Դրանք են, մասնավորապես՝

- տեղեկությունների ձեռքբերում և փոխանցումը,
- զոհերի նույնացումը,
- զոհերի ուղղորդումը,
- զոհերին աջակցության տրամադրումը:

Ստացվող տեղեկություններն ըստ բնույթի կարելի է բաժանել երկու խմբի՝

- հայտնաբերված զոհի վերաբերյալ տեղեկություն,
- վերջինիս հետ կատարված հանցագործության մասին տեղեկություն:

Պետական կառավարման լիազորված մարմինները և համագործակցող հասարակական կազմակերպություններն ունեն տեղեկությունների ստացման իրենց աղբյուրներն ու ձևերը:

ՀՀ ոստիկանությունը թրաֆիքինգի մասին տեղեկություններ կարող է ստանալ պետական կառավարման լիազորված մյուս մարմիններից, ինքնուրույն՝ իր ստորաբաժանումների (այդ թվում՝ Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի) միջոցով, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներից, անհատներից (տուժողներից և այլ դիմումատուներից), այլ կազմակերպություններից, օպերատիվ ճանապարհով և անձնական հետամտությամբ:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը կարող է, բացի պետական կառավարման լիազորված մարմիններից, թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկություններ ստանալ ինքնուրույն՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության ստորաբաժանումներից և ենթակառույցներից (այդ թվում՝ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններից), արտերկրում հայկական համայնքներից, եկեղեցիներից, այլ պետությունների դիվանագիտական ներկայացուցչություններից, միջազգային կառույցներից:

ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը, բացի պետական կառավարման լիազորված մյուս մարմիններից, թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկություններ կարող է ստանալ ինքնուրույն՝ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության ստորաբաժանումներից (այդ թվում՝ սահմանապահ զորքերից), ինչպես նաև անհատներից (տուժողներից և այլ դիմումատուներից), այլ կազմակերպություններից, օպերատիվ ճանապարհով և անձնական հետամտության միջոցով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, բացի պետական կառավարման լիազորված մյուս մարմիններից, կարող է թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկություններ ստանալ ինքնուրույն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ստորաբաժանումներից, ինչպես նաև անհատներից:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, բացի պետական կառավարման լիազորված մյուս մարմիններից, թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկություններ կարող է ստանալ ինքնուրույն՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ստորաբաժանումներից, ինչպես նաև «Թեժ գծով» դիմած անհատներից, միգրանտների սպասարկման կետում կերպավորման (պրոֆիլավորման) աշխատանքների արդյունքում, տեղական ինքնակառավարման մարմիններից:

ՀՀ առողջապահության նախարարությունը, բացի պետական կառավարման լիազորված մյուս մարմիններից, թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկություններ կարող է ստանալ ինքնուրույն՝ ՀՀ առողջապահության նախարարության ստորաբաժանումներից, ինչպես նաև անհատներից:

Կարգում չնշված բոլոր այլ կազմակերպություններն ու մարմինները, որոնք իրենց գործունեության ընթացքում նույնպես կարող են առնչվել թրաֆիքինգի հետ կապված դեպքերին, տեղեկատվության աղբյուր են հանդիսանում պետական կառավարման լիազորված մարմինների համար:

Անհրաժեշտ է հիշել, որ պատասխանատու մարմինները, մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներին համահունչ, պարտավոր են խստորեն պահպանել իրենց կողմից ստացված անձնական տեղեկությունների գաղտնիությունը:

7.4. Տեղեկատվական հոսքերը

Պետական կառավարման լիազորված ոչ բոլոր մարմինների և համագործակցող հասարակական կազմակերպությունների գործառույթն է թրաֆիքինգ հանցագործության վերբերյալ տեղեկությունների ձեռքբերումը և դրանց հետ կապված միջոցառումների իրականացումը, սակայն այդպիսի կառույցներն ինքնաբերաբար ստանում են նմանատիպ տեղեկություններ, որոնք չափազանց կարևոր կարող են լինել իրավապահ մարմինների համար: Կարգով սահմանվում է հանցագործությունների վերաբերյալ տեղեկությունների փոխանցում ՀՀ ոստիկանությանը՝ որպես թրաֆիքինգ հանցագործության դեմ պայքարի պատասխանատու մարմնի:



Եթե հանցագործությունների վերաբերյալ տեղեկությունները ամեն դեպքում փոխանցվում են ՀՀ ոստիկանություն, ապա զոհերի վերաբերյալ տեղեկությունների փոխանցումը և զոհերի ուղղորդումն իրականացվում է տարբերակված՝ ըստ երեք իրավիճակների:

Հավանական երեք իրավիճակներն են.

Իրավիճակ 1

ՀՀ քաղաքացի հանդիսացող, թրաֆիքինգի ենթարկված կամ ենթարկման վտանգի տակ հայտնված զոհը հայտնաբերման պահին գտնվում է ՀՀ-ում:

Իրավիճակ 2

ՀՀ քաղաքացի հանդիսացող, թրաֆիքինգի ենթարկված կամ ենթարկման վտանգի տակ հայտնված զոհը հայտնաբերման պահին գտնվում է օտարերկրյա պետությունում:

Իրավիճակ 3

Օտարերկրյա պետության քաղաքացի հանդիսացող, թրաֆիքինգի ենթարկված կամ ենթարկման վտանգի տակ հայտնված զոհը հայտնաբերման պահին գտնվում է ՀՀ-ում:

Բոլոր իրավիճակներում՝ համագործակցող ՀԿ-ները, փոխադարձ համաձայնությամբ, իրենց կողմից հայտնաբերված զոհի մասին տեղեկությունը հնարավորինս կարճ ժամկետում, բայց ոչ ուշ քան 3 օրվա ընթացքում փոխանցում են ՀՀ ԱՍՀՆ կամ ՀՀ ոստիկանություն:

ՀՀ ԱՍՀՆ-ն իր հերթին պետք է օգտագործի ՀՀ ոստիկանության հնարավորություններն ու միջոցները զոհերի նույնացման և պաշտպանության նպատակով:

Պետական կառավարման լիազորված մյուս մարմինները փաստացի նույնպես բոլոր իրավիճակներում իրենց կողմից հայտնաբերված զոհերի վերաբերյալ տեղեկությունները հայտնում են ՀՀ ոստիկանությանը, որը, իր հնարավորություններն ու միջոցներն օգտագործելով, աջակցում է զոհերի նույնացմանը և ապահովում անհրաժեշտ պաշտպանություն:



2-րդ և 3-րդ իրավիճակներում, երբ ՀՀ քաղաքացի հանդիսացող, թրաֆիքինգի ենթարկված կամ ենթարկման վտանգի տակ հայտնված զոհը հայտնաբերման պահին գտնվում է օտարերկրյա պետությունում, և երբ օտարերկրյա պետության քաղաքացի հանդիսացող, թրաֆիքինգի ենթարկված կամ ենթարկման վտանգի տակ հայտնված զոհը հայտնաբերման պահին գտնվում է ՀՀ-ում, ՀՀ ոստիկանությունն իր հերթին զոհի վերաբերյալ տեղեկությունը փոխանցում է ՀՀ ԱԳՆ, իսկ 3-րդ իրավիճակում ԱԳՆ-ն իր հերթին այդ տեղեկությունը փոխանցում է զոհի քաղաքացիությունը ներկայացնող պետության ԱԳՆ:

Իրավիճակ-2

Իրավիճակ-3



7.5. Զոհի ուղղորդումը

Զոհի ուղղորդումը իրականացվում է միայն զոհի համաձայնությամբ՝ հայտնաբերման պահից:

Այն դեպքերում, երբ զոհը չի տվել համաձայնություն, սակայն առկա են ակնհայտ պատճառներ՝ ուղղորդման անհրաժեշտության համար, հանրային անվտանգության պահպանման, հայտնաբերված զոհի կամ նրա դեպքի հետ կապված այլ զոհերի կյանքին և առողջությանն ակնհայտ վտանգ սպառնալու դեպքում, կամ եթե զոհը կատարել է հանցագործություն, իրավախախտում, և անհրաժեշտություն է առաջացել պարզելու կատարման հանգամանքները, պետական կառավարման լիազորված մարմինները և համագործակցող ՀԿ-ները իրենց կողմից հայտնաբերված զոհին ուղղորդում են ՀՀ ոստիկանություն:

Զոհերի ուղղորդման և աջակցության գործընթացում չափազանց կարևոր է ստանալ վերջիններիս համաձայնությունը՝ համագործակցելու պետական կառավարման լիազորված մարմինների հետ: Խոսքը վերաբերում է ինչպես իրավապահ, այնպես էլ մյուս մարմիններին (ՀՀ ԱՆ, ՀՀ ԱՍՀՆ և այլն):

Ըստ իրավիճակների՝ զոհերի ուղղորդումը ունի հետևյալ տեսքը:

Իրավիճակ 1

ՀՀ քաղաքացի հանդիսացող, թրաֆիքինգի ենթարկված կամ ենթարկման վտանգի տակ հայտնված զոհը հայտնաբերման պահին գտնվում է ՀՀ-ում:

Այս իրավիճակում ՀՀ կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունն իր կողմից հայտնաբերված զոհերի ուղղորդումն իրականացնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով համագործակցող ՀԿ-ների ծառայություններից:

ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը հայտնաբերված թրաֆիքինգի զոհին ուղղորդում է ՀՀ ոստիկանություն, որն իրականացնում է հետագա ուղղորդումը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնաբերված զոհին ուղղորդում է պետական կառավարման լիազորված այլ մարմիններ և համագործակցող ՀԿ-ներ՝ համապատասխան օգնություն ստանալու համար, կամ ՀՀ կառավարութ-

յանն առընթեր ՀՀ ոստիկանություն՝ հանցագործության բացահայտմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու նպատակով:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը և համագործակցող ՀԿ-ներն իրենց կողմից հայտնաբերված զոհին ուղղորդում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ հետագա ուղղորդման նպատակով:



Իրավիճակ 2

ՀՀ քաղաքացի հանդիսացող, թրաֆիքինգի ենթարկված կամ ենթարկման վտանգի տակ հայտնված զոհը հայտնաբերման պահին գտնվում է օտարերկրյա պետությունում:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը զոհին ուղղորդում է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն կամ, զոհի համաձայնությամբ, ինչպես նաև նպատակահարմարությունից ելնելով, օտարերկրյա պետության ոստիկանություն կամ համագործակցող ՀԿ-ների միջոցով՝ օտարերկրյա պետության հասարակական կազմակերպություն:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը և ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը հայտնաբերված զոհին, վերջինիս համաձայնության առկայության դեպքում, ուղղորդում են ՀՀ արտաքին գործերի նախարարության

դիվանագիտական կամ հյուպատոսական ծառայություններ, որոնց միջոցով իրականացվում է հետագա ուղղորդումը:

ՀՀ ոստիկանությունն իր կողմից հայտնաբերված զոհին ուղղորդում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանագիտական կամ հյուպատոսական ծառայություններ կամ, նպատակահարմարությունից ելնելով, օտարերկրյա իրավապահ մարմիններ:

Համագործակցող ՀԿ-ները հայտնաբերված զոհին, նրա համաձայնությամբ, ուղղորդում են ՀՀ արտաքին գործերի նախարարության դիվանագիտական կամ հյուպատոսական ծառայություններ կամ օտարերկրյա հասարակական կազմակերպություններ:



Իրավիճակ 3

Օտարերկրյա պետության քաղաքացի հանդիսացող, թրաֆիքինգի ենթարկված կամ ենթարկման վտանգի տակ հայտնված զոհը հայտնաբերման պահին գտնվում է ՀՀ-ում:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից հայտնաբերված զոհը, համաձայնության դեպքում, ուղղորդվում է կա՛մ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, կա՛մ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ հետագա ուղղորդման նպատակով:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունն իր կողմից հայտնաբեր-

ված զոհին ուղղորդում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, որի միջոցով իրականացվում է հետագա ուղղորդումը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով, այդ թվում նաև՝ անհապաղ օգնության տրամադրմամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը զոհին, վերջինիս համաձայնությամբ, ուղղորդում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

Համագործակցող ՀԿ-ներն իրենց կողմից հայտնաբերված զոհին, վերջինիս համաձայնությամբ, ուղղորդում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն:



7.6. Զոհի նույնացումը

Զոհի նույնացումը շարունակական և միևնույն ժամանակ՝ ամբողջական գործընթաց է, որը նախատեսում է տարբեր ծավալի աջակցություն: Աջակցության ծավալների համարժեք և նպատակային տրամադրման համար տարանջատվում են զոհերի նույնացման երեք հիմնական փուլեր՝

1) նախնական նույնացում,

2) միջանկյալ նույնացում,

3) վերջնական նույնացում:

Զոհի հայտնաբերումը համարվում է նախնական նույնացում, որն իրականացվում է պետական կառավարման լիազորված մարմինների կողմից ինքնուրույն կամ որևէ աղբյուրի միջոցով հայտնաբերված անձի՝ «ենթադրյալ զոհի» նկատմամբ ուղղակի և անուղղակի չափորոշիչների կիրառման արդյունքում:

Զոհի միջանկյալ նույնացումը իրականացնում է նախաքննության մարմինը՝ որոշում ընդունելով նախնական նույնացված զոհին ճանաչել տուժող՝ թրաֆիքինգին վերաբերող Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով հարուցված քրեական գործերով: Իհարկե, խոսքը վերաբերում է այն հոդվածներին, որոնցում նկարագրված է թրաֆիքինգ հանցատեսակը:

Զոհի վերջնական նույնացումը իրականացվում է դատարանի կողմից: Այն դեպքում, երբ գործը չի հասնում դատարան, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան, վերջնական նույնացման համար հիմք է հանդիսանում քրեական հետապնդման մարմնի կողմից անձին որպես տուժող ճանաչելու մասին որոշումը: Խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ դատաքննությունը չի իրականացվում հանցավորի թաքնվելու պատճառով կամ այլ՝ զոհի նկատմամբ հանցագործությունը չարդարացնող պատճառներով:

Նույնացման գործընթացը ՀԿ-ի պարագայում կարող է ընթանալ մի քանի փուլով, իսկ նույնացման չափորոշիչները սահմանվում են ըստ թրաֆիքինգի միջազգային և ազգային սահմանումների մեջ ներառված բնորոշումների:

7.7. Զոհին տրամադրվող աջակցությունը

Զոհին տրամադրվող աջակցությունը բաղկացած է երեք փուլերից՝ նախնական, միջանկյալ և վերջնական:

Այդ փուլերը պայմանավորված են զոհերի նույնացման փուլերով և փոխկապակցված՝ զոհերի հայտնաբերման երեք իրավիճակների հետ:

Այն դեպքում, երբ թրաֆիքինգի ենթարկված կամ ենթարկման վտանգի տակ հայտնված զոհը, անկախ քաղաքացիությունից, հայտնաբերման պահին գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, հայտնաբերված և նախնական նույնացված զոհին նախ-

նական աջակցություն ցուցաբերվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջնորդությամբ, Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմինների և կառույցների, այդ թվում նաև՝ ՀՀ մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի)՝ երեխայի իրավունքների պաշտպանության բաժինների միջոցով: Ելնելով անհրաժեշտությունից՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կարող է համագործակցել համապատասխան համագործակցող ՀԿ-ների հետ:

Նախնական աջակցությունը ներառում է՝

1) առաջնային բժշկական օգնությունը,

2) անհետաձգելի բնաիրային օգնությունը (սնունդ, հագուստ, հիգիենայի պարագաներ և այլն),

3) իրավաբանական խորհրդատվությունը,

4) անհրաժեշտության դեպքում՝ կարճաժամկետ՝ առավելագույնը 30 օրով, կացարանի տրամադրում,

5) հոգեբանական օգնություն:

Այն դեպքում, երբ զոհը գտնվում է օտարերկրյա պետությունում, աջակցության տրամադրման որոշումը կայացնում են դիվանագիտական և հյուպատոսական ծառայությունները՝ առաջնորդվելով նախնական աջակցության համար կարգով սահմանված ծավալներով և ելնելով տվյալ երկրում գործող աջակցության համակարգից:

Միջանկյալ աջակցությունը ցուցաբերվում է միջանկյալ նույնացման փուլում և ներառում է՝

1. ժամանակավոր՝ մինչև 60 օրով, կացարանի տրամադրում,

2. բժշկական հետազոտություն և օգնություն՝ համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» N318-Ն որոշման,

3. իրավաբանական օգնություն,

4. հոգեբանական օգնություն,

5. հասարակության մեջ վերաինտեգրվելուն ուղղված քայլեր, այդ թվում նաև՝ մասնագիտական վերապատրաստմանն օժանդակություն,

6. անհրաժեշտության դեպքում՝ սահմանված չափի հրատապ դրամական օգնություն:

Վերջնական աջակցությունն իրականացվում է վերջնական նույնացման հիման վրա՝ ելնելով տվյալ անձի կարիքների գնահատումից, և նախատեսում է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված աջակցության ողջ փաթեթը, ինչպես նաև վերաինտեգրմանն ուղղված հետագա միջոցառումները:

Գլուխ 8. Թրաֆիքինգի կանխարգելումը Հայաստանի Հանրապետությունում

8.1. Թրաֆիքինգի կանխարգելման էությունը և բովանդակությունը

Մարդու թրաֆիքինգն ու շահագործումը 21-րդ դարում փաստացի հանդիսացան ստրկության ձևերը, որը մեր նախնիները հաղթահարել էին դարեր առաջ: Այս հակահասարակական երևույթը վերջնականապես ձևափոխվել է կազմակերպված քրեածին բիզնեսի մի տեսակի, որը ներկա դրությամբ ակնհայտ վտանգ է ներկայացնում ազգային անվտանգությանը:[62] Հետևաբար, այդ երևույթի դեմ պայքարը կրում է ոչ միայն ներպետական, այլ անդրազգային բնույթ:

Անդրազգային հանցավորության բոլոր տեսակները փոխկապակցված են միմյանց հետ: Շատ հաճախ թրաֆիքինգը, միգրանտների ապօրինի ներմուծումը, թմրամիջոցների և զենքի ապօրինի շրջանառությունը կատարվում են նույն հանցավոր կազմակերպությունների կողմից, որոնց համար ընդամենը ներկայացնում են հանցավոր եկամուտներ ձեռք բերելու տարբեր եղանակներ:[63] Օրինակ, Իսպանիայում հայտնաբերվել էր հանցավոր մի խումբ, որի մասնակիցները զբաղվում էին Կոլումբիայից եվրապական երկրներ թմրամիջոցների տեղափոխմամբ, թրաֆիքինգով և փողերի լվացմամբ:[64]

Վերջին տասնամյակի ընթացքում, հատկապես Պալերմոյի արձանագրության և ԵԽ-ի կոնվենցիայի ընդունումից հետո, զգալիորեն աճել է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) միջազգային գիտակցումը, որն իր ազդեցութիյունն է ունենում բոլոր պետությունների ներպետական (ազգային) օրենսդրությունների վրա: Պալերմոյի արձանագրության և ԵԽ-ի կոնվենցիայի նպատակներից մեկն է մարդկանց թրաֆիքինգի կանխարգելումը և դրա դեմ պայքարը:

---

[62] Торговля людьми и легализация преступных доходов/ Под ред. О. П. Левченко. М. 2009. С. 6.

[63] Рахманинов Ю. Н. О пресечении международного терроризма как опасного вызова миру и международной безопасности// Исламизм и экстремизм на Ближнем Востоке (сборник статей). М. 2001. С. 215.

[64] http://rus.azatutyun.am/content/article/24278638.html, http://www.armtown.com/news/ru/nws/20110719/68376/

Կառավարության 2010թ. սեպտեմբերի 3-ի «ՀՀ-ում 2010-2012թթ. ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» որոշման ներածության համաձայն մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպումը՝ որպես միջազգայնորեն բնորոշված ժամանակակից ստրկության տեսակներից մեկը, պայմանավորված մարդկանց անօրինական տեղափոխմամբ և հարկադրական շահագործմամբ, ՀՀ-ում սկսվել է 2002թ.-ի հոկտեմբերից, երբ ՀՀ վարչապետի որոշմամբ՝ ՀՀ-ից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման ու առուվաճառքի հետ կապված հարցերն ուսումնասիրելու և առաջարկություններ ներկայացնելու նպատակով ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով: Իրականացվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ վարչապետի 2007թ. դեկտեմբերի 6-ի N861-Ա որոշմամբ ստեղծվել է ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհուրդ՝ ՀՀ փոխվարչապետ՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարի նախագահությամբ, և ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ վարչապետի 2002թ. հոկտեմբերի 14-ի «Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» N591-Ա որոշումը: Նախկին հանձնաժողովն ըստ այդ փոփոխության դարձել է Խորհրդի աշխատանքային խումբ:

21-րդ դարի չարիք համարվող այս երևույթի դեմ պայքարն արդյունավետորեն մղելու նպատակով ՀՀ կառավարության կողմից հաստատվել և իրականացվել են “Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առուվաճառքի (թրաֆիքինգ) կանխման հայեցակարգը և Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առուվաճառքի (թրաֆիքինգ) կանխման 2004-2006 թվականների միջոցառումների ազգային ծրագիրը” (ՀՀ կառավարության 15 հունվարի 2004 թվականի N 58-Ն որոշում) և “Հայաստանի Հանրապետությունում 2007-2009 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը” (ՀՀ - կառավարության 6 դեկտեմբերի 2007 թվականի N 1598-Ն որոշում): Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարն ա-

ռավել արդյունավետ դարձնելու նպատակով ՀՀ կառավարության 20 նոյեմբերի 2008 թվականի N 1385-Ա որոշմամբ հաստատվել է “Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը”: Վերջինս սահմանում է համագործակցության այն համակարգը, որի միջոցով պետական կառավարման մարմիններն իրականացնում են իրենց պարտականությունները մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության և այն զարգացնելու ուղղությամբ՝ իրենց գործունեության մեջ ռազմավարական համագործակցություն ծավալելով քաղաքացիական հասարակության հետ: Այդ կարգի հիմնական նպատակն արդյունավետ ուղի սահմանելն է՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին ծառայություններ մատուցելու համար, այդ թվում՝ կացարանի, մասնագիտական բժշկական և հոգեբանական օգնության, խորհրդատվության, կրթության կամ ուսուցման մատչելիության ապահովումը:

Վ. Վ. Լունեևի կարծիքով հանցավորության ոլորտում ներկա դրությամբ առկա են երկու տենդենց: Առաջինը՝ առկա է հանցավորության միասնականացման, կազմակերպման, անդրազգայնացման, միջազգայնացման և գլոբալացան գործընթացներ, իսկ երկրորդը՝ հանցավորության նկատմամբ սոցիալական հսկողությունը բացակայում է: «Հանցավորություն և նրա դեմ պայքարը» համակարգում հանցավորությունը առաջնային է: Պայքարը դրա դեմ հանդիսանում է հասարակության և պետոության պատասխանը դրան, որը ոչ միշտ է համաչափ, ժամանակին, նպատակային և արդյունավետ:[65]

Թրաֆիքինգի կանխարգելումը փոխկապակցված է հանցագործությունների ընդհանուր կանխարգելման հետ, բայց ունի իր առանձնահատկությունները:

Ընդհանրապես, հանցագործության կանխարգելում[66] ասելով հասկանում են այնպիսի միջոցների և դրանք իրականացնող սուբյեկտների համակարգ, որն ուղղված է՝

---

[65] Лунеев В. В. Проблемы международного криминологического сотрудничества// Международное сотрудничество в сфере борьбы с организованной преступностью и коррупцией. Материалы научно-практической конференции 30-31 марта 2000г. Екатеринбург. 2000. С. 12-17.

[66] Այս գլխում «հանցագործությունների կանխարգելում» և «հանցավորության կանխարգելում» տերմիններն օգտագործվելու են որպես հոմանիշներ: Բայց

- հանցավորության և նրա առանձին տեսակների պատճառների, ինչպես նաև նպաստող պայմանների հայտնաբերմանը, վերացմանը և չեզոքացմանը,
- որոշակի տարածքում այնպիսի պայմանների ու հանգամանքների հայտնաբերմանը և վերացմանը, որոնք հանցագործության կատարման ամնիջական շարժառիթներ են,
- ազգաբնակչության կազմում բարձր քրեական ռիսկի խմբերի հայտնաբերմանը և այդ ռիսկի նվազեցմանը,
- այնպիսի անձանց հայտնաբերմանը, որոնց վարքը վկայում է նրանց կողմից հանցագործության կատարման հավանականության մասին և նրանց նկատմամբ զսպող և վերադաստիարակող միջոցների կիրառմանը (անհրաժեշտության դեպքում այդ միջոցները կարող են կիրառվել նաև նրանց մերձավոր անձանց նկատմամբ)[67]:

Հանցավորության կանխարգելման գործունեությունը պետության կողմից իրականացվող ազգային անվտանգության քաղաքականության բաղկացուցիչ մասն է: Կանխարգելիչ միջոցառումները պլանավորվում են պետության իրավասու մարմինների կողմից և ունեն որոշակի ժամանակային տևողություն՝ երկարատև, կարճատև և անհապաղ: Հանցավորության կանխարգելումը փոխկապակցված տարրերի համակարգ է, որոնց ինտեգրման արդյունքում ձևավավորվում են՝

- հանցավորության կանխարգելման մոտեցման մշակումը՝ որպես սոցիալիրավական կարգավորման և ղեկավարման տարր,
- փոխկապակցված խնդիրների և ուղղությունների առանձնացում, որոնք կհանգեցնեն գլոբալ, տեղային և անհատական փոխհամագործակցման,
- քրեածին գործընթացի վրա ազդեցության իրականացումը՝ հանցագործ անհատների վրա ազդեցություն ունենալով,
- հասարակության բոլոր ոլորտների ընդգրկումը կանխարգելիչ գործընթացին,

---

հանցագործության կանխարգելման մասին կխոսվի այն ժամանակ, երբ անհրաժեշտ է նշել այդ գործողության կոնկրետ դեպքերի, նրանց ուղղվածության մասին, իսկ հանցավորության կանխարգելման մասին՝ երբ անհրաժեշտ է նշել այս երևույթը ընդհանուր առմամբ:

[67] Криминология/ Под ред. В. Н. Кудрявцева. М. Юрист. 2002. С. 279-280.

- ճնշող և զսպող գործողությունների համակցության կիրառումը քրեածին գործընթացի վրա,
- նպատակաուղղված գործողությունը կազմակերպված, ինչպես նաև մասնագիտացված կառույցների հայտնաբերման և չեզոքացման ուղղությամբ և այլն:

Հանցագործությունների կանխարգելման գործընթացը ամբողջությամբ, և մասնավորապես թրաֆիքինգի դեմ, նախատեսում է ինչպես ընդհանուր պետական միջոցառումներ, ինչպիսիք են՝ տնտեսական, սոցիալական, գաղափարախոսական, իրավական և դաստիարակչական, այնպես էլ հատուկ, որոնք իրականացվում են իրավապահ մարմինների կողմից: Այդ գործողությունները իրենց հերթին նույնպես կարող են լինել ընդհանուր և հատուկ: Համաձայն պրոֆ. Ա.Մ. Բանդուրկայի թրաֆիքինգի կանխարգելման առավել արդյունավետ միջոցառումներից են՝

- ազգաբնակչության հետ տարվող իրավական, քարոզչական և բացատրական աշխատանքները,
- թրաֆիքինգի և նրան նպաստող պայմանների ժամանակին հայտնաբերումը և չեզոքացումը,
- մեղավորների և տուժողների հայտնաբերմանն ուղղված օպերատիվ-հետախուզական գործունեության ակտիվացումը և թրաֆիքինգի դեմ պայքարում առկա թերությունների վերացումը,
- թրաֆիքինգի դեմ պայքարի գործընթացին ոստիկանության և հասարակության ներգրավումը:[68]

Թրաֆիքինգին նպաստող պայմանների բացահայտման գործընթացում կարևորվում է իրավապահ մարմինների կողմից ուսումնասիրվող հանցավորության վիճակը բնութագրող տվյալների վերլուծությունը, օպերատիվ-հետախուզական գործողությունների իրականացումը, քրեական գործերի ուսումնասիրությունը, պաշտոնատար անձանց, հասարակական կազմակերպությունների, առանձին քաղաքացիների դիմումների և հայտարարությունների, զանգվածային լրատվության միջոցներում առկա հոդվածների ուսումնասիրությունը և անհրաժեշտության դեպքում համապատասխան ընթացք տալը, վկաների և ականատեսների մանրազննին հարցաքննությունը և այլ գործողությունները:

[68] Бандурка А. М. Противодействие торговле людьми. Киев-Харьков. 2003. С. 112.

Թրաֆիքինգի կանխարգելման գործում արդյունավետ միջոց է նաև ազգաբնակչության հետ տարվող իրավական, քարոզչական և բացատրական աշխատանքների իրականացումը: Այդ աշխատանքներով պետք է բարձրացնել անձանց իրավագիտակցությունը թրաֆիքինգին վերաբերվող հարցերի շուրջ: Այն պետք է իրականացնել զրույցների, հանդիպումների, ,կլոր սեղաններիե, դասախոսությունների, սեմինար պարապմունքների միջոցով: Ընդ որում, այս աշխատանքները պետք է իրականացվեն ոչ միայն խոշոր քաղաքներում, այլ նաև քաղաքատիպ ավաններում, գյուղերում և այլ վայրերում, և դրա իրականացումն իրականացնելով ոչ միայն հասարակական կազմակերպությունների, այլ նաև պետական մարմինների միջոցով:

Հայտնի են դեպքեր, երբ արտասահմանյան երկրներում նմանատիպ բացատրական աշխատանքների ընթացքում հայտնաբերվել է թրաֆիքինգի փորձի դեպքեր: Ներկայում ՀՀ-ում նմանատիպ աշխատանք հիմնականում իրականացնում են միջազգային և հասարակական կազմակերպությունները: Ընդհանուր կանխարգելիչ միջոցառումները առաջնահերթ պետք է իրականացվեն այն անձանց հայտնաբերման ուղղությամբ, ովքեր կարող են լինել թրաֆիքինգ իրականացնող և բացատրական ու կանխարգելիչ աշխատանքը առաջնահերթ պետք է նույնպես տարվի նրանց հետ: Նրանց թվում են՝

- այն անձինք, ովքեր նախկինում դատապարտվել են թրաֆիքինգի կամ նմանատիպ հանցագործության (հանցագործությունների) համար, և նրանց շրջապատի անձինք,
- այն անձինք, ովքեր ցոփ ու շվայտ կյանք են վարում՝ խախտելով բարոյականության նորմերը,
- հասարակաց տներ ստեղծող կամ այնտեղ աշխատող անձինք, կավատները,
- ամուսնական կամ աշխատանքային գործակալությունների աշխատակիցները, որոնք առաջարկում են ամուսնություն կամ աշխատանք արտերկրում,
- այն անձինք, ովքեր մի քանի անգամ արդեն մեկնել են արտերկիր աշխատանքի և այլն:

Այս անձանց հետ տարվող աշխատանքը պետք է ուղղված լինի՝

- նրանց մոտ հանցավոր դիտավորության վերացման, նրանց մտածելակերպի փոփոխմանը,

- այն պայմանների չեզոքացմանը, որոնք նպաստում են հանցագործության կատարմանը, կամ այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք կդարձնեն անհնարին կամ կդժվարացնեն հանցագործության կատարումը,
- հանցավոր խմբերի ձևավորման արգելմանը կամ արդեն իսկ ձևավորվածների կազմալուծմանը,
- այդ անձանց մոտ այլ հանցակիցների նկատմամբ անվստահության ստեղծմանը և այնպիսի փաստերի ներկայացմանը, որոնք անձի մոտ կառաջացնեն վախ պատժի և պատասխանատվության նկատմամբ:

Ընդհանուր կանխարգելիչ միջոցառումներից է նաև իրավապահ մարմինների աշխատակիցների համագործակցությունը բժշկական հաստատությունների և նրանց աշխատակիցների հետ, որոնց միջոցով իրավապահ մարմինները կարող են իրազեկ լինել հնարավոր տուժողների կամ ականատեսների մասին: Իրավապահ մարմինների աշխատակիցները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն այն անձանց, ովքեր բուժվում են սեռավարակներից, սեռական օրգանների տարբեր աստիճանի վնասվածքներից, ընդհատում են հղիությունը, գտնվում են ֆիզիկական և (կամ) հոգեբանական հյուծվածության վիճակում, գերլարվածության վիճակում և այլն, քանի որ սեռական շահագործման դեպքում այս հետևանքները առավել հաճախ են հանդիպում:

Ընդ որում, հարկ է նշել, որ ազդեցության այս եղանակները սպառիչ չեն և պրակտիկայում կարող են կիրառվել այլ մեթոդներ, որոնք կոնկրետ պայմաններում կլինեն անհրաժեշտ և առավել նպատակահարմար:

Մարդկանց թրաֆիքինգը հնարավոր է կանխարգելել տարբեր եղանակներով, օրինակ՝ մոնիտորինգի, իրազեկության բարձրացման և կրթության կամ դասընթացների միջոցով: Սա իրականացվում է զանգվածային լրատվամիջոցներում ներկայացվող քարոզարշավներով, թռուցիկների բաժանմամբ (օրինակ՝ հյուպատոսական գրասենյակներում, դպրոցներում, մանկատներում), հեռախոսային թեժ գծերով, սահմանային անցակետերում և այլն:

Իրավապահները կարող են խորհրդատվական դերակատարում ունենալ նման քարոզարշավի նախագծման ընթացքում և հաղորդել իրենց փորձը: Թրաֆիքինգի հիմնական միտումների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը կանխարգելման մեկ այլ գոր-

ծիք է: Հատկապես նպաստավոր է օգտագործվող նոր մեխանիզմների հայտնաբերման համար ազգային և տեղական միջգերատեսչական “կլոր սեղանների” օգնությամբ իրականացվող տեղեկատվության փոխանակումը:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի առաջարկվող սկզբունքները և ուղեցույցը (սկզբունք թիվ 1 (4-6) նախատեսում են, որ “Թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված ռազմավարությունը պետք է որպես թրաֆիքինգի հիմնապատճառ անդրադառնա պահանջարկին, իսկ պետությունները և միջկառավարական կազմակերպությունները պետք է ապահովեն, որպեսզի իրենց միջամտություններն անդրադառնան այն գործոնների վրա, որոնք մեծացնում են խոցելիությունը թրաֆիքինգի նկատմամբ, այդ թվում գենդերային անհավասարությանը, աղքատությանը և խտրականության բոլոր ձևերին”: Թրաֆիքինգի մեջ ներգրավված բոլոր պետական պաշտոնյաները պետք է կանգնեն դատարանի առջև, իսկ դատապարտվելու դեպքում՝ համապատասխան պատիժ կրեն: ՄԱԿ-ի Թրաֆիքինգի մասին արձանագրության 9-րդ հոդվածը պահանջում է կանխարգելման համընդրկուն ռազմավարություն ընդունել՝ այդ թվում անդրադառնալով թրաֆիքինգի զոհերի խոցելիությանը նպաստող սոցիալական և տնտեսական պատճառներին[69]:

Կառավարության 2010թ. խեպտեմբերի 3-ի որոշման երկրորդ բաժնի նպատակները ամբողջությամբ վերաբերում են թրաֆիքինգի կանխարգելմանը: Դրանցից են՝

1. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացում:
2. Բնակչության հետ անմիջական կապի մեջ գտնվող պետական կառույցների աշխատողների՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ իրազեկության բարձրացում:
3. Անչափահասների շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելում:
4. Սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացում:
5. Զանգվածային լրատվամիջոցների դերի բարձրացումը մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման գործընթացում:

---

[69] Anti-Trafficking Training Materials for Judges and Prosecutors. Background reader. Vienna. 2006. p.84.

Բնակչության իրազեկության բարձրացման ուղղությամբ պետք է շարունակել կազմակերպել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ լայնածավալ քարոզարշավներ, հատկապես ռիսկային խմբերում (գործազուրկներ, արտագնա աշխատանքի մեկնողներ, փախստականներ, կանայք, երիտասարդություն): Հաշվի առնելով անօրինական միգրացիայի և աշխատանքային շահագործման (թրաֆիքինգի) առնչակցությունը, բնակչությանը տրամադրել արժանահավատ տեղեկատվություն օտար պետություններ մուտքի, կացության, աշխատանքային գործունեության իրականացման կարգերի և դրանցում տեղ գտած փոփոխությունների, ներգաղթային օրենսդրության, ապաստանի տրամադրման հարցերի առնչությամբ:

Որպես թիրախ խումբ՝ կանանց շրջանում իրազեկման բարձրացման նպատակով իրականացնել հակաթրաֆիքինգային տեղեկատվական նյութերի տրամադրում կանանց կոնսուլտացիաներում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ս. Վ. Ստոկերի կատարած հետազոտության համաձայն, անկախ կնոջ կրթական մակարդակից կանայք հաճախ պոռնկությունը համարում են գումար վաստակելու միջոց,[70] անհրաժեշտ է ռիսկային խնբերում հայտնված կանանց վրա առավել ուշադրություն դարձնել:

Կանխարգելման գործընթացում կարևորվում է նաև եկեղեցու և համայնքների դերը: Համայնքային և եկեղեցական կառույցների ներգրավում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, մարդու իրավունքների ոտնահարման խնդիրներին արձագանքելու և զոհերին աջակցության նպատակով առկա հնարավորությունների մասին տեղեկացման և օգտագործման գործում:

Դպրոցականների, հատկապես՝ միջնակարգ դպրոցի բարձր դասարանների և ավագ դպրոցի համար մշակել և տարածել կրթական նյութեր, որոնք ներկայացնում են մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգները և դրանցից խուսափելու հնարավորությունները, ինչպես նաև անձի խոցելիությունն ավելացնող գործոնների՝ սեռային խտրականության, գենդերային անհավասարության ու ընտանեկան բռնության անթույլատրելիութ-

[70] Стокер С. В. Рост торговли людьми и роли организованной преступности// Современная уголовная политика в сфере борьбы с транснациональцной организованной преступностью и коррупцией. М. 2002. С. 43-44.

յունը և դրանց կործանարար հետևանքները, յուրաքանչյուր մարդու արժանապատվության ու մարդու հիմնարար իրավունքների լիարժեք պաշտպանության կարևորությունը: Ինչպես նաև անհրաժեշտ է, մշակել և ներկայացնել առաջարկություններ՝ ուղղված երեխաների՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու ռիսկի նվազեցմանը, ներառելով նաև նախադրյալների վերացմանն ուղղված գործողություններ (տնային ծնունդներ, չգրանցված ծնունդների բացառում, կրթական համակարգում չընդգրկված կամ դուրս մնացած երեխաների հաշվառում և վերահսկողության սահմանում, փողոցի/թափառաշրջիկ երեխաներ, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամակալության կազմակերպում, աշխատող անչափահասների հաշվառում և նրանց աշխատանքային իրավունքների ապահովման նպատակով հսկողության կազմակերպում, և այլն):

Քանի որ զանգվածային լրատվամիջոցների դերի բարձ է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման գործընթացում, թրաֆիքինգին վերաբերող և ԶԼՄ-ներում ներկայացվող տեղեկությունների ճշգրիտ և ամբողջական լինելը պարտադիր է, որպիսի ազգաբնակչության մոտ չառաջանա թյուրըմբռնում այս ոլորտում: Այդ իսկ պատճառով ՀՀ Կառավարության 2010թ.-ի սեպտեմբերի 3-ի որոշումը իր ռազմավարություններով առանձին անդրադառնում է ԶԼՄ-ներին:

Այսպես, պետք է հանրային և մասնավոր հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների հետ համատեղ մշակել երկարաժամկետ կայուն աշխատանքային կանոնակարգ՝ ուղղված հանրապետությունում իրականացվող մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի արտացոլմանը, այդ թվում՝ հատուկ հաղորդումների, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վերաբերյալ հայտարարությունների, թեմատիկ ֆիլմերի անվճար հեռարձակման, սոցիալական գովազդի, զգոնության ուղերձների և այլնի միջոցով:

Բացի այդ, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման նպատակով իրականացվող միջոցառումները պետք է պարբերաբար արտացոլել զանգվածային լրատվամիջոցներում, կանոնավոր դարձնել ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի և նրան կից աշխատանքային խմբի անդամների մասնակցությունը հեռուստատեսային և ռադիո

հաղորդումներին, քննարկումներին և հարցազրույցներին՝ հեռարձակվող և տպագիր մամուլում:

Հարկ է օգտագործել մամուլը և գովազդային միջոցները՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) և դրա վտանգների վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացման, խարանի ընկալման և մտածելակերպի փոփոխության, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի հանդեպ հանդուրժողականության բարձրացման հասնելու համար:

ՀՀ Կառավարության կողմից իրականացվող կանխարգելիչ միջացառումների ակնկալվող արդյունքները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

1. Կբարձրանա բնակչության, հատկապես նրա ռիսկային խմբերի՝ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգների մասին տեղեկացվածության մակարդակը, դրա դեմ պայքարելու առկա հնարավորությունների մասին իմացականությունը, հետևապես կփոքրանա մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու հավանականությունը:

2. Կմեծանա թեժ գծերի հասանելիությունը բնակչությանը, կբարձրանա դիմելիությունը, հետևաբար՝ առավել արդյունավետ կդառնա մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարը:

3. Աշխատաշուկայում լրացուցիչ հնարավորությունների ստեղծմամբ կնվազեն երիտասարդների՝ արտագնա աշխատանքի մեկնելու հավանականությունը և դրան առնչվող աշխատանքային շահագործման ռիսկերը:

4. Կբարձրանա բնակչության հետ անմիջական կապի մեջ գտնվող պետական և հասարակական կառույցների աշխատողների իրազեկությունը, կամրապնդվեն մասնագիտական կարողությունները և կխթանվի փոխհամագործակցությունը մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի հարցերում:

5. Կխորանան աշխատանքներն անչափահասների շրջանում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելման ուղղությամբ: Մանկատներում, հատուկ դպրոցներում և գիշերօթիկ հաստատություններում կիրականացվեն սոցիալական պաշտպանությանն ուղղված ծրագրեր, կբարձրանա մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) երևույթի հանդեպ զգոնությունը:

6. Կզարգացվի բնակչության շրջանում իրականացվող ծրագրերի սոցիալ-տնտեսական ուղղվածությունը՝ խոցելի խմբերի շեշտադրումով, ինչը կանխարգելիչ դեր կխաղա:

7. Հատուկ ուշադրություն կդարձվի աշխատանքային թրաֆիքինգի կանխարգելման հարցերին, աջակցություն կցուցաբերվի արտագնա աշխատանքների համար հանրապետությունից մեկնել ցանկացողներին ճիշտ կողմնորոշելու, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) վտանգից զերծ պահելու ուղղությամբ:

8. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելման գործընթացում կբարձրանա զանգվածային լրատվամիջոցների դերը, կձևավորվեն մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) և մարդու իրավունքների ոտնահարումների զոհերի մասին մատուցվող տեղեկատվության էթիկական և մասնագիտական մոտեցումները:

Պետությունները, միջկառավարական և հասարակական կազմակերպությունների հետ գործընկերության շրջանակներում, համապատասխան դեպքերում օգտագործելով զարգացման համագործակցության հայեցակարգերը և ծրագրերը, պետք է դիտարկեն հետևյալ միջոցառումներն իրագործելու նպատակահարմարությունը.

1. Վերլուծել կոմերցիոն սեռական ծառայությունների միջոցով շահագործման և աշխատանքային շահագործման նկատմամբ պահանջարկ առաջացնող գործոնները և օրենսդրական, քաղաքականության և այլ լուրջ միջոցառումներ ձեռնարկել այդ խնդիրները լուծելու ուղղությամբ:

2. Մշակել ապրուստ վաստակելու հնարավորություններ ընձեռող ծրագրեր, այդ թվում՝ տարրական կրթության, հմտությունների ուսուցման և գրագիտության, հատկապես կանանց և ավանդաբար խոցելի վիճակում հայտնված այլ խմբերի համար:

3. Բարելավել կրթական հնարավորությունների հասանելիությունը երեխաների համար և բարձրացնել դպրոցներ հաճախելիության մակարդակը, հատկապես աղջիկ երեխաների շրջանում:

4. Ապահովել որպեսզի հավանական միգրանտները, հատկապես կանայք, ըստ պատշաճի տեղեկացված լինեն թրաֆիքինգի ռիսկերի (օրինակ, շահագործում, պարտքային կախվածություն և առողջության ու անվտանգության խնդիրներ, այդ թվում՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով վարակելու վտանգ), ինչպես նաև օրինական, շահագործումից զերծ միգրացիայի ուղիների մասին:

5. Մշակել իրազեկման ծրագրեր հանրության լայն խավերի համար, բարձրացնելու թրաֆիքինգի հետ կապված վտանգների մասին տեղեկացվածությունը: Նման ծրագրեր մշակելիս պետք է հաշվի առնել թրաֆիքինգի հետ կապված համալիր խնդիրները և այն պատճառները, որոնք անհատին դրդում են վտանգներ պարունակող անօրինական միգրացիոն որոշումներ կայացնել:

6. Վերանայել և փոփոխել այն քաղաքականությունը, որը կարող է մարդկանց ստիպել ապավինել անկանոն և խոցելի աշխատանքային միգրացիայի: Այս գործընթացի շրջանակներում պետք է վերլուծել քաղաքացիության, գույքի, ներգաղթի, արտագաղթի և միգրանտների աշխատանքի մասին օրենքների պատժիչ և/կամ խտրականություն պարունակող դրույթների ազդեցությունը:

7. Ուսումնասիրել օրինական, շահավետ և ոչ շահագործողական աշխատանքային միգրացիայի ծավալների մեծացման հնարավորությունը: Պետության կողմից աշխատանքային միգրացիայի խթանումը պետք է կախված լինի միգրանտ աշխատողների իրավունքները պաշտպանելու համար անհրաժեշտ կարգավորիչ և վերահսկողական մեխանիզմների գոյությունից:

8. Մեծացնել իրավապահ մարմինների լիազորությունները՝ կանխարգելիչ միջոցառումների շրջանակներում ձերբակալելու և քրեական հետապնդման ենթարկելու թրաֆիքինգի մասնակիցներին:

9. Միջոցառումներ ձեռնարկել՝ նվազեցնելու անձանց խոցելիությունը, ապահովելով ծննդյան, քաղաքացիության և ամուսնության պատշաճ իրավական փաստաթղթերի տրամադրումը բոլոր անձանց և տիրապետումը վերջիններիս կողմից[71]:

Քանի որ թրաֆիքինգը այնպիսի հանցագործություն է, որը կապված է և կազմակերպված հանցավորության, և բռնի-շահադիտական հանցավորության հետ, ուստի, մեր կարծիքով, դրա դեմ պայքարը կարելի է ներկայացնել որպես այդ հանցավորությունների դեմ պայքարի հանրագումար:

Թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցները համակարգված ձևով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

[71] Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի առաջարկվող սկզբունքներ և ուղենիշներ. ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով գերագույն հանձնակատարի զեկույցը Տնտեսական և սոցիալական խորհրդին. Լրացում. 2002. էջեր 14-15:

Պայքարի տնտեսական միջոցներ

ընդհանուր	*հատուկ*
տնտեսական ճգնաժամի հաղթահարում, սղաճի մակարդակի նվազեցում,	հիմնադրամների ստեղծում, որի նպատակը թրաֆիքինգի զոհերին պատճառված վնասի փոխհատուցումն է
ըստ եկամուտների ազգաբնակչության բնեռացման նվազեցում,	
գործազրկության մակարդակի իջեցում,	

Պայքարի քաղաքական միջոցներ

ընդհանուր	*հատուկ*
պետական և մասնավոր շահերի պաշտպանության հավասար աջակցումը,	թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների, նպատակների և խնդիրների ներառումը քաղաքական ուժերի և կուսակցությունների ծրագրերում
կաշառակերության վերացումը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում,	
ալկոհոլամոլության, թմրամոլության և թունամոլության դեմ պայքարի քաղաքական ծրագրի մշակումն ու իրականացումը,	
բազմազավակ ընտանիքների և միայնակ մայրերի սոցիալական աջակցության ցուցաբերումը, նրանց ֆինանսական օգնու-	

թյան տրամադրումը և համապատասխան պետական ծրագրերի մշակումը,

անբարենպաստ պայմաններում հայտնված անչափահասներին պետական աջակցության ծրագրի մշակումն ու իրագործումը

Պայքարի իրավական միջոցներ

ընդհանուր	*հատուկ*
արտագնա աշխատանքների մեկնող անձանց իրավական կարգավիճակի հաստատումը ու դրա օրենսդրական բազայի ստեղծումը	իրավապահ մարմինների ու թրաֆիքինգի դեմ պայքարով զբաղվող այլ ստորաբաժանումների գործունեության իրավական կարգավորման կատարելագործումը
ՀՀ-ում փողերի լվացման հետ կապված դատական պրակտիկայի հստակ մշակումը,	

Պայքարի հոգեբանական միջոցներ

ընդհանուր	*հատուկ*
ազգաբնակչության մոտ վտահության ձևավորումը պետական, մասնավորապես իրավապահ մարմինների ու այլ կազմակերպությունների նկատմամբ,	ազգաբնակչության իրազեկումը թրաֆիքինգի համար պատասխանատվու-թյան և դրա հետ կապված այլ հարցերի վերաբերյալ,
անչափահասների վրա հանցավոր երևույթների ազդեցության նվազեցումը և այդ ազդեցության տարածման կանխումը,	այնպիսի վիճակի ստեղծումը, երբ ազգաբնակչությունը թրաֆիքինգը կընկալի որպես ծանր հանցագործություն
ազգաբնակչության մեջ պատժի անխուսափելիության զգացողության ամրապնդումը,	

ամենօրյա դաստիարակչական աշխատանքների իրականացումը ինչպես դատապարտված անձանց, այնպես էլ խոցելի խմբերի և հավանական հանցա-գործների հետ իրավապահ և պատիժ իրականացնող մարմին-ների և հասարակության, հասա-րակական կազմակերպություն-ների ու եկեղեցու ներկայա-ցուցիչների կողմից	

Պայքարի կազմակերպչական միջոցներ

ընդհանուր	*հատուկ*
օպերատիվ տվյալների հավաքման և կիրառման մեթոդների կատարելագործումը,	ՀՀ և արտերկրի իրավապահ մարմինների համագործակցության բարելավումը թրաֆի-քինգի դեմ պայքարում,
թրաֆիքինգի համար պատասխա-նատվություն նախատեսող օրենսդրության կրիմինոլոգիական փորձաքննությունը,	թրաֆիքինգով կամ կասկածելի գործու-նեությամբ զբաղվող խմբերում «գործա-կալների» ներգրավումը,
մարմնավաճառությամբ զբաղվող կանանց հաշվառման կարգի հստակեցում,	արտագնա աշխատանքների մեկնող անձանց մոտ համապատասխան փաստաթղթերի առկայության ստուգումը՝ աշխատանքային պայմանագիր, պետությունից դուրս գալու իրավունք, այլ պետությունում աշխատելու իրավունք, բժշկական ապահո-վագրության առկայության փաստաթուղթ և այլն
հստակ և անկողմնակալ պայքարի իրականացումը այնպիսի երևույթների դեմ, որոնք հեշտացնում են թրաֆիքինգի իրականացումը (փաստաթղթերի կեղծում, ոչնչացում, օգտագործում, կեղծ ձեռնարկատիրական գոր-ծունեությամբ զբաղվելը և	հավանական շահագործման վայրերի պարբերաբար ստուգումները ինչպես իրավապահ մարմինների, այնպես էլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատա-կիցների և

այլն),

հասարա-կական կազմակեր-պությունների կողմից,

նախկինում թրաֆիքինգի համար դատա-պարտված անձանց պատժի կրումից հետո հսկողությ-ան ու վերահսկողության իրա-կանացումը, ինչպես նաև նրանց սոցիալական հարմարվողակա-նության համար բարենպաստ պայմանների ստեղծումը,

Պայքարի տեխնիկական միջոցներ

ընդհանուր	*հատուկ*
տեխնիկական նորամուծությունների կիրառումը իրավապահ մարմինների աշ-խատանքում,	տեղեկատվական որոնողական համա-կարգերի զանգվածային ներդնումը և առկա համակարգե-րի կատարելագործումը,
իրավապահ մարմինների նյութատեխ-նիկական և ֆինանսա-կան պատշաճ ա-պահովումը,	աշխատանքի տեսչության կող-մից բացատրական աշխատանք-ների իրականացումը ազգաբնակ-չության բոլոր շերտերում և խմբե-րում դասախոսությունների, պրակտիկ պարապմունքների, սեմինարների միջոցով,
իրավապահ մարմինների համագոր-ծակցումը պետական և տեղական ինքա-կառավարման մարմինների և հասարա-կական կազմակերպությունների հետ, և վերջիններիս գործունեության աջակցումն ու օժանդակումը	

8.2. Թրաֆիքինգի սոցիալական կանխարգելումը

Պալերմոյի արձանագրությունը նշում է նաև, որ պետք է ձեռնարկվեն կանխարգելման այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են՝ սոցիալական և տնտեսական նախաձեռնությունները, հետազոտությունները և հանրությանն ու հնարավոր զոհերին ուղղված զանգվածային լրատվամիջոցների քարոզարշավները: Քաղաքականությունները, ծրագրերը և ձեռնարկված այլ միջոցառումները պետք է ներառեն համագործակցություն հասարակական և այլ համապատասխան կազմակերպությունների հետ: Պետությունները պետք է միջոցառումներ ձեռնարկեն կամ ամրապնդեն դրանք, այդ թվում երկկողմ և բազմակողմ համագործակցության տեսքով:[72]

Թրաֆիքինգի սոցիալական կանխարգելման հիմնահարցերը կարևորագույներից են բոլոր երկրներում, ներառյալ Հայաստանը: Կանխարգելիչ սոցիալական աշխատանքները պետք է իրականացվեն հետևյալ ուղղություններով՝

- ինֆորմացիոն (տեղեկատվական),
- գործնական,
- քաղաքացիատնտեսական,
- թրաֆիքինգի էության պարզաբանման,
- ուժային:

Այդ իսկ պատճառով սոցիալական կանխարգելումը պետք է իրականացվի հետևյալ միջոցներով՝

- սոցիալական գովազդ, որի միջոցով անհրաժեշտ է ներկայացնել թրաֆիքինգի էությունը, ձևերը, հետևանքները, ստեղծված ծանր իրավիճակներից դուրս գալու ճանապարհներն ու եղանակները,
- օտարերկրյա գործատուների և ամուսնական գործակալությունների ստուգում,[73]
- բացատրական աշխատանքների իրականացում արտերկիր աշխատանքի մեկնող անձանց հետ,

---

[72] Anti-Trafficking Training Materials for Judges and Prosecutors. Background reader. Vienna. 2006. p.83.

[73] Հարկ է նշել, որ ներկայում նման գործունեությունը Հայաստանում լիցենզավորման ենթակա չէ:

- երիտասարդներին և նրանց ծնողներին երեխաների իրավունքների, արտերկրում աշխատանքի և ուսման վերաբերյալ լուսաբանում,
- թրաֆիքինգի զոհերին օգնելը աշխատանքի տեղավորման, բնակարանների տրամադրման, ապրուստի նվազագույն ապահովման ուղղությամբ և այլն:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում ցածր մակարդակի վրա են իրականացվում ինֆորմացիոն (տեղեկատվական) կանխարգելիչ սոցիալական աշխատանքները, որոնք պետք է իրականացվեն ԶԼՄ-ների, ինտերնետի, պետական մարմինների տեղեկատվական ծառայությունների, անձնագրային մարմինների, սոցիալական գովազդի, փոստային ծառայությունների միջոցով: Թերթերում առկա հոդվածները փոքրածավալ են, հիմնականում ներկայացնում են վիճակագրական տվյալներ[74] կամ լուսաբանում են թրաֆիքինգի հետ կապված որևէ քրեական գործի մի քանի հարցեր:[75]

Սոցիալ-կանխարգելիչ աշխատանքների առանձին ոլորտ են զբաղվածության ոլորտի կանխարգելիչ միջոցառումները: Այս աշխատանքները պետք է ուղղված լինեն ինչպես ընդհանրապես գործազրկության նվազեցմանը, այնպես էլ պատշաճ ու տարբերակված աշխատանքով անձանց ապահովելուն՝ համապատասխան վերջինիս մասնագիտությանը, մասնագիտացմանը, ֆիզիկական ու հոգեբանական հատկանիշներին, որակավորման աստիճանին, աշխատանքային փորձին ու հմտություններին:

Ողջ աշխարհում մեծանում է գործատուների և աշխատողների կազմակերպությունների և գործարարների դերակատարումը հարկադիր աշխատանքի և թրաֆիքինգի դեմ պայքարում: Աշխատողների իրավունքների պաշտպանության ոլորտում կարևոր քայլ էր Արհեստակցական միությունների Միջազգային կոնգրեսի (ITUC) կողմից 2007թ. դեկտեմբերին Վաշինգտոնում գումարված՝ ՄԱԿ-ի Գլխավոր խորհրդի նիստում միջոցառումների ծրագրի ընդունումը, որով կուղղորդվի արհեստակցական միությունների հետագա գոր-

---

[74] Бегларян А. Рабы XXI века// Аргументы и факты. 2008. №24. С.11.

[75] Շ. Մաթևոսյան. Թրաֆիքինգի դասական օրինակ// “Հայոց աշխարհ”, 2005թ.-ի օգոստոսի 26; Чилингарян А. Место назначения – Дубай// “Голос Армении”, 17 сентября 2005, Գաբրիելյան Ա. Դատարանի զարմանալի բարեհաճությունը թրաֆիքինգի հոդվածով մեղադրվողի հանդեպ// “Հայոց աշխարհ”, 9 օգոստոսի 2007թ. և այլն:

ծունեությունը հարկադիր աշխատանքի և թրաֆիքինգի բնագավառներում: Խորհուրդը կարևոր համարեց հարկադիր աշխատանքի կամ թրաֆիքինգի դեմ պայքարող արհեստակցական միությունների համաշխարհային դաշինքի ստեղծումը: ITUC-ի անդամ բոլոր արհեստակցական միություններին այժմ կոչ է արվում աշխատանքային ծրագրերի մեջ, ելնելով իրենց պետությունների իրավիճակային առանձնահատկություններից, ներառել որոշակի միջոցառումներ, մասնավորապես.

- Հարկադիր աշխատանքի մասին ԱՄԿ-ի կոնվենցիայի և հարակից այլ կոնվենցիաների վավերացման և արդյունավետ իրագործման խթանում,
- երկկողմ և եռակողմ բանակցություններում և համաձայնագրերում անդրադարձ հարկադիր աշխատանքի և թրաֆիքինգի խնդիրներին,
- արհեստակցական միություններում հարկադիր աշխատանքի դեմ պայքարի քաղաքականության մշակման համար անհրաժեշտ քաղաքական և նյութական օժանդակության ապահովում,
- աշխատանքի տեղավորման գործակալությունների, ինչպես նաև ընկերությունների, այդ թվում՝ նրանց մատակարարման շղթաների մոնիթորինգ հարկադիր աշխատանքի և թրաֆիքինգի դրսևորումներ հայտնաբերելու և դրանց դեմ պայքարելու նպատակով,
- արհեստակցական միությունների երկկողմ, ոլորտային կամ տարածաշրջանային համագործակցության համաձայնագրեր, ինչպես նաև դաշինքներ քաղաքացիական հասարակության այն կազմակերպությունների հետ, որոնք հայտնի են համապատասխան ոլորտներում իրենց գիտելիքներով և փորձով,
- համագործակցություն աշխատանքային տեսչության ծառայությունների, իրավապահ և այլ համապատասխան ազգային, տարածաշրջանային կամ միջազգային մարմինների կամ միջգերատեսչական խմբերի հետ,
- կապեր ոչ ֆորմալ, չպաշտպանված և միգրանտ աշխատողների ռիսկային խմբերի հետ և նրանց հասցեագրված ուղղակի օժանդակություն՝ լուծելու նրանց իրավիճակային խնդիրները և հոգալու նրանց բնորոշ կարիքները:[76]

---

[76] Վիեննայի ֆորումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով 13-15 փետրվարի, 2008թ. Թիվ 004 աշխատանքային հանդիպում. ինչու և ինչպես է

Սոցիալական կանխարգելման խնդիրներն ուղղված են նաև բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու և անձանց համապատասխան օգնություն և աջակցություն ցուցաբերելուն: Այս առումով Հայաստանում առկա է որոշակի օրենսդրական բազա:[77]

ՀՀ Կառավարության 2010թ.-ի սեպտեմբերի 3-ի որոշման երկրորդ բաժնի 4-րդ նպատակի համաձայն, սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացումը նախատեսված է հետևյալ ռազմավարություններով՝

1. Աղքատությունը և գործազրկությունը դիտելով որպես Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործմանը (թրաֆիքինգին) նպաստող կարևոր գործոններ՝

1) զարգացնել բնակչության շրջանում իրականացվող ծրագրերի սոցիալ-տնտեսական ուղղվածությունը,

2) Հայաստանի Հանրապետությունում աղքատության նվազեցմանն ուղղված ծրագրերում որպես բաղադրիչ մաս ընդգրկել նաև մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի միջոցառումները, հատկապես առավել խոցելի խմբերի համար: Թրաֆիքինգի հետ կապված հարցերը ներառել նաև կոռուպցիայի դեմ պայքարի, գենդերային, զարգացման և այլ ծրագրերում:

2. Գործազուրկ և փախստական կանանց համար իրականացնել ձեռներեցությամբ զբաղվելուն նպաստող աջակցության ծրագրեր, այդ թվում նաև՝ ա) ձեռնարկատիրության գործունեությանն ուղղված մասնագիտական ուսուցման կազմակերպմամբ և բ) հաջող-

---

հարկադիր աշխատանքի և սեռական շահագործման նկատմամբ պահանջարկը նպաստում մարդկանց թրաֆիքինգի երևույթին, էջ 9:

[77] Օրինակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության 2005թ. փետրվարի 10-ի ու ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարների 2005թ. փետրվարի 21-ի «Աղքատության ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության նշանակման գործերը վարելու ու ձևակերպելու, փոխադարձ հաշվետվությունների իրականացման հրահանգը հաստատելու մասին» համատեղ հրամանը, ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 27-ի N1112-Ն որոշումը, ՀՀ Կառավարության 2006թ. ապրիլի 13-ի N614-Ն «Ժամանակավոր օթևանի տրամադրման կարգը և պայմանները հաստատելու մասին» որոշումը և այլն: Սոցիալական կանխարգելման որոշ տարրեր առկա են նաև Կառավարության 2007թ. դեկտեմբերի 6-ի «ՀՀ-ում 2007-2009թթ. ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» որոշման 2-րդ բաժնի 1-ին և 4-րդ նպատակների ռազմավարություններում:

ված ծրագիր ներկայացնող ուսանածներին ֆինանսական աջակցության տրամադրմամբ:

3. Գործազուրկներին, հատկապես երիտասարդներին և կանանց աջակցել մասնագիտական կողմնորոշման հարցերում, նրանց համար կազմակերպել մասնագիտական ուսուցման դասընթացներ՝ աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտությունների գծով, աջակցել երիտասարդի աշխատանքային կյանք մուտք գործելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորմանը, այդ թվում՝ ա) անհատական և խմբակային եղանակով խորհրդատվության և տեղեկատվության տրամադրմամբ, և բ) գործատուի մոտ արտադրական փորձուսման կազմակերպմամբ:

4. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց հասարակության մեջ վերահնտեգրելու, ինչպես նաև նրանց կրկնազոհացումից խուսափելու նպատակով կազմակերպել մասնագիտացման և վերամասնագիտացման դասընթացներ, ինչպես նաև իրականացնել ա) զոհերի հաշվառում և մասնագիտական ուսուցման դասընթացների մեջ ընդգրկում, բ) դասընթացների զուգորդում հետագա աշխատանքի տեղավորմանն աջակցությամբ, գործատուին աշխատավարձի փոխհատուցմամբ, սեփական բիզնեսի ստեղծմանն աջակցությամբ:

5. Շարունակել իրականացնել խոցելի խումբ կազմող, գյուղական վայրերում բնակվող կանանց զբաղվածության ապահովման ծրագրերը՝ դրանք զուգակցելով իրազեկության բարձրացման միջոցառումներով:

Վերը նշված ռազմավարություններին համապատասխան պետական և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացրած միջոցառումները առնվազն կհանգեցնեն իրազեկվածության բարձրացմանը, զգուշավորությանը և թրաֆիքինգի դեպքերի բացահայտմանը:

8.3. Թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում միջազգային և հասարակական կազմակերպությունների մասնակցությունը

8.3.1. Թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում միջազգային համագործակցությունը

Պայքարը հանցավորության դեմ պետության ներքին ֆունկցիան է, որն իրականացնում են իրավապահ մարմինները ազգային

օրենսդրության հիման վրա, սակայն պայքարը ներպետական հանցավորության հետ արդի պայմաններում այդքան էլ դյուրին չէ, քանի որ արագորեն ավելանում է այն հանցագործությունների թիվը, որոնք վտանգ են ներկայացնում ոչ թե առանձին պետությունների, այլ ամբողջ տարածաշրջանների և մարդկության համար: Դրանցից են ահաբեկչությունը, թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, թրաֆիքինգը, կաշառակերությունը և այլն: Հետևաբար, վերը նշված հանցագործությունների դեմ պայքարը պետք է իրականացվի ոչ միայն ներպետական, այլ նաև միջազգային մակարդակով:

Քանի որ մարդկանց թրաֆիքինգը նաև անդրազգային հանցագործություն է, ուստի նախկինում քննարկվող համագործակցության և ուղղորդման համար առկա բոլոր չափանիշները և չափորոշիչները պետք է կիրառվեն նաև պետության սահմաններից դուրս: Չնայած որ մի քանի համաձայնագրեր թույլ են տալիս և կարգավորում են համագործակցությունը տարբեր երկրների իրավապահ մարմինների միջև, սակայն գոյություն չունեն համաձայնեցված չափանիշներ բազմագերատեսչական միջազգային համագործակցության և զոհերի ուղղորդման անդրսահմանյան մեխանիզմների վերաբերյալ: Այնուամենայնիվ, համագործակցությունն արտասահմանում գործող կազմակերպությունների հետ կարող է վճռորոշ դեր խաղալ գործի հետաքննության հաջողության և հատկապես զոհի պաշտպանությանն առնչվող բոլոր գործողությունների համար:

Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ արդյունավետ պայքարելու համար էական է, որպեսզի իրավապահ մարմինները համագործակցեն իրար հետ միջազգային ասպարեզում: Փոխադարձ իրավական աջակցության ոլորտում առավել կարևորվում են հետևյալ միջազգային իրավական ակտերը՝

- Հանցագործների հանձման մասին եվրոպական կոնվենցիա (1957թ.),
- Հանցագործերի հանձման մասին եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն (1975թ.),
- Քրեական գործերում փոխադարձ իրավական աջակցության մասին եվրոպական կոնվենցիա (1959թ.),
- վերոնշյալ կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն (1978թ.),

- վերոնշյալ կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրություն (2001թ.):[78]

Միջազգային համագործակցության ձևերը հանցավորության դեմ պայքարի ոլորտում բազմազան են, բայց այն կարելի է ներկայացնել հետևյալ կետերով՝

- օգնության ցուցաբերում քրեական, քաղաքացիական և ընտանեկան գործերով,
- հանցավորության (մասնավորապես անդրազգային հանցավորության) դեմ պայքարի միջազգային պայմանագրերի և համաձայնությունների կնքում և իրականացում,
- քրեական և քաղաքացիական գործերով օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների որոշումների կատարում,
- կարգուկանոնի հաստատման ապահովման ընթացքում քրեա-իրավական հարցերի կարգավորում,
- իրավապահ մարմինների համար փոխշահավետ տեղեկատվության փոխանակում,
- հանցավորության դեմ պայքարի հարցերով համատեղ գիտական հետազոտությունների և ուսումնասիրությունների իրականացում,
- իրավապահ մարմինների միջև աշխատանքային փորձի փոխանակում, կադրերի պատրաստման և վերապատրաստման իրականացման աջակցություն,
- փոխադարձ նյութատեխնիկական և խորհրդատվական օգնության իրականացում[79]:

Միջազգային համագործակցության կարևորության վերաբերյալ անդրադարձ է կատարվել նաև ՀՀ Կառավարության 2010թ. սեպտեմբերի 3-ի որոշմամբ:

ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայի 16-րդ հոդվածը նախատեսում է մի շարք կանոններ, որոնք կիրառելի են այս կոնվենցիայի շրջանակներում այն հանցագործությունների և դեպքերի նկատմամբ, որտեղ 3-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հանցատեսակներում ընդգրկված է կազմակերպված հանցավոր խումբ կամ անձ, որը հանձնման պահանջի

---

[78] Anti-Trafficking Training for Frontline Law Enforcement Officers. Background reader. Vienna. 2006. p. 44.

[79] Криминология/ Под ред. В.Н. Кудрявцева. М. Юрист. 2002. С. 554-555.

առարկա է հանդիսանում և գտնվում է այդ պահանջը ստացած պետության տարածքում, իսկ այն հանցագործությունը, որի համար հայցվում է նրա հանձնումը պատժելի է երկու մասնակից պետությունների օրենսդրություններով:

Եվրոպական ձերբակալման հրամանագիրը կարող է տրվել ազգային դատարանի կողմից, եթե այն անձը, որի վերադարձը հայցվում է, մեղադրվում է այնպիսի հանցագործության կատարման մեջ, որի համար պատիժն առնվազն կազմում է մեկ տարի ազատազրկում կամ էլ տվյալ անձը դատապարտվել է առնվազն չորս ամիս ազատազրկման: Դրա նպատակն է փոխարինել հանցագործների հանձնման երկար ընթացակարգերը փախուստի դիմած կասկածյալ կամ դատապարտյալ հանցագործներին վերադարձնելու նոր և արդյունավետ միջոցով, որպեսզի հարկադիր փոխանցել նրանց մի մասնակից պետությունից մյուսին: Եվրոպական ձերբակալման հրամանագիրը հնարավորություն է տալիս նման անձանց վերադարձնել ողջամիտ ժամկետներում իրենց գործով դատավարությունն ավարտելու և քրեակատարողական հիմնարկում իրենց պատիժը կրելու համար: Եվրոպական ձերբակալման հրամանագիրը հիմնված է դատական որոշումների փոխադարձ ճանաչման սկզբունքի վրա: Սա նշանակում է, որ մասնակից պետության դատական մարմնի որոշումը, որով նա պահանջում է որևէ անձի ձերբակալությունը և վերադարձը պետք է ճանաչվի և ի կատար ածվի հնարավորինս արագ և անարգել այլ անդամ պետություններում:

Եվրոպական համայնքների անդամ պետությունների միջև 1989թ. մայիսի 26-ի կնքվեց Հանցագործների հանձնման պահանջների փոխանցման մեթոդների պարզեցման և արդիականացման մասին համաձայնագիրը, իսկ ԵՄ Շենգենի պայմանագրի իրագործման մասին կոնվենցիայի անդամ պետությունների միջև՝ հանցագործների հանձնման պարզեցված ընթացակարգի մասին 1995թ.-ի մարտի 10-ի կոնվենցիան:

1996թ.-ի սեպտեմբերի 27-ին ստորագրվաց հանցագործների հանձնման վերաբերյալ կոնվենցիան, 2002թ. հունիսի 13-ին եվրոպական ձերբակալման հրամանագիրը, իսկ 2003թ. հունիսի 25-ին հանցագործների հանձնման մասին Եվրամիության և ԱՄՆ-ի միջև հանցագործների հանձնման մասին համաձայնագրությունը:[80]

---

[80] Anti-Trafficking Training Materials for Judges and Prosecutors. Background reader. Vienna. 2006. p. 131.

ԵՄ-ի կոնվենցիայի 32-րդ հոդվածի համաձայն կողմերը պետք է համագործակցեն միմյանց հետ սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան և լայնորեն կիրառելով համապատասխան միջազգային ու տարածաշրջանային փաստաթղթերը, միասնական կամ փոխադարձաբար պարտավորեցնող օրենսդրության հիման վրա ձեռք բերված պայմանավորվածությունները

- մարդկանց թրաֆիքինգը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու,
- զոհերին պաշտպանելու և օգնություն տրամադրելու,
- ԵՄ կոնվենցիայով նախատեսված հանցավոր արարքների վերաբերյալ գործերը քննելու և դատավարելու նպատակով:

Միջազգային համագործությունը կարող է իրականացվի նաև դատավարության փոխանցման միջոցով: Պետությունները կարող են որոշում կայացնել փոխանցելու դատավարությունը մեկ այլ պետություն, որն ավելի հարմար համարվի դատավարության անցկացման համար: Դա նշանակում է, որ որոշ գործերով դատավարություններն այս կամ այն պատճառներով (որոնք նշված են կիրառելի կոնվենցիաներում և համաձայնագրերում) փոխանցվում են տվյալ գործով դատաքննություն անցկացնելու իրավասություն ունեցող մի պետությունից մեկ այլ պետությունին, որը չունի այս իրավասությունը, սակայն ստանում է այն դատավարության փոխանցման պահանջի միջոցով: Այն պատճառները, որոնց հիման վրա որոշակի գործի դատաքննությունը կարող է փոխանցվել, հիմնականում կենտրոնացած են կասկածյալի շուրջ: Այն պետությունը, որի քաղաքացի կամ բնակիչ է հանդիսանում կասկածյալը կամ այն պետությունը, որտեղ նա կրում է կամ կրելու է ազատազրկման ձևով պատիժը, որոշելու է, թե որ պետություն կարող է փոխանցվել դատավարությունը:

ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայի 21-րդ հոդվածը պահանջում է պետությունից ուսումնասիրել հանցագործության դատաքննության փոխանցման հնարավորությունը այս կոնվենցիայի շրջանակներում, երբ համարվում է, որ նման փոխանցումը բխում է արդարադատության պատշաճ կատարման շահերից, մասնավորապես այն դեպքերում, երբ գործը գտնվում է մեկից ավելի իրավասություններում:[81]

[81] Նույն տեղը, էջեր 134-135:

Միջազգային համագործակցությունը հանցագործությունների, այդ թվում նաև թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում իրականացվում է նաև ԱՊՀ երկրների շրջանակներում: Համաձայն 2002թ.-ի հոկտեմբերի 7-ին Քիշնևում ստորագրված Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին կոնվենցիայի 60-րդ հոդվածի քրեական գործով իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ հանձնարարությունը կազմվում է սույն կոնվենցիայի 7-րդ հոդվածի պահանջներին համապատասխան: Հանձնարարության մեջ նաև պետք է նշված լինեն.

ա) կատարված հանցագործության նկարագիրը և որակումը, վնասի չափի մասին տվյալները, եթե այն պատճառվել է հանցավոր արարքի հետևանքով.

բ) այն դատավարական գործողությունների, հետախուզական կամ օպերատիվ-հետախուզական միջոցառումների մանրամասն ցանկը, որոնք անհրաժեշտ է իրականացնել քրեական գործի շրջանակներում, ինչպես նաև հանձնարարության կատարման համար անհրաժեշտ այլ տեղեկությունները.

գ) այն հարցերի ցանկը, որոնք անհրաժեշտ է պարզել հարցաքննության ժամանակ.

դ) այն օրենքի նորմի լրիվ տեքստը, որի հատկանիշներով քննվում է քրեական գործը:

Նույն կոնվենցիայի 63-րդ հոդվածը նախատեսում է, որ մեկ կամ մի քանի անձանց կողմից երկու և ավելի Պայմանավորվող կողմերի տարածքներում կատարված կամ նրանց շահերը շոշափող հանցագործությունների արագ և բազմակողմանի քննության նպատակով կարող են ստեղծվել համատեղ քննչական օպերատիվ խմբեր: Համատեղ քննչական օպերատիվ խումբ ստեղծելու վերաբերյալ առաջարկությունը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում, հայցվող Պայմանավորվող կողմը հայցող Պայմանավորվող կողմին ծանուցում է ընդունված որոշման մասին և, համաձայնության դեպքում, միաժամանակ նրան տրամադրում է այդպիսի խմբի մեջ ներգրավված պաշտոնատար անձանց ցանկը: Համատեղ քննչական օպերատիվ խմբի անդամները անմիջականորեն փոխգործակցում են միմյանց հետ, համաձայնեցնում են նախնական քննության հիմնական ուղղությունները, քննչական գործողությունների, հետախուզական կամ օպերատիվ-հետախուզական միջոցառումների անց-

կացումը, փոխանակում են ստացված տեղեկատվությունը: Ըստ համաձայնության՝ նրանց գործունեության համակարգումը իրականացնում է համատեղ քննչական օպերատիվ խմբի ստեղծման նախաձեռնողը կամ նրա անդամներից որևէ մեկը:

ԱՊՀ երկրների միջև համագործակցումը իրականացվում է նաև հանցագործների հանձնման միջոցով: Նույն կոնցենվիայի 66-րդ - հոդվածի համաձայն Պայմանավորվող կողմերը պարտավորվում են, սույն Կոնվենցիայով նախատեսված պայմաններին համապատասխան, հարցման հիման վրա միմյանց հանձնել իրենց տարածքներում գտնվող անձանց՝ քրեական պատասխանատվության ենթարկելու կամ դատավճիռն ի կատար ածելու համար: Քրեական պատասխանատվության ենթարկելու համար հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք հայցող Պայմանավորվող կողմերի ներպետական օրենսդրությամբ համարվում են քրեորեն պատժելի, և որոնց կատարման համար նախատեսվում է ազատազրկման ձևով մեկ տարուց ոչ պակաս ժամկետով կամ ավելի խիստ պատիժ: Դատավճիռն ի կատար ածելու համար հանձնելը կատարվում է այնպիսի արարքների համար, որոնք հայցող և հայցվող Պայմանավորվող կողմերի ներպետական օրենսդրությամբ համարվում են քրեորեն պատժելի, և դրանց կատարման համար անձը, որի հանձնելը հայցվում է, դատապարտվել է վեց ամսից ոչ պակաս ժամկետով ազատազրկման կամ ավելի խիստ պատժի: Ընդ որում, 71-րդ հոդվածի համաձայն Հանձնման վերաբերյալ հարցումը ենթակա է քննարկման հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու արդարադատության հիմնարկում այն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, եթե այդ Պայմանավորվող կողմի օրենսդրությամնք այլ բան սահմանված չէ: Հանձնման վերաբերյալ հարցման քննարկման արդյունքների մասին տեղեկացվում է հայցող Պայմանավորվող կողմի արդարադատության հիմնարկը: Եթե հանձնման վերաբերյալ հարցումը չի պարունակում բոլոր անհրաժեշտ տվյալները, ապա հայցվող Պայմանավորվող կողմի արդարադատության հիմնարկը կարող է պահանջել լրացուցիչ տվյալներ, որոնց համար սահմանվում է մինչև 30 օր ժամկետ: Հայցող Պայմանավորվող կողմի արդարադատության հիմնարկի միջնորդությամբ այդ ժամկետը կարող է երկարացվել ևս 30 օրով:

Եթե միևնույն անձը կատարել է մի քանի հանցագործություններ, ապա Կոնվենցիայի 100-րդ հոդվածը նախատեսում է հետևյալ նոր-

մը, մեկ անձի կամ անձանց խմբի կողմից երկու կամ ավելի Պայմանավորվող կողմերի տարածքներում հանցագործություններ կատարվելու դեպքում այդ հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը կարող են միավորվել մեկ վարույթում՝ Պայմանավորվող կողմերի համապատասխան իրավասու արդարադատության հիմնարկների միջնորդությամբ: Գործերի միավորումը կատարվում է սույն Կոնվենցիայի 91-րդ և 92-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ: Օգնությունը ցուցաբերվում է նաև այլ հարցերում՝ հետախուզման, կալանքի և այլն: Այսպես, համաձայն կոնվենցիայի 104-րդ հոդվածի Պայմանավորվող կողմերը, իրենց օրենսդրության և սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, միմյանց իրավական օգնություն են ցույց տալիս հանցավոր ճանապարհով ստացված գույքի, փողերի և արժեքների հետախուզման, կալանքի տակ դնելու և առգրավման, ինչպես նաև մեղադրյալներին (ամբաստանյալներին, դատապարտյալներին) պատկանող՝ հանցավոր գործունեությունից ստացված եկամուտները, հանցագործություններից տուժածներին (քաղաքացիական հայցվորներին) վնասի հատուցման, տուգանքների բռնագանձման վերաբերյալ և բռնագրավման վերաբերյալ դատարանների դատավճիռների կատարման գործում:

Այդ նպատակով Պայմանավորվող կողմերի իրավասու արդարադատության հիմնարկները քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ հանձնարարությունների հիման վրա, ներքին օրենսդրությանը համապատասխան, կատարում են հանցավոր ճանապարհով ստացված գույքի, փողերի և արժեքների, ինչպես նաև հանցավոր գործունեությունից մեղադրյալներին (ամբաստանյալներին, դատապարտյալներին) պատկանող եկամուտների հայտնաբերմանն ուղղված բոլոր անհրաժեշտ՝ քննչական, հետախուզական կամ օպերատիվ-հետախուզական միջոցառումները: Հայտնաբերելով այդպիսի գույքը, փողերը, արժեքներն ու եկամուտները՝ Պայմանավորվող կողմերի իրավասու արդարադատության հիմնարկները միջոցներ են ձեռնարկում դրանց պահպանության ապահովման ուղղությամբ՝ դրանց հետ ցանկացած գործառնության կանխարգելման և դրանց առգրավման նպատակով կալանք դնելու ձևով:

Հայցվող Պայմանավորվող կողմերի իրավասու արդարադատության հիմնարկները, իրենց իրավասության շրջանակներում

հայտնաբերելով հանցավոր ճանապարհով ստացված գույքը, փողերը և արժեքները, դրանք փոխանցում են հայցող Պայմանավորվող կողմերի իրավասու արդարադատության հիմնարկին՝ որպես իրեղեն ապացույցներ քրեական գործին կցելու և հետագայում օրինական տերերին վերադարձնելու, հանցագործություններով պատճառված վնասը մարելու նպատակով:

Հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու արդարադատության հիմնարկները մեղադրյալի (ամբաստանյալի, դատապարտյալի) փողերի, արժեքների և գույքի, հանցավոր գործունեությունից ստացած եկամուտների վրա կալանք դնելով, ապահովում են դրանց պահպանությունը՝ հետագայում հանցագործությամբ պատճառված վնասի մարման վրա տարածելու և հայցող Պայմանավորվող կողմի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա բռնագրավելու նպատակով՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի 58-րդ հոդվածով նախատեսված կանոնները: Հայցվող Պայմանավորվող կողմի իրավասու արդարադատության հիմնարկները կարող են հետաձգել հանցավոր ճանապարհով ստացված գույքի, փողերի և արժեքների, ինչպես նաև մեղադրյալներին (ամբաստանյալներին, դատապարտյալներին) պատկանող՝ հանցավոր գործունեությունից ստացած եկամուտների փոխանցումը հայցող Պայմանավորվող կողմի արդարադատության հիմնարկներին, եթե դրանք նրանց անհրաժեշտ են իրականացվող քրեական հետապնդման կամ այլ (երրորդ) անձանց իրավունքների վերաբերյալ վեճերի լուծման կապակցությամբ:

Միջազգային համագործակցությանը վերաբերվող նորմեր առկա են նաև մասնագիտական ուղղվածությամբ որոշ ակտերում: Օրինակ, համաձայն Մարդկանց, մարդկային օրգանների և հյուսվածքների առևտրի դեմ պայքարում անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագրի 4-րդ հոդվածի կողմերը համագործակցություն են իրականացնում հետևյալ հիմնական ձևերով՝

- օպերատիվ, քրեագիտական, վիճակագրական և այլ տեղեկատվության, այդ թվում՝ նախապատրաստվող և կատարված հանցագործությունների, այդ արարքներից ստացված եկամուտների օրինականացման և դրանց մասնակից ֆիզիկական և իրավաբանական անձանց մասին տեղեկությունների փոխանակում,

- օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու մասին հարցումների կատարում,
- համակարգված օպերատիվ-հետախուզական և կանխարգելիչ միջոցառումների պլանավորում և իրականացում,
- նորմատիվ իրավական ակտերի, հրապարակումների և գիտամեթոդական նյութերի փոխանակում,
- աշխատանքի փորձի փոխանակում, աշխատանքային հանդիպումների, խորհրդատվությունների, խորհրդակցությունների, գործնական գիտաժողովների և սեմինարների, ինչպես նաև համատեղ գիտական հետազոտությունների անցկացում,
- մարդկանց թրաֆիքինգի նպատակով ինտերնետ ցանցի օգտագործումը կանխելուն և խափանելուն ուղղված համաձայնեցված միջոցների մշակում և իրականացում,
- անձնագրավիզային վերահսկողության տեղեկատվական համակարգի ներդրման փորձի փոխանակում, ներառյալ բիոմետրիկ տվյալների օգտագործումը,
- աջակցության ցուցաբերում կադրերի պատրաստման և մասնագետների որակման բարձրացման գործում,
- մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգի զոհերի սոցիալական և բժշկական վերականգնման նոր մեթոդների մշակում և ներդրում:

Բացի վերը նշված փաստաթղթերից ԵՄ անդամ և այլ երկրների միջև կնքվել է մի շարք երկկողմ համաձայնագրեր փոխադարձ իրավական աջակցության վերաբերյալ:

Ամփոփելով ասվածը, միջազգային համագործակցության բնագավառում գոյություն ունի գործունեության հինգ հիմնական ոլորտ.

1) հանցագործների հանձնման հայտեր,

2) փոխադարձ իրավական օգնության տարբեր դրույթներով պահանջագրերի ներկայացումը և կատարումն այնպիսի գործունեության համար, ինչպես օրինակ տարածքի խուզարկումը հրամանագրով և ապացույցների առգրավումը, վկաների հարցաքննումը, փաստային ապացույցների ձեռք բերումը և այլն,

3) պաշտոնական պահանջագրեր ներկայացնելուց առաջ մեկ իրավապահ մարմնից մյուսին ուղղվող հայտերը՝ ապացուցման փաստերի գոյությունը կամ այլ կարգավիճակը որոշելու նպատակով,

4) մեկ իրավապահ մարմնից մյուսին ուղղվող օպերատիվ աջակցության հայտերը, օրինակ՝ վերահսկումը, առաքումների հսկողությունը, օպերատիվ զավթումները և այլն,

5) Եվրոպական ձերբակալման հրամանագիր և դատավարության փոխանցում՝ ԵՄ անդամ կամ թեկնածու պետության կողմից կայացրած դատական որոշումը, որով մեկ այլ անդամ պետությունից պահանջվում է ձերբակալել կամ հանձնել հետախուզման մեջ գտնվող անձին՝ քրեական հետաքննությունը, բերման ենթարկելու որոշումը և կալանքի տակ պահելու հրամանագիրն ի կատար ածելու նպատակով:[82]

8.3.2. Թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով համագործակցող միջազգային կազմակերպությունները

Թրաֆիքինգի դեմ պայքարում կարևոր դեր են խաղում միջազգային կազմակերպությունները, որոնց թվին են պատկանում՝

1) "Եվրոպոլ"-ը[83], որը ԵՄ իրավապահ կազմակերպությունն է և տեղակայված է Հաագայում ու զբաղվում է քրեական հետախուզությամբ: Այդ կազմակերպության նպատակն է բարելավել միջազգային կազմակերպված հանցավորության և ահաբեկչության կանխարգելմանն ու հակազդմանն ուղղված համագործակցությունը մասնակից երկրների իրավասու մարմինների միջև: Սկսած 2002թ.-ից Եվրոպոլի մանդատն ընդգրկում է միջազգային հանցավորության բոլոր լուրջ ձևերն ըստ Եվրոպոլի մասին կոնվենցիայի հավելվածում բերված ցանկի, այդ թվում՝ մարդկանց թրաֆիքինգը: Եվրոպոլը ոչ միայն աջակցում է իրեն անդամակցող պետություններին մարդկանց թրաֆիքինգի և այլ հանցատեսակների դեմ պայքարում, այլև բանակցել է երկկողմ օպերատիվ կամ ռազմավարական համաձայնագրեր այլ միջազգային կազմակերպությունների և պետությունների, օրինակ՝ Բուլղարիայի, Ռումինիայի և Ռուսաստանի հետ:

Երկրների պահանջով Եվրոպոլը նպաստում է տեղեկատվության փոխանակմանը Եվրոպոլի կապավոր սպաների (ԵԿՍ) միջև՝ ազգային օրենսդրության համապատասխան: ԵԿՍ-ները գործուղվում են Եվրոպոլ անդամ պետությունների կողմից որպես ազգային իրավապահ մարմինների ներկայացուցիչներ: Եվրոպոլը նաև հա-

---

[82] Նույն տեղը, էջեր 44-45:

[83] ՀՀ-ը դեռ Եվրոպոլի անդամ պետություն չէ:

մակարգում և տրամադրում է օպերատիվ վերլուծություն՝ անդամ պետությունների իրավապահների աշխատանքին աջակցելու նպատակով, տրամադրում է ռազմավարական զեկույցներ և հանցատեսակների վերլուծություններ՝ անդամ պետությունների կողմից և երրորդ անձանց կողմից տրամադրված տեղեկատվության և օպերատիվ տվյալների հիման վրա, ապահովում է փորձագիտություն և տեխնիկական աջակցություն ԵՄ-ում իրականացվող հետաքննությունների և օպերատիվ միջոցառումների համար:[84]

2) "Ինտերպոլ"-ն ամենախոշոր ոստիկանական կազմակերպությունն է աշխարհում: Այն հիմնադրվել է 1923թ.-ին՝ նպաստելու քրեական ոստիկանության միջազգային համագործակցությանը և ներկայումս ունի 184 անդամ պետություն: Այն սատարում և աջակցում է բոլոր այն կազմակերպություններին, մարմիններին և ծառայություններին, որոնց առաքելությունն է կանխարգել և պայքարել միջազգային հանցավորության դեմ:

Ֆրանսիայի Լիոն քաղաքում գտնվող Ինտերպոլի գլխավոր քարտուղարության միջոցով ապահովվում է ոստիկանությունները կապող հաղորդակցման համակարգը: Կազմակերպության ուշադրության տակ գտնվող առաջնային ոլորտներն են՝ հասարակական անվտանգությունը և ահաբեկչությունը, հանցավոր կազմակերպությունները, թմրամիջոցների հետ կապված հանցագործությունները, ֆինանսական և բարձր տեխնոլոգիաների հետ կապված հանցագործությունները, մարդկանց թրաֆիքինգը և հետախուզվող անձանց որոնման աջակցությունը: Ինտերպոլի կարևորագույն խնդիրներից մեկը մասնակից պետություններին ահազանգելն է այն անձանց վերաբերյալ, որոնք հետախուզվում են աշխարհի ոստիկանության ծառայությունների կողմից: Թրաֆիքինգով զբաղվող անձին որոնելու դեպքում նրան Ինտերպոլի կողմից հետախուզվող անձանց ցուցակում ընդգրկելու հայտը պետք է ներկայացվի անդամ պետության ներպետական ոստիկանության կողմից: Հենց ներպետական ոստիկանությունն է, որ հիմնականում է պետք է հայտնաբերի և ձերբակալի նրան:

Գլխավոր քարտուղարությունը, հանդիսանալով համակարգման մարմին, իր անդամներին տրամադրում է մուտքի հնարավորություն քրեական տեղեկատվության միջազգային տվյալների բազա, ինչ-

[84] Anti-Trafficking Training for Frontline Law Enforcement Officers. Background reader. Vienna. 2006. p. 45.

պես նաև ամփոփագրում է հատուկ հանցագործությունների, սխեմաների և միտումների համաշխարհային պատկերը:

3) “Եվրոջաստ”-ը[85] ԵՄ մարմին է, որը հիմնադրվել է 2002թ.-ին և տեղակայված է Հաագայում: Այն ստեղծվել է՝ բարձրացնելու անդամ պետությունների հետաքննչական և դատախազական մարմինների արդյունավետությունը լուրջ և կազմակերպված անդրազգային հանցագործությունների հետաքննության և դատական հետապնդման շրջանակներում: 25 անդամ պետություններից յուրաքանչյուրը ներկայացված է Եվրոջաստում ազգային անդամի կողմից, որը կարող է լինել դատախազ, քննիչ կամ դատավոր: Ընդ որում, Եվրոջաստն իր տեսակում առաջին կազմակերպությունն է: Գործնական տեսակետից և օպերատիվ աշխատանքի համատեքստում Եվրոջաստը ջանում է բարելավել դատական համագործակցության և փոխադարձ իրավական աջակցությանն առնչվող այն առկա փաստաթղթերի բոլոր տեսակների աշխատանքը, որոնք օգտագործվում են ԵՄ-ում (համապատասխան փաստաթղթերի օրինակներ են՝ 1959թ.-ի ԵԽ-ի կոնվենցիան քրեական գործերում փոխադարձ աջակցության մասին, ԵՄ խորհրդի շրջանակային որոշումը համատեղ հետաքննչական խմբերի մասին): Եվրոջաստն օժտված է լրացուցիչ լիազորությամբ ԵՄ նախարարական խորհրդին իր տարեկան զեկույցում ներկայացնելու հանձնարարականներ և առաջարկություններ օրենսդրության և/կամ դատական համագործակցության ոլորտում ընթացակարգերի արդյունավետության վերաբերյալ:[86]

4) 2001թ. մայիսի 28-ի ԵԽ-ի որոշմամբ ստեղծվեց Քաղաքացիական և առևտրային հարցերով եվրոպական դատական ցանցը, որը բաղկացած է անդամ երկրների դատական և վարչական մարմինների ներկայացուցիչներից և հանդիպում է տարին մի քանի անգամ՝ տեղեկատվություն և փորձ փոխանակելու, ինչպես նաև քաղաքացիական և առևտրային իրավունքի հարցերում անդամ պետությունների միջև համագործակցունը խթանելու նպատակով: Դրա հիմնական նպատակն է աջակցել այն մարդկանց, ովքեր

[85] ՀՀ-ը դեռ “Եվրոջաստի” անդամ պետություն չէ:

[86] Anti-Trafficking Training Materials for Judges and Prosecutors. Background reader. Vienna. 2006. p.138.

մասնակցում են անդրազգային հանցագործության դատավարությանը, եթե ներգրավված է մեկից ավելի անդամ պետություն:[87]

5) UNODC – թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի ՄԱԿ-ի վարչությունն է, որի հիմնական նպատակն է պայքարը թմրամիջոցների ապօրինի շրջանառության ու այլ հանցագործությունների հետ, և քանի որ թրաֆիքինգը հանդիսանում է համաշխարհային խնդիր և կապված է կազմակերպված հանցավորության հետ, UNODC բազմաթիվ ուսումնասիրություններ և հետազոտություններ է կատարել ինչպես կազմակերպված հանցավորության մասին ընդհանրապես, այնպես էլ՝ կապված թրաֆիքինգի հետ: Մասնավորապես, UNODC պատրաստել է ձեռնարկ մասնակից պետությունների օրենսդիր մարմինների համար ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին կոնվենցիայի պահանջները իրականացնելու և տեխնիկական աջակցություն իրականացնելու վերաբերյալ: UNODC-ի միջոցով իրականացվել է միջոցների մշակում թրաֆիքինգի վիճակը պարզելու ու համալիր գնահատելու համար, որոնք կիրառվել են Ֆիլիպինների, Տոգոյում, Նիգերիայում, Բենինում և այլ երկրներում:

6) ICMPD – միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոն: Այն պատրաստել է մարդկանց թրաֆիքինգի խնդրի լուծման նպատակով համալիր ծրագիր, որը և իրագործել է Հարավ-արևելյան Եվրոպայի որոշ երկրներում:

8.3.3. Թրաֆիքինգի կանխարգելման գործընթացում հասարակական կազմակերպությունների մասնակցությունը

ԵԽ-ի կոնվենցիայի 35-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր կողմ պետք է խրախուսի պետական մարմինների ու պաշտոնատար անձանց համագործակցությունը հասարակական կազմակերպությունների, այլ համապատասխան կառույցների և քաղաքացիական հասարակության անդամների հետ սույն Կոնվենցիայի նպատակին հասնելու համար ռազմավարական գործընկերություն հաստատելու հարցում:

Գիտնականների և պրակտիկ աշխատողների կարծիքով մարդկանց թրաֆիքինգի շուկան մշտապես զարգանալու է, քանի որ այն

[87] Նույն տեղը, էջեր 138-139:

հանդիսանում է քրեածին բիզնեսի անվտանգ, թաքնված և առավել եկամտաբեր ոլորտ: Խաբեության և սեռական բռնության զոհերի մեծամասնությունը չի կարող դիմել ոստիկանություն և չի կարող ապացուցել իր հանդեպ կատարված հանցագործությունները, առավել ևս, որ ԱՊՀ տնտեսապես ոչ զարգացած երկրներում մեծ թիվ են կազմում երիտասարդ կանայք, ծնողազուրկ երեխաները և փախստականները, որոնք պատրաստ են ցանկացած աշխատանքի կատարմանը, ինչը օբյեկտիվորեն նպաստում է մարդկանց թրաֆիքինգի բիզնեսի ընդլայնմանն ու կատարելագործմանը:[88]

Չնայած վերը նշված միտքը վերաբերում է Ռուսաստանի Դաշնության իրականությանը, այնուամենայնիվ ՀՀ-ում էլ որոշ չափով առկա է անվստահություն պետական, մասնավորապես իրավապահ մարմինների նկատմամբ:

Իրավապահ մարմինների նկատմամաբ անվստահությունը այս կամ այն չափով առկա է տարբեր պետություններում, և այդ ֆոնի վրա առավել կարևորվում է հասարակական կազմակերպությունների[89] դերակատարումը: Իհարկե, լավագույն տարբերակը իրավապահ մարմինների և ՀԿ-ների համագործակցությունն է ու համատեղ պայքարը հանցագործությունների և այլ իրավախախտումների դեմ:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում քրեական արդարադատության համակարգը պետք է ներառի ոչ միայն մարդկանց թրաֆիքինգ կատարողներին պատժելու, այլ նաև՝ թրաֆիքինգից տուժած անձանց պաշտպանելու և օժանդակելու մեխանիզմներ: Դա բխում է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի քաղաքականության զոհակենտրոն լինելու հանգամանքից:

Պաշտպանության և օժանդակության միջոցառումների իրագործումը պետք է կախված չլինի քրեական գործի շրջանակներում իրավապահ մարմինների հետ համագործակցելու՝ թրաֆիքինգից տուժած անձի պատրաստակամությունից. այլ կերպ ասած, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում կարևորվում են նախ և առաջ մարդու իրավունքները: Լավագույն տարբերակն այն է, որ թրաֆիքինգից տուժած բոլոր անձանց տրվի ժամանակ խորհելու համար

[88] Мед М. Кто вывозит женщин СНГ. Предварительный отчет по торговле секстоваром в СНГ. М. 1999. С.20.
[89] Այսուհետ՝ ՀԿ:

(reflection period):[90] Հայաստանում նմանատիպ նորմ նախատեսված է Ազգային ուղղորդման կարգով:

Տուժողների պաշտպանության և օժանդակության ամբողջական քաղաքականությունը պետք է ներառի Պալերմոյի արձանագրությունում և ԵԽ կոնվենցիայում ամրագրված բաղադրիչները: Որպեսզի մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մեխանիզմների հիմքում դրվեն մարդու իրավունքները, տուժողների պաշտպանության և օժանդակության քաղաքականության մեխանիզմներից պետք է կարողանան օգտվել թրաֆիքինգից տուժած բոլոր անձինք՝ առանց որևէ պայմանների, ընդ որում՝ նշված մեխանիզմները մշակելիս պետք է հաշվի առնել նրանց պահանջմունքների մասին հոգալու անհրաժեշտությունը:[91] Այս օժանդակության գործընթացում կարևորվում են ինչպես պետական ու միջազգային, այնպես էլ հասարակական կազմակերպությունների դերն ու նշանակությունը:

ՀԿ-ները հաճախ ստեղծվում և ֆինանսավորվում են և պետական, և բարեգործական կազմակերպությունների կողմից՝ որպես թրաֆիքինգից տուժած անձանց պաշտպանության և օժանդակության ծառայություններ մատուցող կառույցներ: Քրեական գործերի քննության առումով ՀԿ-ների դերը պետք է հստակորեն սահմանված լինի և համակարգվի այնպիսի գործիքներով, ինչպիսիք են փոխըմբռնման հուշագրերը, ուղեգրման ազգային մեխանիզմները և (կամ) գործողությունների ազգային ծրագրերը:

ՀԿ-ների գործունեությանը կարող է մասնակցել նաև պետությունը, որը օրենքով սահմանված կարգով ապահովում է կազմակերպության իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Կազմակերպություններն իրենց կամ պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնությամբ կարող են պայմանագրային կամ փոխադարձ համաձայնության այլ ձևերով ամբողջությամբ իրականացնել կամ մասնակցել պետական մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմին-

---

[90] Վիեննայի ֆորումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով 2008թ.-ի փետրվարի 13-15, Ավստրիա կենտրոն, Վիեննա. Թիվ 007 աշխատանքային հանդիպում. ժաշտպանությունից մինչև հետապնդում. լազմավարական մոտեցում, էջ5:

[91] Վիեննայի ֆորումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով 2008թ.-ի փետրվարի 13-15, Ավստրիա կենտրոն, Վիեննա. Թիվ 007 աշխատանքային հանդիպում. ժաշտպանությունից մինչև հետապնդում. լազմավարական մոտեցում, էջ 6:

ների սոցիալական, առողջապահական, կրթական, դաստիարակչական, մշակութային, մարզական և այլ հասարակական նշանակություն ունեցող ծրագրերի, այլ միջոցառումների: Արգելվում է պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ու նրանց պաշտոնատար անձանց միջամտությունը կազմակերպության գործունեությանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Ցանկացած ՀԿ, համաձայն ՀՀ 2001թ.-ի դեկտեմբերի 4-ի «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 22-րդ հոդվածի, իր կանոնադրությանը համապատասխան, կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպություններին և ունենալ միջազգային այլ կապեր: Կազմակերպությունը, իր կանոնադրությանը համապատասխան, կարող է այլ պետություններում ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ այդ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ: Այսինքն, միևնույն ՀԿ-ն, ունենալով ստորաբաժանումներ տարբեր երկրներում կարող է հեշտացնել թրաֆիքինգի դեմ պայքարի իրականացումը և թրաֆիքինգի զոհերի պաշտպանությունը:

Քանի որ Հայաստանի տարածքում ներկա դրությամբ տարեց տարի ավելանում են միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպությունների առանձնացված ստորաբաժանումների քանակը, նրանց գործունեությունը ՀՀ-ում նույնպես կարգավորվում է վերը նշված օրենքով, որի համաձայն ՀԿ-ների գործունեությունը կանոնակարգող դրույթները տարածվում են նաև միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպությունների՝ ՀՀ-ում գործող առանձնացված ստորաբաժանումների գործունեության վրա:

ՀԿ-ները կարևոր գործընկերներ են հատկապես թրաֆիքինգի կանխարգելմանն ու թրաֆիքինգի զոհերի պաշտպանությանն ուղղված հարցերում, սակայն կարող են նաև առանցքային դերակատարում ունենալ կառավարությանը դատական հետապնդման ոլորտում աջակցելու հարցում՝ սկսած թրաֆիքինգի զոհերի նույնացումից, այդ թվում իրավական, բժշկական և հոգեբանական օգնության տրամադրմամբ, ինչպես նաև հայրենիք վերադարձին և վերաինտեգրմանը նպաստելով (եթե այդպես է ցանկանում զոհը),

կամ էլ հասարակությունում ինտեգրմանն օժանդակելով, եթե զոհին շնորհվել է բնակչի կարգավիճակ:

Այդուհանդերձ, դրանք իրենց դերակատարումը իրականացնելու համար ունեն պետական աջակցության կարիք:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության մասնակցությունը կարող է ընդունել տարբեր ձևեր, ընդ որում տարբեր երկրներում օգտագործվել են տարբեր մոդելներ, սակայն էական նշանակություն ունի այն, որ քաղաքացիական հասարակությունը որպես լիարժեք մասնակցող գործընկեր հանդես գա թրաֆիքինգի հակազդմանն ուղղված կառավարության ցանկացած նախաձեռնություններում: Քաղաքացիական հասարակության մասնակցությունը թրաֆիքինգի դեմ պայքարում պետք է ապահովվի և խրախուսվի օրենսդրի կողմից՝ ոչ միայն ընդգրկելով քաղաքացիական հասարակության մասնակցությունը թրաֆիքինգի հակազդման քաղաքականություններում, այլև գործարկելով այս նպատակին ծառայող համարժեք և բավարար ֆինանսավորման մեխանիզմներ:

Թրաֆիքինգի դեմ պայքարող հասարակական կազմակերպությունները գործում են երկու կարևոր մոդելի հիման վրա՝ ներկայացուցչական և խորհրդատվական մոդելները: Ներկայացուցչական մոդելը, որն ավելի ընդգրկուն է թրաֆիքինգի հակազդմանն ուղղված կառավարության ջանքերում, հասարակական կազմակերպությունների լիարժեք գործընկերությունն ապահովելու համար, ներառում է թրաֆիքինգի հիմնախնդրով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ընդգրկումը թրաֆիքինգի հակազդման քաղաքականությունների կենսագործմամբ զբաղվող ազգային միջգերատեսչական մարմնի կազմում: Ի տարբերություն դրա խորհրդատվական մոդելը ներգրավում է հասարակական կազմակերպություններին խորհրդատվական հիմունքներով, այլ ոչ թե թրաֆիքինգի հակազդման քաղաքականությունների կենսագործմամբ զբաղվող ազգային միջգերատեսչական մարմնի կազմում: Որպես այդպիսիք մարդկանց թրաֆիքինգի խնդրով զբաղվող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն օրենքով լիազորված են պարբերաբար որպես խորհրդատուներ կառավարության կողմից ներգրավվելու համար: Սա կարող է ընդգրկել նման կազմակերպությունների կողմից պատրաստված զեկույցների լսումը քաղաքականության մշակմանը և կատարելա-

գործմանն ուղղված խորհրդարանական նիստերին, նրանց ընդգրկումը որպես խորհրդատուների խորհրդարանանի կողմից իրականացվող հետազոտություններում և հետաքննություններում կամ նրանց ներգրավումը որպես անկախ փորձագետների քաղաքականության գնահատման համար[92]:

Հայաստանի տարածքում ներկա դրությամբ գործող ՀԿ-ների մեծ մասը (օրինակ, "Հույս և օգնություն", "Դեմոկրատիա այսօր" և ուրիշներ) առաջինն են եղել Անդրկովկասի և ՀՀ տարածքում, որոնք սկսել են զբաղվել թրաֆիքինգի զոհերին օգնություն և աջակցություն ցուցաբերելով, նրանց գույքային իրավունքները վերականգնելու պահանջով դատարաններ դիմելով և այլն: Թեև այդ կազմակերպությունները, կարողացել են որոշակի արդյունքների հասնել, դրանք ավելի արդյունավետ կլինեին, եթե ներպետական համագործակցությունը թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում լիներ ավելի կանոնակարգված և հստակ:

Ներկայումս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ԱՄՔՈՐ հասարակական կազմակերպության միջև կնքվել է փոխըմբռման հուշագիր, որի շրջանակներում պետությունը համաֆինանսավորում է այդ ՀԿ-ի ապաստարանի հետ կապված ծախսերի մի մասը: Հարկ է նշել, որ ՀՀ պետբյուջեով և 2010թ.-ին, և 2011թ.-ին նախատեսված է որոշակի գումար այդ թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված ապաստարանի համաֆինանսավորման նպատակով:

[92] Վիեննայի Խորհրդարանական ֆորում, փետրվարի 12, 2008թ. The appropriate legal responses to combating trafficking in persons. A handbook for Parliamentarians. Draft-summary. p.28-29.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948թ. դեկտեմբերի 10
2. Եվրոպայի խորհրդի 2005թ. «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին» կոնվենցիա
3. ՄԱԿ-ի 2000թ.«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» կոնվենցիա
4. Պալերմոյի 2000 թ. Արձանագրությունը՝ մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման ու խափանման և դրա համար պատժի մասին
5. Պալերմոյի 2000 թ. Արձանագրությունը՝ ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներմուծման դեմ
6. ԱՄԿ-ի 1930թ. Հարկադիր աշխատանքի վերաբերյալ թիվ 29 կոնվենցիա
7. ԱՄԿ-ի 1957թ. Հարկադիր աշխատանքը վերացնելու մասին թիվ 105 կոնվենցիա
8. ՄԱԿ-ի 1926թ.Ստրկության դեմ պայքարի մասին, կոնվենցիա
9. ՄԱԿ-ի 1956թ. Ստրկության վերացման, ստրկավաճառության և ստրկությանը մոտսովորույթներիուինստիտուտների վերացման մասին լրացուցիչ կոնվենցիա
10. Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնություն և իրավական հարաբերությունների մասին 2002թ. կոնվենցիա (Քիշնևի կոնվենցիա)
11. ՀՀ Սահմանադրություն ընդունված 27.11.2005թ.
12. ՀՀ Քրեական օրենսգիրք ընդունված18.04.2003թ.
13. ՀՀ Աշխատանքային օրենսգիրք ընդունված 9.11.2004թ.
14. ՀՀ Քրեական դատավարության օրենսգիրք ընդունված 01.07.1998թ.
15. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք ընդունված 05.05.1998թ.
16. ՀՀ 2008թ.-ի մայիսի 26-ի “Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին” օրենքը

17. ՀՀ 2007թ.-ի հոկտեմբերի 22-ի “Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին” օրենքը

18. ՀՀ 2007թ.-ի փետրվարի 22-ի “Դատախազության մասին” օրենքը

19. ՀՀ 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի “Օտարերկրացիների մասին” օրենքը

20. ՀՀ 2005թ.-ի մարտի 24-ի “Աշխատանքի պետական տեսչության մասին” օրենքը

21. ՀՀ 2004թ.-ի դեկտեմբերի 14-ի “Փաստաբանության մասին” օրենքը

22. ՀՀ 2004թ. դեկտեմբերի 14-ի “Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասի” օրենքը

23. ՀՀ 2002թ.-ի ապրիլի 16-ի “Մարդու օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստման մասին” օրենքը

24. ՀՀ 2002թ.-ի հոկտեմբերի 8-ի “Անհատական տվյալների մասին” օրենքը

25. ՀՀ 2001թ.-ի նոյեմբերի 20-ի “Սահմանապահ զորքերի մասին” օրենքը

26. ՀՀ 2001թ.-ի դեկտեմբերի 4-ի «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքը

27. ՀՀ 2001թ.-ի ապրիլի 16-ի “Ոստիկանության մասին” օրենքը

28. ՀՀ 996թ.-ի հոկտեմբերի 1-ի “Բանկային գաղտնիքի մասին” օրենքը

29. ՀՀ 1994թ.-ի հուլիսի 17-ի “Օտարերկրացիների մասին” օրենքը

30. ՀՀ Կառավարության 2010թ.-ի սեպտեմբերի3-ի որոշումը“ՀՀ-ում 2010-2012թթ. ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին”

31. ՀՀ Կառավարության 2008թ.-ի նոյեմբերի 20-ի որոշումը “Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը հաստատելու մասին”

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

32. Ալեքսանյան Մ. Նախնական քննություն, Երևան, 2002.
33. Աղայան Է.Բ. Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1977, հատոր 1.
34. Բոշնաղյան Ա., Երեմյան Ա. Հանցավոր եկամուտների օրինակացմանը և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու վերաբերյալ հիմնարար միջազգային փաստաթղթեր /տեսական մեկնաբանություններով/», Ժողովածու. Եր.: Ասողիկ, 2005.
35. Երեմյան Ա., Թումասյան Դ., Գրիգորյան Գ. Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական հիմունքները, Երևան, 2009.
36. Երեմյան Ա., Ղամբարյան Ա. Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանությունը. Եր., 2006.
37. Երեխաները Հայաստանի մանկատներում և հատուկ դպրոցներում. Թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհեր, Երևան, ՀՕՄ, 2005
38. Իրավապաշտպանների միջազգային լիգա, http;europ.eu.int/comm./employment-social/egu-opp/index.en.htm.
39. Հանա Շնայդրովա, Բլանկա Հանչիլովա, Մարդկանց թրաֆիքինգը ՀՀ-ում. Երևան, ԵԱՀԿ Երևանի գրասենյակ, 2007.
40. Հայ միգրանտների ապօրինի առևտուր և աշխատանքային շահագործում. Երևան, 2005,
41. Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքար իրականացնող իրավապահ մարմինների վերապատրաստման կարիքների գնահատման զեկույց, Երևան, 2007.
42. Հայաստանում թրաֆիքինգի զոհերին ցուցաբերված աջակցությունը. Երևան, 2007.
43. ՀՀ Քրեական իրավունք (ընդհանուր մաս)/ Գ.Ս. Ղազինյանի գլխավորությամբ. Երևան: Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2007.
44. ՀՀ Քրեական իրավունք.Հատուկ մաս. Երևան.: Երևանի պետական համալսարանի հրատ., 2007.
45. Հարությունյան Ա.Ա. Մարդկանց առևտրի, պոռնկության կամ սեռական այլ շահագործման վերաբերյալ գործերի քննության մեթոդիկան, Երևան, 2005.
46. Մարդկանց շախագործում. ինտերնետային հավաքագրում, Եվրոպայի Խորհուրդ, 2007

47. Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի առաջարկվող սկզբունքներ և ուղենիշներ. ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով գերագույն հանձնակատարի զեկույցը Տնտեսական և սոցիալական խորհրդին. Լրացում. 2002.

48. Մելքոնյան Լ. Ինչպես կազմակերպել թրաֆիկինգի դեմ պայքարը համայնքներում, Ձեռնարկ հասարակական կազմակերպությունների համար, Երևան, 2006

49. Վիեննայի ֆորումը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով, 13-15 փետրվար 2008թ., թիվ 007 աշխատանքային հանդիպում: Պաշտպանությունից մինչև հետապնդում.ռազմավարական մոտեցում

50. Տնտեսական և սոցիալական խորհուրդ, Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի առաջարկվող սկզբունքներ և ուղենիշեր, ՄԱԿ, 20 մայիսի, 2002թ.

51. Андрианов С.Н., Берсон А.С., Никифоров А.С. Англо-русский юридический словарь, Москва. Руссо. 2000.

52. Бандурка А.М. Противодействие торговле людьми. Киев-Харьков. 2003.

53. Бессарабов В.Г., Быкова Е.В., Курочкина Л.А. Европейские стандарты обеспечения прав и свобод человека и гражданина в российском уголовном процессе. М. Юрлитинформ. 2005.

54. Брусницын Л.В. Правовое обеспечение безопасности лиц, содействующих уголовному правосудию. М. 1999.

55. Буланова О., Буланова А. В помощь потерпевшему. Психологическая и правовая помощь потерпевшим и свидетелям в уголовном процессе. М. 2008.

56. Гармаев Ю.П. Незаконная деятельность адвокатов в уголовном судопроизволстве. М. Экзамен. 2005.

57. Де Сальвиа М. Прецеденты Европейского Суда по правам человека. Руководящие принципы судебной практики, относящейся к Европейской конвенции о защите прав человека и основных свобод. Судебная практика с 1960 по 2002 г. СПб. Юридический центр Пресс. 2004.

58. Европейская сеть против торговли людьми. Доклад по вопросам торговли людьми. Болгария, Дания, Италия, Румыния, Испания, Великобритания, Спасем детей (Save the Children), Италия. 2004.

59. Епихин А. Ю. Обеспечение безопасности личности в уголовном судопроизводстве СПб. Юридический центр Пресс. 2004.

60. Жариков Е. В. Дифференциация уголовного процесса как средство обеспечения безопасности лиц, содействующих уголовному судопроизводству: Автореф. дисс. ... канд. юрид. наук. - Барнаул. 2004.

61. Зайцев О. А. Государственная защита участников уголовного процесса. М. Экзамен. 2001.

62. Криминология/ Под ред. В.Н. Кудрявцева и В.Е. Эминова. М. Юрист. 2002.

63. Лупинская П. А. Законность и обоснованность решений в уголовном судопроизводстве. М. 1972.

64. Механизмы перенаправления жертв торговли людьми на национальном уровне, Объединяя усилия по защите прав жертв торговли людьми, Практическое руководство, ОБСЕ, БДИПЧ, 2004.

65. Мизулина Е.Б. Торговля людьми и рабство в России: международно-правовой аспект. М. Юристъ. 2006.

66. Михайленев А.Р. Составление процессуальных актов по уголововным делам: Теория, методика, примерные образцы документов. Киев. 1989.

67. Мозякова В.В. Руководство для следователей. М. Экзамен. 2003.

68. Москалькова Т.В. Уважение чести и достоинства личности как принцип советского уголовного процесса: Автореф. дисс. … канд. юрид. наук. М. 1988.

69. Освещение в средствах массовой информации проблемы торговли людьми, Пособие для журналистов, ОБСЕ, БДИПЧ, Киев. 2007.

70. ООН, Управление по наркотикам и преступности, Набор методических пособий по вопросам борьбы с торговлей людьми, Нью-Йорк. 2006.

71. Пособие по борьбе с торговлей людьми для правоохранительных органов, Международный центр по развитию миграционной политикии Программа развития ООН /ПРООН/. 2006.

72. Преступления террористической направленности: уголовное преследование на досудебных стадиях. Под науч. ред. О.Н. Коршуновой. СПб. Юридический центр Пресс. 2003.

73. Прислушиваясь к жертвам. Опыт идентификации, возвращения и помощи в Юго-Восточной Европе, Международный центр развития миграционной политики. 2007.

74. Проблема незаконной миграции в России: реалии и поиск решений.М. Гендальф. 2004.

75. Проституция и преступность. Москва, 1991.

76. Путеводитель о прецедентной практике Европейского суда по правам человека за 2002 года. Науч. ред. – сост. Берестнев Ю.Ю., Виноградов М.В. пер. с англ. Власихин В.А. М. 2004.

77. Руководящие принципы по пересмотру законодательства против торговли людьми с особым акцентом на регион юго-восточной Европы, ОБСЕ, БДИПЧ. 2001.

78. Тюрканова Е.В. Принудительный труд в современной России: неурегуемая миграция и торговля людьми. Женева, 2006.

79. Уголовное право/ Под ред. Н.Г. Кадкова. М. Городец. 2006.

80. Шурухнов Н.Г. Обеспечение неразглашения данных предварительной проверки заявлений и сообщений о преступлениях. Уголовно-процессуальное принуждение и ответственность, их место в решении задач предварительного расследования. Волгоград. 1987.

81. Якупов Р.Х. Правоприменение в уголовном процессе России. М. 1980.

82. Anti-Trafficking Training for Frontline Law Enforcement officers. Vienna. 2006.

83. Anti-Trafficking Training Materials for Judges and Prosecutors. Background reader. Vienna. 2006.

84. Anti-Trafficking Training Materials for Judges and Prosecutors. Handbook. Vienna. 2006.

85. Anti-Trafficking Training Materials for Judges and Prosecutors. Curriculum-Training Guide. Vienna. 2006.

86. Anti-Trafficking Training Material for Judges and Prosecutors,

87. Crime Reduction Toolkits (UK)// www.crimereduction.homeoffice.gov.uk/toolkits/t p0601.htm

88. Human (Child) Trafficking: a look through the internet window. Ավստրայի հակաթրաֆիքինգային գործողություն, Բելգրադ, Սերբիա, 2006:
89. Levenkorn, Nomi., Another delivery from Tashkent: Profile of the Israeli Trafficker, 2007
90. Oxford Advanced Learner's Dictionary, 7-th adition, Oxford University 2007.
91. Parliamentary Forum, Vienna, 12 February 2008. The appropriate legal responses to combating trafficking in persons.A handbook for Parliamentarians.Draft-summary.
92. Trafficking in human beings in the commonwealth of independent states (CIS),
93. Trafficking for forced labor. Now to monitor the recuitment of migrant workers, ILO, 2005,

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՍԱՄՈՒԼ

94. Գաբրիելյան Ա. Դատարանի զարմանալի բարեհաճությունը թրաֆիքինգի հոդվածով մեղադրվողի հանդեպ// "Հայոց աշխարհ", 9 օգոստոսի 2007թ.
95. Երեմյան Ա. Արդարադատության հետ համագործակցող անձանց պաշտպանության մասին (հարցի միջազգային-իրավական ասպեկտը): Ազգային Ժողով, 2005, սեպտեմբեր 7.
96. Կառավարությանն առընթեր միգրացիոն գործակալության պետ Գ.Եգանյանի ելույթից, Առավոտ, 21 հունիսի 2008թ.
97. Ղամբարյան Ա. Քրեական գործ հարուցելու մասին որոշման դատական կարգով բողոքարկումը: Օրինականություն: 2006, թիվ 35
98. Ղազինյան Գ. Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում: Եր. համալս. հարտ., Երևան 2001,
99. Ղուկասյան Հ. Պաշտպանի որոշ իրավունքների վերլուծությունը ըստ ՀՀ քրեական դատավարության օրենս•րքի: Իրավագիտության հարցեր: Գիտ. աշխ. միջբուհական ժողովածու, 2000, թիվ 1-2

100. Մաթևոսյան Շ. Թրաֆիքինգի դասական օրինակ// Հայոց աշխարհ, 2005թ.-ի օգոստոսի 26.

101. Մելքոնյան Ռ. Պատժի նշանակման գիտագործնական նշանակությունը// “Դատական իշխանություն”, 2004. №12.

102. Бегларян А. Рабы XXI века// Аргументы и факты, 2008. №24.

103. В Антверпене разоблачена преступная группа, торговавшая девушками из России, Брюссель, 9 ноября 2004, CRY.ru

104. Волошин Ю. Сегодня нелегальная торговля людьми (траффикинг) стоит на третьем месте после торговли оружием и наркотиками// http://www.zerkalo-nedeli.com.

105. Гончаров В.Б., Кожевников В.В. Проблемы безопасности участников уголовного процесса// “Государство и право”, 2000. № 2.

106. Жариков Е.В. Обеспечение безопасности лиц, содействующих уголовному судопроизводству настадии возбуждения уголовного дела. Пятьдесят лет кафедре уголовного процесса УрГЮА (СЮИ): Материалы Международ. науч. –практ. Конф., г.Екатеринбург, 27-28 янв. 2005.

107. За каждую "секс-рабыню" преступники получают от 1,5 до 5 тыс. долларов, Киев, 4 февраля 2004, PRO.ua

108. Игнатьев М.Е. К вопросу о нейтрализации противодействия расследованию со стороны защитника. Адвокатская практика. 2001. № 1.

109. Кравченко Р.Н., Каменев И.И. Безопасность участников уголовного процесса: проблема современности. http://www.buimvd.ru/fpk/biblio/w11.doc

110. Мизулина Е. Уголовно-правовой аспект противодействия торговле людьми// Юридический мир, 2005. №6.

111. Михалковская Ю. Почему процветает рабство// Парламентская газета, 2005, 11 октября

112. Обезврежена крупная международная преступная группировка, продававшая российских девушек за границу, Воронеж, 30 марта 2004, CRY.ru

113. Чилингарян А. Место назначения–Дубай// ГолосАрмении, 17 сентября 2005.

Հավելված 1
Հաճախ օգտագործվող հասկացություններ

1. *«Մարդկանց թրաֆիքինգ» է* շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը՝ ուժի սպառնալիք կամ ուժ գործադրելու կամ հարկադրանքի որևէ այլ ձև կիրառելու, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու, կամ այլ անձնավորության նկատմամբ որոշակի վերահսկողություն իրականացնող որևէ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով դրամական միջոցներ կամ այլ օգուտներ տրամադրելու կամ ստանալու եղանակով:

Շահագործումը ներառում է այլ անձանց մարմնավաճառության կամ սեքսուալ այլ շահագործումը, հարկադիր աշխատանքները կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը հավասարազոր վիճակը, տաժանակիր աշխատանքները կամ օրգանների հեռացումը:[93]

2. *Երեխա է* համարվում տասնութ տարին չլրացած ցանկացած անձ:[94]

3. *Տուժած է* համարվում սույն հոդվածում սահմանված ձևով թրաֆիքինգի մեջ ներքաշված ցանկացած ֆիզիկական անձ:[95]

4. *Կազմակերպված հանցավոր խումբ* նշանակում է՝ երեք և ավելի անձանցից կազմված կառուցվածքայնորեն ձևավորված խումբը, որը գոյություն ունի որոշակի ժամանակահատվածում և համաձայնեցված գործում է մեկ կամ մի քանի լուրջ հանցագործություններ կամ այնպիսի հանցագործություններ կատարելու նպատակով, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան՝ այն հաշվով, որ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստանա ֆինանսական կամ այլ նյութական շահ:[96]

---

[93] Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին 2005թ.-ի մայիսի 16-ի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 4-րդ հոդվածի «ա» կետ:
[94] Նույն տեղը, «դ» կետ:
[95] Նույն տեղը, «ե» կետ:
[96] Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին 2000թ.-ի նոյեմբերի 15-ի ՄԱԿ-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածի «ա» կետ:

5. *Լուրջ հանցագործություն* նշանակում է՝ այն հանցագործությունը, որը պատժվում է չորս տարուց ոչ պակաս ազատազրկմամբ ժամկետով կամ ավելի խիստ պատժաչափով:[97]

6. *Գույք* նշանակում է՝ ցանկացած ակտիվները, լինի դրանք նյութական կամ ոչ նյութական, շարժական կամ անշարժ, որոնք արտահայտված են իրերում կամ իրավունքներում, ինչպես նաև իրավաբանական փաստաթղթերը կամ ակտերը, որոնք հաստատում են այդպիսի ակտիվների նկատմամբ իրավունքը կամ շահագրգռվածությունը դրանցում:[98]

7. *Հանցագործությունից ստացված եկամուտներ* նշանակում է՝ ցանկացած գույքը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ձեռք է բերվել կամ ստացվել է որևէ հանցագործության կատարման հետևանքով:[99]

8. *Օրգան* համարվում է՝ օրգանիզմի մաս, որն իրենից ներկայացնում է հյուսվածքների էվոլյուցիոն կազմավորված համալիր՝ միավորված ընդհանուր գործառույթով, կառուցվածքային կազմվածքով և զարգացմամբ:[100]

9. *Հյուսվածք*՝ ընդհանուր գործառույթով, կազմվածքով և(կամ) ծագմամբ միավորված բջիջների և ոչ բջջային կառուցվածքների համակարգ:[101]

10. *Հարկադիր կամ պարտադիր աշխատանք* նշանակում է որևէ պատժի սպառնալիքի տակ որևէ անձից պահանջվող ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որի համար այդ անձը կամավոր չի հայտնել իր համաձայնությունը:[102]

---

[97] Նույն տեղը, «բ» կետ:
[98] Նույն տեղը, «գ» կետ:
[99] Նույն տեղը, «ե» կետ:
[100] Մարդկանց, մարդկային օրգանների և հյուսվածքների առևտրի դեմ պայքարում անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին 2006թ.-ի նոյեմբերի 25-ի համաձայնագրի 1-ին հոդվածի «ա» կետ:
[101] Նույն տեղը, «բ» կետ:
[102] ԱՄԿ-ի Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին 1930թ.-ի հունիսի 28-ի թիվ 29 կոնվենցիայի 2-րդ հոդված:

11. *Ստրկությունը* անձի այն վիճակն է կամ դրությունը, ում նկատմամբ իրականացվում են սեփականության իրավունքին բնորոշ բոլոր կամ որոշակի լիազորությունները:[103]

12. *Մարմնավաճառություն* է մեկ անձի կողմից այլ անձի սեռական կրքերը վճարման դիմաց բավարարելը:[104]

13. *Մանկավաճառություն* նշանակում է՝ ցանկացած գործողություն կամ գործարք, որի միջոցով երեխան ցանկացած անձի կամ անձանց խմբի կողմից փոխանցվում է այլ անձի կամ անձանց խմբի՝ վարձատրության կամ ցանկացած այլ հատուցման դիմաց:[105]

14. *Երեխաների մարմնավաճառություն* նշանակում է՝ երեխայի օգտագործումը սեռական բնույթի գործունեության մեջ՝ վարձատրության կամ ցանկացած այլ տեսակի հատուցման դիմաց:[106]

15. *Մանկական պոռնոգրաֆիա* նշանակում է՝ որևէ միջոցով երեխայի ցանկացած ցուցադրում, որը կատարում է իրական կամ մոդելավորված բացահայտ սեռական գործողություններ, կամ երեխաների սեռական օրգանների ցանկացած ցուցադրում գլխավորապես սեռական նպատակներով:[107]

---

[103] Ստրկության մասին ՄԱԿ-ի 1926թ.-ի սեպտեմբերի 25-ի կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին կետ:

[104] Մարդկանց առևտրի և այլ անձանց մարմնավաճառության շահագործման դեմ ՄԱԿ-ի 1949թ. դեկտեմբերի 2-ի կոնվենցիայի 1-ին հոդված:

[105] Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից մանկավաճառության, երեխաների մարմնավա ճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին, 2000թ.-ի մայիսի 25-ի կամընտիր արձանագրության 2-րդ հոդվածի «ա» կետ:

[106] Նույն տեղը, «բ» կետ:

[107] Նույն տեղը, «գ» կետ:

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am

OSCE

ILO

EUROPEAN UNION